

ՄԵՐՁԱՎՈՐ Եւ ՄԻՋԻ  
ԱՐԵՎԵԼՔԻ  
ԵՐԿՐՈՒԵՐ  
ԺՈՂՈՎՐԴԻՐԱՆԵՐ

XIV

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ


СТРАНЫ И НАРОДЫ  
БЛИЖНЕГО  
И  
СРЕДНЕГО  
ВОСТОКА

XIV

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ВНУТРЕННЕЙ  
И ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ АРАБСКИХ СТРАН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1987

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԳԻՏՈՒԹՅԱՊՈԽՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՎՐԵԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՀԵԼՈՒ




ՊԱ 26

ՄԵՐՋԱՎՈՐ ԵՎ ՄԻՋՄ  
ԱՐԵՎԵԼՔԻ  
ԵՐԿՐՆԵՐ  
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XIV

ԱՐՄԱԹԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԵՐՉԵՆ ԵՎ ԱՐՑԱԳԵՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊՐՈՊԼԵՄԵՆԵՐ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԳԻՏՈՒԹՅԱՊՈԽՆԵՐԻ ՎՐԵԿԱՆ  
1987

## ԽԵՐԱԴՐԱԿԱՆ ԿԱՂԵԿԻՄ

Վ. Տ. ԱՌԳՈՅԱՆ (Խափառ), Հ. Մ. ՃՇԱՅԱՆ, Յ. Հ. ՃՐՎԵՆԻԱՆԻՆ,  
Ը. Ա. ՄԱԼԻՆ, Բ. Գ. ԱՌՋԱԿԱՆ, Յ. Դ. ԱՎՐՈՅԱՆ

Համար պատուինական խմբագր  
Կ. Հ. ՀԱԳՈՎԱՐՈՎԻՆ

Գիրք հրատարակվել է Հայաստանի պայծառելի՝ պատմական գիտությունների  
տեսչ Ա. Ն. Տեր-Վանզերի և պատմական գիտությունների թեկնածու Խորի Խավու:

### Редакционная коллегия

Գ. Խ. ՍԱՐԿԻՍՅԱՆ (председатель), Գ. Մ. ԵՐԱՆՅԱՆ, Ռ. Խ. ՄԳՈՅԱՆ,  
Հ. Օ. ՕԳԱՆԵՍՅԱՆ, Բ. Ռ. ԾԱԿՅԱՆ, Ե. Կ. ՍԱՐԿԻՍՅԱՆ

Ответственный редактор тома  
Հ. Օ. ՕԳԱՆԵՍՅԱՆ

THE COUNTRIES AND PEOPLES OF THE NEAR AND MIDDLE EAST  
XIV

THE CONTEMPORARY PROBLEMS OF THE DOMESTIC  
AND FOREIGN POLICY OF THE ARAB COUNTRIES

Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR  
Yerevan — 1987

Ժողովածում թիւուրիցում է Արարական որդեշի հրեակերի ուղար-  
բազարական զարգացման նորույրը և բառարավում մերժավորութելուն ինքնիշ-  
տի ուրաքանչ կողմէրը: Ժողովածում պարունակում է նաև մենապահական առաջնա-  
սիրություն, նմիրած Եգիպտոսի 1982 թ. օւդիական հարաբեկությունը, Շատ պատմության նորույրին:

Նախանձագում է արքեպահանելու, միջազգայնագույնության, մշակույթի ու ք-  
թերթագույն լրաց շրջանակների համար:

Խ 050600000  
703(02)-87

© Հայկական ԱԱՀ ԳԱ Երևանակարյուն, 1987

Ա. Ա. ԱՐԳԱՎՈՅՆ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԵԳԻՊԵՏՈՒՄ

1967—1970 թթ.

Եղիպտոսի Հեղափոխական զարգացման ժամանակաշրջանի մեջ ուրույն տեղ ունի նրա վերջին փուլը, որի ընդգրկում է 1967—1970 թթ. ժամանակահատվածը։ Այս փուլի նշանակությունը Եղիպտոսի նորագույն պատմության մեջ կարևոր է ոչ միայն նրանով, որ ընդգրկում է այդ պատմության ամենազրամատիկ ժամանակահատվածը, այլև նրանով, թե այս փուլի ընթացքում Եղիպտոսի ներքաղաքական իրադարձություններն ու դրանցից առաջացած երևույթները ինչպիսի՞ գեր ունեցան երկրի հետագա զարգացման վրա։ Այս փուլում Եղիպտոսում տեղի ունեցած իրադարձություններին, վերափոխումներին և նկատվող նոր երևույթներին սովորական պատմագրության մեջ անդրադարձել են և. ի Մեղվեղիս, Ա. Գ. Բակլանովը, Յ. Մ. Գորբատովը և լ. Ֆու. Զերկանսկին, Գ. Ի. Սմիռնովան, Վ. Ա. Լուցկեիլը, Ս. Ն. Վոլկովը և ուրիշներ։ Հատկապես պետք է նշել այս փուլի իրողությունների առավել ամրողական անդրադարձը և. Պ. Բելյանի և ե. Մ. Գրիմակովի «Եղիպտոսը՝ պրեսբեդնեաստիւտ» աշխատության մեջ։ Անտարակույտ, այս աշխատության հեղինակները տվել են այդ փուլի զարգացումների հիմնական ուղղություններն ու գլուխառականները։ Սույն հոդվածի գլխավոր նպատակն է բացահայտել այս փուլում սրված ներքաղաքական պայմանները, տեղի ունեցած փոփոխությունների սոցիալ-քաղաքական արժեքը և դրանց կազմը երկրում տեղի ունեցած հետագա իրադարձությունների հետ։

60-ական թվականներին վերջներին արարական առաջադիմական շարժման մեջ ի հայտ եկան ճգնաժամային երնույթներ։ Դրանց ետևում բարենված էին երեք հիմնական պատճառներ։ Առաջինը, արարական առաջադիմական գարշակարգերի ներքաղաքական անկայտմանությունն էր։

Որոշ երկրներում դա արտահայտվում էր հաճախակի հեղաշրջամներով, իսկ որոշ երկրներում էլ տարբեր հասարակական խավերի տարածքատման ընթացքի արագացումով: Այդ անկայությունը հետևանքն էր այն հակասուական, որոշ զեպքերում արտավոր գաղափարախոռական սկզբռումների, որոնց հետևում էին արարական առաջադիմական շարժման առաջնորդները՝ հասարակական-անտեսական զարգացման հարցերում: Երկրորդը, միասնականության բացակայությունն էր այդ շարժման մեջ միաժամանակ մի քանի կենտրոնների հավակնում էին հեգեմոնի դիրի, որը կորոշեր արարական երկրների զարգացման հետագա ռազմին, Այդ կենտրոնների միջև ընթացող պայքարը թուլացնում էր իմպերիալիզմի, սիներգիմի և անդական հետադիմության գեմ մըվող պալքարի ընդհանուր հակատը: Մըրորդը, 1887 թ. պատճեակմում առաջադիմական երկու երկրների՝ Սգիպտոսի և Սիրիայի կրած ժանր պարտությունն էր: Օգտագործելով Խորաչելի Հշտական ուղղմական սովառնայինները՝ բաղադական նեշումների նպատակով, իմպերիալիստական երկրները արարական հետադիմական վարչակարգերին, և առաջին հերթին Սատույան Արարիային, Հատկացրեցին առաջադիմական երկրների ներսում աշումների հականեղափոխական գործումներության զրգողի և հավանավորի դերը: Արարական հետադիմության գործումներությունն այս ասպարձում հանդում էր ֆինանսատեսական օգիտաթյունների քողի տակ առաջադիմական վարչակարգերից հետադեմ խավերի համար զիշումներ կորցնելու խնդրին: Միջազգային իմպերիալիզմի և արարական հետադիմության այս գործումներության շնորհիվ էր, որ հետագայում, այլևս հանգամանքների զուգորդությամբ, ժամանակավոր հաշընթաց շարժում առաջացած այնպիսի երկրներում, ինչպիսիք էին Սուվանը, Սումալին և Սգիպտոսը: Ինչ վերաբերում է Սիրիային, ապա թերևս պատմականորեն ստեղծված տարբերվող պայմանները և սիրիական Բասի կուսակցության կայտմ ներքին և արտաքին բաղադականությունը երան զերծ պահցին սոցիալ-քաղաքական կողմնորոշումը կակածի տակ դնող նախադրյալների առաջացումից:

Միաւ կլիներ նաև երական վարչակարգի թուլությունը գինորեկ միայն երա հակառակորդների ուժի մեջ: Պետք է ընդգծել, որ այդ վարչակարգի հեղափոխական միջոցառումները համարյա մշտապես զուգորդվում էին եգիպտական մանր և միջին բուրժուազիային կատարվող զիշումներով, որոնք սովորաբար էին թուլնում իրենց գործադրման իմաստային նենգափոխումների, բաղաքի և պյուլի ունենոր գասի տեսեական և քաղաքական գիրքների հզորացման համար: Կարճառու թնութագրելու

Համար նպիպտոսի ներքաղաքական իրավիճակը անմիջապես նախքան պատերազմը և հաստատելու համար վերոնշյալ մտքերը բերենք պրեգրդինստ նաև ներքի վկայությունները նրա 1966 թ. ելուվթերից: «... մեզ մոտ մասնավոր հատվածում ազգային բուրժուազիան անել է ազիլի մեծ չափով, քան մենք ենթադրում էինք 1960 թ....: Ներկայումս մեծածախ առևտուրի 60 տոկոսը գտնվում է մասնավորների ձեռքում... նրանց վերաշնչում էն 120 մլն ֆունտի (նպիպտական ֆունտի—Ը. Ա.) շրջանառություն (շրջանառու միջոցների —Ը. Ա.)»<sup>1</sup>: Ենթադրեն երեսում են նախկին ավատատիրական վարչակարգի ամրապնդման նշանները....: Այսոր, հեղափոխությունը 14 տարի անց, մենք ստեղծեցինք Ավատատիրության վերացման հանձնաժողովը, Պարզվեց, որ որոշ կարգաժառանքը բարեփոխումների արդյունքների վերացման մի շարք փորձերը Դանվել են խարեւությամբ 800-ական ֆեղան<sup>2</sup> պահպանութ կարգաժառանքը....: Դյուզում դեռ պահպանվել են ինչպես Հին արտադրական հարաբերությունները, այնպես էլ կարգաժառանքների ազգեցությունը: Նույնիսկ այժմ հազգադակ չէ, երբ մի կարգաժառանքի դաշտում իր ձեռքում է պահում պյուղապետին, պահնորդներին և ողջ տեղական զեկավարությանը<sup>3</sup>, Այս բոլորը ցույց են տալիս, թե ինչու Նպիպտոսում, մի երկրում, որը հոգակվել էր առավել խոր սոցիալ-տեսեսական վերափոխություններով, հակառակափոխությունը արտաքին հետադիմության սգնությամբ պատերազմից հետո կարողացավ պայքար մղել իր տնտեսական դիրքերի ուժեղացման, իսկ հետագայում՝ նաև իշխանության համար:

Չեայած հանրահայտ առաջադիմական վերափոխություններին, նպիպտական հասարակության ընդհանուր հետամնացությունը, հեղափոխության զեկագարանների գաղափարախոսական սկզբունքների հակասականությունը և պրակտիկ գործունեության անհետառականությունը հեղափոխական ժամանակաշրջանում պարմանավորեցին Հին բացասական գործունենքների զարգացմանը և նորերի առաջացումը: Նշենք դրանցից մի քանիսը.

1. Նպիպտական հեղափոխությունը շնչարողացավ Հենվել ժողովրդական լայն զանդվածների վրա: Մինչև 1967 թ. նպիպտական դեկազարդարության մեջ այն համոզմունքն էր տիրում, թե բանակն է հեղափոխության միակ հենարանը և պետք է մեա որպես արդարինք<sup>4</sup>:

2. Նպիպտական հեղափոխությունը շատեղծեց քաղաքական ավանդարդային կազմակերպություն: Նրա ստեղծած կազմակերպությունները

թույլ կապեր ունեին ժողովրդական զանգվածների հետ, իսկ զեկավարության մեջ արագ թափանցում էին օպորտունիտական և հականեղափոխական տարրեր:

3. Ազգապատական հեղափոխությունն ըստ Հության շարդեց պետական հին մեքենաների մեջ բյուրոկրատական ապարատը արագործելու հարմարվեց նոր ժամանակներին և համալրվեց նոր տարրերով՝ պետական մեքենայի խոշորացմանը զուգընթաց:

4. Ազգապատական հեղափոխությունը լիրագործեց արմատական վերափոխություններ երկրի հասարակական և արտադրական հարաբերությունների մեջ: Նրա զեկավարության, այսպես կոչված ռզասակարգային հաշտեցման, պիշտանության վերադասակարգային բնույթի, ոչ շահագործողական կապիտալից վերաբերյալ տեսական դրույթները պրակտիկարիում ցույց տվեցին իրենց արատավոր էությունը:

Այս և բազմաթիվ այլ գործոններ գումարվելով այն զժվարություններին, որոնք առաջ եկան 1867 թ. պատերազմից հետո, նզիպտոսում ստեղծեցին ծաեր ու բարդ ներքաղաքական իրադրություն:

Դույզն ինչ շարժեթաղրկելով հեղափոխական ժամանակաշրջանի վերջին փուլում նասերի կառավարության ընդունած մի քանի որոշումների հեղափոխական նշանակությունը, ինչպես նաև ռազմական ժանր պարտության հետևանքները, այնուամենայնիվ յուրաքանչյուր ուսումնափող, ինչպես և ուրիշ դեպքերում, այս դեպքում էլ պետք է ենի կոնկրետ արդյունքներից: Վերոհիշյալ փուլը, անկառակած, բնութագրվում է մանրուրուական տեսության ու պրակտիկայի ակնհայտ ու արամարտական սնանկացումով: Միաժամանակ այս փուզն այն հիմնական ժամանակառառվածն է, որի ընթացքում նզիպտոսուն ներքին հետազիմությունը բացահայտ կամ թարձնած ձևով կուտակում էր իր ուժերը՝ աշխատելով զեպի իրեն ձգել զեկավարության անկայում տարրերին, խարիստել իր բացահայտ հակառակորդների զիրքերը կամ ինչ-որ ձևով չեղոքացնել նրանց: Նզիպտական հետազիմության գործունեության այս նպատակառուզմածությունը առավելապես բացահայտվում է երկրի սոցիալ-տնտեսական շինարարության այն վիճակոր ուղղութեառում, որտեղ հատկապես ակնառու գարձան նասերի կառավարության վրիպումները:

1867 թ. հունիսին պատերազմից հետո նզիպտոսում ստեղծված ներքաղաքական իրավիճակը ուսումնասիրելիս առաջնակարգ հարց է դառնում նասերական վարչակարգի դրության գնահատումը: Եթե արտաքին քաղաքական ասպարեզում այդ վարչակարգի կողմերուշումը միանգամայն զրական բնույթի էր, և դրա մեջ մեծ գերը պատկանում էր անձամբ

Նասերին, ապա ներքաղաքական ասպարեզում տարաբնույթ ուժերի արշատական համախմբումը ակնհայտ էր դարձնում վարչակարգի ներքին քաղաքականության վայրի վերը բնույթը: Սա այսպես էր, այլապես ինչո՞վ բացատրել այն հակասությունները, որ տեղ էին գտնում և Շարտի 30-ի ծրագրում, և 1968 թ. Հռուսայան բարեփոխումներում, և 1969 թ. Հռուսայան հաղային բարեփոխումներում: Տարրեր քաղաքական ուժերի՝ աշերի, ձախերի և տնահներ համապայակցումը նգիտառության կառավարման և քաղաքական-գաղափարախոսական ապարատում հնագում էր միայն նասերի անվիճարկելի հեղինակության և ազգեցրյան վրա, որը կարողանում էր սանձառարել բոլոր այլ ուժերին: Այսպիսով կարելի է ասել, որ նասերական վարչակարգը, զննավարվելով մանրը ուժում առաջական պարտության արդացմամբ թեակոխներ էր զարգացման մի ժամանակաշատված, երբ այնու անհնար էր տարարելութ ուժերի տարանշատման ընթացքի դեմք առնելը և վարչակարգի այդ ընթացքն արդեն երկարատև լինել չէր կարող: Այսուեղ առանձնահատկությունն այն է, որ զերծիշյալի հնական ընդդիմադիր խմբավորումները ստեղծվում էին ո՞չ թե վարչակարգից զուրու, այլ վարչակարգի հենց ներսում:

Փաստերը վկայում են, որ ենիպտական զննավարության մեջ երկրի տրտարին և ներքին քաղաքական կողմնորոշման հարցերում հակասությունները առաջացել էին գետ 60-ական թվականների սկզբում<sup>6</sup>: Արարական սոցիալիստական միության (ԱՍՄ) Բարձրագույն գործադիր կոմիտեի (ԲԿԿ) 1957 թ. օգոստոսի 4-ի նիստում պրեզիդենտ նասերը նկատի ունենալով անցած ժամանակներում հզնավտական զննավարության մեջ նկատվող պառակտողական երևույթները, դրանք բնութագրում էր հետևյալ կերպ: Շենքափոխությունից հետո Հեղափոխության Ղեկավար Խորհուրդը՝ սկզբնական շրջանում գործում էր նորմալ մինչուրատաւագական բաղադրիչ համարի կուսակցություն, Զաքարիայի կուսակցություն, Սադաթի կուսակցություն, Ալի Մարրիի կուսակցություն... Արդել Հաքիմը ցանկանում էր ինքն անձամբ զննավարել բանակը, Զաքարիան ցանկանում էր ինքն անձամբ զննավարել ոստիկանությունը, Սադաթը ցանկանում էր ինքն անձամբ զննավարել Ազգային ժողովը, Ալի Մարրին ցանկանում էր ինքն անձամբ զննավարել Սոցիալիստական միությունը, նասերի կողմից կատարված այս տարարաժանումը, իհարկե, պայմանական է, Հարցն ալն է, որ հի-

շատակված չօրս անձնութիւն էրեքը, բայտ էության, նույն քաղաքական ուղղության հետևորդներն էին և նրանց եռեւ կանգնած խմբակցությունների քաղաքական հավակնությունների տարրերությունները չեւ որ նրանց բաժանում էին, այլ անձնական հավակնությունները: Նթե Ազգային ժողովի նախագահ Մուհամմեդ Անվար Սադաթը բույլ հաղինակության պատճեռով մշտապես հակվում էր զինված ուժերի զինավոր հրամանատար և գոխապրեզիդենտ Արդել Հարիմ Ամերի կողմը<sup>9</sup> և, հետաքար, ավյալ իրադրության մեջ մեծ ազգացությունների շեր կարող հավակնել, ապա Ամերը և ներքին գործերի մինիստր Զաքարիա Մոհի էղ-Դինը, որոնց ձեռքում էր զանգում պետության ռեպրենդիվ պարագաները, ուստի հաստատել անվանվության ուժերը, առանձին-առանձին ձեզ տում էին հաստատել անձնական վերահսկողություն պետության քաղաքական և սոցիալ-տնտեսական համակարգի վրա: Ընդ որում պետք է ենք, որ Ամերի հենարանը զինավորապես բանակն էր և սեփական հաղինակությունը՝ որպես պետության երկրարդ մարդ Խակ Զ. Մոհի էղ-Դինի հենարանն էին ռստիկանությունը, անվանվության ուժերն ու պետական պարագաների տեխնոլոգրատական բյուրոկրատիան: Սա այսպէս էր: Բայց, մեզ ասած, քիչ համազիշ կլինի, եթե մենք պետքենք, թե վերոհիշյալ տարարաժանումը ամրողապես արտահայտում է եզրակացն զննության մեջ 1967 թ. գոյություն ունեցող պառակտումը և առավել ևս եզրակացն քաղաքական ուժերի տեղարաշխումը: Հարցն այս է, որ այդ ժամանակ, հիմք ունենալով ուղղական ծանր պարտության ստեղծած բարդ իրադրությունը, եզրակացն հասարակական և պետական համակարգի ներսում արագ թափ ստացավ տարբեր խովերի քաղաքական բնակությունը: Այս իրադրության մեջ վճռական զերը պատկանում էր պետական կառավարման ապարատին: Բայց, ինչպես նշում էն Ռ. Պելյանն ու Յ. Մ. Գրիմակովը, այդ ապարատը ռ...հեռու էր ամենահույսի մերանիզմը լինելուց, որն ի վիճակի էր ապահովելու երկրի անկախությունը<sup>10</sup>:

Եզրակացն վարչակաղմի ընդերքում Դ. Ա. Նասերի վարած ներքին և արտաքին քաղաքականությանը ընդուժմազիր պիտակոր ուժը 1967 թ. Հունիսին, անկատակած, պինվորական վերնախազն էր՝ մարշալ Ա. Հ. Ամերի զինավորությամբ: Նթե Հունիսի 9-ի և 10-ի իրագրությունները<sup>11</sup> օգնեցին Դ. Ա. Նասերին և առաջադիմական ուժերին շախշախել արդեն հաղինակազրկված զինվորական այդ ընդդիմադրությունը, ապա հուպատերազմական բարոյական հուսալրության, օրավոր անող դժմարությունները աշ ուժերի համար պարար հող եղան արագորեն

բաղարացիական ընդդիմադրություն ստեղծելու համար։ Պետք է շեշտել, որ այդ ընդդիմադրությունը, որի հունում կանգնած էին եղիպատիկան բուրժուազիան, կալվածատերերը, գյուղական հորուսաները, արարական և միջազգային հնաւաղիմությունը, թեև նպատակի առումով միանական, կազմված էր Հիմնականում տակտիկական երկու ուղղությունների համարդիներից։ Ըստ այդ երկու ուղղությունների գործողությունների մեթոդների, երանցից մեկին կարելի է անվանել բացահայտ ընդդիմադրություն, մյուտին՝ բրդարկված։

Նմեւ հեղինակագրկված դիմուրական ընդդիմադրության պարագույն Ա. 2. Ամերը հունիայան պարտության պատճառները տեսնում էր Եղիպատուի ԱՄՆ-ի հետ ունեցած վատ հարաբերությունների մեջ և նասերին մեզադրում էր զրա համար, միաժամանակ նրան հորդորելով որնէ ձևով համաձայնության դալ ԱՄՆ-ի հետ,<sup>12</sup> ապա բացահայտ ընդդիմադրությունը, որի պատճի կանգնեցին փոխազրելիքին Զ. Մոհի էդ-Դինը և ողլանավորման մինիստր Աբդէլ Մանեյմ Կայսունին, շղարշելով իր նպատակները սոցիալիստական տերմինարանությամբ, բացահայտորեն պահանջում էր երկրի քաջարական և անտեսական ամբողջ համակարգի ընդունակությամբ։ Նրա ներկայացուցիչները մամուլում դաժան քննադատության էին հեթարկում երկրի համարյա բոլոր պետական, անտեսական և հասարակական հաստատությունները։ Այս հանդամանքը առավելապես պարզ երևում է 1867 թ. օգոստոսի 3—4-ի ԱՍՍ-ի Բնակ-ի նիստի արձանագրությունից։ Նիստը Հրավիրված էր անձամբ նաև երի պահանջով և օրակարգում ուներ վարչակարգի գնահատման հարցը։ Նիստի ընթացքում նաև երի, պահանարքաններով տնտեսության վարզացումն աշխատացնելու անհրաժեշտությունը, առաջարկեց որոշ արտոնություններ տալ մասնավոր հատվածի առանձին ճյուղերին, բայց ընդգծեց, որ նման միջոցառումները լավեար է ազգեն երկրի վարչացման հիմնական՝ սոցիալիստական ուղղության վրա։ Խնչպես երևում է, շկարզականալով կամ, ավելի ճիշտ, լցանկանալով ըմբռնել նաև երի առաջարկության բոլն իմաստը, Զ. Մոհի էդ-Դինը պարզորշ կերպով հակադրվեց պրեզիդենտին։ Նա առաջարկություն մատրից երկրում հաստատել որաց համակարգ։ «Ես գանում եմ, որ մեր համակարգը պիտի լինի բաց համակարգ, որ ընտրությունները լիննեն բաց և ոչ ուղղություն արվելու<sup>14</sup>։ Միաժամանակ նա աներկմատրեն հասկանալ ազնեց, որ որաց համակարգը առաջնորդ ինքնին նկատի ունի նաև երկրի դռների բացումը առաջարկության կատարության առջեկ<sup>15</sup>։ Զ. Մոհի էդ-Դինը զնոպականորեն արտահայտվեց եղիպատական բուրժուազիայի և կալվածատերերի ունեցվածքի բանա-

զրավումների և, յատնավորապես, Ավատատիրության վերացման հաճախաժողովի միջոցառումների դեմ<sup>12</sup>: Նրեսպաշտորին իր մտահոգությանն արտահայտելով երկրում դժվարությունների ժամանակամբ, ևս ասում էր «...մենք շենք կարողանան պետական հատվածում մարդկանց ազատությունը լրիվ զրադվածությամբ: Դրա համար մենք պետք է թույլատրներ մասնավոր հատվածին ավելի մեծ շափով վարի իր գործունեությունը և մասնակցի մեր հասարակության աշխատանքային պրաղվածության պատասխանատվության մեջ»: Եարունակելով իր ելույթը ի պաշտպանություն եղիպատական բռուժուազիայի, ևս պեղում էր, որ «...ոչ մի խաղ (Եղիպատական հասարակության — Ը. Ա.) չպետք է զգա, որ նա շտմի իրավունքների և պարուականությունների հավասարություն, ինչպես մյուս խավերը: Ես ի նկատի ունեմ ազգային կապիտալի խավը, քանի որ նա շարունակական հարձակությունների է հենթարկվում Սոցիալիստական միության (ԱԱՄ—Ը. Ա.) ղեկավարության կողմէց, որը նրան զարձնում է անհայտն որի հետեւանքով էլ հասարակությունն է դառնում անկայում»: Այսպիսով, Զ. Մոհիք էդ-Դինը և նրա ետնում կանգնած պետական բյուրոկրատիան, բռուժուազիան և կաղվածատները պահանջում էին անտեսության մեջ ազատություն տալ եղիպատական մասնավոր կապիտալին ժամանակամբ իր գործունեությունը տառած որևէ ուշմանափակման և վերացնել օտարերկրյա կապիտալի ներթափանցումը խոշընդուռություն բարելիքները: Խակ ընդհանրապես բացահայտ ընդդիմադրությունը, ըստ Էռթյան, հանգես էր զալիս ընդդիմ Եղիպատոսի սոցիալիստական կողմնօրոշման և ԱԱՄ-ի հետ հարաբերությունների վերանայման օգորին<sup>13</sup>,

Անհրաժեշտ է ընդգծել, որ վերոհիշյալ նիստի ժամանակ նաև իր ներքին և արտաքին քաղաքականության պաշտպանությամբ և եղիպատական հեղափոխության նվաճումների պահպանության գորին առավել վճռականորեն արտահայտվում էր միայն ԱԱՄ-ի զիսավոր քարտուզար Ալի Սարրին<sup>14</sup>, ԱԱՄ-ի ԲԴԿ-ի մեացած անդամները՝ Հ. Նաֆիին, Սիդէի Սուկեյմանը, Ա. Սադաթը և յունաները հիմնականում խուսափում էին, ն գեղ, Սադաթը, որն այդ ժամանակ արդին կորցրել էր իր հովանավորին, նիստի ժամանակ չանքիր էր թափում նաև իր նկատմամբ իր հավատարմությունը հավաստելու համար: Այսպիս, նա ոռարկեց Զ. Մոհիք էդ-Դինին Ավատատիրության վերացման հանձնաժողովի միջոցառումների գնահատման հարցում, անելով, որ ըրուազրավումները ընդհանուր առմամբ սխալ չեին<sup>15</sup>: Միաժամանակ զգալով, քամին որ կողմից է փշում, նա ովհուականորեն դիմ արտահայտվեց նաև իր այն առա-

շարկին, որը պարունակում էր երկու՝ կառավարող և ընդդիմադիր կուսակցությունների ստեղծման գաղափարը։ Սադաթը գտնում էր, որ «ու կնշանակի արձակել շնչարին», որոնք հուպեն իշխանությանը զգելով<sup>21</sup>, Կուսակցությունների նկատմամբ այս կարծիքն ուներ Սադաթը 1967 թ. պոստուարին...։ Նա մի ուրիշ «կարծիք» էլ ուներ, որը, նիշտ է, արամարտանորին ոմի քիչ անհարթ էր, բայց ենթադրվում էր, որ Համեմի կլինիք նրան, ում որ ուղղված էր։ Այն վերաբերում էր վարչակարգի գնահատման հարցին։ «Իմ կարծիքով... ամրող համակարգը փուլ եկամ հումիսի 9-ին և 10-ին, բայց այն վերականգնեցին մասամբը, պահանջնելավ միայն Արդեկ նասերի վերադարձը որպես պրեզիդենտ»<sup>22</sup>։

Կարշակարգի ժաղաքական և տնտեսական կողմնորոշման շուրջը նզիպոսիի դնկավարության մեջ առաջարկմական ուժերի և բացահայտ շեղգիմադրության միջև ընթացող պայքարը շարունակվեց մինչև 1968 թ. մարտը այն պատճառով, որ Նասերը երկար ժամանակ տառանվում էր վճռական որոշում կայացնելու։ Այդ ընդդիմադրությանը հարգած հասցեն նա որոշեց միայն բանվորների և ուսանողների փետրվարյան երրոյթերից հետո<sup>23</sup>։ Օգոստոսի նրանց դժգոհությունը հումիսյան պարագաներու որոշ մեղավորների նկատմամբ կայացված մեզմ դատավճիռներից, ցուցարարների մեջ թափանցած աշ տարրերը պահանջում էին պետական ուրոշ կարևորագույն հաստատությունների սվերակառուցում<sup>24</sup>։ Առաջմբը՝ «որոշ և առուժմ՝ ովերակառուցում»։ Մարտի 20-ին Նասերը վերակազմեց կառավարությունը, որից հեռացվեցին Զ. Մոհի էղ-Դինը և Ա. Մ. Կալյունին։ Այս վերակազմումը, ցավոր, շանգեցրեց առաջադիմական ուժերի դիրքերի ամրապնդմանը երկրի զեկավարության մեջ։

Անտարակույս, երեք հիմնական իրողությունների գիտակցման վրա էր հիմնված քողարկված ընդդիմադրության գործունեության աշխատացումը։ 1) որ Նասերը, հմնվելով իր բացարձակ հեղինակության և տողավրդական լայն գանգաժենների աշակցության վրա, ի վիճակի է շախախիլ հարգած հասցեն իր բաղադրական դժին դճմ կանգնող որևէ խընդրակցության (այսուղից՝ բացահայտ առնակատման անհեռանկարայնությունը), 2) որ նա զեկավարության մեջ ինչ-որ ձևով, պիտակցված, թե ինքնարերաբար, աշխատում էր աշերի և ծախսների միջև ազդեցության հավասարաշահություն պահպանել (այսուղից՝ կարենի է որոշակի նպատակների համար շշափակոր գործել), 3) որ նա աներեր էր արտաքին քաղաքական կողմնորոշման ու գոյություն ունեցող հաստակական-քաղաքական հաստատությունները պահպանելու հարցերում (այսուղից՝ պետք է գործել այնպիսի ոլորտներում, որոնք բացահայտորին շարքն-

վեն քաղաքական նպատակադրվածությանը), Ելենելով այս իրողություններից եղիպատական բարձրագույն ղեկավարության և պետական ազարատի այն աշ տարրերը, որոնք համարձակություն չեն ունեցել միանալու բացահայտ ընդդիմադրությանը և գործում էին հեղափոխական թեուլիթի պետական կարեռագույն որոշումների իմաստը և ներգափռակելու, դրանք անցործներին դարձնելու և հետազիմությանը հոգածավորելու միջացով. իրենց շաները ամբողջապես կինոտրոնացրեցին վարչակարգի ուստի համարական հիմքների քայլարման վրա. Բայց, նախքան այս խնդրին անցրադառնալը, մի երկու խոսք այդ ընդդիմադրության մասին:

1957-ին նպիպոտում առաջացած ընդդիմադրություններից թերեւ միայն զինվորական ընդդիմությունն էր, որ կրում էր քիչ թե շատ կազմակերպված քեռություն. Խենջատիներյան պարզ է, որ նին այդ ընդդիմադրությունը նպատակ ուներ դափառության միջոցով հեղաշրջում կատարել, ապա պետք է ունենար նաև կազմակերպական ինչ-որ ձև. Այլ էր քաղաքական բացահայտ և քողարկված ընդդիմադրությունների քեռությունների նպատակադրվածությունը միացնելու էր նրանց, ապա ամյալ իրավիճակում դորժենակերպի հարցը բաժանում էր նին Զ. Մոհի էդ-Դինը գերագիտահանց հումիսյան պարտության ստեղծեած հետրավորությունները՝ փոխելու երկրի զարգացման ուղղությունները և թերագնահատեց զինվորական ընդդիմադրությանը հասցված ջախչախիլ հարվածի նշանակությունը, ապա այնպիսի զեկավար գործիչներ, ինչպիսիք էին Ա. Սադաթը, Հ. աշ-Շաֆիին, Մահմուդ Ֆալզին, Ս. Մարիյը և ուրիշներ, ամենի գործառություն գնահատում ստեղծեած իրադրությունը, թէ պայմաններ շահունեղով առնակատման համար, թէ, թերեւ, գերազանելով խաղաղ նաև ապարհով կերպարանափոխել նասերի վարչակարգը. Մրանք սկսեցին ամրապնդել արդեն 1958 թ. մարտից հետո՝ ի դեմու պետական ապարատում հզոր ուժ գործած տեխնոլոգատական բյուրոկրատիայի ներկայացնեցիչների և այլոց մեծ մասին. Դրանք բարձրաստիճան գործիչներ էին, ոնտեսական հաստատությունների տնօրիններ, նահանգապետեր և այլն, ինչպես Ա. Ա. Հեգազին, Ա. Հ. Ջարին, Մ. Սալիմը, Մ. Ա. Հասանը, Ա. ալ-Կասամին, Ֆ. ալ-Բակուրին, Ա. Ցամաւը, Մ. Խամալիլը, Մ. Արու Ֆաֆիան, Մ. Հ. Մահմուդը, Յու. Մահմեդին, Մ. Շաղիդը և ուրիշներ. Անհրաժեշտ է նշել, որ նասերին նվիրված որոշ գործիչների գործունեությունը այդ ժամանակներում փառարկեն չուր էր լցնում քողարկված ընդդիմադրության ջրաղացին. Այդ գործիչներից էին Ա. Սիդիկին, Ս. Սուլեյմանը, Մ. Ա. Մարզիրանը, Մ. Հ. Հեյթալը և ուրիշներ, որոնք ժամանակին չկարողացան ըմբռնել քողարկված ընդդիմադրությանը.

յան նպատակները, ժառայեցին նրան որպես գործիքներ, իսկ երբ իշխանությունն անցավ այդ ընդումադրությանը, ումանք չէ հառացվեցին ավելի վաղ, քան գլխին կընկնեին, որ իրձնց նասերական սկզբունքներն այլևս պիտանի չեն նոր իշխանությանը: Բոլոր դեպքերում, նասերական վարչակարգի մեջ ոկենտրոնից մի թիվ ազգա մեծ ուժ էր ներկայացնում և օգիտական հեղափոխության ժամանելու էր: Միանգամայն սխալ կլիներ ասել, թե քոզարկված ընդումադրության ներկայացուցիչները միասնական գաղտագրաքաղաքական ուղղության կողմնակիցներ էին: Մի կողմ թողած այդ ընդումադրության առանձին հզոր զեմքերի անձնական հավակնությունները, նրանք արտահայտում էին նպիտական բուրժուազիայի և կալվածատերի տարրեր քաղաքական հոսանքների ձգումները: Տվյալ իրազրությունում, սակայն, նպատակը միասնական է՝ քայլայել և կերպարանափոխել նասերի վարչակարգը:

Նասերի քաղաքական գործելակերպի յշտական գիծը՝ հավասարակշռություն պահպանել իշխանության մեջ և ձախ տարրերի միջև, դրանորովէց նաև այս ժամանակներում: Պետական ապարատի տնօնուերական բլուրների հզորացումը զուգորդվեց երկրի հասարակական-քաղաքական հաստատություններում նասերի սոցիալ-քաղաքական սկզբունքներին հավատարիմ գործիչների գիրքերի ուժեղացումով: Դրանք էին Ա. Սարգին, Դ. էղ-Դին Դաուղը, Ա. Մ. Աբու ան-Նուրը, Լ. Շուկերը, Շ. Գոման, Ս. Շարաֆը, Ֆ. աղ-Դիրը, Ա. Հովհեղան, Մ. Զարկը, Ֆ. Ա. Քարիմը, Ս. Զահեղը, Հ. Սահեղը, Ա. Մ. Զարիդը և ուրիշներ: Մրանք հիմնականում հասարակական-քաղաքական աշխատանքի ուղրատի գործիչներ էին՝ ԱՍՄ-ի, Ազգային ժողովի զեկավարներ, տէկնակատվության, պրոպագանդայի և հասարակական գործերի հաստատությունների տնօրիններ և այնու Մրանց մասին լի կարելի ասել թե համախումբ էին, միասնական նպատակով տուրքացած: Անկայի այդ բանից, սակայն, սրանց գիրքերը շատ ուժեղացան պետության քաղաքական մարմիններում 1967 թ. հետո և դարձան միակ իրական ուժը, որ նասերի վարչակարգի ներսում ի վիճակի էր հակառակվել օրենքոր հզորացող բլուրներատական բուրժուազիային:

Ինքը ըստինքյան բնական է, որ պարտությունից հետո նպիտական դէկավարությունն անցավ երկրի պետական հասարակական և տնտեսական հաստատությունների վերակառուցմանը, որն նորայելի հետ պատերազմական զբության շարունակման պայմաններում պետք է համապատասխաներ ուղմական ժամանակաշրջանի պահանջներին:

1958 թ. «Մարտի 30-ի ծրագիրը» մշակվեց անձամբ Գ. Ա. Նասերի կողմից հետո այդ նպատակով։ Բայց այդ ծրագիրը, դժբախտաբար, կրում էր ընդհանուր բնույթ, այն չէր կոնկրետացնում հատկապես պետքից անհատական և ֆինանսական քաղաքականությունը։ Ըզ դարձմանը չէ, որ այդ փաստաթղթի ընդունումից անմիջապես հետո պետական գործունեության հետո այդ ոլորտները իրենց վրա ընդունեցին այս ամենը լայն հարձակման առաջին գործները։ Եգիպտական մամուլը հեղեղվեց տողնուական համակարգի հիմունքների վերանայման ու սիրապաշտական տնտեսական քաղաքականության վարման անհրաժեշտության վերաբերյալ հրապարակումներով։ Խել էին ի նկատի ունենալու «իրապաշտական» առելիքն ։ Ալ-Անրամը թերթի տնտեսական մեծաբարներացի նախին առաջարկում էր. «Ազգատել արտօնքին առնելուր երա վրա դրված սահմանափակումներից...անհրաժեշտ է մասնավոր հատվածին տալ իր լրից Շեարավորությունը արտահանության մեջ, վերացնելով նրա նաև ապարհին գոնվող խոլորդուները և հատկացնելով անհրաժեշտ արտօնաբարությունները։ Վերանայել տարերկրյա կապիտալ ներդրումների գերեն ընդհանրապես և արտահանինը՝ մասնավորապես<sup>25</sup>, Այս պահանջները ավելի մանրամասնորեն շարադրվում էին որոշ բարձրաստիճան պաշտոնյաների երույթներում։ Ֆինանսների մինիստր Աբդել Ազիզ Հեղապին պահանջում էր տեսահական կառավարման ապահենատրությունը և...բազմաթիվ կինտրոնական ապարատների գերի սահմանափակման..., տեղական վարչության համար արակցության և հաջողության բոլոր Շեարավորությունները ընձեռնելու միջոցով<sup>26</sup>, Մատակարարման մինիստր Մ. Ա. Մարգիբանը իր ձայնին էր միացնում նրանց, ովքեր պահանջում էին տնտեսության վերացում, այսինքն՝ պետական հատվածի արտաքին առների և ֆինանսավորման ոլորտներու ունեցած մենաշնորհի վերացում, նզ այդ պետք է արգել և...ներքին առներում ազգային կապիտալի գերի թեթևացնան ու տնտեսական զարգացման ծրագրի իրավորման մեջ մասնավոր հատվածի մասնակցությունը շահագրգուելու նպատակով<sup>27</sup>։ Այս միտքն ավելի մանրամասն շարադրում է նույն Հեղապին։ Եմ կարծիքով, ամենակարևոր կետը, որի մրա պետք է սկսովի մեր ուշագրությամբ, սոցիալիստական պրակտիկայի միջոցառումների վերանայումն է, հատկապես պետական և մասնավոր հատվածների վերաբերյալ, վերջինիս արտաքրելով շարժման ազատություն արտադրության, ֆինանսավորման և արտահանության մեջ<sup>28</sup>, Այսինքն՝ կապիտալիստներին պետք է Շեարավորությունը տալ ներդեմի իրենց կապիտալները որտեղ նրանց հարմար է, հաշվի շահե-

լով համազգային շահները, Այդ նպատակի համար դրամատները պետք է նրանց առատորներ ֆինանսավորեն, իսկ արտահանման կազմակերպությունները լինչվեդուտեն նրանց կողմից օտարերկրյա ընկերությունների հետ ուղղակի հաջարերությունների հաստատմանը Այդ նշանակում էր նաև անտեսության զարգացման պլանային սկզբանքի խախտում, գների նկատմամբ պետական վերահսկության, սպառողին իսկապես անհրաժեշտ ապրանքների առաջարկի վերացում, որը դուռը լրիվ կրացեր սպիտակույթաների առջն և այլն իր հերթին, տեսեսության և արտարին առնորի մինիստր Հ. Ա. Զաքին հանդիս էր գալիս օտարերկրյա կապիտալ ներդրումների շահագրգուման սպառին<sup>25</sup>, իսկ նրա հեթական՝ նպիպուսի արտաքին առնորի վարչության պետ Մ. Եազիկը կոչ էր անում դրա համար ստեղծել ներքին տանհրաժեշտ մթնոլորտան<sup>26</sup>,

Ինչ վերաբերում է նպիպուսի տնտեսության պետական հատվածին, ապա այն ուղղակի մեղադրվում էր տանշահութարերության և տնտեսության մեջ Վերը հիշատակված Մ. Եազիկը և ուրիշները պահանջում էին պետական հատվածի այն ձեռնարկությունների գործերի վերանայում, որոնց ձախողություն արդին հաստատված էր զարգացման և տեղական սպառման ու արտահանության ապրանքների արտադրության հարցերում իրենց գերի կատարման մեջ նրանք պահանջում էին կամ վերացնել այդ ձեռնարկությունները, կամ էլ վաճառել մասնավոր անձանց Շազիկը գտնում էր, որ պետական հատվածի գործունեության ուղղանքը անհրաժեշտ է ամբողջովին նեղացնել տեանր և սորատեգիտական արդյունաբերության ձեռնարկություններով, որոնք պահանջում են խոշոր կապիտալներ երկարաժամկետ ներդրման համար, ինչը լի կարող իրավորել մասնավոր հատվածը: Եազիկը գտնում էր, որ մնացած նյուզերը պետք է արտադրվեն այդ նույն մասնավոր հատվածին<sup>27</sup>: Այս բոլորը նշանակում է տնտեսության մեջ պետական հատվածի որոշիչ դերի վերացում, վերադարձ պետական կապիտալիզմի, երկրի տնտեսական զարգացումը նորից տփոքը արդյունաբերությունից սկսում և այն:

Ինչ ասես չին պահանջում հետադիմ գործիչները, տնտեսագիտներն ու հրապարակախոհները ևնորացման ու ովերակառուցման անդամն տակ: Եվ պետական հատվածի որոշ ձեռնարկություններին արգող դուռացիկաների վերացում, և ովատահության վերականգնումը ֆինանսավորողի և հարկային իշխանությունների միջև, և ոչ իրապաշտական մաքսարին դրույքների վերացում և այն, և այլն, եռուելով այդ ժամանակների մասին Ա. Գ. Բակլանովը Արանգամայն իրավացիութեան նշում է, որ ևներքին հետադիմությունը... նորից անցավ հարձակման<sup>28</sup>:

Անտարակուլս, 1988 թ. գարենը և աժռանք նպապուսում տեղի էին ռահենում էական փոփոխություններ: Կառավարության վերակազմանը և մայիսին եմարտի 20-ի ժրադրիչ հաստատմանը հաջորդեցին, այսպես կոչված, Հռոմեայան բարեփոխումները և հուլիսին անցկացված ԱՍՄ-ի ընտրությունները, որոնք, ի դեպ, մեծ նշանակություն չունեցան այդ կազմակերպության գործումնեության աշխատացման համար<sup>23</sup>: Անհամեցու է համառոտակի անդրազառնալ Հռոմեայան բարեփոխումներին, որովհետև դրանց, նպատակ ունենալով ամրապնդել օտարերկրյա գավթիչների զեմ պայքարի նրանք տագավային հիմքը տագավային եկամտի ավելացումով, բրոլոր վարչական և տնտեսական նյուղերում աշխատանքի համար առողջ մթեռորտի ստեղծումով արտադրության, սպառման և արտահանման միջև հավասարակշռություններ մտցնելով, պետական բյուջեում սղենքիցից վերացումով և տեկամուտների բաշխման մեջ արդարությանց հաստատումով<sup>24</sup>, այնուամենայնիվ, որոշակի դարձավ նաև ների կառավարության էական նահանջը աչ ուժերի մնալուների առջն, որը հետագայում նպաստեց նրանց զիրքերի ամրանալուն:

Հռոմեայան բարեփոխումները ընդգրկում էին վարչական, տնտեսական և ֆինանսական ասպարեզները:

Վարչական ասպարեզում լուժարքի ձևակերպեցին մի քանի շին և բանկազնությունը որոշ նոր պետական ու անտեսական կառավարման մարմիններ, կրօնագործությունը կամաց էական և տեղական պետական ապարատի բավականաչափ հաստիքներ, դիվանագիտական կորպուսը: Ֆեղական վարչության գերը մեծացվեց, որը, ավելա գեղագրում, նշանակում էր իշխանության ապակենուրունացման ուժեղացում:

Տնտեսական ասպարեզում սահմանափակվեցին և պարզվեցին արեստական միավորների կապերը պետական վերադաս մարմինների հետ պլանավորման, ֆինանսավորման և այլ բնագավառներում: Ամեն մի տնտեսական միավոր պետք է գործեր միայն անտրական հիմքի վրա: Բացի կարևորագույն անտեսական միավորումներից, որոնք պետության համար ունեն սատրատեգիկական նշանակություն, մյուս բոլոր միավորումներից պահանջվում էր գործով քույց տալ իրենց կենսունակությունը: Վեհասով աշխատող ձեռնարկությունները հնամակա էին լուժարքի:

Ֆինանսական ասպարեզում թույլացվեց պետության վերահսկողությունը պետական հատվածի ֆինանսական գործումնեության վրա: Դրամառանային վարկերի և ուրիշ ֆինանսական գործառությունների բնագավառում վերացվեցին պետական հատվածի առավելությունները մասնավոր հատվածի նկատմամբ: Դրամառաների վարչական խորհուրդները

ստացան այս կամ այն ձեռնարկության տևատեսական դրությունը գեահատելու և նրա ֆինանսավորումը շարումակելու հետավորության որոշման իրավունքները։ Նախատեսվում էր, որ հետազայում տևատեսական միավորներն աշխատեն կառավարական ֆինանսական հրահանգերից զերծ շրջանակներում։ Մասնավոր հատվածի ձեռնարկատերները հետարավորություն ստացան իրավունքները արտահանման գործարքները օտարերկրյա ընկերությունների հետ, շրջանցելով պետական առևտրական ընկերություններին։ Այս մասնավոր ձեռնարկությունները, որոնք ունեն արտահանման գործարքներ, իրավունք ձեռք բերեցին գրանցվելունիվ ստացած կայուն վայլուտայով շահույթի որոշակի մասը պահելի հրենց համար<sup>35</sup>։

Հարկավոր է նկատի ունենալ, որ Հունիսուն բարեփոխումները հետևեցին արդյն շարժման մեջ դրված վարչական ապարատի վերակազմմանը և սոցիալ-տեխնական քաղաքականության վերանայմանը։ Այսպիս, Հունիսի 4-ին Ժառակարարման մինիստր Մ. Ա. Մարտիրանը մինիստրական որոշումով լուժարքի ձեռնարկեց Ժառակարարման նահանգական կենտրոնները<sup>36</sup>։ Հասկանալի է, որ այս որոշումը առևտրականներին հետարավորություն տվեց, շրջանցելով պետական հատվածը, ձեռնամուխ լինել գործարքների անմիջականությունն արտապահան ձեռնարկությունների և ընկերությունների հետ։ Այլ խոսքով ասած, եթե ժառակարարման նահանգական կենտրոնները նախկինում պլանաշափորեն ստանում և բաշխում էին որոշակի ապրանքների ֆոնդեր, ապա այժմ առևտրականների հայեցողությանն էր թողնվում ձեռք բերել ուղած ապրանքը, ուղած բանակով՝ անմիջականությունն արտապահան ձեռնարկություններից, որը նրանց հետավորությունն էր տալիս որոշել բարեփական և ուշ պետքական ապրանքները և նրանց զերքը։

Ներքին գործերի մինիստրությունն, իր հերթին, վարչական գծով Հունիսի 10-ին որոշեց վերանայել այն գյուղական և ավանային օմոդաների և մաշյախանների<sup>37</sup> գործերը, որոնք հեռացվել էին իրենց պաշտօնեներից Ազատատիրության վերացման հանձնաժողովի կողմից<sup>38</sup>։ Խոսքը վերաբերում է թիվով 939 օճառների և մաշյախանների, որոնք ըրուլուը մերձավոր և բարեկամական կապեր ունեին ավատատիրական ընտանիքների հետը<sup>39</sup>։

Համառոտակի պետք է անդրադառնալ նաև պրեզիդենտական մի որոշման էությանը, որն ուներ սոցիալ-քաղաքական կարևոր նշանակություն։ Հունիսի 6-ին շալ-Արամըց հրապարակեց ըրանվորը և բարեփական անդրմինների պրեզիդենտական նոր սահմանումը։ ՇԹԱՆՎՈՐ. այդ

նա է, ով զրադպում է ձեռքի կամ մտավոր աշխատանքով արդյունաբերության, կամ գլուղատնեսության, կամ սպասարկման ոլորտում և ապրում է այդ աշխատանքից ստացած նկամոթ հաշվին նա իրավունք չունի անգամագրվել արհեստագործական արհմիություններին, յստեղ է լինի համարաների, բարձրագույն ուսումնական հաստատությունների կամ ուղմական բոլեշների ըրշանավարտ, Դրանցից բացառությունն են կազմում երանք, ովքեր իրնեց կյանքն սկսել են որպես բանվոր ու ձեռք են բերել համարանական գիպլում, մեալով իրենց բանվորական արհմիությունում, Խօսրին այս սահմանումը որոշակի առումով ոմեծ քայլ էր գեպի առաջք, եթե հաշվի առնենք, որ նախելին սահմանումը ըրանվորս էր համարում արհմիության անդամ լինողին և աշխատավարձ ստացողին<sup>40</sup>, Այսուանենայնիվ, այս սահմանումը շեր վերացնում խառնաշփոթությունը աշխատավոր ժողովրդի կոնկրետ զասկարգի մեջնարանման մեջ նվազագույնը՝ Շիտովացի. այդ նա է, ով ընտանիք հանգերծ, այսինքն՝ իր կնոջ և երեխաների հետ տիրում է ոչ ավելի քան տասը ֆեղանի...»։ Այս սահմանման վրա հարկավոր է մի փոքր ավելի ուշադրություն դարձնել: Այո, պյուղացից Խախիկին հասկացությունը իր մեջ ներառում էր մինչև 25 ֆեղան ունեցողներին, որն իսկապես ձևական էր գարձնում գյուղացիներին ու բանվորներին ընտրական մարմիններում 50 տոկոսի հատկացման սկզբունքը<sup>41</sup>, նվազ այս առումով, իրոք դա նույնպես ոմեծ քայլ էր գեպի առաջք: Առկա է նաև մեկ տարի անց, 1969 թ. Հովհիսին, Հողատիրությունը մեկ անգի համար 50 և ընտանիքի համար 100 ֆեղանով սահմանափակելու բարեփոխումը: Հենց այստեղ է, որ նորից պետք է ընդգծել այն հակառակությունը, որ նասերի կառավարության հեղափոխական միջնացումը անպայման զուգորդվում էր զիշտումներով: 1956 թ. գյուղատնտեսական կոռուկատիվների մասին № 317 օրենքը սահմանում էր, որ նրանց վարչական խորհությունների անդամների 4/5 մասը պետք է կազմեն մինչև 5 ֆեղան հոգատարածություն ունեցող գյուղացիները: Այդ օրենքի ովքալ պահանջը ոգյուղացիները հարկացության նոր ձևակեպումից հետո դարձավ այ ուժերի հարձակման նպատակական: Ի վերջո, այդ նույն հովհիսյան բարեփոխումների № 51 օրենքով սահմանվեց, որ վարչական խորհությունների անդամների 4/5 մասը կազմում են մինչև 10 ֆեղան ունեցողները<sup>42</sup>, Հասկանացի է, որ զյուղական հարուստները այդ խորհություններում կազմելու էին մեծամասնություն: Դեռ ավելին, հետագայում անդրագիտ զյուղացիներին արգելվեց լինել վարչական խորհությունների անդամ: Բայց չէ՞ որ նը-

բանք կաղմում էին դյուզական բնակչության 36,4 տոկոսը։ Անցկացվեց նաև բավական թվով հոգածերերի ունեցվածքի ապարանազրավում, վերացվեց իրացման կոռապերատիվ համակարգը, որը հեարավորություն տվեց պյուղական կապիտալիստներին ունորինել աղքատ գյուղացիների հրացաւմը «նրանց համար կործանարար պայմաններում»<sup>43</sup>։

1968—1969 թթ. որք արի նաևից ընդունվում էին նոր որոշումներ՝ հազար մասնավոր հատվածի գործունեության ընդլայնման Մասնավոր հազար գլխավոր գործարությունները մինչև հունիսին բարեփոխումները հումքի ձեռքբերումն էր, հարկադրական սոցիալական ապահովագրումները, ներմուծման-արտահանման գործողությունները և հարկերը։ Այժմ, հարաբերականորեն զուտ հումիսյան բարեփոխումները գերատեսական դեկազմարության ձեռքբերում վերափոխվեցին մասնավոր հատվածի պահանջների բավարարման կոնկրետ հրահանգների։ Առաջինը, հումքի ձեռքբերման բարեղությունները մեծապես նվազեցին։ Երկրորդը, սոցիալական ապահովագրության մեջ իրանց զերև ունեին զգալի տուգանքները, որոնց հնթարկվում էին այն մասնավոր ձեռնարկությունները, որոնք խախտում էին սոցիալական ապահովագրության մասին սրբները։ Այժմ, մինիստրական որոշումով այդ տուգանքները մեծապես նվազեցվեցին, կամ, կարելի է ասել, վերացվեցին։ Այդ որոշումը ստուգող պաշտոնյացի հայեցողության էր թողնում։ տուգանքները այս կամ այն ձեռնարկատիրույք որների խախտման համար, թե՛ ոչ Այդ նույն օրնենքում առաջ կային որոշ այլ հարկադրական պահանջներ, ինչպես ասենք, 18 տարեկանից ցածր աշխատղների պարտադիր ապահովագրումը։ Այժմ այդ ապահովագրումը թողնվում էր ձեռնարկատիրույքնեցողությանը՝ ապահովագրելով ոչ բոլոր հնթավարպետներին, այլ՝ որնտրովիս։ Երրորդը, արտահանման-ներմուծման գործարքներում պետական մենաշնորհի շրջանակները մեծապես նեղացվեցին։ Մասնավոր ընկերությունները իրավումք ստացան ազատորեն կազ ստեղծելու ստարերկրյա ընկերությունների հետ։ Այս իրավումքը նրանց համար մեծ արժեք չէր ներկայացնել, եթե նրանք արտահանման գործարքներից լիարդանային ստանալ կայուն վայրուտայինք որոշակի բաժին, որի համար նրանք իրավումք ձեռք բերեցին։ Չորրորդը, մասնավոր ընկերությունները հասան այն բանին, որ շահույթի որոշակի մասը ազատվեց հարկերից<sup>44</sup>։

Արդեն 1969 թ. վերյերին վերացվեցին մասնավոր ընկերությունների ֆինանսավորման հարցերում եղած բոլոր խոշնդրությունը։ Դրա-

մատները արտոնչալ պայմաններով նրանց տրամադրում էին երկարաժամկետ, միշտաժամկետ և կարճաժամկետ վարկեր<sup>43</sup>.

Արտաքին տնտեսական կապերի մեջ նույնական նկատմամբ էր նաև երկարաժամկետ, միշտաժամկետ և կարճաժամկետ վարկերի միջտ և օտարերկրյա կապիտալի ներդրավումը եղիպտական տնտեսաթիւն մեջ սկսվեց նոհակությունում<sup>44</sup>, բայց դրա նույնիսկ խորհրդաշխանական արժեքը ի վերջո օգտագործվելու էր աշ ուժերի կողմից 1971—1974 թթ. բաց դռներից քաղաքականությունը հիմնավորելու համար:

Որպես արդյունք այս բոլորի մասնավոր հատվածի արտադրանքը 1968 թ. համեմատությամբ 1959 թ. աճեց 5 տոկոսով և կազմեց երկրի ընդհանուր արդյունաբերական արտադրանքի 25 տոկոսը, Այդ արտադրանքի արժեքը 1968 թ. 292,3 մլն. եղիպտական ֆունտից 1969 թ. հասավ 313,5 մլն. եդ. ֆ.-ի: Խոչ վերաբերում է մասնավոր արտահանման գործարքներին, ապա նրանց արժեքը ավելացավ այդ նույն ժամանակ 4,2 մլն եդ. ֆ.-ից 11,2 մլն եդ. ֆ.-ի, արտինքն՝ համարյա 254 տոկոսով<sup>45</sup>: Բայց չէ՞ որ 1966—1967 թթ. ֆինանսական տարում այդ արտահանությունը կազմում էր միայն 1,9 մլն. եդ. ֆ.<sup>46</sup>, այսինքն երկու տարվա ընթացքում այս ավելացել էր մոտավորապես 600 տոկոսով:

Ինչու եղիպտական դեկամարդությունը գնաց այդ բանին, միթե պետական հատվածը չէր կարող ապահովել անհրաժեշտ տնտեսական աճ: Այս հարցին անուղղակիորեն պատասխանում են հոմիուրան բարեփոխումների հեղինակները, պատճառաբանելով տնտեսության մեջ ներդրման միջոցների սահմանափակությունը և մասնավոր կապիտալի ներդրավման անհրաժեշտությունը տնտեսության զարգացման աշխատաքարտան համար<sup>47</sup>: Հասկանալի է, որ տանուզ աված պատերազմից հետո տնտեսական զարգացման մեջ կարող են առաջանալ թափի նվազեցման և անկման երեսություններ: Բայց այդ դրություննեց դուրս գալու ուղիների որոնման ժամանակ կարելի էր և անհրաժեշտ էր ելքը տեսնել անմիջականորեն պետական հատվածի զարգացման պայմանների ընդլայնման մեջ: Չէ՞ որ սկսած 1956—1957 թթ. առաջին ազգայինացումներից մինչև 1967 թ. Եղիպտոսի տնտեսական աճը միշտադային ֆինանսական շրջանների գնահատական ժամանակ կազմել էր տարեկան 5 տոկոս, իսկ 1960—65 թթ. նույնիսկ 6,6 տոկոս<sup>48</sup> և դա այն ժամանակ էր, երբ պետական հատվածում կձևարունացած էին արդյունաբերական հիմնական արտադրամիջոցների 85 տոկոսը, զրանատնային համակարգը, ամրող հաղորդակցական միջոցները: Ի գեաւ, վերոհիշյալ թվերը ցուց են տալիս, որ

արերի պնդումը, թէ իրը պետական հատվածը անշահարեր է, միանգա-  
մայն զուրկ էր հիմքերից:

Ընդունելով հանդերձ, որ սխալ կլինի պնդել, թէ նաև իրի կառավարու-  
թյան վերոհիշյալ զիշումները եղիպտական աչ ուժերին համազային  
մտաշարպվ անտեսական մեծ արժեք էին ներկայացնուած և որ այս փու-  
լում պետական հատվածը շարունակում էր մնալ երկրի պիխավոր տը-  
տեսական հիմքի արտահայտիչը, եղիպտական անտեսության զարգաց-  
մանը ուղղություն ավող որոշիլ ուժը, դրանց հետ մեկտեղ պետք է  
միանգամայն պարզությ ընդգծել, որ վերոհիշյալ զիշումներն ունեին  
կարևոր սոցիալ-քաջաքական նշանակություն եղիպտական հատվա-  
կաթյան համար: Պետական հատվածի ամրապնդման փոխարեն, հատ-  
կապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ հատվածի ստճագու-  
մից անցել էր ընդամենը մի 6—7 տարի և այն կարիք ուներ համակող-  
մանի աշակցության՝ վերջնականապես դառնալու որպես տեսեասթյան  
բոլոր թիւ թէ շատ կարևոր ճշուղերն ընդգրկող համակարգ, արտադրու-  
թյան կարգաբերված համընդհանուր մեխանիզմ, նաև կառավարու-  
թյունը, ոգզարին պայմաններում ձգտելով շատապ վերականգնել և ազելի  
արագացնել տեսեասկան անի թափը, շգտավ արդ նպատակով այլ գոր-  
ծուն միջոցներ, քան պետական հատվածի պիխավոր ընդդիմախոսի՝ մաս-  
նագոր հատվածի հզորության վերականգնման հեարավորությունների  
ընդլայնումը:

Եղիպտական միջին խափի տեսեասկան հզորության մեծացումով  
և խոշոր բռնժուազիայի որոշ մասի տեսեասկան կարողության վերա-  
կանագնումով աչ ուժերը, առանց մեծ աղմուկի, սկսեցին ուղղմական պար-  
ության համար մեղադրել երկրի սոցիալ-անտեսական համակարգի  
հիմունքները: Նզ հին 1965 թ. փետրվարյան ելույթների ժամանակ նը-  
րանք պահանջում էին իշխանության որոշ հաստատությունների վերա-  
կառուցում, ապա նույն թվի նոյեմբերյան ուսանողական հոգումների  
ժամանակ, օգոստոսը ծծելով երիտասարդության որոշ մասի զմբուռքու-  
նը մերձավորարեկլյան կոնֆլիկտի լուծման ձգձգման նկատմամբ: Նը-  
րանք արդեն պահանջում էին սվերացնել դրոշմած լոգունզների հասա-  
րակությունը:

Այս ժամանակներում ազելի հատակորն սկսեցին երկալ պետա-  
կան բյուրոկրատիայի ալլասերման նշանները: Այդ բանն ի նկատի ունե-  
նալով է, որ նաև մինիստրների խորհրդի նիստերից մեկի ժամանակ  
հայտարարեց, որ «... ներքին նակատում անհրաժեշտ է առավելագույն  
բաների գործադրել, որպեսզի վերը տրմի կաշառակերությանը... բա-

հական չէ, երբ մենք գտնվում ենք սոցիալիստական վերափոխումների փուլում, թողեներ որոշ մարդկանց կուտակել մեծ հարստություններ՝ 300 կամ 400 հազար ֆունտ (եղ. Ֆ—Ե. Ա.), միաժամանակ հեարավորություն տալով նրանց խոռափել հարկերից: Այդ կեշանակեր, որ մեր մեր հասարակությանց հրամ հեր դեպի և և ի ինքներս ենք ոչելացնում այն, ինչին հասել ենք<sup>23</sup>, նաև որի այս խոսքերը վկայում են, որ նա պիտակցում էր եղիպտական հասարակության մեջ այդ ժամանակներում զարգացող գասակարգային բնշուացման պրոցեսի վտանգավոր բնույթը:

Անդրադառնալով բողարկված ընդդիմադրության գործունեությանը մի կարևոր մի կողմ թողնել խորհրդանշական արժեք ունեցող այնպիսի մի փաստ, ինչպիսին էր 1969 թ. երկրորդ կեսից Այդ Սարբու ժամանակավոր հեռացնումը քաղաքական զորժունեության ասպարեզից: Նրա հույս ամսին արտասահման կատարած պաշտոնական այցելությունից վերադառնալուց հետո աջ ուժերի բանքերով սարքվեց մի գործեց, որով նա մեղադրվում էր մաքսային կանոնների խախտման մեջ: Զեայած այն բանին, որ բարեհ հետաքննությունը ցույց տվեց այդ մեղադրանքի անհմանավորվածությունը, այնուամենայնիվ Ա. Սարբին Գանտորեն հեռացվեց ԱՄՄ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնից: Իրենց պաշտոններից հեռացվեցին նաև ԱՄՄ-ի գեներալության կարևոր դեմքերից նրա քաղաքական կոմիտեի գոտանենյակի վարիչ Մուստաֆա Նազին, հանրապետության նախագահության պլիսավոր քարտուղար Արդի Մագիդ Ֆարիզը, ռԱխրար ալ-Ճասումը շարաթաթերթի վարչական խորհրդի նախագահ, իր ձախ հայացքներով հայտնի լրագրող Մահմուդ Ամին ալ-Ալիմը և ուրիշներ<sup>24</sup>: Ի գեղ, այս բարեհը թիւնու մեջ իր զվաստակեց ուներ թաքնված ընդդիմադրության գլխավոր գործիչներից մեկը՝ ֆինանսների մինիստր Ա. Ա. Հեգապիլը: Այս բոլորը նշանակում է, որ աշ ուժերը աշխատում էին բոլոր միջոցներով հեղինակագրկել կամ լեզուացնել եղիպտական հեղափոխության նվաճումների պահպանանը և խորացնանք նվիրված մարտիկներին: Այս հանգամանքը կարևորություն է ներկայացնում հատկապես այն ֆունի վրա, երբ այդ նույն ժամանակ էական փոփոխություններ էին առաջի ունենում եղիպտական բանակի, մասնավորապես նրա գլխավոր շտաբի հրամանատարական կազմի մեջ, որը համարվեց աչ տարրերով, իսկ շտաբը սկսեց զլիավորել բբիդադային գններալ Մ. Ահմեդ Սադեկը<sup>25</sup>, որը հնապայտում, 1971 թ. մայիսյան իրադարձությունների ժամանակ կարևոր գեր ունեցավ Սադաթի և Այդ Սարբու խմբակցությունների միջև պայքարում բանակի գիրքության մեջ:

Նասերը Հավատարիմ իր սկզբունքին՝ հավասարակշռություն պահպանել երկրի քաղաքական ուժների միջև, որոշ ժամանակ անց նորից Շնարավորություն ավելց Ա. Սարրուն շարունակելու իր քաղաքական գործունեությունը որպես ԱՄՄ-ի ԲԳԿ-ի անդամ և պաշտպանության գործերով պրեզիդնայի օգնուական Բայց երբ Այս Սարրուն մեղադրելու ժամանակը գար, այս ոգործը մոռացության չէր արվելու

Նասերի մի շարք հետոյները ցույց են տալիս, որ նա միանգամայն որոշակի էր բարձրության կղիպտական հետազիմության գործունեության վտանգավոր բնույթը։ Անընդեմ մի առաջել որոշակի ձևակերպված մեջքերում այդ միաբը հաստատելու համար. չ... Բյուրոկրատական բուժուազիան շատ գեղքերում քանում է պետությունը կամ պետական համար (կղիպտական տնտեսության—Ե. Ա.) գարձենել գործիք մասնավոր սեփականության ստեղծման համար (Հարստությունների կուտակման համար—Ե. Ա.) կամ սարուածի ենթարկելով պետական միջոցառումների անցկացումը, կամ համագործակցելով մասնավոր հատկածի որոշ շահագործողական առարիթմի հետո<sup>55</sup>; Այս խորքերը, ինչքան էլ զարմանալի թվա, նասերն արտասանել է 1968 թ. ապրիլին։ Դրանից հետո մենք տեսաներ, որ ոչ միայն միջոցներ չեն ձեռնարկում այդ դրությունը շտկելու, այլև ընդհանրական, այս պրոցեսը գնալով շարժեակցում էր և, ի դեմ տեխնոլոգրատական բյուրոկրատիայի հզորացման, ավելի ընդլայնվում հետագայում նվազ այստեղ պետք է առել հետեւալլը։ 1967 թ. Հունիսից հետո արտաքին և ներքին քաղաքականության վարման մեջ դրանց համապատասխանեցման և հավասարակշռության սկզբունքը խախտվեց և նասերի կողմից առաջնակարգությունը արվեց Մերձավոր արևելյան կոնֆլիկտի լուծմանը (այս հանգամանքը պարզորոշ է գարձենում թեկող այն, որ 1967 թ. Հունիսից հետո նրա երույթները հիմնականում շշափում էին արտաքին քաղաքական հարցերը), ԱՄՄ-ի և հասարակական-քաղաքական հաստատությունների գործունեությունը ընեղացվեց ժողովրդական զանգվածներին իրայիշական ագրեսիայի հետևանքների վերացման համար մորիլիկացնելուն, իսկ անտեսական կառավարման խնդիրները հիմնականում թողնվեցին պետական բյուրոկրատիայի վրա։ Այս բանում երկրորդական դեր շունեցավ նաև պրեզիդենտ Նասերի վատացող առողջական վիճակը։

Ելապիսով, 1967—1970 թթ. Եղիպտոսի ներքաղաքական իրավունքունը ընութագրվում է աչ ուժերի գործունեության ավելի ու ավելի ընդլայնումով և, հետեւար, քաղաքական առարիթման հսկանքները տարանցատման պրոցեսի արագացումով։ Մրկրի բարձրագույն զեկավա-

րովթյան մեջ աշ գործիչների, պետական ապարատում տեխնոլոգատական բլուրուն կատարած անդամանների համար անդաման է առաջարկություն տարրերի գիրքների հզորացման, ընդհանրապես եզրակացման բուրժուազիայի տևականական կարողության ամրապնդման & ներքաղաքական իրադրության որման պայմաններում պրեզիդենտ Նասերի վաղաժամ մասը վճռական նշանակություն ունեցավ եզրակացման հեղափոխության հետագա ընթացքի համար: Մեր խոսքը եզրափակենք Ա. Գ. Բակլանեավի նաև երական վարչակարգի դարձացման վերաբերյալ մի շատ դիպուկ բեռլինական պայմաններում իր ընկույթով յանրըրուրածուական եզրակացման վարչակարգի զարգացումը առաջազիմական սոցիալ-անտեսական վերափոխությունների հույսով հանգնեցրեց վարչակարգի սրբարձուականացմանը: Նրա զեկողմարտությունը, կամ ակնելի ճիշտ այն խմբավորումը, որը Գ. Ա. Նասերի մահից հետո հաղթեց բազարական պայքարի ընթացքում, վերջեց հաօրակության շահագործուական ուժեղությունը:

Е. А. АБГАРЯН

## ВНУТРИПОЛИТИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ В ЕГИПТЕ В 1967—1970 гг.

В статье рассматриваются предпосылки усиления позиций правых сил на последнем этапе революционного развития Египта.

Несмотря на общеизвестные прогрессивные преобразования, которые происходили на вышеуказанном этапе, тяжелое военное поражение в ходе арабо-израильской войны в июне 1967 г. и возникшие в результате его сложные политические и экономические проблемы обусловили углубление внутриполитической борьбы в руководстве страны. Исходя из того, что открытые оппозиционные выступления некоторых высших политических группировок не дали желаемых результатов, египетская реакция на этом этапе сконцентрировала свои основные усилия на получении экономических уступок для частного сектора и для подрыва государственного сектора в стране. Наряду с другими действиями, направленными на ослабление основ революционного режима, реакционные силы Египта стремились к трансформации наследовского режима в соответствии с общественно-политической ориентацией эксплуататорских классов страны.

## الوضع السياسي الذي خلي في مصر ١٩٦٧-١٩٧٠

يعالج المقال قضايا ظبورة المقدمات الاساسية لازدياد نفوذ القوى الجماعية في المرحلة الأخيرة من الثورة المصرية، فعلى الرغم من التحولات التقدمية الشهيرة التي جرت في المرحلة المذكورة فالهزيمة العسكرية الخطيرة في حرب ١٩٦٧ التي افرزت جملة من المشاكل والمصاعب السياسية والاقتصادية، اشتد كذلك الصراع السياسي الداخلي في صفوف قادة البلاد، وبما ان المعرضة السياسية العلنية التي مارسها بعض القيادات السياسية لم تعط نتائجها المتوقعة فقد ركزت الرجعية المصرية قواها في جهودها لانتزاع المزيد من التنازلات الاقتصادية لصالح القطاع الخاص ولنفس اسن القطاع العام، فضلا عن ان تلك المجممات كانت ترمي الى اضعاف اسن فركيز النظام الثوري، فالقوى الرجعية في مصر هدفت لتحويل النظام الناصري الى نظام اجتماعي قسياسي تسوده علاقات الاستغلال الطبقي في مصر.

### III. ПРИЧЕРНОМОРСКИЙ

1 Насер Г. А., Проблемы египетской революции, М. 1979, с. 150, 158:

2 1 фунт = 0,42 £ст.

3 Насер Г. А., Проблемы египетской революции, с. 156:

4. من معاضر اجتماعيات عبد الناصر العربية، ١٩٥٧-١٩٧٠، اعداد: عبد العميد فريد، بيروت، ١٩٧٩، ص ١٥١.

5 Бруненц К. И., Освободившиеся страны в 70-е годы, М. 1979, с. 68.

6. Խոսկը առաջ է, որ յս ժամանակ Ս. Հ. Շեհը պայմանագրություն դիմումավոր է առաջարկություն է ունեցել 1962 թվականից: Այս շնորհմանը պահանջված է առաջ 1962 թ. տարբերել և 200 օրենքը, զայ առաջարկահան պատասխան առաջարկություն ձեմակարգել է պահպան առաջ բարեկարգությունը:

7. من معاضر اجتماعيات عبد الناصر العربية، والد و لية، ١٩٥٧-١٩٧٠، ص ١٠١، فضلا عن سيف الدين، هل كان عبد الناصر ديمقراطياً، بيروت، ١٩٧٧، ص ٣٢.

8. Խոսկը պահպան պարբեր բարեկարգություն առաջարկություն է Ս. Հ. Մարտիրոսյան:

7. Създаващите съдържанието на изложението съдържатът е изграждан във външния обрамване на изложението.
8. "من محاضر اجتماعات عبد الناصر العربية والدولية".—1970. ص ٣٢.
9. محمد حسني هيكيل، "خريف الغضب"، بيروت، ١٩٧٣. ص ٦٣.
10. Белев Н. П., Примаков Е. М. Египет: время президента Насера. М. 1981. № 298.
11. 1987 г. Септември 8-и и 19-и. Официалният екип на Египетската делегация във Виена съседства до гостите, когато премиерът ѝ е приветстван от една пръстенка на ръката със златният емблема на Египетската делегация.
12. "من محاضر اجتماعات عبد الناصر العربية والدولية".—1970. ص ٣٢.
13. № ٢٩٨.
14. № ٢٩٩.
15. № ٢٩٧.
16. № ٢٩٩.
17. № ٢٩٩.
18. Нашилось ли в Египте демократия? Уже в Египте № ٢٩٩
- Н. П., Примаков Е. М. Египет: время президента Насера. с. 299—306
19. № ٢٩٧.—1970. "من محاضر اجتماعات عبد الناصر العربية والدولية".
20. № ٢٩٩.
21. № ٢٩٩.
22. № ٢٩٩.
23. № ٢٩٩.
24. "Financial Times". London. 1.3.1968
25. "الاهرام". القاهرة، ١٩٧٤/٥/٣.
26. № ٢٩٩.
27. № ٢٩٩.
28. № ٢٩٩.
29. № ٢٩٩.
30. № ٢٩٩.
31. № ٢٩٩.
32. Бахланов А. Г. Рабочий класс современного Египта. М. 1981. № 156.
33. طهشاف، قضايا متحرر الوطنى والشورة الاشتراكية فى مصر، بيروت، ١٩٧٦. ص ٣٣.
34. الاهرام، ١٩٧٤/٢/٢١.
35. № ٢٩٩.
36. № ٢٩٩.
37. Узръ—зрънческият екипът, дружини—зрънчи, която също съдържа една пръстенка.
38. الاهرام، ١٩٧٤/٧/١.
39. كمال سندوفى، "الخلافة: سياسية للغلانيين المصريين"، بيروت، ١٩٧٦. ص ٣٦.
40. Белев Н. П., Примаков Е. М. Египет: время президента Насера. № 327;

- 41 *报刊* №49.
- 42 كمال المنوفي، «الثقافة السياسية للقلادحين بمصر»، من ١٩٧٣-١٩٧٤.
- 43 طه شاكر، «قضايا التحرر الوطني والثورة الاشتراكية في مصر»، من مصر، ٢٠١٣/١١/٣.
- 44 «الاهرام»، ٢٠١٣/١١/٣.
- 45 *报刊* №49.
- 46 Беллек Н. П., Примаков Е. М. Египет: время президента Насера, с. 335; «Два направления социально-экономического развития в Африке», М., 1980, Гусарова В. И., Обострение борьбы за социальный прогресс, «Софиа», с. 87.
- 47 «الاهرام»، ٢٠١٣/١١/٣.
- 48 *报刊* №49.
- 49 *报刊* №49, ٢٥.٦.١٩٨٨.
- 50 احمد ثابت، «مصرفيون وتنمية» و «انتسوجة»، بيروت، ١٩٧٣، من ٢، ٥٠.
- 51 من محاضرات عبد القادر العربيه و اند ولية، ١٩٧٧-١٩٧٨، من ٢، ٥١.
- 52 خوانط، آين أصبح عبد القادر في جمهورية إسدات، «بيروت»، بيروت، ١٩٧٣، من ٦١، ٥٢.
- 53 *报刊* №49.
- 54 *报刊* №49.
- 55 «Октябрьский раб» Смирнова Г. Н. Основные проблемы индустриализации Египта, 1952-1977, М., 1980, с. 135.
- 56 Басалов А. Г. Рабочий класс современного Египта, с. 190.

ՍԻՐԻԱՅԻ ԶԱԿԱՐԱՅԱԿԱՆ ՊԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՇՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ  
ՄԵՐՉԱՎԱՐՈՐԱԲԵՎԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԽԱՏՄԱՄԻՔ  
(1967—1970 թթ.)

Եզիդականի, Սիրիայի և Հորդանանի զեմ Խորայելի 1967 թ. հունիսի ագրեսիայի հետևանքով մերձավորաբնելյան կոնֆլիկտը վերաբեց միջազգային ճգնաժամի:

Խորայելի կառավարող շրջանները դեկավարվելով սիրոնիզմի ծավալապաշտական ծրագրերով, ձգտում էին հասնել ծգիզտոսի և Սիրիայի առաջադիմական, հակաիմագերիալիստական վարչակարգերի տապալմանը; Բայց, առաջնություն տալով արդ խնդրին, խորայելական ռազմագործական դեկավարությունը միաժամանակ հասկանում էր, որ ժամանակաշրջանական քաղաքականության հետագա հաշողությունը կախված է ոչ միայն Մերձավոր արևելյում իմացերիալիզմի պլանների առավելացույն սիրոնիստականացումից: Արարական հակաիմագերիալիստական թեկ առաջատար երկրների՝ Եզիդականի և Սիրիայի ռազմական պարտությունը դիմովում էր իրրեն իրենց ծրագրերի նախարած ու անհրաժեշտ պայման, իրեն այդ երկրների քաղաքական կուրսի որակական փոխակերպման հիմնական նախադրյալ, որն ի վիճակի կլիներ վճռական ազգայցություն դրսել արարական աշխարհի քաղաքական-քաղաքական խոսական պայքարի վրա՝ ի շահ իմացերիալիզմի և սիրոնիզմի:

Խորայելն իր ժրագրերի իրագործումը կապում էր համակարգերիալիստական խնդիրների հետ, համաշխարհային մակարդակով՝ երկրագնդի տարրերը շրջաններում աղքային-աղատազրական շարժումներում հանդիս գալով որպես նախաձեռնող դաշնակից<sup>1</sup>:

Եզիդականի, Սիրիայի և Հորդանանի առյև կանդամած խնդիրների քննանությունը գեներա լիք նշանակում մերձավորաբնելյան ճգնաժամի ըուժման կոնկրետ ուղիների նկատմամբ նրանց դիրքորոշումների նույնա-

կանություն։ Նրանց բաղաքականության վրա մեջում էին մի շարք դորժեներ՝ կապված, մի կողմից, խրայնլական ազգեսիայի ռազմաքաղաքական ու տնտեսական հնանանքների հետ, իսկ մյուս կողմից՝ ամբողջությամբ վերցրած արարա-խրայնլական կոնֆլիկտի նկատմամբ նդիպատոսի, Սիրիայի և Հորդանանի իշխող վարչակարգերի գաղափարախոսական դրույթների հետ։

Խրայնի կողմից Դոլանի բարձունքների և Կունեյտրայի շրջանի գավթումը Սիրիայի համար նշանակում էր 1000 ք. կմ. տարածքի կորուստ, որը կազմում էր երկրի ընդհանուր տարածքի մոտավորագիս 0,5 տոկոսը։ Խրայնլական ազգեսիան, միաժամանակ, հանդեցրեց տեղական բնակչության զանգվածային տարագրմանը, և փախառականների թիվը հասավ մոտ 100 հազարի<sup>3</sup>.

Համեմատած այն դրությանը, որ ատեղթվեց նդիպատոսում ու Հորդանանում, Խրայնլական ազգեսիայի անմիջական բացառական աղղությունը Սիրիայի անանության վրա ավելի նվազ էր<sup>4</sup>, Սակայն, եթե Սիրիայի անանության վրա ազգեսիայի աղղությունը քննարկենք երկրի ռազմական բաղաքականության անհետագելի խնդիրների ամրացական լուծման հետ տնտեսական գարգացման հեռանկարների փոխականակցության տևանկերտությունը, ապա այն, պարզվում է, բավականին զգայի էր։ Պաշտպանության, ռազմական տեխնիկայի կորուստների համարը անգույնանության վերակառուցման համար ժախսերի կտրուկ ավելացման անհրաժեշտությունը կանխորոշեց 1966—1970 թթ. երկրի երկրորդ հնգամյա պլանի հաստարման ընթացքում տեսհասական մի շարք կարեռը հախաքննավորման դժվարությունների խորացումը։

Խրայնլական ազգեսիայի բացառական աղղությունը երկրի տընտեսական զարգացման հեռանկարների, զինված ուժերի դրության ու Կունեյտրայի և Դոլանի բարձունքների ռազմասուրատեգիտական կարևոր շրջանի կորուստի վրա մերժավոր-արևելյան ճգնաժամում Սիրիայի զիրքորոշման օրյնկատիվ պատճառներից են։ Դրա հետ մեկակազ, ստեղծված իրադրության մեջ բացառիկ կարնոր նշանակություն ձեռք բերեցին սույնեկատիվ գործոնները։

1963 թ. մարտին Սիրիայում ստանձնելով իշխանությունը և առաջին անդամ հնարավորություն ստանալով իրազործելու իր զարգափարական ծրագրերը, Բաաս կուսակցությունը, որպես իր մերժարաքական բաղաքականության հիմնարար խնդիր, բազմաթիվ ներքին և արտաքին բազաքական հարցերից առանձնացրեց և առաջ քաշեց պաղեստինյան հարցի լուծումը<sup>5</sup>։

Պաղեստինյան Հարցը նոհե և առաջ արդյունք էր ուսղմաքաղաքական տեղաշարժերի, որը Մերձավոր Արևելքում սկիզբ առաջ այն բանից հետո, երբ ՄԱԿ-ի պլյազմոր ասամբլեայի 1947 թ. նոյեմբերի 29-ի N 181/11 Հայտնի որոշման համաձայն ստեղծված Խրայելի պետական կառուցվածքը ամբողջովին համապատասխանեցվեց սիստեմի գաղափարախոսական հիմնագրություններին, իսկ իմպերիալիստական շրջանների հրահրած 1948—1949 թթ. պազճատինյան պատերազմում արարական բանակների պարտությունը հանգնեցրեց արարական պաղեստինյան պետական ստեղծման համար հատկացված տարածքի բաժանմանը, մի կողմից Խրայելի, մյուս կողմից միապետական Հորդանանի և Եղիպատուի միջև:

Իր համարարական ընույթի մասին հայտարարող և արարական ողջ ազգը ներկայացնելու հավակնող Բառու կուսակցությունը, իշարկե, չը կարող մի կողմ հանգնել այնպիսի կարևոր հարցի լուծումից, ինչպիսին պաղեստինյան Հարցն էր և շհայտարարել Պաղեստինի արար ժողովրդի օրինական իրավունքների բավարարմանը հասնելու իր վճռականության մասին։ Ընդ որում, Բառու կուսակցությունը պաղեստինյան Հարցին մոտենում էր ո՞չ միայն հաշվի առնելով Խրայելի դերը ու դիրքը, այլև նեկատի առնելով այն երկակի դրամիունը, որի մեջ հայտնի էին նպատակն ու Հորդանանը՝ Խրայելի հետ փատորքներ պատվախանատվություն կրելով պաղեստինյան արարների ազգային իրավունքները թեկուզ և յանձնակիորեն իրավորժված լինելու համար։ Դրան համապատասխան էլ ծեավորվեց Բառու կուսակցության դիրքը, որը պաղեստինյան Հարցի լուծումը աներկացնում էր որպես ամբողջ Պաղեստինի ազատագրում։

Այս կապակցությամբ կարևոր է հիշեցնել, որ Միրիայում Բառու կուսակցության իշխանության գլուխ անցնելու պահին Մերձավոր արևելքի հակամարու ուժերի դիրքում հանդես էին գալիս մի կողմից Խրայելը և արարական հետապեմ վարչակարգերը, իսկ մյուս կողմից՝ առաջադիմական, հակամմակիալիստական վարչակարգերը ունեցող արարական երկրները՝ արարական աշխարհի առաջնորդ նպիպոտոփ պլյազմությամբ։ Այս կողմերի միջև հակասությունները աստիճանաբար ստանում էին սուր ընույթ, ընդպրկելով արարական աշխարհի բաղաքական—գուղաղափարախոսական ու սոցիալ-տնտեսական զարգացման ռույր բնագավառները։ Մերձավոր արևելքում հեղափոխական ընթացքի զարգացումն ուղեկցվում էր ուաղմահան լորպաժության ընդհանուր անռվ, որի համար որպես կատալիզատոր հանդես էր գալիս Խրայելի ծավալա-

պաշտական քաղաքականությունը՝ նվ պատահական չէ, որ այդ պայմաններում պազմատինյան հարցը, ըստ արարական երգինների տեսակետի, և առաջին հերթին նրանց, որոնք նորայի հատ ունենալով ընդհանուր սահմաններ, վարում էին անկախ, առաջադիմական քաղաքականություն, ականց ենթարկվել որակական նոր բնկման՝ սրբանապես շաղկապվելով պետական անվտանգության, ազգային ինքնիշխանության և տարածքային ամրողականության ապահովման հրատապ խնդիրներին, Այդ նույն ժամանակ նորայի ադրեսիվությունը նպաստում էր, որ արարական քաղաքական որոշ շրջաններում էլ ավելի ամրապնդի պաղեսատինյան հարցի արմատական լուծման անհրաժեշտությունը, այսինքն՝ նորայի ոչնչացման վերաբերյալ տեսակենուր, իր քաղաքականության մեջ առաջին դիմ մզկելով Պաղեսատինի ազատազրման խնդիրը, Բառ կուսակցությունը, հասկանալի է, որ ձգտում էր ոչ միայն ընդդեմ արարական ազգայնականության և արարական միասնականության գաղափարներին իր անկեղծ նվիրվածությունը, այլև պայքարի էր կոչում ընդդեմ նորայի թանի որ այն, ըստ բառապահանների, սիոնիզմի գործական մարմեազորումն է, որի գաղափարների հետևողականուրնեւ կենացործումը նորայի դեկազար շրջանների կողմից, եթե ընդհանրապես չէր բացառում, ապա, առնվազն, նշանակալից լափով առմանափակում էր արարական աշխարհում և, առաջին հերթին հենց Սիրիայում, բառապահանության նպատակների իրականացման հետավորությունները:

Դյան հետ մեկտեղ, սիոնիստական նորայի դեմ պայքարը ոչ միայն պիտի ընդդեմ սիրիական բառապահանների այն տեսակետը, որ արարական ժողովուրդների համակողմանի առաջադիմության ու միասնականությանը կարելի է հասնել միայն ամեն տեսակի ու ձեմ աշարերկրյա նշյումից ամրողապես ապատ լինելու պարմանով, այն պիտի ապացուցեր նրանց կարողությունը (որպես միայն Բառ կուսակցությանը ընորոշ ու յուրահատուկ հատկանիշ) գլխավորնելու արդ նպատակների համար սկսված պայքարը:

Սիրիայում 1968 թ. գիետրվարին Բառ կուսակցության ձախ թերի իշխանության գլուխ անցնելուց հետո Պաղեսատինի ազատազրման խընդիրը էլ ավելի կարևոր տեղ պառկեց սիրիական նոր զեկավարության քաղաքականության մեջ՝ «Պաղեսատինը մեր ներքին, արարական և միջազգային քաղաքականության առանցքն է...» Այժմ պարզ է դարձել, որ ապատազրական պայքար կարող նն մզկէ միայն արարական առաջադիմական ուժերը՝ ազատազրական պատերազմի միջոցով... Այն կհանգիստանա արարական ողջ հայրենիքի ազատազրման վերջնական ուղին և

նրա պիտակցական միավորումը սոցիալիստական ու ժողովրդական հիմքերի վրա—, նշում էր Սիրիայի ձախրասասական նոր զեկավարությունը ինեղիր գեկով ժողովրդական ազատազրական պատերազմի ժամանական ընթացքում (որը Ներառում էր պայքար ոչ միայն Խորացիի, այլև բոլոր արարական հետադիմ ու պահպանական վարչակարգերի դեմ), բասասականության ստրատեգիական նորատակների պասսիլ հոշակուամից անցնել դրանց ակտիվ իրավուրժմանը։ Հետ որում բասասականների հիմնական նպատակը տուաշվա պես մեռում էր արարական միասնական նորթյան հասնելը, միայն թե Բառս կուսակցությունն արդին ճշուած էր գրան հասնել ոչ թե բանակցությունների սեղանի շուրջը, այլ իր բոլոր գաղափարախոսական ու քաղաքական հակառակորդների հետ բացահայտելու մասին, արարական միասնական նորթյան ուսաշարայնությունը և ներակալեցվեց ավելի քարձր, արարական աշխարհում հեղափոխության առաջնայնությանը՝ հեղափոխությունը պիտի դառնար միասնականության և ախաղրյալ։

1988 թ. հոկտեմբերին Դամասկոսում տեղի ունեցած Բառս կուսակցության համարարական համագումարում սահմանվեցին Սիրիայի ձախրասասական զեկավարության արտաքին քաղաքական գործունեության հիմնական սկզբանեքները և ուղղությունները, որոնց հիմքում ընկած էին համագումարի ընթացքում մշակված ժողովրդազատազրական պատերազմի կոնցեպցիայի դրույթները, Կոնցեպցիայի կառուցվածքը ձևավորող հիմնական քաղաքամասը Խորայելի գեմ զինված պայքարն էր, որն առաջին հերթին, պետք է իրավուրդվեր Պաղեսահինի զիմաղության շարժման (ՊՇԵ) ուժերով, այդ պայքարի զուգորդումը բոլոր արարական հետադիմական վարչակարգերի դեմ պայքարով և արարական աշխարհի առաջադիմական ուժերի համախմբումը Բառս կուսակցության շուրջը։

Խշադն հայտնի է, Սիրիայի ձախրասասական զեկավարության փորձերը՝ կենսագործել ժողովրդազատազրական պատերազմի կոնցեպցիայի դրույթները, առանձնապես Հայողությունն յունեցան, բայց հանգեցրին մի կողմից արարական մի շարք նրկեների և առաջին հերթին, Հարգանանի հետ Սիրիայի հարաբերությունների կարուկ վատացմանը, իսկ մյուս կողմից Խորայելը դրանք օգտագործեց Մերձավոր արևելյան ռազմական լարվածության շինացման և արարական հարեւն երկրների դեմ ապրեսիայի և ախաղապատրաստման համար Այսուամենայնիվ, ադրեսիայից հետո էլ սիրիական զեկավարությունը շրաժարգեց ժողովրդ-

շամպատագրական պատերազմի կոնցեպցիալից, որպես արարական հրկըներում սիրիական բառասական հեղափոխության ռազմագրադարձական գոխակերպման միջոց, ոչ ընդհանուր գոհում, գոնում էր, որ Մերձավոր արևելյան առեղծված իրազրությունը ոչ միայն հաստատում է այդ կոնցեպցիալից հիմնական դրույթների ճշմարտացիությունը, այլև առաջի բարենպաստ պայմաններ է առեղծում նրա իրականացման համար<sup>9</sup>.

1967 թ. Հունիսի 11-ին Սուվանի պրեզիդենտ Աղմարին նգիպոտոսի ոլորկիցիցն նաև նրին առաջարկեց Խարթումում բարձր մակարդակի համարարական հանդիպում գումարել Մերձավոր արևելյան առաջացած իրազրությունը քննարկելու և խրայիլական պղբեահայից հետևանքների վերացմանն ուղղված համատեղ որոշումներ մշակելու համար։ Պրեզիդենտ Նասերն անմիջապես արձագանքոց արդ առաջարկին, ընդունելով, որ նման հանդիպման գումարման առյևն լիւ ոչ մի արգելու, քանի որ Խորայի դեմ համատեղ պայքար մղելու ստիպողական անհրաժեշտությունը վերացրել է արարական հրկըների միջև եղած բոլոր տարածությունները<sup>10</sup>։ Միրիական դեկավարությունը, սակայն հակված չէր միշտարարական հարաբերություններում գործերի իրական վիճակին և համարարական բարձր մակարդակի հանդիպման հարավոր հաջողության վերաբերյալ հգիպոտական պրեզիդենտի լավատեսությանը և, իր հերթին, առաջարկեց գումարել այնպիսի խորհրդակցություն, որին մտանակցեին միայն առաջադիմական վարչակարգեց ունեցող երկրների դեկավարները։ Իր զիրքորոշման պարզաբանման և այսպես կուշած բարձր մակարդակի էվոլյուց հանդիպման նախապատրաստման նպատակով Միրիայի պրեզիդենտ Աթասին, Հունիսի հրկըների կեսի սկզբին պաշտոնական այցելություններ կատարեց Աէմիր և նգիպոտոս։

Այսուհետեւ, Միրիան մասնակցեց Հունիսի 17—18-ը Թումեյթում կայացած արարական երկրների արտաքին գործերի մինիստրների խորհրդակցության աշխատանքին, որը քննարկեց Սուվանի առաջ բաշակ մերձական ժամանակաշրջանում համարարական գործողությունների ծրագրը։ Այդ ժրագիրը նախատեսում էր միշտարարական հարաբերություններում ռմբնողորտի մաքրագործումը, Խորայի աշակցող ԱՄՆ-ի և Անդիբայի հանդեպ ՄԱԿ-ում արարական երկրների համաձայնեցման դիրքորոշումը, պատերազմի ժամանակ ԱՄՆ-ի, Անդիբայի և Հունանցիայի նկատմամբ հայտարարված նավթային շրջափակման շարումակում, համարարական զինվորական հրամանատարության ռահեղում, համատեղ պաշտպանական ժրագրի մշակում և իրականացում և խրայիլա-

կան ապրեսիայի Հետևանքների վերացման ուղղված պայքարի համար արարական երկրների բոլոր եյութական ռեսուրսների մորիկացում, Խորհրդակցության ժամանակ քննարկվեց նաև համարարական բարձր մակարդակի հանդիպման գումարման հարցը, բայց խորհրդակցության մասնակիցները կոնկրետ համաձայնության շնորհեցին նրա անցկացման տեղի և ժամանակի վերաբերյալ<sup>11</sup>.

Թումելյանի խորհրդակցությունը ընդունառվեց այն կապակցությամբ, որ արտաքին գործերի մինիստրները հունիսի 18-ին մձկնեցին Նյու-Յորք՝ մասնակցելու Մերձավոր արևելյան նվիրված ՄԱԿ-ի Դվինավոր ասամբլեայի արտաներթ նատաշրջանի աշխատանքներին:

Հունիսի 20-ին ելույթ ունենալով ՄԱԿ-ի ամբիոնից, Սիրիայի պրեզիդենտ Աթասին Մերձավոր արևելյան առաջացած ուղղմաքաղաքական առողջապահության որպես Խորայիլի ժամանակաշրջան քաղաքականության ուղղակի հետևանքը հստորիկ քննադատելով ու դատապարտելով ԱՄՆ-ի և Անդյանի խօրայինամեւ գիրքորշումը, պրեզիդենտ Աթասին, միաժամանակ ընդդեմ այն դրական դերի նշանակությունը, որ խաղացին Սովորական Միությունը, սոցիալիստական երկրներն ու լմիացած երկրները Մերձավոր արևելյան ուղղմական գործությունների ժամանակ արարենքին ուղղմաքաղաքական ու քարոյական աշակցություն ցույց տալով: Սիրիայի պրեզիդենտը բարձր գնահատեց նաև սովորական պատվիրակության առաջարկած բանաձևի նախագիծը, որը, նրա կարծիքով, ցույց էր տալիս Մերձավոր արևելյան արդարացքի խաղաղության հանճելու սկզբունքային ուժին<sup>12</sup>:

Դրանից մեկ օր առաջ Դամասկոսում ելույթ ունենալով աշխատավորների զանգվածային միտինգում Սիրիայի բանվորական արշամբությունների համընդհանուր ֆեդերացիայի նախագահ և Հունդին Հայուննեց Քարայիլի ազգայինին ու նրա Հետևանքների վերացման ուղիներին սիրիական ղեկավարության տված սկզբունքային գնահատականը: Նա ընդգծեց, որ ապրեսիան Հետապնդում էր ո՞չ այնքան ուղղմական ու անսեռական նպատակներ, որքան քաղաքական, խնդիր գննելով վարկարձեկել, իսկ այնունատե՛ տապալել տառաշդիմական արարական վարչակարգերը: Ազգայինի ամենամտանգավոր և ամենապյուսազոր նպատակն այն էր, նշեց և. Հունդին, որպեսզի հարգածը հասցենը հենց սոցիալիզմի գաղափարներին, աշխատավոր արարական զանգվածներին անվտանգություն ներշնչեր սոցիալիստական ուժերի հանդեպ, կասկած սերմաներ սոցիալիստական երկրների հետ համագործակցության շարտեակաման նպատական մեջ:

Այսուհետեւ և. Զունգին իր ելույթում ցույց ավեց, որ պարտության գիշաճը պատճառող հանդիսացան հենց իրենց՝ արարների սխալները, Միենուին ժամանակ նա ընդգծեց, որ սիրիական Բաաս կուսակցությունը, որպես Պաղեստինի և արաբական աշխարհի մյուս մասերի պատապքրման պայքարի համար ժողովրդական զանգվածների համախմբման միջոցներ, երբեք չի հրաժարվի ժողովրդազատապրական պատերազմի գաղափարներից, չի հրաժարվի արար աղքի նախատակների իրազրժման միակ ուղին հանդիսացող առաջադիմական ու հեղափոխական արարական ուժների ամրապնդման արարական հեղափոխական ստրատեգիայի և ամենից առաջ, Ալժիրի, Եգիպտոսի և Սիրիայի այդ նպատակների մարմնավորման օրինակ հանդիսացող հեղափոխական շարժումների ամրապնդումից<sup>13</sup>:

1967 թ. Հունիսի վերջին և Հուլիսի սկզբին Սիրիայի ղեկավարությունը մի շարք քայլեր ձեռնարկեց արարական պետությունների ղեկավարների խորհրդաժողովի պայմանների պարզաբանման ուղղությամբ:

Սիրիայի ինֆորմացիայի մինիստր Ջուրին, ելույթ ունենալով Դամասկոսի ռազմայով, նշեց Սիրիայի և Ալժիրի դիրքորոշումների լրիվ համբեկնումը, որոնք հանդեռ էին զալիս միայն առաջադիմական արարական երկրների (Ալժիրի, Սիրիայի, Եգիպտոսի և Իրաքի) ղեկավարների հանդիպում հրավիրելու և այդ երկրների միջև առանձնահատուկ աշխատական ու ռազմական կապեր ստեղծելու առաջարկությամբ<sup>14</sup>:

Հունիսի 26-ին Սիրիայի վարչապետ Հույենը կարևոր այցելություն կատարեց Բաղդադ Խելպիս հաղորդվեց, Իրաքի ղեկավարների հետ սիրիական կառավարության ղեկավարի թանակցությունների ընթացքում հանդիպում հրավիրելու հարցի շուրջ երկու կողմերը հասան փոխըմբռնման: Սիրիական և իրաքան ղեկավարների կարծիքով, նման համարարական հանդիպման համար կարող էր հիմք և պայման դառնալ միայն բոլոր մասնակիցների կողմից վազօրոք մշակված սկզբունքորեն հակառանալու օրակարգը: Այդ հարցում համանման դիրք էր պրակի նաև Ալժիրի ղեկավարությունը<sup>15</sup>:

Հուլիսի 9-ին և 11-ին եգիպտական ղեկավարության ու Ալժիրի և Իրաքի ղեկավարների միջև տեղի ունեցած շփումների, ինչպես նաև Դամասկոսում հուլիսի 11-ին Ալժիրի և Սիրիայի պրեզիդնտների հանդիպումների շնորհիվ կողմերը համաձայնության հետն Հուլիսի 13-ին Կահիրենում Ալժիրի, Իրաքի, Սիրիայի և Եգիպտոսի պետությունների ղեկավարների հանդիպում կայանալու շուրջ:

Բարձր մակարդակի բարեր հանդիպումը նշանակված օրը ակնեց

իր աշխատանքն ու շարուեակեց մինչև Հուլիսի 16-ը։ Հուլիսի 15-ին Կահիրեռաւ Հավաքած պետությունների ղեկավարենքին միացավ Սուվանի պրեզիդին Ազգարին։

Սիրիական պատվիրակությունը, որի կազմում, բացի պրեզիդին Աթասիից, մտել էին Բաատ հուսակցության երկրամատային ղեկավարության քարտուզար Ա. Զուղիդը և մի քանի մինիստրներ, Հուլիսի 13-ին Հանդիպման մասնակիցների քննարկմանը ներկայացրեց միացյալ զինվորական հրամանառարության և քաղաքական խորհրդակցական խորհրդի ստեղծման առաջարկ։ Բացի այդ, պրեզիդին Աթասին հայտարարեց, որ Սիրիան պատրաստ է քննարկել նպիպառուի հետ միավորմանը վերաբերող հարցը։ Բայց պրեզիդին նաև երեսը միավորմանը ամենի կարևոր է արարական գրավված տարածքների խնդիրը<sup>17</sup>։ Այս նպատակով նպիպառուի ղեկավարը առաջարկեց շհրաժարվել խնդրի քաղաքական կարգավորման փորձերից, միաժամանակ պատրաստվելով ուժի գրածադրյամբ տարածքի ազատազրմանը<sup>18</sup>։ Այսպիսի զիրք գրավելով, պրեզիդին նաև մանապես մերժեց ժողովրդագատազրական կոնցենտրացիալի ոգով տողորված սիրիական առաջարկը՝ հայտնաբերյին մերդուներով անհապաղ պատերազմ սկսել Խորայիշի դեմ<sup>19</sup>։ Կողմերն ի վերջո համաձայնվեցին Մոսկվա ուղարկել Ալժիրի և Խրաքի պատվիրակությունները իսրայելական ադրբեյջանի հետևանքով տուժած արարական երկրներին Սովորական Միության կողմից բազմակողմանի գնություն ցույց տալու հարցերի քննուրկման համար և, երկրորդը, 1967 թ. օգոստոսին Խարթումում հրավիրել արարական երկրների արտաքին գործերի մինիստրների հանդիպում, բարձր մակարդակի համարական հանդիպման օրակարգը մշակելու համար<sup>20</sup>։

Կահիրենի տիտրը հանդիպումը ցույց տվեց, որ խորայելական ադրբեյջանի հետևանքների վերացման համար պայքարի արարական ճակատ կազմակերպելու սկզբանքների վերաբերյալ նպիպառուի և Սիրիայի ղերթերի տարրերությունը, որն ընդհանուր առմամբ հանգում էր արարական հետազնմ ու պահպանողական վարչակարգերի հետ փոխվիշտմային համագործակցության հերավորությանը, համալրվեց նոր, կարեռը հանգամանքով։ Նիւթե Սիրիայի ղեկավարությունը Խորայիշի գլուխների համապատասխան պատերազմ սկսելու կու անհետ փորձում էր ազրեսիայի հետևանքով Մերձավոր արևելքում առաջացած նոր պայմաններին համապատասխան ձեռփոխել ժողովրդագատազրական պատրազմի կոնցենտրացիայի հիմեական դրույթները, ապա նպիպառուի պրե-

զիդենտը նախընտրում էր տարածքների աղասագրման խնդրին մոտենալ ավելի շետև զիրցերից։ Նասերը, մերժելով նաև հայրուկային պատերազմի ձևավագ ռազմական գործությունների նոր հերթափուլ մկնելու գաղտաբարը, բայց, միտքամանակ, չկասկածելով ուժի դիրքերից խնդրի լուծման անխուսափելիությանը, քանում էր համակողմանի քաղաքական-դիվանագիտական մաներման օգնությամբ ամրապնդելի իր վարչակարգի դիրքերը, պայմաններ ստեղծել վերականգնելու ու զարգացնելու հրկի ռազմական ու տնտեսական հզորությունը, նախապարագատել նրան Խորային դեմ այնպիսի մակարդակով լայնամաշտար պատերազմ վարելուն, որն համապատասխանն ժամանակակից պաշտամանը ներին և ի վեճակի լիներ հաջողություն աղաւնչվի<sup>20</sup>.

Սիրիան Կահիբեռավ համաձայնելով համարաբական հանդիպման պայմանները քննարկել արտաքին գործների մինիստրների մակարդակով, այդունանդեմ, ուժեղացրեց դեռ հունիսի երկրորդ կեսից ժամայած պրապագանդիստական արշավը հետադիմական արաբական վարչակարգերի դեմ, խուսափելով սակայն, կոռիզիտուն երկրների հիշատակումից<sup>21</sup>,

Արտաքին գործերի մինիստրների հանդիպումը կայացալ նարբեռում 1967 թ. օգոստոսի 1—5-ը։ Հանդիպման ժամանակ հիմնական վիճարանությունը ժավավագեց արևմտյան երկրների նավթային շրջափակման հարցի շուրջ։ Այն ժամանակ, երբ Սաուդյան Արաբիան, Լիբանանն ու մի շարք այլ երկրներ հանդես էին դալիս դրա դադարեցման գոտին, Սիրիան, որին աջակցում էր Իրաքը, վճռականորեն պահանջում էր շարունակել լրտափակումը և վերջուն, հաշվի առնելով, որ նավթային շրջափակման հարցում տարակարժություններ կան, որտեղում կայացվեց Բաղդադի օգոստոսի 15-ին հրավիրել նավթային արդյունաբերության, ֆինանսների ու տնտեսության մինիստրների հանդիպում։ Բաղդադի հանդիպման հանձնարարականները պետք է քննարկվենին օգոստոսի 26-ին՝ Խարթումում արտաքին գործերի մինիստրների հանդիպման շարունակման ժամանակ<sup>22</sup>, Խալքես հաղորդվում էր, Սիրիան հանդես էր գտնիս Խարթումում հերթական խորհրդակցություն անցկացնելու որոշակի ամսաթվի հաստատման գեմ։ Սիրիայի արտաքին գործերի մինիստր Մախուտը, որը նավթային շրջափակման հարցում սուր վեճ էր ունեցել Սաուդյան Արաբիայի մինիստրի հետ, հանդիպման առաջին հերթափուլի ամարտից հետո հայտարարեց, որ այն ժամանակի անօգուտ կորուստ էր միայն<sup>23</sup>,

Խարթումի խորհրդակցության ընդմիջման ժամանակ տեղի ունեցան աշխույժ դիվանապիտական շփումներ առանձին արաբական երկրների

Ներկայացուցիչների միջև համապարպական հանրաժողովի օրակարգի հիմնական հարցերի վերաբերյալ նրանց դիրքերի մերձեցման նպատակով, Դրանում առավել շահագրգովածություն ցուցաբերեցին նրաբի պրեգիսնու Արեֆը, Հորդանանի թագավոր Հուսեյնը և Սուլահի վարչապետ Մահմուրը: Այսպէս, պրեգիսնու Արեֆը օգոստոսի 10-ին այցելեց Դամակու, որտեղ երկրորյա բանակցությունների ընթացքում սիրիական զեկավարության հետ քննարկեց Մերձավոր արևելքի հետապատճեռագական իրադրության քաղաքական ու տեսեական ուղղեցերտերը: Ըստ Արանեանի լրատվական շրջանների հազորդումների, պրեգիսնու Արեֆը փորձեց սիրիական զեկավարությանը համոզել ավելի ճկուն զիրք պրավիլ արևմտյան երկրների հետ քաղաքական ու տեսեական շփումների հարցերի հանդեպ<sup>24</sup>, Հանդիպման ազարտին՝ օգոստոսի 12-ին Դամակուում սիրիա—իրաքյան համատեղ հայտարարություն արվեց, որում, մասնավորապես, Խզվեց, որ իսրայելական ազրեսիայի հնականքների վերացման հարցի քննարկման ժամանակ կողմերը հասան լիակատար համաձայնության<sup>25</sup>:

Արաբական երկրների նավթային արդյունաբերության, ֆինանսների և տնտեսության մինիստրների կոնֆերանսը Բաղդադում իր աշխատանքն սկսեց 1967 թ. օգոստոսի 15-ին: Կոնֆերանսի ժամանակ Միրիան, որին աշակցում էին Իրաքը և Ալժիրը, նորից պահանջեց արևմտյան երկրների անվերապահ նավթային շրջափակում, ինչպես նաև ԱՄՆ-ի և Անգլիայի նկատմամբ այլ պատճամիշտցերի կիրառում: Նման զիրբորոշման դժմ հանդն էին գալիք Սաուդյան Արարիայի, Մարոկկոյի, Թունիսի, Լիբիայի, Հորդանանի և Քուվեյթի ներկայացուցիչները: Եղիպտոսի երկայացուցիլը, ընդհանուր առմամբ հարեւով նավթային շրջափակման անհրաժեշտության գաղափարին, այլուամենայինիվ, այդ հարցում լզրավեց պարզորոշ, միանշանակ զիրք<sup>26</sup>: Դրա հնականքով այս հարցի քննարկումը որոշվեց փոխադրել եարթումի կոնֆերանս:

Արաբական երկրների արտաքին գործերի մինիստրների երկրորդ հանդիպումը կայացագ հարթումում 1967 թ. օգոստոսի 26—27-ը և ընդհանուր առմամբ հավանություն տվեց այն դրույթներին, որ առաջազրում էր Սաուդյան Արարիայի գլխավորած խմբավորումը, որը մասնավորապես գտնում էր, որ արևմտյան երկրների նավթային շրջափակման գաղափարումը արաբական նավթարդյունահանող երկրներին թույլ կտա ավելի արդյունավետ ներդրում կատարել արաբական պրաված տարածքների վերադարձման համար Խորայիլի դիմ պարագարի կազմակերպման գործում<sup>27</sup>:

Կանդերանսի ավարտից հետո Սիրիայի արտաքին գործերի մինիստր Մախուսը մինչև պատուի 31-ը մնաց Խարթումում՝ Հայունութեան սպառելով Դամասկոսից Համարարական բարձր մակարդակի Հանդիպմանը Սիրիայի հետագա մասնակցության վերաբերյալ։ Ձևալած այն բանին, որ, նպաստուի պրեզիդենտ Նասերը և Ալժիրի արտաքին գործերի մինիստր Բուտեմբեկան փորձնեցին նրան ևս կանգնեցնել նման քայլից<sup>28</sup>, Մախուսը պատուի 31-ին թողեց Խարթումը։ Խարթումից հճանակիս Մախուսը նպականուի, Իրաքի և Համբաւետական նմենի պրեզիդենտներին ահզյակ պահեց բարձր մակարդակի Հանդիպման ժամանակ ընդունվելիք որևէ շղական բանաձնին վերաբերյալ Սիրիայի կառավարության պատրաստակամության մասին, ավելացնելով, որ Սիրիան ամբողջովին վստահում է պրեզիդենտ Նասերի վարած քաղաքական կուրսին<sup>29</sup>։

Դամակու վերադառնալուց հետո քեութագրելով Խարթումի կոնֆերանսում Սիրիայի զրաված դիրքը, Մախուսը մասնավորապես նշեց. «Ձևալած Թումելիթում, Նյու-Յորքում, Բաղդադում ու Խարթումում թափառ մեր բոլոր ջանքերին, մնեք չկարողացանք համնել այն հանձնարարականների հավանություն տալուն, որոնք պիտի ներկայացնեն բարձր մակարդակի Հանդիպման քննարկմանը։ Սիրիական տեսակետն այն էր, որ Հանձնարարականները և Հատկապես Բաղդադի բանաձնը (նավթային շրջափակման վերաբերյալ—Հ. Գ.) պետք է հավանութան արժանացած լինեն Խախտան բարձր մակարդակի Հանդիպումն սկսելը»<sup>30</sup>,

Խարթումում արարական պետությունների զեկավարների հանդիպումն ավարտվեց 1967 թ. սեպտեմբերի 1-ին։ Հանդիպման ժամանակ ընդունված բանաձնում արարական պետությունների ղեկավարները, վերահաստատելով իրենց նվիրվածությունը Արարական Համագործակցության խարտիային՝ սկզբունքներին և իրենց վրա վերցնելով իրայիւղական ադրեսիայի հանձնների լրիվ վերացման պատրաստությունը, պարտավորվեցին 1967 թ. Ռումինին Խորայիլի պրաված արարական բոլոր տարածենքներից խորայիլական գործերի դուրսերումն ապահովելու նպատակով միավորել իրենց քաղաքական ջանքերը միջազգային ու դիվանագիտական ոլորտներում։ Բանաձնը ընդունում էր, որ այդ նպատակը պետք է իրավորման հետևյալ սկզբունքների հիման վրա։ Խորայիլի հետ հաշովելուն՝ ուշ, Խորայիլի ճանակելուն՝ ուշ, Խորայիլի հետ բանահցելուն՝ ուշ, Բանաձնը նմանապես վերահաստատում էր Պաղեստինի ժողովրդի սեփական տարածքի վրա անկախ պետություն ստեղծելու իրավունքը։

Բանաձնում այնուհետև նշվում էր, որ նավթային շրջափակման

Հարցը մանրազնին քննարկելուց հետո, հանդիպման մասնակիցները եզրակացության ենան, որ շրջափակումից հրաժարվելը կարող է օգտագործվել որպես դրական գննք, քանի որ նավթը արարենքի այն հիմնական ռեսուրսն է, որը կարող է ուղղվել ազրենիայից տուժած արարական պետությունների տեսևսական զարգացման խթանմանը, ինչը, իր հերթին, նրանց թույլ կտա ամրապնդել իրենց դիրքերը Խորայիշի դեմ պայքարում:

Արարական պետությունների զեկավարները հավաեռթյուն տվեցին նմանապես Թուվելիթի առաջարկած՝ անտեսական ու սոցիալական զարգացման միջարարական ֆոնդ առեղջելու ծրագրին: Ազրենիայից տուժած երկրներն ֆինանսական օգնություն ցույց տալու համար Սառույցան Արարիան, Լիբանանն ու Թուվելիթը յուրաքանչյուր երեք ամսվա համար համապատասխանարար հատկացրեցին 50, 30, 55 մլն. ֆունտ առեղինդ<sup>32</sup>:

Նախատեսվում էր ֆինանսական օգնություն տրամադրել միայն Եգիպտոսին ու Հարդանանին: Սիրիան զրկվեց նման օգնությունից, քանի որ նա հրաժարվել էր մասնակցելու արարական պետությունների զեկավարների հանդիպմանը: Բայց, ինչպես հետագայում խոստովանեց այդ ժամանակվա Եգիպտոսի արտաքին գործերի մինիստր Մ. Ռիազը, Սիրիային ֆինանսական օգնություն տրամադրելու հարցը միտականութեն էր զբովի փաստորն զենուսի խարթումի խորհրդակցության աշխատանքը սկսելուց առաջ: Խցկես Մ. Ռիազին հաղորդել էր Սառույցան Արարիայի արտաքին գործերի մինիստր Յ. առ-Սակկաֆին, Ֆեյզալ Բագավորը սկզբունքորն ու կտրականապես զեմ էր Սիրիային օգնություն ցույց տալուն, քանի որ վերջինս հարձակումներ էր թույլ տալիս սառույցան վարչակարգի նկատմամբ և չէր փորձում հարթել երկու երկրների միջև եղած արարակարծությունները<sup>33</sup>:

Եթե հաշվի առնենք, որ նավթային շրջափակում հայտարարելուց հետո Սիրիան միայն առաջին երեք-չորս ամիսների ընթացքում կորցնելու էր մոտ 12 մլն. դոլար<sup>34</sup>, ապա պիտի խոսանովանել, որ, պնդելով շրջափակումը շարունակելու վրա, սիրիական զեկավարությունը ցուցարերեց հատուկ սկզբունքայնություն ու հնաեռդականություն: Արժանին մատուցելով Սիրիայի պերքի հաստատակամությանը, այնուհետեւ նշենք, որ այն, առաջին հերթին, նախորոշվում էր հենց Սիրիայում առաջացած իրազրության պայմաններով, մի կողմ թողնելով խորայիշական ազրենիայի հետևանքով առաջացած առաջացած այն առանձնահատուկ իրադրությունը, որ ստեղծվել էր արարական այդ երկրներում և, հատկապես,

Նպիպտոսում։ Կասկածի ենթակա չէ այն, որ Սիրիայի ղեկավարությունը գիտակցաբար էր դիմում որոշակի ֆինանսական զրկանքների, որոնց անխուսափելիութեան հանգեցնում էր նավթային շրջափակումը, բայց դրանք, այնուամենալիք, չէին կարող համեմատվել այն դրության հետ, որ այդ գեղաքում կարող էր առաջնալ նպիպտոսում։ Բացի այդ, սիրիական բանականները լավ էին ըմբռնում իման բայլի բաղաբական հետեւնքները։ Նավթարդյունահանող արարական երկրների շրջափակումը շարուհակելուց հրաժարվելը կարող էր միայն ընդգծել Սիրիայի սկզբանքին դիրքը, միննաւյն ժամանակ գործնականորեն նրան դուրս չթողնելով արարական նավթի արդյունահանման և տարանցիկ գոխադրման պրոցեսից<sup>25</sup>։

Խեղիրը, ոչ այնքան շրջափակման հարցն էր, որքան այն, թե արարական նավթարդյունահանող երկրները, որոնց մեծամասնությունը ներկայացնում էին Հետաղիմական ու պահպանողական վարչակարգերը, ինչպես էին կապում Արևմուստիքին նավթի վաճառքի վերսկսումը ազգեստիայից տաւած երկրներին՝ առաջնի հերթին նպիպտոսին ու Սիրիային ֆինանսական օգնություն տրամադրելու հետ։

Թողարկվելով արարական համագործակցության լողունգով, արարական հետաղիմությունը նավթի շրջափակման դադարեցման անհրաժեշտությունը փաստարկում էր նրանով, որ առանց պար, իբր, անհնար է լիարժեք ֆինանսական օգնություն տրամադրելը։ Միննույն ժամանակ այդ օգնությունը վերապահվում էր նպիպտոսի և Սիրիայի կողմից մի շարք պայմանների կատարումով, որոնց կրում էին բացառապես բաղադրական բնույթ և նպատակատղված էին էական փոփոխություններ մատցել արդ երկրների միջարարական բաղարականության բովանդակության մեջ։

1957 թ. սեպտեմբերին Դամասկոսում գումարվեց Բաաս կուսակցության համագույնին Զ-րգ համագումարի արտօնությունը նատաշրջանը։

Նատաշրջանի ավարտին Դամասկոսի ռազմենով հայտարարությամբ հանդիս եկավ Բաաս կուսակցության պլիավոր բարտուղար, Սիրիայի պրեզիդինու Աթասին։ Խորայծելական ազգեստիան բնորոշելով որպես սիրիական և այլ արարական առաջաղիմական վարչակարգերի վերացմանն ուղղված իմանքրիալիզմի և սիրոնիզմի դավագրություն, պրեզիդինու Աթասին ընդգծեց, որ արարական երկրների ուղմական պարտությունը հիմնականում բացատրվում է նրանց պառակավածությամբ ու ժողովրդական զանգվածների կազմակերպված պայքարի վրա հիմնված ընդհանուր հեղափոխական սարատեղիալի բացակայությամբ։ Ստեղծված դրություն-

Նը հաղթահարելու և Մերձավոր արևելքում իմպերիալիզմի և սիռնիզմի ընդհանուր հարձակումը նա մղելու նպատակով Բատա կուսակցությունը մշակել է կոնկրետ գործողությունների ծրագիր, որնց հիմքում ընկած է, ինչպես նշեց Աթասին, ոչնդափոխական գծի շարումակումը..., որը համապատասխանում է ժողովրդական զանգվածների պայքարի ձգումներին, այդ պայքարը ադրեսիայի և իմպերիալիստական-սիռնիստական դավապությունների նկատմամբ արար ազգի հաղթանակի և շահագործման հետամեացության ու պառակավածության վերացման հաստատում Հիմք ու միջոց է<sup>36</sup>: «Այսպիսի գործելակերպը, —ընդդեմ Աթասին, — պայմանավորված է նրանով, որ ժողովրդի կլանքում վճռական պատմական իրազարծություններին չեն կարող հակառակիլ, սպասողականության, գործարքների, կատարված փաստներին ենթարկվելու ստրկական հնազանգության վրա հիմնված փոխպիտումներն ու մեթոդները... և կամ էլ իմպերիալիզմի բռնատիրական ուժնորի պարտապրածին լոին համաձայնվելը: Հեղափոխությունը կամ կա, կամ էլ՝ չկա...»<sup>37</sup>:

Այսուհետեւ, պրեզիդենտ Աթասին կանգ առավ իրայիշական ազրեայի հնահանքների վերացման քաղաքական ու զինված պայքարի միջն հարաբերակցության հարցի վրա: Եթաղաքական պայքարը, — եւ եց Աթասին, — չի կարող փոխարինել զինված պայքարին, որը պետք է վարել ողջ արարական աշխարհի ժողովրդական զանգվածները՝ դրավված տարածքների ազատազրման և իմպերիալիստական ներկայության վերացման նպատակով:

Քաղաքական պայքարը ՄԱԿ-ում որոշ արգյունքներ ավեց, հրապարակայնորեն բացահայտելով իմպերիալիզմի և սիռնիզմի մտադրությունները: Դա լավ սկիզբ էր մեր պայքարում հասարակական կարծիքը ներգրավելու համար: Եվ դա անպայման կօգնի մեր զինված պայքարին, երբ ՄԱԿ-ը ի որու լինել ազգային պատճեն ու վերացնել ազրեայի հնահանքները... Համագումարի առաջին գիծ մղեց զինված պայքարը որպես ազրեայի հնահանքների վերացման և ազատության հասնելու Հիմք: Համագումարը որոշեց, որ մյուս՝ անտեսական, քաղաքական ու պրոպագանդիստական միջանքների սպազմությունը այդ հիմնարար մեթոդի միայն լրացումը կլինիք<sup>38</sup>:

Իսրայելի դեմ զինված պայքարը հաջող վարելու նպատակով, որը, բառականների կարծիքով, պիտի կրեր երկարատես, չյուծիլ պատերազմի ընույթ ու զինավորապես հնելվեր ռազմական գործողությունների վարման հայդուկային մեթոզների վրա, Բատա կուսակցության թ-րդ համագումարի արտահերթ նատաշրջանը մշակեց մի շարք հիմնարար սկզբ-

բունքներ, որոնք մասնավորապես նախատեսում էին բռնը Հեղափոխական ուժերի միասնությունը մարմնավորող միացյալ բազարական դեկամարտության ստեղծում<sup>37</sup>:

Բասար կուակեցության ղեկավարությունը այս սկզբունքներին համապատասխան հանդիս եկավ Սիրիայի, Եգիպտոսի, Ալժիրի և Իրաքի կազմով այս կամ այն ձևով միավորված արարական պետություն ստեղծելու առաջարկով, որն Խարայնի դեմ պայքարում ի վիճակի կիրակ ամբողջապես մորթիթղացնել ու միավորել Խրանց տարանջատ ջանքերը: Առաջադիմական արարական երկրները միավորելու անհրաժեշտությունը Բասար կուակեցությունը պայմանավորում էր նաև այն դրույթով, որ արարական աշխարհում նախկինի պես պայքար է ընթանում մի կողմից առաջադիմական, Հեղափոխական ուժերի և մյուս կողմից, իմպերիալիզմի, սիոնիզմի և արարական հասադիմության միջև<sup>38</sup>:

Խնչումն և ԿաՇիրեում 1867 թ. Հուլիսին «Փոքրը Հանգիպման ժամանակ», սիրիական բասարականների առաջարկությունն արձագանք լուսեցավ Եգիպտական ղեկավարության մեջ՝ ԵԱՐԱՐԱԿԱՆ տարածքի պաշտպանությունը, — գրում էր այդ օրերին պրեզիդիւնտ Նասերի ծրագրերին լավագայնությակ, Եգիպտական Հայունի լրագրող Մ. Հեյբալը, — բոլոր արարերի պարտավորությունն է, անկախ Խրանց սոցիալական ու քաղաքական տարրերություններից... նշանակած հեղափոխական դիրքորոշումը նրանում է ոչ թե լազումների կրկնողությունից... այլ պայքարը վարելու համար բոլոր միջոցները միավորելուց<sup>39</sup>:

Իրացք, որ գտնվում էր արարախորայնական առնակատման երկրորդ և շահելուում, միավորման հարցում զբավեց ավելի շատ սիրիամէտ դիրք: Հոկտեմբերի 11—13-ը պաշտոնական այցով Բաղդադում էր գրտեղվում սիրիական կուսակցական-կառավարական պատվիրակությունը պրեզիդիւնտ Աթասիի և արտաքին գործերի մինիստր Մախուտի զլիավորությամբ: Բանակցությունների ավարտին Մախուտը Հայուարարեց, որ կողմերը քննարկեցին արարական առաջադիմական երկրների միջև քաղաքական, կամ առնվազն, ռազմական միություն ստեղծելու խնդիրները: Իր հերթին Բաղդադի ռազմական ուղղություն հանդիպում էր պակես Իրաքի և Սիրիայի միջև բազմակողմանի Համագործակցության հասնելու հաշողված շանը, որպես արարական հեղափոխական ուժերի միասնության ուղղված մի քայլ<sup>40</sup>:

Հոկտեմբերի 25—27-ը Սիրիայի վարչական Զուէյնը և արտաքին գործերի մինիստր Մախուտը գտնվում էին Ալժիրում, որ համաման խնդիրներ էին քննարկում պրեզիդիւնտ Բաւեդյինի հետ: Բանակցություն-

Ների ընթացքում ի հայտ եկան որոշակի անհամապատասխանություններ ավյալ փուլում Խորայիլի դեմ զինված պայքար վարելու հարցերում Մի-  
րիայի և Ալժիրի զիրքորոշումների միջև և տարրերություն իր նախեա-  
կան վերաբերմունքի, որն ավելի շատ դրվագ էր զգացմանքային հա-  
կազդեցությունից. քանի քաղաքական սրբափ հաշվարկից. սիրիական զե-  
կավարների հետ զրույցում պրեսիդենտ Բումեդդենի արաւաճյուղեց հո-  
գուստ քաղաքական միջոցների պնդությամբ զրավված տարածությունները  
վերաբերմներու փորձ կատարելուն, քանի որ ավյալ փուլում Խորայիլի  
դեմ հաջողակ պատերազմ վարելու համար արտքերը չեն անօրինում  
իրական հարավորությունների<sup>42</sup>:

Արարական առաջադիմական վարչակարգեր ունեցող երկրների միա-  
վկրման հարցերը քննարկելու վերաբերյալ Միրիայի առաջարկության  
նկատմամբ Սկիպոնոսի ավելի քան դուսպ արձագանքը, ինչպես նաև  
Բաղդադի և Ալժիրի բանակցությունները ըսույց տվեցին, որ Միրիան  
հույս չի կարող գնել այն ուժերի կողմից իր արտաքին քաղաքական  
կուրսի հիմնական ուղղությունների շատ թե քիչ դորժուն աշակցության  
վրա, որոնց սիրիական զեկավարությունը համարում էր եղակի հարա-  
վոր դաշնակիցներ արաբական աշխարհում:

Միրիայի ձախրատասական զեկավարությունը ստեղծված կացությու-  
նը շտկելու և առաջադիմական վարչակարգեր ունեցող երկրներին իր  
շուրջը համախմբելու վերատին փորձ նախաձեռնեց 1957 թ. նոյեմբերին  
իր Մերձավոր արևելյան խաղաղության հասնելու ընդհանուր ուղիներին  
ուրգագծող ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հատուկ բանաձեռի ըն-  
դումման կապակցությամբ ծառացավ Խորայիլի զրաված տարածքների  
պատառազման ուղիների և միջոցների և պաղեստինյան խնդրի լուծման  
վերաբերյալ համարարակական զիրքորոշում մշակելու հարցը.

Խոչպես հայտնի է, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1957 թ. նո-  
յեմբերի 22-ի N 242 բանաձեռ նախատեսում էր խորայնական զորքե-  
րի հեռացում՝ 1967 թ. հունիսին պարական բոլոր զրավված տարածք-  
ներից, Մերձավոր արևելյան պատերազմի ամեն տեսակ կռւերի, և Հեղա-  
պատերազմական դրության դադարեցում, այդ շրջանի բոլոր պետություն-  
ների ինքնիշխանության, տարածքային ամբողջականություն ու քա-  
ղաքական անկախության, որնէ պառնալիքից կամ ուազական ուղե-  
ձություններից զերծ, անվտանգ ու անաշխած սահմաններում ապրնու-  
իրավամբի հաստատում և հարգում:

Բահամեն ընդդժում էր երկրաշրջանի միջադային շրային ուղինե-  
րում ազատ նախագիծների երաշխավորման պահապեսին գախրա-  
46

առկանների խևորի արդարացի լուծման անհրաժեշտությունը, ինչպես նաև այդ շրջանի բոլոր պետությունների տարածքային ամրողականության ու բարարական անկախության նրաշխավորման նպատակներով նախատեսում էր Խորայիլի ու նրա արարական հարկաների առնձնանային շրջաններում հաստատել ապառազմականացված գոտիներ:

Այդ դրույթների իրականացման համար բանաձեռք նախատեսում էր շահագրգոռված բոլոր կողմների միջն կապերի հաստատում՝ ՄԱԿ-ի զըմանվոր բարուուղարի հասուի ներկայացուցիչ միջնորդությամբ<sup>44</sup>. Այդ առարկելությունը հանձնարարվեց շվեյ գիրքանագետ Գ. Յարինզին:

№ 242 բանաձեռք, ինչպես հայտնի է, կրում էր փոխպետական բնույթ, ինչի հետևաներով նրա մեջ գրական գրույթների հետ մեկտեղ առկա էր մի էական թերաթյուն՝ կազմած գիշավորապես այն բանի հետ, որ մերձավորաբնելյան նզեաժամի հիմնական բռվանդակությունը կազմող պաղեստինյան Հարցը, հանգիցվելով միայն պաղեստինյան փախօտականների խնդրին, բանաձեռք պատշաճ լուծում չեր ստացել: Այդքաղաքանի բոլոր պետություններին կոչ անելով փոխադարձարար Հանայի փաստորներ 1948—1949թթ. պաղեստինյան պատերազմի հետևաներով ձևավորված սահմանները, № 242 բանաձեռք առաջ չեր քաշում անկախ արարական պաղեստինյան պետության ստեղծման Հարցը: Այսպիսով № 242 բանաձեռք որոշակիորեն հակասում էր ՄԱԿ-ի Դիմավորաամբուլայի 1947 թ. հոյեմթերի 29-ի հայտնի բանաձեռքին, որն ուղղված էր Պաղեստինը զրադեցնող բոլոր ժողովուրդների ազգային իրավունքների պահանջմանը և այդ կապակցությամբ նախատեսում էր հրեական պետության կազմակորման հետ մեկտեղ նաև արարական պաղեստինյան պետության պարտադիր կազմավորում:

Խշագնու հետագա իրազարծությունները ցույց տվեցին, № 242 բանաձեռք առաջին հերթին անընդունելի հղակ Խորայիլի սիռնիստական ղեկավարության համար, քանի որ հաստատելով նրան 1949 թ. սահմաններում, այդ բանաձեռքը ազրեսորին զրկում էր 1967 թ. հունիսին գրաված տարածքներում ամրապնդելու հարավորությունից:

Ի տարբերություն նպիպատճի և Հորդանանի, № 242 բանաձեռք նկատմամբ Միրիայի հակազդեցությունը որոշվում էր ոչ միայն ուղարկած առաջարային նկատառումներով, այլև ոչ պակաս շափով պարանակավորվում էր գաղափարաբանական կարգի պահանջներով: Նույնիսկ միայն տակտիկական նկատառումներով Խորայիլին ճանաշելը և պաղեստինյան Հարցի մասնակի կարգավորմանը համաձայնելը Հարցաժիրի առաջի էին դնում սիրիական Բառա կուտակցության ողջ միջարարա-

կան քաղաքականությունը։ Նոյեմբերի 23-ին Դամասկոսի ռազիուով Հաղորդված Սիրիայի կառավարության հայտարարության մեջ կարականապես մերժվում էր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի N 242 բանաձնը, քանի որ, Բառա կուսակցության տեսակիտով, այն ոչ այլ ինչ էր, քան ռազմական ուժի օգնությամբ հարցի լուծման սկզբունքի միշտզային լուրջ վավերացում, և յուրատեսակ մի գործարք պազճատինյան հարցի նկատմամբ ի պատասխան Խարայիլի մշուշապատ խոստմանը՝ դուրս բերել զորքերը<sup>15</sup>։ Դեռ ավելին, նոյեմբերի 24-ին ելույթ ունենալով Հալեպում, Սիրիայի պրեզիդնուս Աթասին արարական աշխարհի բոլոր առաջդիմական ուժերին և բոլոր արարական կառավարություններին կոչ արեց լընդումել և պայքարել Մերձավոր արևելյան վերաբերյալ Անվտանգության խորհրդի բանաձնելի դրույթների կենսագործման զմբ, քանի որ, նրա կարծիքով, այդ բարենպատճեռ բանաձնից ընդունումը հավասարազոր է Խարայիլի հետ համախմբվելումը<sup>16</sup>։

Նոյեմբերի 23-ին Մարտիկոյի Հասան թագավորը առաջարկեց 1957 թ. դեկտեմբերի սկզբին Ռարատում հերթական բարձր մակարդակի համարական հանդիպում գումարել Խարթումումում ընդունված որոշումների լույսի ներքո Անվտանգության խորհրդի բանաձնել քննարկելու, գրավված տարածքներից խորայելական զորքերի անհապաղ հճուածման հարցի նկատմամբ համարարական դիրքորոշում մշակելու, Արարական պետությունների լիգայի (ԱՊԼ) վերակառուցման համար, արարական երկրների միջևն համագործակցության զարգացմանը ավելի արդյունավետ սժանդակելու և նրանց արտաքին քաղաքական գործողությունները կոռուպինացնելու նպատակով<sup>17</sup>։

Նպիտական ղեկավարությունը նոյեմբերի 25-ին դիմեց ԱՊԼ-ի քարտուղարությանը՝ խնդրելով կապեր հաստատել լիգայի բոլոր անդամների հետ՝ շուտափույթ համարարական կոնֆերանս հրավիրելու նպատակով<sup>18</sup>, Մինչև նոյեմբերի 25-ը ԱՊԼ-ի անդամները, բացառությամբ Սիրիայի ու Սաուդյան Արաբիայի, տվյալներու հետեւ համաձայնությունը՝ մասնակցել հանդիպմանը։ Ընդ որում, եթե Սիրիան, առանց որևէ վերապահման, կարականապես հրաժարվեց հանդիպումից, ապա սառույթան ղեկավարությունը կարծիք հայտնեց, որ նման հանդիպում կազմակերպելու հարցը նպատակահարմար կլինի քննարկել միայն այն բանից հետո, եթե հայտնի կլինին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացնեցիւ, դեռպան 9։ Յարինգի առաքելության առաջին արդյունքները<sup>19</sup>,

Սրբ Հայտնի դարձավ, որ արարական պետությունների ղեկավար-

ների Հանդիպումը յի կարող կայանալ նշված ժամկետում, ԱՊՀ-ի քարտուզարությունը առաջարկություն մտցրեց նախ հրավիրել արտաքին գործերի մինիստրների կոնֆերանս, որը և տեղի ունեցավ Կաճիրեսում, դնեստրամբերի սկզբին։ Միրիային, որը Հանդես էր գալիս Համարտաբական բարձր մակարդակի Հանդիպում՝ հրավիրելու դեմ, այսուամենային, արտաքին գործերի մինիստրների կոնֆերանսներում ներկայացնեամ էր Մախուսը, որը մասնակցեց դեկտեմբերի 7-ի և 8-ի նիստերին<sup>20</sup>։

Արարական պետությունների արտաքին գործերի մինիստրների Կաշիրնի Հանդիպման ժամանակ փորձ արգեց մշակել ապագա Համարտաբական բարձր մակարդակի Հանդիպման օրակարգը։ Հիմնական վիճականությունները ժամանակակիցին այնպիսի Հարցերի շուրջ, որոնք ընդհանուրագես վերաբերում էին մերձավորարելլան նգնաժամի լուծման քաղաքական ու ռազմական միջոցների Հարաբերակցությանը, և մասնավորապես, գետպան Գ. Ցարինյի առաքելությանը։ Այսպես, այն ժամանակ երբ Հորդանանը Համառորին պնդում էր, որ Գ. Ցարինյի առաքելության Հարցը անպայման ներառվեր առաջինա Հանդիպման օրակարդում, այդ նույն ժամանակ Սառույյան Արարիան գտնում էր, որ այդպիսի քայլը վաղաժամ է։ Իր հերթին Եղիպատոսի արտաքին գործերի մինիստրը Ռիազը դանում էր, որ Հանդիպման օրակարգում քաղաքական միջոցառումների քննարկման հետ մեկտեղ պետք է մտցնել նաև ռազմական որոշումների ընդունման հետ կապված Հարցերի քննարկումը, որի կապակցությամբ Հանդիպմանը պետք է մասնակցեին ոչ միայն պետությունների ղեկավարները, այլև պաշտպանության մինիստրները, և արարական բանակների սպայակնույտների պետքը։ Իրաքի ներկայացնելին առաջարկում էր Հանդիպման օրակարգում ներառել Խարթումում ինքունված որոշումների հիման վրա մշակված Հարցերը։ Ի վերջո, ղեկամքը 11-ին որոշում կայացվեց բարձր մակարդակի Հանդիպումը Հրավիրել 1968 թ. Հունվարի 17-ին և քննարկել Հարցումը քաղաքական, տնտեսական և ռազմական միջոցառումների ողջ Համալիրը<sup>21</sup>։ Միաժամանակ, Հաշվի առնելով Սառույյան Արարիայի և Միրիայի բռնաժ դիրքերը, Մարտիկոյի արտաքին գործերի մինիստրի վրա առաքելություն դրվեց սառույյան ղեկավարների հետ Համաձայնեցնել բարձր մակարդակի Հանդիպման անցկացման ժամկետը, ինչպես նաև Համարտաբական վեհաժողովում Միրիայի մասնակցությունն ապահովելու նպատակով կապեր հաստատել սիրիական ղեկավարության հետը,

Կոնֆերանսի աշխատանքին մասնակցութ ՊԱԿ-ի Դորժկոմի նախագահը Շուկեյրին ընդունված որոշումների նկատմամբ իր անհամաձայնու-

թրմն արտահայտեց, Համառորին պնդելով, որ առաջիկա բարձր ժակարդակի Հանդիպման ժամանակ քենարկվեցին նգեաժմամի լուծման բացառապես ուղղմական միջոցենքը<sup>55</sup>: ՊԱԿ-ի Գործկոմի նախագահը Հանդիպման ժամանակ Հավանորին միակ մարզն էր, որի դիրքորոշումը բաղացական միջոցառումների և դեսպան Դ. Ֆարինզի առաջնորդյան Հանդիպական ամբողջապես նույնական էր արրիտական ձախրասասական զեկազարության դիրքորոշմանը: Ելլոր մարդկանց սակարգելու պատրաստակամությունը... մեզ չի կարող խարի ցանի որ երանք իրավունք չունեն որոշելու: մեր ժողովրդի նակատագիրը,— զրում էր այդ օրերին բաասական ժամ-Մուտքաբար թերթը,— Անվանվության խորհրդի սկզբունքների պահպանումը կնշանակի պաղեստինյան արարենքի իրավունքներից լրիվ Հրաժարումը<sup>56</sup>:

Դեկտեմբերի 27-ին տեղի ունեցավ Սիրիայի պրեզիդենտի և Մարկելյանի արտաքին գործերի մինիստրի Հանդիպումը: Պրեզիդենտ Աթասին վերահսկութեց Սիրիայի նախկին գիրքը, Հայուարարելով, որ Սիրիան չի մասնակցի բարձր մակարդակի նոր Հանդիպմանը և վերստին Հանդիս եկավ արարական աշխարհի միայն առաջադիմական ուժերի ներկայացուցիչների մասնակցությամբ կոնֆերանս Հրավիրելու առաջարկությունը:

Կտրականապես մերժելով ՊԱԿ-ի Անվանվության խորհրդի Մերձական արևելյան զերաբերող բանաձեռք, Սիրիան Հրաժարվեց նաև նրա դրույթին իրականացմանը նվիրված, դեսպան Ցարինզի միջնորդությամբ սկսված բանակցություններին մասնակցելուց: Պարզաբանելով Սիրիայի գիրքը Յարինզի առաջելության նկատմամբ Սիրիայի վարչապետ Զուեյնը գնճանեմբերի 28-ին Հայուարարեց, ունիսի որ մենք լրիվ մերժեցինք բրիտանական բանաձեռք (խոսքը ՊԱԿ-ի N 242 բանաձեռի մասին է—Հ. Գ.), ապա պատճեն չկա ընդունելու Անվանվության խորհրդի բանագնաց մարինզին... մենք բավարար հիմքեր չենք տևանում անօգուտ բանագնելի անցկացման համարք<sup>57</sup>:

Ի տարրենության Սիրիայի, նգիպուռան ու Հորդանան իրենց պաշտոնական համաձայնությունը տվեցին Դ. Ցարինզի հետ կապեր հաստատելու համար: Սիրիական զեկավարությունը դա գնահատեց որպես արտահարդ բացառական, Պաղեստինի ժողովրդի հետ արտահարդ համերաշխության հիմքը խարիսող և ողջ արար ազգի շահերը հարվածի տակ զնող քայլ: Սիրիայի Հանրային տեղեկատվական միջոցները աւելացրեցին պրոպագանդիտական արշավը, սուր քննազատության հնմարիելով ու դատապարտելով բոլոր ոյն վարչակարգներին, որոնք Հակիմ էին

մերձավորաբնելլյան ճգնաժամի քաղաքական լուծմանը՝ Սիրիայի ինքորմացիայի մինիստր Հադդադը, հանրագումարի բերելով ու գնաշատելով մերձավորաբնելլյան ճգնաժամի հաղթահարման արդյունավետ ուղղիների որոնման կապակցությամբ արարական պետությունների քաղաքական ու դիվանագիտական գործունեության արզունքները, հետևյալ կերպ բեռլիթագրեց Սիրիայի դիրքը. «Մէնք պարզաբանեցինք մեր դիրքը արարական համատեղ գործողությունների նկատմամբ և կոչ արեցինք խզել զիվանագիտական, տևաեսական ու մշակութային կապերը այն պետությունների հետ, որոնք Խորայիշին պնդություն էին ցույց տվել, ինչպես որինակ՝ ԱՄՆ-ի, Անգլիայի, ԳՖՀ-ի հետ. Արարեները պահանջում էին նավթի մղումի դադարեցում, այդ երկրներից արարական ավանդների գործորում և ապրենիայի գիմագրավման հետ կապված կարիքների համար այդ միջոցների օգտագործում։ Մէնք շմանակցեցինք արարական բարձր մակարդակի հանդիպմանը նրա համար, որ արարական երկրների արտարին գործերի մինիստրների նախապատրաստական խորհրդակցությունները շահագեցրեցին միասնական կարծիքի, Արարական հետազմությունը խարթումքան հանդիպումը օգտագործեց առաջադիմական վարչակարգի պատկերու համար։ Այդ յասինեն վկայում հանրապետական վարչակարգը տապալելու նպատակով Ստուդիան Արարիայի միշտամությունը նմենի ներքին գործերին և Պարսից ժայռի շրջանում նոր իմպերիալիստական դաշինք ստեղծելու շարք ներկա իրարանցումը... Այս բոլոր փաստերը հաստատում են բարձր մակարդակի խորհրդակցությունների հանդիպ Սիրիայի կառավարության ընտրած ուղղու ճշմարտությունը։ Այդ մէնք հայտարարեցինք բարձր մակարդակի հանդիպումների և մի դիմում համարում ենք ճիշչաց:

Այսուհետև, խոսելով № 242 բանաձեկի և խորայիշական ապրեսիայի հետեւանդեների վերացման համար պայքարի քաղաքական ու ռազմական միջոցների միջն հարաբերակցության մասին, Հադդադն ընդգծեց, ուրբ մէնք մերժեցինք բանաձեկի անգլիական նախագիծը, ապա զա չէր նշանակում, որ մէնք գեմ էինք արարական հարցի հաղաղ լուծմանը և կողմ էինք միայն լուծման ռազմական ուղղու։ Անգլիական բանաձեկին մէնք եղակ ու կիմնենք գեմ, որովհետև այն քաղալիքում է ապրեսիաներին։ Այն, որ Խորայիշը մինչև այժմ հրաժարվում է իր գորքերը գուրս բերել և պահանջում է ուղղակի բանակցություններ արարեների հետ, նշանակում է, որ ԱՄՆ-ը և Խորայիշը անտեսում են համաշխարհային հասարակական կարծիքը։ Մէնք հավատում ենք քաղաքական պայքարին և լինք անտե-

սում այն թայց զավթիշներին անհար է հաղթել քաղաքական միջնուներով։ Դրա համար էլ մենք մեր երկրում պատրաստվում ենք կոպի, մորիլիզացիոն ևնք մեր ժողովրդին, ստեղծում ենք ժողովրդական բանակ, ամրապնդում ենք ուղիւղական երկրների հետ բարեկամությունն ու համերաշխատվաթյունը<sup>28</sup>։

Զեայած Մարտկովի արտաքին գործների մինիստրության և Արարական պետությունների լիգայի թափած շանգերին, 1968 թ. հունվարի երկրորդ կեսին Խախատեազած Համարարարական բարձր մակարդակի հերթական հանդիպումը այսպիս էլ շկայացագի Խորայելական ազրեսիայից հետո քաղաքակողմաներին աշխատացած միջարաբական հարարերություններում վրա հասագ որոշակի անդորրություն։ Արարական աշխարհը, պատառական դիրք գրավելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հովանու ներքո մեռնարկված մերձավորարենիյան նպատամի կարգավորմանն ուղղված քաղաքական շանգերի հանդեպ, ամփոփում էր իրայիշական պղըսիայի արգյումները՝ հաշվի առնելով այն անդաշարժերը՝ որոնք նկատվել էին երա մեջ Հասել էր ժամանակը, երբ ուղամական պարտության հարուցած զգացմունքային պոռթիումը առտիճանաբար պիտի փոխարինվեր Մերձավոր արևելքում առաջացած իրադրության սթափ ու համակողմանի վերլուստությամբ, իսկ Հայտարարությունների հոլակումն ու պրոպագանդիստական կուերը՝ իրայելական ազրեսիայի հետեւների վնրացման համար առաջ քաշված սկզբումքների և ուղիների իրագործմանը հետամուտ, տքնազն ու լարված աշխատանքով։

Միրիական Բաաս կուսակցությունը, ինչպես և պատերազմից առաջ ժողովրդապատապրական պատերազմի կոնցեսցիայի իրականացման օգնությամբ փորձում էր արարական աշխարհում աշխատացանել հեղափոխական պրոցեսը, թայց, այժմ, արդեն այն առարերությամբ, որ երբ պայմաններում Խորայելի հետ ուղամական առնակատումն ու երա ընդլայնումը պայմանագործում էին ո՛չ միայն Պաղեստինի պատագրման խնդրին ուղղմաքաղաքական պլատֆորմի ընույթ հաղորդելու պահանջներով, որպեսզի Միրիայում Բաաս կուսակցության հեղափոխությունը վերանի մասշտաբներով համարարական ու բռվանդակությամբ բառական հնդափիստության, այլև արարական դամբած տարածքների պատապրման անհրաժեշտությամբ։

«Պատմությունը ցույց է տվել, — պետում էր Միրիայի արտաքին գործերի մինիստր Մախմար, — որ դեռ ոչ մի ժողովուրդ չի պատապրմել քաղաքական միջոցների օգնությամբ և որ գաղութատիրության բնության պատասխանը կարող է լինել միայն հեղափոխական բնությունը։

Դրա Համար էլ բաղաբական յուծումը Շմերձավորարենիցան կոնֆլիկտի—  
Հ. Կ.) անհնար է, ևթե միայն այն ձեռք չի բերվում արարական գանգ-  
վածների շահների և պաղեստինյան հարցի վերացման հաշվին։ Մենք  
դորժ ունենք ոչ թե արարածների դամբարական հետևանքների հետ, այլ՝  
այդ բաղաբականության անմիջական պատճեռի՝ Խրայնի գոյության  
Ազգային միությունը արմատավորվում էր վերնից, վարչարարական կարգով: Այսպես, 1957 թ. մայիսի 28-ի դեկրետով ստեղծվեց «Արագուցիչ հաստատություն՝ Ազգային միություն», որի խնդիրը պետք է լինի հեղափոխության նպատակների իրազրժմանը աշակցելը, որը պետք է աղատ լինի քաղաքական, սոցիալական և անտեսական կյանքի տարրերություններից: Հանրապետության պրեզիդենտին Ազգային միու-

թյան նախադաշնունդի է, գործադիր կոմիտեի պարտականության մեջ մըս-  
նուու է Ազգային ժողովի ընտրությունների համար առաջարկված թեկ-  
նաժությունների ընտրությունը սահմանադրության և 1956 թ Ն 146<sup>28</sup>  
օրենքի գրույթներին համապատասխան, գործադիր կոմիտեի որոշումը  
պետք է 24 ժամվա ընթացքում վավերացվի միության նախադաշնունդի միջ-  
յաց<sup>29</sup>:

1957 թ. նոյեմբերի 2-ին հրապարակվեց Ազգային միության 54  
կետ պարունակող կանոնադրությունը:

Համաձայն կանոնադրության առաջին կետի, Ազգային միության  
ժրագիրը «1952 թ. Հունիսի 23-ի Հնդափոխության առաջադրած խնդիր-  
ների կենսագործումն էր և յանքերի ուղղումը դեպի բաղարական». առ-  
ցիալական ու տնտեսական շահագործումից աղաւ, սոցիալիստա-  
կան, դեմոկրատական, կռուպերատական, համարակարգի ստեղծման միջո-  
ւով առողջ ազգի կառուցումը<sup>30</sup>:

Հայու կանոնադրության Ազգային միության անդամ կարող էր լինել,  
16 ամարին լրացած, Ազգային միության նպատակներին բաշխածանոթ ու  
նվիրված Եղիպատոսի լուրաբանվուուր քաղաքացի: Էնդ որում նա կարող  
էր ակտիվ անդամի կարգ ստանալ այն դեպքում, եթե միության տեղա-  
կան բաժանմունքում աշխատել էր որոշակի ժամանակ և, հատկապես,  
եթե կառարել էր որևէ հաեծնարարություն: Կազմակերպության ակտիվ  
անդամի թեկնածուն պետք է իրեն ապահովեր ովյալ բաժանմունքի եր-  
կու ակտիվ անդամների աշակեցությունը, ստանար տեղական գործադիր  
կոմիտեի ժողովի հասաւառումը, որը, իր հերթին, նրա գործը ուղարկում  
էր վերև ընդհանուր մինչև Ազգային միության նախադաշնի հաստատմանը:  
Այս համակարգը պետք է երևան հաներ վարչակարգին համակրող ուժե-  
րը, ինչը գործնականութեն տեղի շունչեցագլու:

Ազգային միության համակարգը աշխարհագրական հատկանիշների  
վրա հիմնված բուրգ էր, որի գագաթին գտնվում էր Միության նախա-  
դաշնը, որը, համաձայն Կանոնադրության, ընտրվում էր ձայների ըըն-  
շող մեծամասնությամբ: Բայց, բայտ էլության, նախադաշնի ընտրության  
ընթացակարգը կրում էր մեծ մասամբ ձևական բնույթ, քանի որ 1957 թ.  
Հայիսի 28-ի դեկտեմբերին համապատասխան այդ պաշտոնը կարող էր  
զբաղեցնել միայն երկրի պրեզիդենտը: Նախադաշնի պարտականություն-  
ների մեջ մտնում էին 24 ժամվա ընթացքում թարձրագույն գործադիր  
կոմիտեի որոշումների վավերացքումը, որոնք միայն այդ դեպքում օրեն-  
քի ուժ կատանային, առանց նրա թույլատրության Ազգային միության  
գլխավոր համաժողովի որակարգի մեջ չէին մոցվում համաժողովի

պատվիրակների կողմից առաջադրված հանձնարարականներն ու առաջարկությունները և, վերջապես, նա էր հաստատում երկրի Ազգային ժողովի դեպուտատության թեկնածուներին<sup>22</sup>.

Բացի նախագահից, Ազգային միության կազմակերպությունը ազգային մակարդակով ներկայացնում էին Գլխավոր համաժողովը, Կներությունական կոմիտեն և Բարձրագույն գործադիր կոմիտեն:

Դլխավոր համաժողովը գումարում էր ամենամյա նիստը, որին մասնակցում էին Ազգային միության նախագահն, Կներությունական կոմիտեի բոյոր անդամները և նահանգների կենտրոնական կոմիտեների բոլոր անդամները: Այդ նիստի նախագահատրաստական կոմիտեի պարտականությունները վրա էր վերցրել Կներությունական կոմիտեն, որը մշակում էր Ազգային միության խեղիները, քաղաքականությունն ու ժրագիրը:

Միության Կներությունական կոմիտեն ընդգրկում էր կազմակերպության նախագահին, նահանգական կենտրոնական կոմիտեների անդամների մեկ ութերորդին, որոնց առաջազրում էին այդ կոմիտեները, նահանգական կենտրոնական կոմիտեների նախագահներին, ակտիվ անդամի պիճակակարգ ունեցող Ազգային միության նախակին նախագահներին, և ոչ բավարար շափով Ներկայացված տարրեր խմբավորումների ու կազմակերպությունների Ներկայացուցիչներին, որոնք ընտրվում էին թիգ-ի հատուկ հրահանգներին համապատասխան:

Կներությունական կոմիտեի նիստերը, որոնք, որպես կանոն, հրավիրվում էին ամեն չորս ամիսը մեկը, որինական էին համարվում եթե նըրանց մասնակցել էր անդամների 70 տոկոսը, Կե-ի պարտականությունների մեջ էին մտնում պլիավոր համաժողովի ժրագրեր մշակելիս հանձնարարականները և Սահմանադրության նշագրամման կարիք ունեցող հոգածների վերաբերյալ ցուցումներ տալու: Կներությունական կոմիտեի որոշումները պարտազիր էին Ազգային միության բոլոր կոմիտեների համար<sup>23</sup>:

Բարձրագույն գործադիր կոմիտեն, որը կազմված էր պրեզիդենտի կողմից նշանակվող 20 անդամներից, ընտրում էր մեկ կամ մի քանի քարտուղարներ, ինչպիս նաև գանձապահներ: Ընդունում էր Ազգային միության գլխավոր քարտուղարը կարող էր լինել միայն նախակին Հեղափոխության Ղեկավար նորմերի անդամներից մեկը: Թեութագրական է, որ նա պաշտոն էր գրագում նաև Խլամական կոնգրեսում, որը նրան թույլ էր տալիս համակցել ինլամական տրամադրությունները Հեղափոխության նոր գաղափարախոսության էվոլյուցիայի հետ:

Բարձրագույն գործադիր կոմիտեն, որպես Ազգային միության ղե-

կավար ոզակներից մնեց, պատասխանատվություն էր կրում զջիավոր համաժողովի և կննարունական կոմիտեի կողմից մշակված միության ծրագրերի և քաղաքականության իրականացման համար, նախապատրաստում էր այն բոլոր որոշումները, որոնք վերաբերում էին Միության աշխատանքի կազմակերպմանը, վերահսկում էր նաև անգների կոմիտեներին, բաշխում էր դրամական միջոցները, կարող էր կարգավաճական տույժի և նեթարկել տռանձին կոմիտեներին ու նրանց անդամներին, իշխությունը, հատկապես այս մարմինն էր որոշում, թե ով կարող է լինել Ազգային միության անդամության թեկնածուն և առաջադրում էր նաև անդամական գործադիր կոմիտեների անդամության թեկնածումներին:

Ազգային միության նաև անդամական կազմակերպությունները լինելով բուրդի հաջորդ աստիճանը, նույնպես կազմված էին երեք օղակներից՝ նաև անդամական համաժողովից, կննարունական ու գործադիր կոմիտեներից: Նաև անդամական հանձնաժողովը ներկայացված էր շրջանային կենտրոնական կոմիտեների բոլոր անդամներով և հրավիրվում էր տարբեն առնվազն մեկ անդամ տվյալ նաև անգում Ազգային միության կոնկրետ քաղաքականության և ծրագրի վերաբերյալ որոշումներ ընդունելու և այդ որոշումները կենսապրածելու վերաբերյալ զեկավար ցուցումներ մշակելու համար:

Համաժողովը ընտրում էր նաև անգի կենտրոնական կոմիտեն, որը նիստ էր պումարում ամեն շորս ամիսը մեկ և, Բարձրագույն գործադիր կոմիտենին լինելով հաջուկու, մշակում էր վերջինիս հանձնարարությունների ու առաջադրանքների կատարման ծրագիրը: Միաժամանակ, այդ մակարդակի կենտրոնական կոմիտեն նեթակարգած էր միության նաև անդամական կազմակերպության գործադիր կոմիտեն: Կենտրոնական կոմիտեի անդամները ընտրվում էին ըստ տարածքային և մասնագիտական հատկանիշի: Ամեն մի շրջանային կենտրոնական կոմիտե առաջարկում էր իր երկու ընտրական ներկայացուցիչներին, որոնք, իրենց հերթին, ընտրում էին Ազգային միության նաև անգի նախագահին, մեկ կամ երկու քարտուզարներին և զանձապահին: Խսկ կենտրոնական կոմիտեն արգելն իր անդամներից ընտրում էր գործադիր կոմիտե, որը Բարձրագույն գործադիր կոմիտեին ներկայացնում էր և նրա հետ համաձայնեցնում պարզամենտական ընտրություններում ազգային միության թեկնածությունները, հանձնարարականներ էր մշակում նաև անգում միտոնական ընտրական արշավի անցկացման համար, ինչպես նաև առաջարկում էր թեկնածուներ այլ պաշտոնների համար<sup>36</sup>,

Ազգային միության կառուցվածքում շրջանային մակարդակը ներ-

կայացնում էին կենտրոնական և գործադիր կոմիտեները, որոնց նիստերը անցկացվում էին ամիսը մեկ անգամ, Կենտրոնական կոմիտեի կազմի մեջ մտնում էին յուրաքանչյուր անդական կոմիտենից միջինը երկուական ընտրական ներկայացուցիչ, տեղական գործադիր կոմիտեների նախինն և գործող քարտուղարները, ինչպես նաև Ազգային միության Բարձրագույն դորժադիր կոմիտեի առբեր հրահանգների համաձայն ընտրված անձերը:

Կենտրոնական կոմիտեի անդամներից ընտրվում էր գործադիր կոմիտեն, որը կազմված էր նվազագույնը 10, առավելագույնը՝ 30 մարդուց: Ուշագրավ է հետևյալ հակամաները, չնեց այս մակարդակում էր փորձ արվում կանոնավորություն գործադիր կոմիտեի անդամների սոցիալական կողմր, քանի որ գործադիր կոմիտեների 10 անդամները ընտրվում էին կենտրոնական կոմիտեների կողմից, իսկ մենացածը, միության ԲԳԿ-ի որոշումներին համապատասխան, ստանում էին տարրեր կազմակերպությունների, միությունների, հաստատությունների ձայները: Փաստորեն միայն այդ ուղիղով էին բանվորներն ու գյուղացիները հնարավորություն ստանում ներկայացվել այդ կազմակերպության տարրեր առաջնաների զեկավարության մեջ<sup>27</sup>: Հետագայում այդ դրույթը արտահայտվեց նաև Խարսխայի մեջ 1962 թ., որի հիմնական կանխադրություն հաշվառում էր, որ երկրի բոլոր բնարական մարմիններում բանվորներն ու գյուղացիները պետք է ունենան 50 տոկոսի ներկայացուցչությունը<sup>28</sup>:

Նզ վերջապես, բուրգի հիմքում ընկած էին այսպես կոչված տեղական կոմիտեները, որոնք, մեծ մասամբ, կազմված էին 10 ակտիվ անդամներից: Ամսվա մեջ մեկ անդամ նիստ գումարող այս կոմիտեների պարտականությունների մեջ էին մտնում վերադաս մարմինների ցուցաների կատարումը, Ազգային միության ժրագրի և քաղաքականության պարզաբանումը, ինչպես նաև նրանց հետ աշխատությունների անցկացում, որոնք ցանկանում էին արդ կազմակերպության ակտիվ անդամի կարգ ստանալ: Կոմիտեներն ընտրում էին նաև գործադիր կոմիտեները<sup>29</sup>,

\* \* \*

1956 թ. Հուլիսին լուծարքի հնֆարկված Հեղափոխության դեկազմարիորդով անդամները ճնշող մեծամասնությամբ մտան Ազգային միության բարձրագույն մարմինների կազմում: Դրանց կազմի մեջ մտան

նաև Առևելի պատերազմի հերոսները<sup>40</sup>, ալաբնքն՝ զինվորական վերնախավը, որը ավելորդ պատցուց է այն բանի, որ ուսումնասիրվող ժամանակամիջոցում եղիպատական բանակը երկրում զրադեցնում էր գերիշխող դրություն։ Ընդ որում զինվորական կաստային ներկայացնուցիչները մեծ ազդեցություն ունենք Ազգային միության Հատկապես բազարացին կոմիտեներում<sup>41</sup>։

Ազգային միությունը երկրի կառավարման ապարատի օղակներից մեկն էր, բանի որ նրա կոմիտեների խնդիրների մեջ մտնում էին երկրի այս կոտ այն շրջանների առըն կանգնած կռնկրետ տնտեսական հարցերի ուսումնասիրումն ու մշակումը, նա պետք է ոչանքեր թափի հանուն նոր զբարձրացնեալության և նոր արդյունաբերության, ինչպես նաև սոցիալական ժառայությունների ուղղաների ստեղծմանը։ Ազգային Միությունը պետք է միավորմի կառավարության հետ խնդիրների ուսումնասիրման գործում...»<sup>42</sup>, «Ազգային միության անդամների առքեն կանգնած է ևակ մի այլ հարց՝ ժողովրդին կոռապերատիվների մեջ կազմակերպելու հարցը, ինչպես նաև հակասությունների և կուսակցականության ուղղ փոխարքն աիրո ոգու աւրամծումը»<sup>43</sup>։

Այսպիսով, Ազգային միությունը պետք է երկրում բաղաքական, տնտեսական և գողագիտախոսական վերահսկողություն իրագործեր։

Բնականորմն հարց է ծառալմ՝ վերցին հաշվով Ազգային միությունը ի՞նչ է, կուսակցութուն, թե՝ կազմակերպություն։ Սգիպատական ուսումնասիրողների մեծամասնության հարծիքը միաձայն է՝ դա ազգային նակատ է։ Մասնավորապես ինչը՝ նասերը շալ-Գումշուրիաց թերթին աված հարցազրուցի մեջ այդ հարցին պատասխանել է հետեւյալ կերպ։ ԱԱզգային միությունը ազգային նակատ է, որն իրագործում է հեղափոխության նպատակները և խոշինքուում իմպերիալիզմի կողմնակիցների տարրեր կարգի կազմակերպությունների ստեղծմանը<sup>44</sup>։ Պրեզիդինտ նասերի վարած կուսի կուղմակիցներից մեկը, Մուհամմադ Հ. Շեյքալլը նմանատիպ հարցին ապահով է այսպիսի պատասխան։ ԵԱզգային միությունը, ինարկն, կուսակցություն չէ, Կուսակցության կապիտալիստական հասկացողությունը արտացոլում է տարրեր շահեր ունեցող անհատների միջև պայքարը... Ազգային միությունը տրամադրանական ապացուց է այն շրջանակների գոյության, որոնց մեջ կարգավորվում և ներդաշնակութեն համընկերում են բոլորի շահերը և որոնց գասակարգերի միջև պայքարը գոխակերպում է գոխասկացողության, Այն չի գործում ինչպես կուսակցություն, բանի որ Ազգային միությունը շահերի

և դասակարգերի պայքարի վայր չէ, այն շրջանակ է, որի մեջ միավորվում են բոլոր դասակարգերն ու նրանց շահերը<sup>45</sup>, Անվար Սահաթը հետնյալ կերպ էր բնութագրում Ազգային միությունը, և Ազգային միությունը կուսակցություն չէ և ոչ էլ վերացական գաղափար, այն ոգու պաշտպանության ուղի է և այսուղ այլ ուղի չկա, Դա ազատ ընտրված ուղի չէ: Միայն անհրաժեշտությունն է մեզ ստիպել թելազրել մեր նոր պայմաններն ու պարտականությունները<sup>46</sup>:

Հիշարժան է այն գնահատականը, որ Ազգային միությանը տվել էն եզիստական կոմունիստները, և թե մեզ այսօր ասում են, որ Ազգային միությունը կուսակցություն չէ և ոչ էլ ազգային ճակատ, որ այն քաղաքացիների միությունն է և ոչ թե ուղղությունների (քաղաքական—Գ. Ն.), եթե այնուհետև մեզ ասում են, որ այն միավորում է ոչ թե առանձին դասակարգեր, այլ բոլոր դասակարգերի ներկայացուցիչներին, ապա ենիկով այդ բոլորից մենք պետք է պարզորոշ հաճախունք հատկացը. առաջինը՝ Ազգային միությունը կուսակցությունն է և, երկրորդը, կոմունիստական կուսակցությունը պահանջում է նրա ինքնավերացումը<sup>47</sup>:

Այսպիսով, Ազգային միությունում տեսականություններն պետք է միավորվեին բոլոր դասակարգերի ներկայացուցիչները, այսինքն, այն հասկացվում էր իրեն ազգային լայն ճակատ, իսկ դործնականում նրա անդամների մեջող մեծամասնությունը բուժմուական շրջաններից ելած մարդիկ էին և արտահայտում էին ոչ միայն մանր, այլև հավասարապես միջին և խոշոր բարձրուազիայի դասակարգային շահերը: Ազգային միության անդամների մեջ ոչ թիշ առկու էին կազմում բյուրոկրատական ապարատի, ինչպես նաև զինվորական կառտայի ներկայացուցիչները: Մակայն Ազգային միությունը բացարձակապես որպես կուսակցություն ընդունելը սիսալ կլիներ, ավելի շուտ այն հենց քաղաքական կազմակերպություն էր, որն իր մեջ կրում էր կուսակցությանը հատկանշական տարրերի սաղմերը, ինչի օգտին խոսում էին այդ կազմակերպության առքն կանգնած խնդիրները, նրա կառուցվածքը, նրա վրա դրված պարտականությունները:

\* \* \*

1957 թ. նոյեմբերի 25-ին սկսվեց Ազգային միության մեջ մտնելու դիմումների ընդումումը, իսկ 1958 թ. հունվարի 3-ին ընտրություններ անցկացվեցին նրա մարմիններում: Սակայն, ինչպես նշեց նույն 1958 թ. ամսանը միության գլուխվոր քարտուղար Անվար Սահաթը, այդ ընթաց-

բում ընդունվել էին միայն Ազգային ժողովի պատգամավորները. ընդունում նրա 350 պատգամավորներից 8-ին թույլ չտրվեց Ազգային միության գործունեությունը վարել<sup>22</sup>:

Նշենք,որ Ազգային միության պրակտիկ գործունեությունը սկսվեց կանոնադրության ընդունումից մի քանի ամիս առաջ՝ Ազգային ժողովի ընտրություններում նրա թեկնածուների առաջազրումամբ<sup>23</sup> և այլ կազմակերպությունների կողմից առաջադրված թեկնածությունների քննարկմամբ: Ազիպտոսի Ազգային ժողովը, համաձայն 1857 թ. մարտին ընդունած օրենքի, ուներ 350 պատգամավորական տեղ, նրանք իշխանության բարձրագույն մարմնում պատգամավորների ընտրության կարգը պետք է անցկացվեր հետևած կերպ: Ենթադրի լուրացանցուր քաղաքացի, որի տարիքը հասել է 30-ի, կարող է ընտրական տեղամասում իր թեկնածությունն առաջազրել: Թեկնածուների առաջազրումն ընթանում է սովորական հունգ միեւն ներքին գործերի մինիստրություններին գործերի մինիստրությունը, իր հերթին, այդ թեկնածությունը ներկայացնում է Ազգային միությանը: Ազգային միությունը, օրինակի համար կում է Հին քաղաքի<sup>\*</sup> 6 թեկնածություններ և զգուշացնում է, որ նրանցից մեկը օպորտուելիստ է: Մենք մերժում ենք նրա թեկնածությունը, իսկ մյուսներին որոշում ենք ներկայացնելը<sup>24</sup>: Նման մաքրագործումից հետո 2500 (որոշ տվյալներով՝ 2508)<sup>25</sup> թեկնածուներից, որոնք առաջազրվել էին Ազգային ժողովի պատգամավոր, թույլ արգելոց ընտրություններին մասնակցել 1320 մարդու հատ որում ընտրությունների օրը՝ 1957 թ. հուլիսի 2-ին, 73 թեկնածուներ իրենց թեկնածությունը հանդին, իսկ 76-ը՝ հեռացվեցին: Մասցած 1171 թեկնածուներից ըստ առաջին ընտրական թերթինի ընտրվեց միայն մեկ երրորդը: Իսկ ընտրական հինգ տեղամասերում Ազգային միությունը ընդհանրապես լէր ներկայացրել իր թեկնածուներին<sup>26</sup>: Անկախ նզեպտոսի առաջին Ազգային ժողովի հետագայում հրապարակված կազմը հույժ ուշագրավ էր, 33 տոկոսը բիզնեսնեններ և իրավաբաններ էին, 30 տոկոսը՝ ունենոր ժառայողներ, նախկին մինիստրներ, սպաներ, 12 տոկոսը՝ խոշոր հողատերներ, 10 տոկոսը՝ քաղաքագլուխներ ու տանուտերներ, 3 տոկոսը՝ բանվորներ և ոչ մի ոյտուացի<sup>27</sup>:

Այսպիսով, Ազգային ժողովի, ինչպիս և Ազգային միության հերթակարգության սանդուղքի ստորին աստիճանների սոցիալական կազմը

\* Կամքեն հին թագածաւը:

վկայում էր, որ, ինչպես և նրա նախորդողը՝ Ազատագրության կազմակերպությունը, Ազգային միությունը չէր կարող դիմագրավի երկրությունը հետազիմական ուժերին։ Դա չէ դարձավ վարչակարգի համար զանգվածների մեջ քաղաքական հենարան ստեղծելու երկրի զեկավարության հերթական գործի տապալման հիմնական պատճառներից մեկը։ «Մեր սխալն այն էր, որ մենք Ազգային միության դռները բացեցինք հետազիմության ուժերի առջև։ Այդ սխալը հանգեցրեց նրան, որ Ազգային միության մեջ ներթափանցած հետազիմությունը կարողացավ անդամալութել նրա հեղափոխական արդյունավետությունը և նրան զերածնել պարզապես ցուցանակի, որն այլևս չի համապատասխանում ժողովրդական զանգվածների շահներին»։ — Հետագայում նշում էր նաև երրորդ, Միաժամանակ, հենց Ազգային միության զեկավարությունը սոցիալական կազմով ու քաղաքական համոզություններով խիստ խալտարգնա էր։

\* \* \*

50-ական թվականների ավարտը երկրաշրջանի պատճության մեջ նշանակութեց կարևոր իրադարձություններով, հենց այդ ժամանակափուլում փորձ արվեց մարմնավորել արարական միասնականության գաղափարը։ Սիրիայի նախաձեռնությամբ սկսված մերձեցման պրոցեսը 1958 թ. ավարտվեց Սիրիայի և Եգիպտոսի կազմով Արարական Միացյալ Հանրապետության ստեղծումով։ 1958 թ. մարտի 5-ին ընդունված ԱՄՀ-ի սահմանադրությունը, ըստ էության, 1958 թ. Էգիպտոսի սահմանադրության խտացված տարատեսակն էր<sup>35</sup>։ Մեր խնդրի մեջ չի մըտնում ԱՄՀ-ի ստեղծման հետ կապված իրադարձությունների և փաստերի շարադրումը, նշենք միայն, որ քաղաքական, տեսանական, սոցիալական ու մշակութային զարգացման տարրերը մակարդակներում զանեցվող այդ երկու երկրների լրիվ մերձեցումը իրական հիմք չուներ և իր հետեւց պիտի բերեր բացառական հետևանքների մի ամրող շարժ, ինչը և ապացուցեցին հետագա իրադարձությունները<sup>36</sup>, նաև ԱՄՀ-ի գոյության ըրչանում (1958—1961 թթ.) երկու կողմն էլ հասան իրենց հետապնդած նպատակներին։ Նգիպտոսը, պլիավորող զիրք գրավելով, իր վերանսկողության տակ դրեց Սիրիայի ամրող տնտեսությունը, ինչը առաջ բերեց սիրիական քուրմուազիայի մեծ դժուռությունը, իրենց հերթին, Սիրիայի աշ շրջանների ներկայացնեցիներին հարողվեց ժամանակավորապես կանգնեցնել իրենց երկրի ռձախացման ընթացքը, քանի որ 1958թ. մարտի 14-ի պրեզիդենտական զեկրետությունը լուծարվի և թարկվեցին սիրիական երկրամասի բոլոր քաղաքական կռւակցություն-

ներին ու կազմակերպությունները, նրանց անդամներին արգելվեց զբաղվել որևէ կարգի բաղաքական գործունեությամբ<sup>62</sup>:

Բառ ԱՄՀՀ-ի 1958 թ. ժամանակավոր սահմանադրության 72-րդ հոդվածի, Սիրիայում նախկինում գոյություն ունեցող բաղաքական կուսակցությունների գոխարքների կողմանը կազմական կուսակցությունների գործունեությունը սկսեց ժամանել Ազգային միությունը<sup>63</sup>: Սակայն նթե այսպես կոչված ռազգային ճակատից ստեղծման ընթացքը նպաստում ոչ հիմնադրամին եղավ, այս այսուղագործած ու հզոր կուսակցական համակարգ ունեցող Սիրիայում տռաշացան մի շաբաթ դժվարություններ, որոնք կապված էին եզիպատական բաղաքական կուսակցությունների որինակը Սիրիայում արմատավորելու հետ: Նաև նրա, ժամանակորագիր տանցյալի ժառանգության ոչնչացումն ու նոր բաղաքական դեկազմարների դաստիարակումն է, որոնք չեն տառապում նախօին կուսակցությունների արաւաներով: Կուսակցական նոր կազմեր պատրաստելու համար Ազգային միությունը կազմակերպվելու է ամենամասնակրներին կերպով, և զրա համար այն անխռուափելիորեն պիտի դառնա գաղափարների, ուղղությունների և խմբավորումների պայքարի ասպարեզ, որոնք կարև ժամանակամիջոցում կարող են վերանայել անկախ բաղաքական կուսակցությունների, Թաղաքական վարչակարգը ԱՄՀՀ-ում ժամանակավոր է, բնական բաղաքական կյանքի անցմանը նախապատրաստողը<sup>64</sup>, Նպաստում առաջնորդի նման վերաբերմունքը Սիրիայում բաղաքական կուսակցությունների ստեղծման խնդրի նկատմամբ բացատրվում է սիրիական ընդդիմացրության հետ բախման մեջ մտնելու ԱՄՀՀ-ի դեկազմարության խուսափումով: Այդ նույն նպատակով, ի տարրերություն եզիպատական երկրամասի, Ազգային միության աշխատանքի մեջ էին ընդդրկվում նաև Սիրիայի կռմունիստական կուսակցության անդամները:

ԱՄՀՀ-ի Ազգային միության կառուցվածքն իր մեջ ընդգրկում էր երկու բաժանմունքներ՝ եզիպատական և սիրիական: Հատ երկրամասերի նրանց զեկուազար օգակների թվական կազմը աշխախին էր:

	Նպիպատու	Սիրիա
Գյումավոր համաժողով	4000	1400
Ենթարտեական կոմիտե	450	220
Բարձրագույն գործադիր կոմիտե	16	9

Բացի երկրամասային բաժանմունքներից, գոյություն ուներ նաև Ազգային Միության միասնական դեկազմարություն, որը կազմված էր 161

Հետեւալ ողակներից. Միության նախադաշտը, որն ինքը՝ ԱՄՀ-ի պրեզիդենտն էր, ԱՄՀ-ի Ազգային միության գլխավոր համաժողովը, ԿԸՆ բռնական կոմիտեն, Թարձրագույն գործադիր կոմիտեն, պլենավոր համաժողովի նախապատրաստական կոմիտեն<sup>61</sup>,

Ի առրերություն նախակինում նպագոտուում գոյություն ունեցող Ազգային միության, ԱՄՀ-ի Ազգային միության ղեկավարության մեջ ազելացել էր նոր օղակ՝ Բարձրագույն գործադիր կոմիտեին կից ատեղծած բարտուղարությունը, որի գործունեության կարևորագույն ուղղէշերտը որշեստակցական միություններում և ընկերություններում Ազգային միության օղակների ատեղծումն էր և սոցիալական ու անտեսական թեմատիկայով տարրեր կարգի նյութերի հավաքումն ու հրատարակության նախապատրաստումը։ Բարտուղարության կազմի մեջ մտնում էին երեք կոմիտեներ. բաղարական (ներքին և արտաքին գործերի հնթակումիտեների), կազմակերպությունների (վարում էր երիտասարդական, կանանց և արհմիութենական կազմակերպությունների գործերը), ֆինանսական և մամուլի<sup>62</sup>։

Երկու երկրամասերում Ազգային միության ստեղծումը հանձնարարվեց այնպիսի գործիչների, որոնք պետության մեջ զբաղեցնում էին կարևոր պաշտոններ։ Այսպիս, 1959-ին լուսավորության մինիստր Թամալ Էդ-Դին Հուակինը պրեզիդենտի կողմից նշանակվեց նպագոտուում Ազգային միության ստեղծման նպագակից փուլի նախապատրաստական կոմիտեի ղեկավար։ Ներքին գործերի մինիստր, վճարապետ Զաքարիա Մուհի Էդ-Դինը վերահսկողություն էր իրականացնում Միության ստորին աստիճանի կոմիտեների անդամության թեկնածուների ցուցակների նկատմամբ, իսկ երկրի զինված ուժերի զինավոր հրամանատար և միաժամանակ սիրիական երկրամասի նահանգապետ մարշալ Արզել Հաջիմ Ամերը անսահմանափակ լիազորություններ ստացավ Սիրիայում Ազգային միության ստեղծման և նրա կոմիտեներում ընտրությունների անցկացման ժամանակ, կոորդինացիոն կոմիտենեությունը կաչիրեսում Թամալ Էդ-Դին Հուակինի և Դամասկոսում գնդապետ Արդել Համիդ Սարրազին հետո<sup>63</sup>.

Այդ նույն ժամանակ բնդշատակ անցած Սիրիայի կոմունիստական կուսակցությունը, Հաշդի առնելով սիրիական երկրամասում առաջացած պարագաները, ԱՄՀ-ի գոյության ժամանակամիջոցում երկու անդամ հանդես հակած Հայուարարություններով, որոնք պարունակում էին անդի ունեցող իրադարձությունների սթափ գնահատականներ և երկրամասում դրության բարեկազման ուղղված որոշակի առաջարկություններ։

նազորապես, 1958 թ. դեկտեմբերի 14-ին, առաջին հայտարարության մեջ կոմունիստական կուսակցությունը, ի շարա այլ Հարցերի, առաջ քաշեց դեմոկրատական ազատություններ տրամադրելու պահանջը՝ ապահովել մամուլի, ժողովների, գույցերի, գործադրության գործունեության ազատությունը, Հարցել ազատորեն քաղաքական կազմակերպությունների առկայությունը, ապահովական զանգվածների և Հայրենասիրական ուժերի իրավունքը<sup>1</sup>, Առաջ քաշված ժրապիրը միայն ավելի ուժեղացրեց կոմունիստների նկատմամբ ճնշումները, բայց 1961 թ. մայիսին կոմկուսը կրկին առաջարկեց երկրին վերագրանել բուրժուազիանունիքրատական ազատությունները, սիրիական տնտեսությունը զերծ պահել եղիպատական և ստարերքոյաց կապիտալի մեջումներից, բարելավել բանվորների տնտեսական զրությունը և այլն<sup>2</sup>, Բայց ինչպես և նախորդ ժրապիրը, առ էլ ցանկալի արդյունքներ լրերնց:

Ի վերջո, մի շարք օրյեկտիվ ու սուրյեկտիվ պատճառներ, դրանց մեջ նաև Սիրիայում քաղաքական կուսակցությունները Ազգային միությամբ փոխարինելը, ինչը հանգեցրեց երկրի վրա եզիզտական բանակի համարյա լրից վերաշահողությանը, իրենց հոտեից բերեցին Սիրիայի դուրս գալը (1961 թ. սկզբունքը) Արաբական Միացյալ Հանրապետության կազմից, որից հետո Ազգային միությունը դադարեց գոյություն ունենալ:

Ամփոփելով վերը շարադրվածը, կարելի է անել Հետնյալ եզրակացները:

1. 1955—1961 թթ. ժամանակամիջոցը նպիստոսի միջին ու խոշոր բուրժուազիայի՝ երկրի վրա լիակատար տիրապետության և, համապատասխանաբար, երկրի տնտեսական բնագավառում եզիզտական զեկավարության հերթական փորձարկման ձախողման փուլ է, մի փորձարկում, որը կապված էր Հույսերի հետ՝ եզիզտական ժանակվոր կապիտալ ներգրամներն ուղղել դեպի աշխարհի ճյուղեր, որնց զարգացումը կարող էր հականորմն փոխնել երկրի տնտեսական կառուցվածքը:

2. Ուսումնասիրվող ժամանակամիջոցում առնեղծված քաղաքական կազմակերպությունը՝ Ազգային միությունը շիառողացավ խաղալ իրեն Հատկացված ակտիվ դերը երկրի քաղաքական կյանքում, որին նպաստեցին երա ստեղծման ժամանակ թույլ տրված մի շարք սխալներն ու մըրիպումները և, մասնավորապես հետեւալը.

ա) Շահակարգերի ներդաշնակության տնտեսությունը, որն իր զիանոցն էր վերցրել կառավարող վերենախավը, թույլ ովեց Ազգային

միության մեջ ներթափանցել հետադեմ դասակարգերի և բրկայացուցիչներին և դրանով իսկ կազմակուժել նրա գործունեությունը:

բ) Զախ ուժերի մեկուսացումը;

գ) Այս կամ այն օղակների միջև պարտականությունների հատուցաշխաման բացահայտությունը նպաստում էր սարստամին տեղերում:

դ) Միության զեկավարության մեջ տարածայնությունները:

3. Արարական Միացյալ Հանրապետության գոյության ժամանակամիջոցում Սիրիայում բոլոր քաղաքական կուսակցությունների ցրումը և նրանց փոխարինումը Ազգային միությունով հանդիսացան երկու արարական պետությունների համագաշնակցության ստեղծման փորձերի ձախողման որյականիվ պատճառներից մեկը:

4. Տնտեսական ու քաջարական անկախության հասնելու եղիպատկան զեկավարության փորձերը հաճացեցին հետագայում համագաշնակցության ստեղծմանը:

Г. В. НОВИКОВА

## ВНУТРИПОЛИТИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ЕГИПТА ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 50-Х ГГ. И СОЗДАНИЕ НАЦИОНАЛЬНОГО СОЮЗА.

1. Период 1955—1961 гг. явился этапом полного господства средней и крупной буржуазии Египта над страной и, соответственно, провалом очередного эксперимента египетского руководства на экономической арене страны, связанного с надеждами направить египетские частные капиталоизложения в отрасли, развитие которых могло бы существенно изменить экономическую структуру страны.

2. Созданная в рассматриваемый период политическая организация—Национальный союз—не смогла сыграть отведенной ей активной роли в политической жизни страны, чему способствовал целый ряд ошибок и просчетов, допущенных при ее создании, в частности, следующие:

а) теория «гармонии классов», взятая на вооружение правящей верхушкой, дала возможность проникнуть в Национальный союз представителям реакционных классов и парализовать тем самым его деятельность;

б) изоляция левых сил;

в) отсутствие четкого распределения обязанностей тех или иных звеньев способствовало саботажу на местах;  
г) разногласия в самом руководстве Союза;

3. Распуск всех политических партий в Сирии в период существования Объединенной Арабской Республики и замена их Национальным союзом явились одной из объективных причин провала попытки создания всестороннего альянса двух арабских государств.

### كماياتيه توفيكوفا

الوضع السياسي الداخلي في مصر في النصف الثاني من الخمسينات  
والشأن الاتحاد القومي

١- تعتبر الفترة الممتدة من سنة ١٩٥٥ إلى ١٩٦١ مرحلة سيطرة كاملة للبرجوازية الكبيرة والمنوطة في مصر، تعي توافق مع الفشل المتنامي لنجدية القيادة المصرية في ميدان التطور الاقتصادي المتعلق بامل توجيه الرأس المال الخاص المصري للمشاركة في تحقيق تغييرات في بنى اقتصاد البلاد.

٢- ان فيام المنظمات السياسية في الفترة المذكورة كالاتحاد القومي، الذي لم يتمكن من لعب دور فعال في حياة البلاد السياسية، لارتكابه العديد من الاخطاء والجهوات حتى عند تأسيسه شخص منه ياميل، أ- ان نظرية «تحالف الطبقات» التي رفعتها اقسام الحاكمة قد اعطت الغرفة لانضمام العناصر الرجعية الى الاتحاد القومي، مما دعى الى شلل نشاطه.

### ب- عزل القوى اليسارية.

ج- ان غياب التنسيق التام للواجبات في هذه الدائرة اولى ذلك، مهد السبيل لاجهاض القرارات في المراكز.

### د- الخلاف في قيادة الاتحاد

٣- يعتبر حل جميع الاحزاب السياسية في سوريا خلال الوحدة السورية المصرية واستبدالها بالاتحاد القومي، احد الاسباب الموضوعية لفشل تجربة الوحدة بين دولتين عربيتين.

- 1 *Белков И. П., Примаков Е. М. Еретик: время президента Насера*, М., 1983.
- 2 *Baker R. W. Egypt's uncertain revolution under Nasser and Sadat*, London, 1978.
- 3 *Vatikiotis P. J. The Egyptian Army in Politics*, Bloomington, 1961; *Nasser and his generation*, London, 1978; *The Modern History of Egypt*, N.Y., 1969.
- 4 *Dekmejian R. Hrair. Egypt under Nasser. A study in Political dynamics*, Bloomington, 1971.
- 5 *Hasslein Mahmoud. Class conflict in Egypt 1945—1970*, London—N.Y., 1973.
- 6 **قصصت سيف الدولة، هل كان عبد الناصر صرداً يكتاثلوا في بيروت؟** FIV.
- 7 *Binder Leonard. In a moment of enthusiasm: political power and the second stratum in Egypt*, Chicago-London, 1978.
- 8 **مجموعة خطب وتصريحات الرئيس جمال عبد الناصر، القسم الأول** FIV. القاهرة، عن.
- 9 *Раховский Н. С. Иностранный капитал в экономике Египта*, М., 1983, гл. 9—10.
- 10 **قصصت سيف الدين ولة**, FIV.
- 11 *Форбсъ № 1856 в. աշխարհագրության մեջ. The Middle East Journal*, Washington, 1956, Summer, гл. 30.
- 12 **Այս ժըցառությունը ուզում է ին վրանիկան տեղինակ և բրախման ընթացքների վեց, ին 932-ի, Խալիֆայի և ԱՄՆ-ի նու տեղական կողմը դրանիկով է ին չարգանը**
- 13 *Белков, Примаков, Ֆրանկ աշխ.*, гл. 93.
- 14 *Մակրոտակ մեջ Բելկով, Примаков, Խալիֆ աշխ.*, гл. 101—111.
- 15 **مجموعة خطب و تصريحات....، القسم الثاني**, عن FIV—FVI.
- 16 **مجموعة خطب و تصريحات....، القسم الأول**, عن FVA.
- 17 *Х. Моли ՅՇ-Դահ, Египетская революция. Ее развитие и перспективы, «Проблемы мира и социализма»*, Прага, № 8, 1966, гл. 39.
- 18 **مجموعة خطب و...، القسم الأول**, عن FII.
- 19 **Խալիֆ աշխան**, гл. 214.
- 20 **Խալիֆ աշխան**, гл. 590.
- 21 **مجموعة خطب و...، القسم الأول**, عن FII.
- 22 *Ֆաբրուար 1955 թվականի աշխարհագրության*, гл. 304.
- 23 **مجموعة خطب و...، القسم الأول**, عن FV.
- 24 **مجموعة خطب و...، القسم الأول**, عن FOIF.
- 25 **Խալիֆ աշխան**, гл. 518.
- 26 **مجموعة خطب و...، القسم الأول**, عن F...
- 27 **مجموعة خطب و...، القسم الثاني**, عن FII. *Белков, Примаков, Ֆրանկ աշխ.*, гл. 100; *Wheelock K., Nasser's new Egypt*, N.Y., 1976, гл. 89—91; *Vatikiotis P. J., The Modern History of Egypt*, N.Y., 1969, гл. 288.

- 22 1956 թ. Հայիսք 22-ի N 148 որեցը Ազգային ժողովը սկզբանից մնալունակությունը դարձած այս հայրեց այս բայր անձակ, որու գովազն էին ուշականական կարգություն, այս է՝ 1. անձիք, որու սպասարկությունը բակարածքէ կը 276-ի կազմից, 2. որու գովազն էին բազուրացնեան իրավունքներից, 3. որու գովազնը էին բազուրացնեան և պահպանական քառարակության հոգմից պահպանականությունը վճառ հայրեց համար:
- 23 Vigeness Jean, *The Ideology of the Egyptian Revolution, „The Middle East in transition”* գրքում, London, 1968, էջ 143.
- 30 **الاتحاد القومي نظامه و تشكيلاته و اهدافه، القاهرة، ١٩٥٩، ص ١٦-**
- 31 Նոյն տեղում, էջ 15:
- 32 Նոյն տեղում, էջ 11:
- 33 Նոյն տեղում, էջ 18:
- 34 Vatikiotis P. J., Եզր. աշխ., էջ 110 - 111:
- 35 1-2-3... աշխ. տեղում, 1959, աշխ. 1-2-3...
- 36 Նոյն տեղում, էջ 20:
- 37 Նոյն տեղում, էջ 21:
- 38 «الميثاق»، القاهرة، ١٩٥٣، ص ٢٥
- 39 **الاتحاد القومي...،** աշխ. 1-2-3...
- 40 Անձիք պատրաստը—Շահումյան, Ֆրանկուայի և Քուայէ Հուանի աշխախան 1968 թ. Հայությունի ուղղական նիրարար գույն:
- 41 Binder Leonard, Եզր. աշխ., էջ 52-53.
- 42 **مجموّدة خطبٍ و...،** աշխ. շահ. 1
- 43 Նոյն տեղում, էջ 26:
- 44 **FVI مجموّدة خطبٍ و...،** աշխ. 1
- 45 Bärer Reiner, *Die Arabische Sozialistische Union*, Opladen, 1970, էջ 63.
- 46 Perlmutter Amos, *Egypt, the praetorian State*, New-Jersey, 1974, էջ 145.
- 47 **الحزب الشيوعي المصري حول الاتحاد القومي: رد فعلى انور اسادات، بغداد ١٩٨٠، ص ١**
- 48 Wheelock H. Եզր. աշխ., էջ 70:
- 49 Ազգային միավորի մեջամանների ցանցում ամենի համար ինքը կը կարգություն Տե՛ս J. S. Lacouture, *Egypt in Transition*, L., 1958, էջ 273.
- 50 **مجموّدة خطبٍ و...،** աշխ. 1-2-3...
- 51 Dekmejian R. Hrair, Եզր. աշխ., էջ 48.
- 52 Wheelock H. Եզր. աշխ., էջ 63.
- 53 Vatikiotis P. J. Եզր. աշխ., էջ 103-109.
- 54 **مجموّدة خطبٍ و...،** աշխ. 1-2-3...
- 55 Օդրություն 1958 թ. աշխատաբարյունը, անց՝ Bärer Reiner. Եզր. աշխ., էջ 75.
- 56 Пир-Будаевская З. П. Сирия в борьбе за упрочение национальной независимости. М. 1978, էջ 120-146; Балашов, Прамаков, Եզր. աշխ., էջ 84-95.

•النصر" ، دمشق، ٥٧ ١٩٦٨/٣/١٤.

- 58 1968. թ. գետըստի 28-րե սկզբանին Ասու կուսակցությունը նարարար ի., իշխանութեարքի մասին Մի բանի պրէ նույն բայլին պիտիյն ժողովրդուն և Ազգանի կուսակցությունները, «Մուսավադ» հարացյակը հաղմակերպությունը, Մի- րիամի համար ընդունակ անդամ։
- 59 Wilber Donald, United Arab Republic; Its People, Its Society, Its Culture, New-Haven, 1959, էջ 149.
- 60 مجموعة خطب و...، القسم الثاني، ص ١٢٦
- 61 أمين سعيد من ثورة ٢٣ جوليو ١٩٥٤ إلى ٢٠ أكتوبر ١٩٥٦، القاهرة
- 62 Vatikiotis P. J. Ազգ. աշխ., էջ 107—108.
- 63 Նույն ակզան, էջ 220.
- 64 Rev/ir/81 "الأخمار" ، بيروت،
- 65 Bulletin d'information du Comité Centrale du parti communiste Syrien, fin Mai 1961, Damas, 1961, էջ ١—٣.

# ՄԵԼԱԿՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. ԱՐՄԵՐԵՎԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՎ ՍՊԾԻԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵԳԻԳՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՄ ՓՈԽՈՒՄ

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

1952 թ. Հուլիսյան Հեղափոխությունը հզիպտական ժողովրդի կոմիտացիոն և շաբաթական-տնտեսական ու քաղաքական նոր հարաբերությունների սկիզբը:

Նզիպտական նորագույն պատմության ուսումնասիրվող ժամանակաշատքը (1952—1956 թթ.) շրջադարձային մի փուլ է նզիպտական ժողովրդի ազգային-ազատազրական, հակագաղութափիրական ու սոցիալական պայմանագույն այն է, որ Հենց այդ ժամանակամիջոցում նզիպտական ժողովրդին հաջողվեց թոթափել դարավոր գաղութային լուծը, միջազգային առաջարեղում կանգնել Հակաբիմպերիալիստական ու գրական լճազրության պիրքերում, սկիզբ գնել սոցիալ-տնտեսական վերափոխումների:

\* \* \*

Համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմներում իմպերիալիզմի առավել հետադիմ և հանցագործ տարածեսակն հանդիսացող գերմանական ծավալապաշտության ջախջախումը և աշխարհի առաջադիմական ուժերի հաղթանակի շնորհիվ սոցիալիստական համագործակցության երկրների խմբակցության կազմավորումը նոր լիցք հաղորդեցին գաղութային երկրների ժողովուրդների ազգային-ազատազրական պայմանագույն անկարող լինելով դապել իրենց երկրների անկախության համար պայմանագույն երաժ գաղութային ժողովուրդների հաւաքառ ելույթները, իմպերիալիզմն ստիպված էր ժամանակ առ ժամանակ փոխել իր գործունեության տակարիկան և մեթոդները նա ձգտում էր երկարամգել իր ախրապետությունն ամեն մի երկրում և, եթե նրա լանդերը հաջողություն

շէին ունենաւմ, աշխատում էր այդ երկրներում պահպանը իր ազգեցու-  
յանց՝ իշխանությունը հանձնելով իմպերիալիստամենտ խավերին, կաշ-  
կանգելով այդ երկրներին զանազան հաժամաքար պարուղով ու պայմանա-  
պերով; Իմպերիալիզմն իր գործումնեւթյան հիմնական ոլարք ուղղելով  
առաջադիմության և աղատության հենարան հանդիսացող սոցիալիստա-  
կան երկրների և առաջին հերթին Սովետական Միության դեմ, ամեն  
գնով աշխատում էր արդեն անկախություն ձեռք բերած երկրներին և բա-  
րաշել հակառակներական ռազմական տարրեր խմբակցությունների մեջ:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո բրիտանական գա-  
ղութարարները, ձգտելով որինականացնել իրենց ներկայությունը նզիպ-  
տուսում, ամեն կերպ շահում էին նրան պարտազրել մի այնպիսի պայ-  
մանագիր, որը նրանց թույլ կտար սարատեղիական դիրք ունեցող այդ  
երկրում պահպանել իրենց դիրքերը, ուժեղացնել իրենց ազգեցությունը:  
Նզիպտոսի բուրժուակալվաճառիքան ավագանին անհանգուստացած  
ՅՌ-ական թօվականների սկզբներին նոր թափ սահցած սոցիալական հու-  
զումներից և հույս լումնեալով, թէ իշխանությունը իր ձեռքում կարող է  
պահել առանց անզիւցիների օգության, 1936 թ. օգոստոսի 25-ին  
Բրիտանիայի հետ կերծ մի պայմանագիր, ըստ որի, ֆաստորեն շա-  
րումակվելու էր բրիտանական օկուպացիան և, ի հավելումն դրա, նզիպ-  
տոսն իր վրա վերցնում էր զանազան պարտավորություններ, որոնց  
առմանափակում էին երկրի անկախությունն ու ինքնուրույնությունը<sup>1</sup>:

Հիւլիերյան Գերմանիայի շախշախումը, միշաղային ասպարեզում  
պատերազմից հետո ստեղծված նոր իրադրությունը պայմանավորեցին  
ինչպես ամրող աշխարհում, այնպես էլ Մերձավոր արևելքում ազգա-  
յին-ազատապահական պայքարի թափի հզորացումը: 1945—1946 թ.  
նզիպտական ժողովրդի բուռն ելույթներն ընդում 1936 թ. պայմանագրի  
և Սուևզի շրանցքի գոտուց բրիտանական զօրքերի գուրա բերման հա-  
մար, հանգեցրին նրան, որ եզիպտական կառավարությունն ընդունեց,  
որ երկիրող մագպող բանակցությունները վերոհիշյալ պայմանագիրը  
գերանայելու համար այնու անօգուտ են և 1947 թ. հարցը փոխադրեց  
ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը Զնայած սովետական պատվիրա-  
կության շանթերին՝ նզիպտոսի օրինական պահանջները բավարարելու  
ուղղությամբ, Անվտանգության խորհուրդն ի վիճակի լաղավ որնէ լու-  
ծում գտնել այդ հարցին:

Գետը է նշել, որ այդ ժամանակներում իմպերիալիստական հակա-  
մարտությունները Մերձավոր արևելքում ավելի սրվեցին, երբ այդ շըր-  
բանում սկսեցին ակտիվորեն ներթափանցել ամերիկյան մռնոպոլիա-

Ներք: Ներթափանցման արտաքին շղարշներն էին ամերիկյան զանազան ովարդապետություններն ու տօգնության ծրագրերը: Նպատակը, սահման պարզ էր. ԱՄՆ-ը ցանկանում էր նավթով հարուստ և ստրատեգիական զիրք ունեցող շրջանում հաստատել իր ռազմաքաղաքական և տնտեսական գերակայությունը և իր հակակաշու տակ առնել այդ շրջանի երկրներին: Նրան նպաստում էր բրիտանական գաղութառիրության զիրքի աստիճանական թուլացումը, որն արդյունք էր այդ շրջանի ժողովուրդների օրավոր առողջ հակաբրիտանական եղույթների:

Ազգային և սոցիալական ազատագրական պայքարի ելած եղիպատական ժողովրդի ուշադրությունը շնչելու համար նդիպտոսի պալատական ավագանու համար հարցար առիթ հանդիսացավ 1948 թ. մայիսին ըսկրաֆած պաղեստինյան պատերազմը: Սակայն, ինչպես մյուս արարարան երկրների, այնպես էլ եղիպատական բանակի մարտունակության թուլությունը և պալատական սպեկուլյանտների կողմից զորքերի հին և անպետք զններերով զինումը կանխորչացնեցին պատերազմի ելքը: Պաղեստինում մասնավորապես նդիպտոսի պարտությունը, սակայն, յի կարելի բացատրել միայն եղիպատական ներքին գործուների ազգեցությամբ: Երբեք էլ երկրորդական դեր լուծեցավ այն հանգամանքը, որ միջազգային իմպերիալիզմը, Խորայինին ռազմական խոշոր օգնություն տրամադրելով և, ընդհակառակը, աշխատելով որքան հնարավոր է արարական երկրներին հնարավորություն շտալ միանականորեն գործելու, ստեղծեց այնպիսի պայմաններ, որ ի վերջո Խորայինը կարողացավ առանձին-առանձին շախատիսել արարական բանակները: Խակապես, դա շապային աղետն<sup>2</sup> էր արարական երկրների համար, իսկ ավելի ճիշտ՝ աղետի ըսկիպը:

Անկասկած նդիպտոսի ազգային-ազատագրական և սոցիալական պայքարի մեջ 1948—1952 թվականները զրավում են առանձնահատում տեղ: Նդիպտական ժողովրդի ետպատճրագրման պայքարը ընթանում էր 1936 թ. անհավասար պայմանագրի վերացման, երկրի լիակատար անկախության հաստատման, ներքին բարենորոգումներ ձեռնարկելու շուրջը: 1950 թ. մարտից սկսած բանակցությունները, սակայն, շարունակվում էին ծգնավել բրիտանական կողմից բռնած դիրքի պատճառով:

Ի վերջո, 1951 թ. Հոկտեմբերի 3-ին, նդիպտոսի վախճական<sup>3</sup> կառավարությունը, ժողովրդական զանգվածների ներքո, պառամենափառ քննարկմանը ներկայացրեց 1936 թ. պայմանագիրը և Անգլիաի համարնդ կառավարման վերաբերյալ 1899 թ. համամայնագիրը շեղալ հայտարարելու օրինագիծը: Հայորդ օրը, հոկտեմբերի 15-ին, նդիպտո-

կան պառամենատը չեղյալ հայտարարեց վերոհիշյալ պայմանագիրն ու համաձայնագիրը։ Ըստ այդմ էլ փոփոխման հեթարկվեցին երկրի 1923 թ. Սահմանադրության 159-և 160-րդ հոդվածները։ 159-րդ հոդվածը փոփոխված էր հետևյալ ձևով. «...Զնայած նպիպառուր և Սուլանը մեկ ազգ են, Սուլանի հառավարժան վարչակարգը պետք է որոշվի հատուկ օրենքով»։ 160-րդ հոդվածը նպիպառուր թաղավոր Ֆարաւի հառարակության տիտղոսավորում էր «Բագավոր նպիպառուր և Սուլանին»։

Անգլիան հրաժարվեց ընդունել նպիպառուր պառամենատի ընդունած որոշումների սրբնականությունը։

Նպիպառուր-անգլիական հակասությունների սրումն իր արտահայտությունը գտավ Մուհեյ ըրանցքի գոտում 1951 թ. և 1952 թ. սկզբներում տեղի ունեցող ընդհարումների բորբոքման և ձգձգվող անարդյունք բանակցությունների մեջ, որոնց անհանգույթյամբ էին հետևում ԱՄՆ-ում։ Հատկանշական է, որ Կահիրեկի հրդեհից հետո, երբ իշխանությունն անցավ պալատական պահպանում, ԱՄՆ-ի ներկայացուցիչներն ավելի հաճախակի սկսեցին այցելել նպիպառուր 1952 թ. փետրվարին նպիպառում էր գտնվում պետական դեպարտամենտի ներկայացուցիչը թ. Ռուզվելտը, որը ձգումն էր հպիպառական կառավարությանը հակել դեպի Միջինարևելյան հրամանատարության դաշինքը։ Այսուհետեւ նպիպառու են այցելում ամերիկյան բարձրաստիճան ուրիշ գործիչներ, կոնգրեսականներ, Ստիվայն, մինչև 1952 թ. հուլիս առաջ անզոտ-նպիպառական և ամերիկակի պետական բանակցությունները մնում են անարդյունք։

Այսպիսով, բրիտանական գաղութարարների՝ իրենց դիրքերը Մերձակոր արևելյում ամեն կերպ պահպանելու ձգուման, նպիպառուի բուժուակալվածատիրական վերինախավի երկակի ընույթ կրող արտաքին քաղաքականության և նպիպառական ժողովրդի ազգային-պատասխան պայքարի ուժեղացման պատճառով երկրի գրությունը 1952 թ. հեղափոխության նախօրյանքին էլ ավելի անկայում էր գարձել։

Նպիպառուի արտաքին անկայում վիճակը միաժամանակ արդյունք էր եղիպառական հասարակության ներքին պառականաժության, հետոպիմական վարչակարգի սոցիալ-տնտեսական հետամենաց հարաբերությունների և բյուրոկրատական վարչական համակարգի թուրժուակալվածատիրական վերմախտավի վարած ներքին հակածողովրդական քաղաքականության պատճառով երկրում գնայով խորանում էր սոցիալ-դասակարգային անցրպեսը հասարակության տարրեր խավերի միջև։

Նպիպառուը գլուղացիական երկիր էր Այս առումով էլ հողային հարաբերությունների հարցը առաջնակարգ նշանակություն ուներ երկրի

Հասարակական և տնտեսական զարգացման համար Բայց իշխող վերնախտվը, որի մեջ մտաց կալվածատեր էր և միաժամանակ քաղաքաւմ ներկայացնում էր ազգային բուրժուազիայի կորիզը, ու մի քայլի չէր դիմում նպաստական գործում առցիալական ծայրահեղ բննուացման ընթացքը կանգնեցնելու համար Բնակչության բուռն աճը և նոր հօգնորդ յուրացման շափառանց դանդաղ բնթացքը ավելի ու ավելի էին որում առանց այն էլ ծայրաստիճան լարված կափառական դյուզի սոցիալական հակառակությունները:

Վ. Խ. Հենինը դեռ առաջին աշխարհամարտից առաջ գրում էր... Անգիան նպաստուր ավելի ու շարժնում է մի նրկիր, որն արտադրում է միայն բամբակի... և դժվարացնում է արդյունարկան զարգացումը... Այս, բրիտանական գաղութարարները նպաստուին ցանկանում էին տեսանել իրենց երկրի հումքային կցորդի: Բամբակի պահանջարկի մեծացումը միշտագային շուկաներում պայմանավորում էր նպաստական կապիտալիստների վերաբերմունքն իրենց կապիտալի ներդրման նկատմամբ: Նրանք իրենց կապիտալը նախընտրում էին ներդնել հումքային գործարքների մեջ և կամ էլ տնտեսության այնպիսի նյութերում, որոնք արագ և մեծ շահույթ էին բերում: Ազգային արդյունարկության զարգացումը բնագ նրանց չէր մտահոգում:

Հետպատերազմյան տարիներին երկրի սոցիալ-տնտեսական անբարենպաստ վիճակի վրա ավելի էր անդրագույնում նրա արտաքին տընտեսական կապերի անհավասարակշռությունը: Արտահանության ասպարեզում բամբակի մեծ բաժինը միակողմանի թերյալ էր տալիս զրան: Արտաքին առևտրական հաշվեկշիռը մշտական դեֆիցիտով էր արտահայտվում:

Տեղի տալով արտաքին ճնշումներին և սեփական շահերից ելնելով, նպաստական վերնախավը պատերազմից հնտո ավելի մեծ հնարավորություններ քննելով ստարերկրյա կապիտալին: Առաջգա պես լայն գործողության ասպարեզ ունեին անդրիական ընկերությունները: Մեծ շափով անեց նաև ԱՄՆ-ի տնտեսական գործումներության ժամանությունը: 1933—1951 թթ. ամերիկյան մասնավոր ներդրումներն անցյին ավելի քան հինգ անգամ: Նպաստությունները շուկան և տնտեսության զանազան ոլորտները ներխուժող ամերիկյան մոնոպոլիաները հաջողությամբ պայքարում էին բրիտանական կապիտալի դեմ: Նպաստություն տնտեսական ակտիվ գործումներուն էին ծավալում նաև Ֆրանսիան և Գնչ-ը: Ստարերկրյա կապիտալն ստանում էր մեծ արտոնություններ և փաստորներ իր ձեռնուն էր առևտնությունը տնտեսական կյանքի որոշիչ լժակները: Արտաքին

ուղագմաքաղաքական և տեսահական ազդեցությունը հետզհետեւ ուժեղանում էր:

Մրկրի տեսահական կյանքի բնեուացումը, որը հետևած էր ռատարակրյա և ծգիպտական մոնուպլիաների գործունեալության, հաճգեցրեց նրան, որ 1947—1951 թթ. Եգիպտական բազմաթիվ մանր ընկերություններ սկսենացան: Հատկապես հիշարժան է 1947 թ., երբ սնանկ Հայաստարգեցին 377 առևտրական ընկերություններ: Եգիպտոսի կենսամակարդակն ամենացածրներից մեկն էր աշխարհում: Մինչև 1952 թ. մեկ անձին ընկերող հկամուտը Եգիպտոսում ամական հասնում էր մոտ 10 դինարից: Մի կողմ թողեներով այդ գումարի բաշխումը, քանի որ զա վերցին Հաշվավ միջին գումար է, նկատներ, որ նթե բնակչության տարեկան աճը կազմում էր 200—300 հազ. մարդ, ապա փաստորներ մեկ շնչին ընկենությունը հկամուտը նվազեցման մշտական հակում պետք է ունենար, և հետևաբար ժողովրդի ցածր խավը և աղքատ էր, և շարունակում էր ավելի աղքատանալ: Մինչև 1952 թ. երկրում անգրագիտերը կազմում էին բնակչության 75 տոկոսը: Սա ուներ երկակի բացասական ազդեցություն՝ մասնավորապես բանվոր դաստիարակի վրա: Առաջին զենքում որպակյալ կազմեց նրանց մեջ բնականաբար թիւ էին և երկրորդը՝ անգրագիտությունն ազդում էր նրանց բաղաքական հասունության վրա: Դորժապրկության բարձր մակարդակին ավելի դաժան էր դարձնում նրանց շահագործումը ձեռնարկատերերի կողմից: Փաստորներ դեռ իր կազմավորման բնթացքում գտնվող դաստիարակը, որի կորիզը գյուղի հավելյալ աշխատութիւն բազար ահղափոխված մտնել էր, պահպանում էր ֆալլարի դարավոր Հոգիբանության գեհերը: Գեայած որոշակի տեղաշարժություններին, այն դեռ հեռու էր բաղաքական ազգեցիկ ուժ և երկայացնելուց թե թվաքանակով, և թե իր բաղաքական հասունությամբ: Այնուամենայնիվ, Եգիպտական երիտասարդ բանվոր դաստիարակն իր արշամիությանների միջոցով հետպատերազմյան տարիներին որոշակի պայքար էր մղում իր սոցիալական դրության բարելազման և երկրի անկախության համար:

Թագավորական հետազիմական վարչակարգի վարած բացահայտ հակակոմունիտական բաղաքականությունը երկար տարիների բնթացքում ի վիճակի լեզով արգելելու կոմունիտական գաղափարների մուտքը եղիպտոսում Եգիպտոսուում կոմունիտական գաղափարների մուտքը կազմավորվել դեռևս 20-ական թվականներին, բայց առաջել կազմակերպվածը և առաջել Եգիպտական բնույթ ունեցողը ՀաԴթիլի-ն լու (Եգիպտոսի ազգային-աշատագրական դեմոկրատիան շարժում), ու-

րը կազմավորվել էր 1942 թ.: Մշտի խմբերն ավելի սակալաթիվ էին և գոտին հայածանքի պարմանենքում՝ ավելի թիւ կձեռումակի, նույնիսկ Հադիսինեն, որը գործում էր խոր քաղաքակում: Ըստհանրապես պնտք է ասել որ հզիպոտական կոմունիստական խմբերը, հմենականում կազմված լինելով առաջադիմ Խոավորականներից, թույլ կազմեր ունեին պրոլետարիատի հետ Բայց բանվոր գասակարգի թուլությունը նույնպես խանդարում էր արմատական հեղափոխական ուժերի ասպարեզ ենելում և պրոլետարական ազգացիկ կուսակցության առաջ գալում:

Եզիպոտոսի հետադիմ վերնախամի կուսակցությունները, որոնք տոն էին տալիս երկրի ներքին և արտաքին քաղաքականությանը, հեղափոխության նախորդակին գաղափարական նզման տակ առնենույթ դեմ կանգնելով բրիտանական օկուպացիային, նրանք, իրենց դասակարգային շահերից ելնելով, իրականում համագործակցում էին արտաքին ուժերի հետ՝ չակալով պահպանել երկրում հաստատված թագավորական բռնապետությունը: Նրանց հակածողովրդական բնույթը հատկապես ցայտունորեն էր երեսում ներքին քաղաքականության առաքելությամ, ուր նրանք մշտապետ էին որևէ վերափոխության: Այդ ժամանակ մեկը մրուսին փռխարինող կուսակցական և անկուսակցական կառավարություններից ոչ մեկը ի վիճակի մը երկրում տիրող անկայումության գեմն առնել, զրանով ապացուցելով, որ Եզիպոտոսի բուրժուակալվածատիրական վերնախամին այլևս գոյատնելու ամուր հենարաններ լինեի:

Եզիպոտական միջին և մանր բուրժուապիսն, զեմ լինելով օտարերկրյա տիրապետությանը, ազդեցությանը և տնտեսական հնչյանը, որոշ շակերտնեն գոտիկով թուլացնել տեղական խոշոր կապիտալի զիրքերը, որը խոշընդոտում էր միջին խամի տնտեսական և քաղաքական հզորացմանը, պատերազմից հետո հիմնավորապես անցագ ազգայնականության դիրքերը: Իշարկե, դժվար է պնդել, թե այն եզիպոտական հասարակության մեջ մի համախումբ տարր էր ներկայացնում, սակայն պատերազմի տարիներին մանր արդյունաբերողների, առներականների, մտավորականների, սովորական կազմի և միջին խամի այլ ներկայացուցիչների թվաքանակի մեծացումը արակական նոր փոփոխությունն էր մտցնում եզիպոտական հասարակության շարժիլ ուժերի հարաբերակցության մեջ Եզիպոտական մանր ու միջին բուրժուապիսն զմբոհությունն ընդդեմ տարերկրյա տնտեսական նզման, կոմպրադորական բուրժուապիսն և հետեւարար՝ պատակալվածատիրական վերնախամի, որին

տիվորնեն համընկնում էր ժողովրդական լայն գանգվածների որածազբություններին, ֆնայած սրան, դաժան հետապնդումների, հալաժանքների, նեշման և ներքին պառակտվածության պարմաններում հպիպտական առաջադիմական ուժներն ի վիճակի չէին զլխավորելու ազգային-ազտագրական և սոցիալական շարժումը նեշման նշում է և. Մոհի էղ-դինը, միակ ազգային ուժը, որին հարգած չէր հասցել իշխանությունների կողմից բանակն էր<sup>10</sup>, Բայց բանակն էլ միատարր չէր, եսուքը միշմն և ստորին խավերից ելած հայրենասեր հրիտասարդ սպաների մասին է, որոնք հատկապես պազեստինյան պատերազմից հետո սկսեցին ակախվորնեն համայստրվել Գ. Ա. Նասերի ստեղծած Ազատ սպաներ գաղտնի բանակային կազմակերպության մեջ:

Որոշ ուսումնասիրողներ կարծում են, որ Ազատ սպաներ կազմակերպության հիմնադրումը տեղի է ունեցել 1922 թ., իսկ ուսումնասիրողների մեծամասնությունը այն համարում է 1942-ի ծնունդը: Սակայն մի բան պարզ է, որ այդ կազմակերպությունը հաստատում կերպով տորի է կանգնել միայն պազեստինյան պատերազմից հետո, Կազմակերպության անդամները հիմնականում երիտասարդներ էին, որոնք, ավելի ցանցակին ընդունելով պազեստինյան աղեղը, ամբողջապես ըմբռունեցին, որ իշխող վերևախովը, թաղված լինելով կաշոռակերպության մեջ և խարդախ նաև ապարանելերով հարստություն դիպելու մոլուցքով տարված, յի խորշամ նույնիսկ ազգային շահերը դրանց ժառանձնելուց 1949 թ. Ազատ սպաները կազմակերպություն ամրագնեցին իրենց շարքերը՝ ստեղծելով գեկավար մարմին՝ գործադիր կոմիտե՝ որը սկսեց բացատրական աշխատանքներ տանել բանակի սպայտական կազմի մեջ՝ հակարբիտանական և հակամարդության թուութիւնները տարածելով: 1949 թ. ապրիլի քաղաքներում տարածվեցին նրանց առաջին թուութիւնի օրինակները: Նրանք պահանջում էին հայրենի Հողի ազատազրում, բանակի վերակազմովորում, ազգային հարստությունների օգտագործում՝ իշան ընչափուրկ զանգվածների<sup>11</sup>:

1950 թ. հունվարին տեղի ունեցան գործադիր կոմիտեի նախագահության ընտրությունները: Փոխվանդապետ Գ. Ա. Նասերն ընտրվեց նախագահ, անդամներ՝ Խայր Արգել Հարթիմ Ամերը, փոխվանդապետ Արգել Լատիֆ Բաղդադին, Խայր Թամալ Էդ-Դին Հուսեյնը, Մայոր Հարամիմ Շահամ Իրանիմը, մայոր Խալեդ Մոհի էղ-Դինը, փոխվանդապետ Անվար առ-Սադաթը, փոխվանդապետ Գամալ Սալիմը և մայոր Սալահ Սալիմը: Նույն 1950 թ., ինչպես նշում է առ-Ռաֆիկն, բրիգադային գեներալ Մուհամմեդ Նազիրին, առանց իրեն տեղյակ պահելու միեւն 1951 թ. դեկ-

տեմբերը, երբ տեղի ունեցան սպայական ակումբի ընտրությունները, Ազատ սպաները ընտրում են շարժման ղեկավար<sup>23</sup>, Աւագանեասիրողները համարյա միանամուտ կերպով նշում են, որ Ազատ սպաների այդ քայլը նպատակաւորդպատճեռ էր օգտագործել Հայտնի գեներալի անունը և Խախապես քողարկել Հեղաշրջումն իրագործողներին և նրանց նպատակները։ Հարկ է նշել, որ այդ սպաները, եթե սոցիալական կազմով համարյա միատարր էին, ապա նրանց քաղաքական համոզմունքները գեներալը նշանակենանապես չձևագործած պատվում էին գանազան կուռակցությունների և քաղաքական այլ կազմակերպությունների շուրջն այնքան ժամանակ, քանի դեռ հիմնավորապես չէր ձևագործել իրենց կազմակերպությունը։ Նրանց մեջ կային Վաֆդի, Միսր արքաթաթի, մուսուլման եղբայրների և այլ կուռակցությունների կողմնակիցներ։

1950—1951 թթ. և 1952 թվականի առաջին կեսում Ազատ սպաներ կազմակերպությունը ընդլայնում էր իր ազդեցությունը հզիպտական քանակի տարրեր գորատեսակներում։ Կառավարական հվետամը, որը 1952 թ. սկզբից առաջացել էր Ծղկպատում, անհաղթահարելի մեացմինչն հուլիսի 22-ր օգոստելով այդ հանգամանքից, Ազատ սպաներ կազմակերպության գործադիր կոմիտեն, որը նախապես նպատակ էր դրել երկում իշխանությունը իր ձեռքը զերցնել։ Բայց ավելի ուշ ժամկետներ նշելով զրա համար, հուլիսի 22-ին նիստ գումարելով որոշում ընդունեց լույս 23-ի դիշերը իշխանությունն իր ձեռքը զերցնել։ Այդ նույն նիստում որոշվեց Ազատ սպաների գործադիր կոմիտեն զերանվանել Հեղափոխության ղեկավար խորհուրդ (ՀՂԽ)։

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ՊԱՅՉԱՐ ՆՈՐ ՎԱՐՉԱԿԱՐԴԻ ՍՏԵՂՄՄԱՆ ՀԱՄԱՐ: ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՂԹԱՆԱՅԻ

#### 1. ՔԱԿԱՎԱՐԻ ԳԱՀԱՅԻԿԱՆԻ ՈՒ ՀԵՂԱՑՈՒՄԸ ԵՐԿՐԻՑ

1952 թ. հուլիսի 23-ի առավոտյան ժամը յոթին Կահիրեի ուղիոն գեներալ Մահմետեղ Նազիրի անունից ձայնափակեց Հետեւյալ Հայտարարությունը։

«Եղիպատական ժողովրդին,  
նզիպտառուց զերշերս ապրեց գտածության, կաշառակերության և իշխա-

նության անկայումության ծանր ժամանակաշրջան։ Այս բոլոր գործոնները մեծ աղքացություն ունեցան բանակի վրա։ Եաւամոլ կաշառակերները պաղեատինյան պատերազմում մեր պարտության պատճառը դարձան։ Ինչ վերաբերում է այն ժամանակամիջոցին, որը հետևեց այս պատերազմին, ապա փատածության գործոնները այդ ժամանակ միանցուազեցին և դավանանական խումբը դավադրություն սարքեց՝ բանակի վրա կարգելով իշխանության ներկայացուցիչներ՝ կամ տգետի, կամ դավանանի, կամ կաշառակերի, մինչև որ Եղիպատուը զրկվեց բանակից, որը պաշտպանելու էր նրան։ Այս պատճառով մենք դում կատարեցինք փատած իշխանության մեջ և մեր ներկայացուցիչ մարդկանց նշանակեցինք բանակում, որոնց կարողությանը, տրամադրվածությանը և հայրենականիրությանը հավատում ենք։

Անկասկած, ողջ Եղիպատուն այս լուրը կընդունի ուրախությամբ և թղթունելով։ Ինչ վերաբերում է բանակի նախկին ղեկավարների ձերբակալմանը, ապա նրանց ոչ մի վտանգ չի սպառնում և նրանք կաղառվեն համապատասխան ժամանակին։ Աս հավատացնում եմ Եղիպատական ժողովովն, որ բանակին այսօր ամբողջապես սկսել է աշխատել հայրենիքի շահերի համար՝ սահմանադրության ներքո և զերծ որևէ այլ նպատակից։

Օգովում եմ առիթից պահանջելու ժողովրդից, որ թույլ շտա ոչ մի դավանակի դիմել քայլայիշ և ահարեկչական գործունեության, որովհետև դա Եղիպատուի օգտին չէ։ Այդ կարգի որևէ գործունեությունը կըստանա ժանր հականարդում և նրա կատարողը անմիջապես կատանա դավանանության փոխհատուցումը։ Բանակը կատարելու է իր պարտքը ուսիկանների համագործակցությամբ և աս վատահցնում եմ օտարերկրացի նզրայրներին, որ նրանց շահերի, անհնական և ֆինանսական ապահովության պատասխանառվությունը բանակն իր վրա է վերցնում։

Հեղաշրջումից հետո ՀՊԵ-ի այս առաջին հայտարարությունը հանրությանը իրազեկ էր պահում այն պատճառների մասին, որոնք դրդել էին զինվորականներին իշխանությունը իրենց մեռքը վերցնելու Միաժամանակ նրանք իրենց աներկրա հավատարմությունն էին հավատում ահմանադրության նկատմամբ։ Ակնառու է, որ այս հայտարարությունն իր ոգով ուղղված լինելով նախորդ իշխանությունների դեմ, առավելապես նպատակ ուներ շարժման նկատմամբ հնարավոր ընդդիմությունները կանխել, ինչպես ժողովրդին ուղղված հանգստություն պահպանելու և դավանաններին հականարդում տալու հորդորներով, այնպես էլ բացարձակ լռության պահպանելով հեղաշրջման նպատակների և իրա-

դործողների մասին։ Խելպես վկայում են եզիկտացի ականատես հեղինակները, առաջին ժամերին ժողովուրդը հեղաշրջման մասին լուրին ընդունեց տարակումանցով և շփոթվածությամբ։ Եաւ հարցերին պատասխան չեր տրվում առաջին հայտարարությամբ։ Ովքե՞ր են նրանք, ինչի՞ են ձգում, ինչքանո՞վ է անկիշտ կաշառակերների և դաշտանեների դեմ դործելու նրանց հայտարարությունը։ Ռ. ալ-Թարավին ասում է, որ մարդիկ իրար հարց էին տալիս, թէ ո՞վ է այդ Մուհամմեդ Նազիրը, որ մտադրվել է երկիրը մաքրել փառագությունից, կաշառակերությունից, գաղանանությունից ու տգիտությունից։ Այսուամենայնիվ, Հուլիսի 23-ի առավոտյան, երբ Կահիրեկ փողոցներում բաց մերձենեներով երևացին հեղաշրջման զեկավարները, ժողովուրդը նրանց դիմավորեց ցնծությամբ և ոգևորությամբ։

Հեղաշրջման նախորդին զինվորական ստորարածանումների տեղաշարժերը շենին կարող ուշադրություն լցրավել և այդ մասին Ֆարուկ թագավորին տեսայակ էր պահպել։ Վերցինու լրջորեն զվերաբերվեց դրանց, բայց երբ Հուլիսի 23-ի վաղ առավոտյան հեռախոսով իր անվտանգության ժառայությունից տեղեկացավ և ապա ուղիոյով լսեց Կահիրեկից տրվող հայտարարությունը, նրան միրեց շփոթմումները, քանի որ ոչեր իմանում ի՞նչ է հեղափախության նպատակը։

Այդ նույն ժամանակ, նախորդ օրը կազմված կառավարությունը նազիր ալ-Հիլալիի զինավորությամբ Ալեքսանդրիայում նիստ էր գումարում։ Այն որոշում կարացրեց ներքին դործերի մինիստր Մուլթազա ալ-Մարադիին որպես պատվիրակ ուղարկել Կահիրեկ՝ ՀՂե-ի Հետ բանակցություններ վարելու համար։ ՀՂե-ն ալ-Հիլալիի կառավարությունից պահանջեց վերականգնել սահմանադրությունը, վերացնել արտակարդ դրությունը, բանակի մեջ զառումներ անցկացնել և պաղեստինյան պատերազմի մեղադարներին պատասխանավության ենթարկել։ Կառավարությունը, զգալով, որ այդ բոլորը փաստուն ուղղված է արքունիքի գեմ, որի շահերն ինքը կոչված է պաշտպանելու, անմիջապես հրաժարական ավեց։

Ֆարուկը նույնապես, իր Հերթին, Հուլիսի 23-ի առավոտյան թագուհի նարիմանի հորեղբորն ուղարկել էր Կահիրեկ Մ. Նազիրին առաջարկելու ուղմական մինիստրի պաշտոնը։ ՀՂե-ն մերժեց այս առաջարկը և թագավորի բանագնացին տեղեկացրեց, որ թագավորը պետք է համաձայնություն տա նախկինում արդին վարչապետի պաշտոն գրաված անկուսակցական դործի։ Այլ Մահերին անմիջապես վարչապետ նշանակելու համար թանապնացը շուտով նորից վերագրած Կահիրեկ և հայտ-

Նեց Ֆարուկի ցանկությունը, որ շարժման ղեկավարներն իրենց կազմեն կառավարությունն Այս հանդամանքը ցույց է տալիս, որ Ֆարուկը լավ ջզատկերացնելով իրադրությունը խուսափեավում էր: Անհայտ սպաներին առաջարկելով կառավարություն կազմել, նա գրանով ՀՂե-ի անգամներին դնում էր բարդ իրադրության մեջ: ՀՂե-ի ժամանակին կռանչեց այդ և բանագիտացին ժիտական պատասխան տվեց: Պետք է պատշաճը հատուցել երիտասարդ սպաներին և հատկապես նրանց զեկավար Գ. Ա. Նասերին, որ այդ գժվարին կացության մեջ կողմնորոշման հիմունի հառեւությունների ցուցարերեցին, իրենց կամքը թելադրելով իրադրությունների ժամանակը:

Ֆարուկն զգարզգ, որ գրանությունը բարգանում է, զիմեց բրիտանական և ամերիկյան ղետպաններին՝ փրկելու համար իր գոհը: Բայց այդ բանը նրան շնչարժզգեց:

Կեսօրին մոտ Մ. Նազիրը մի խումբ սպաների ուղևորությամբ այցելեց Ալի Մահմեդի Դիզայնում գտնվող բնակարանը և նրան առաջարկեց կառավարության կազմելու Վերջինս համաձայնեց, պահանջելով սակայն, որ դա կատարվի ուրինական հանապարհով այն է՝ թագավորի նշանակումով: Սպաները նրան առաջարկեցին նաև ՀՂե-ի պայմանները ներկայացնել Ֆարուկին, որոնք հանդում էին հետևյալին: Հայդար ֆաշան՝ Ծովագորսի զինված ուժերի պլանվոր հրամանատարը, հեռացվում է իր պաշտոնից, Մ. Նազիրը նշանակվում է նրա փոխարքն, ըստ երևույթին, նույնպես ուրինական հանապարհով:

Հունիսի 24-ի առավելույան Ֆարուկը թագավորական հրամանագրով Մ. Նազիրին շնորհեց զեներալ-լեյտենանտի աստիճան և նրան նշանակեց երկրի զինված ուժերի պլանվոր հրամանատար: Վերջինս երկույուն մամուլի ասուլիսամ հայտարարեց, որ զինվորական շարժման նպատակն է պահպանել սահմանադրության միավակեռական վարչակարգը և սահմանադրության ճիշտ կիրառումը երկրում: Նրա շրջանակներում լավագույն մի վարչակարգ ստողծելով: Նա ասաց նաև, որ երկրի բոլոր գորատեսակենրդ ՀՂե-ի հսկողության տակ են, միաժամանակ նորից հանգրատացնելով առարերկրացիներին նրանց անձին և ինչը պահպանության համար:

Կատարելով զինվորականների պահանջի հաջորդ կետը, թագավորը վարչապետ հաստատեց Ալի Մահմեդին նույն օրը կազմվեց նոր կառավարություն, որի մեջ Ա. Մահմեդը գրադեցնում էր ոչ միայն վարչապետի այլև արտօնքին գործերի, ներքին գործերի և ուղղական մինիստրի պաշտոնները: Փաշաներից և բելերից կազմված այս կառավարությունը

ու մի տարրերություն շուներ նախորդ կառավարություններից թէ՝ իր սոցիալական կազմով, և թէ՝ իր քաղաքական հավատամբով, մի բան, որն իր արտացոլումը գուավ հետապն իրադարձությունների մեջ:

Այդ ժամանակ Ազատ սպաները նախապատրաստվում էին Ֆարուկին գանձաղրկել և հեռացնել երկրից: Հուլիսի 25-ին զորքեր ուղարկվեցին Ալեքսանդրիա, որնոր Զաքարիա Մուհի էդ-Դինի հրամանատարությամբ շրջապատեցին Ռաս աթ-Թին (որտեղ գտնվում էր թագավորը) և Սուեթազա պալատները: 26-ի առավոտյան ժամը 9-ին գերազուն հրամանատար Մ. Նազիրը Ալեքսանդրիայի կառավարական տանը Ալի Մահմետին հանձնեց Ֆարուկ թագավորին ուղղված վերջնապիրը, ուր ասվում էր.

Ի՞նկատի առնելով, որ վերջին ժամանակներս համընդհանուր անիշխանականությունը ընդգրկել է ողջ երկիրը, որն արդյունք է Ցեղ կամայականությունների, սահմանադրության ոտնաշարժան և ժողովրդի կամքն արշամարշելու, որը հասցրեց այն բանին, որ ոչ մի քաղաքացի վստահ չէ իր կլանքի, գույքի և արժանապատվության ապահովությանը.

Ի նկատի ունենալով, որ Եգիպտասը Զեր Համառության հետևանքով վարկարեկվել է աշխարհի ժողովուրդների աշխատ, քանի որ գաֆանաները և կաշառակերները Զեր Հովանու ներքո գտնում են ապառան, ապահովության, անսահման հարստության և անզուսպ ցոփությունների հերազդություն և այս բոլորը խնդն ու քաղաք ժողովրդի հաշվին.

Ի նկատի ունենալով, որ այդ բոլորն ի հայտ նկան պաղեստինյան պատերազմի ընթացքում և նրան հետևած անպետք զենքի սկանդալների ժամանակ, որոնք Հանգեցրին զատավարությունների և որոնց Դուք քաշարայութեցիք, որը և մթագնեց ճշմարտությունն ու ասանեց զստահությունը արգարադատության նկատմամբ՝ ոգնորելով զավաճանեներին շարունակել Զեր գիեր՝ անշափ ու անսահման հարստություններ դիզել և վարել ցոփ ու շոայլ կյանք.

Ի նկատի ունենալով այս բոլորը, բանակը, որ ներկայացնում է ժողովրդի ուժը, ինձ լիազորել է սրպեսպի պահանջեմ Զերդ Մեծությունից հրաժարվել գահից հօգուտ Զեր որդի զահաժառանգ իշխան Ալմեդ Զուապի հնեց այսօր մինչև ժամը 12-ը (շաբաթ, Հուլիսի 26, 1952...) և հեռանաք երկրից մինչև երեկոյան ժամը 6-ը:

Բանակը Զերդ Մեծության վրա կդիմի պատասխանատվությունն այն բոլոր հետեանքերի համար, եթե Դուք ժողովրդի կամքին հակառակ չհրաժարվեք գահից<sup>10</sup>:

Արդեն ժամը 10-ին վերջնագիրը հանձնված էր Ֆարուկին, Վերջին փորձնեց առաջ քաշել որոշ պայմաններ, որոնք վերաբերում էին պայմանների հարստությունները և որոշ կամակատարներին իր հետ տանելուն, ուսկայն ՀՂեղ-ն դրանք մերժեց, Կեսօրին նա ստիպված էր ստորագրելու հրաժարականը.

«Մենք, Ֆարուկ առաջին, թագավոր նզիպառոսի և Սուլթանի, ցանկանալով մշտապես մեր երկիրին բարիք, երշանկություն և առաջադիմություն, ցանկանալով ձերբազատել երկիրն այն դժվարություններից, որոնց նա զիմագրավում է այս երիտիկական պայմաններում և անսալով յողովրդի կամցին».

Որոշեցինք հրաժարվել գահից հօգուտ մեր թագաժառանդ իշխան Ահմեդ Ֆուլադի...<sup>11</sup>:

1952 թ. 65-րդ համարը կրող այս հրամանագիրը փաստորներ հանդիպած վերջինն այն հրամանագրերից, որոնց տակ դրվել էր Մուհամմեդ Ալիի հարստությանը պատկանող թագավորի ատորագրությունը: Հունվարի 28-ի երեսկոյան ժամը 6-ին «Մահրուսաց զրուանավը, եղիպատական վերջին թագավորին կրծիով իր տախտակամածին, հեռացավ Ալիքսանդրիայի նավահանգատից՝ ուղղություն վերցնելով զեպի մենովա: Սա եղիպատական հեղափոխության առաջին քայլն էր իշխանությունը գրավելուց հետո և առաջին հարգածը պատաժիրական ավագանուն: Հեղաշրջումը և թագավորի հեռացումը ընթացան համարյա անարյուն: ՀՂեղ-ի անդամների վախը հետպես փոխարինվում էր մատահոգությամբ: Վախը, թե շարժումը չի հաջողվի, մեացել էր ետևում: Խարիճ երկրուա արդեն սիրում էր ոգևորություն, զանազան կազմակերպություններ իրենց համերաշխառաթյունն էին հայտնուամ զինվորական շարժմանը: Վերջինիս զեկագորությունն էլ ժամանակ առ ժամանակ ուղիղորդ այնպիսի հայտարարություններ էր անում, որոնք բոլորը հանգում էին մի բանի՝ պահպանել հանգատություն, կարդ ու կանոնի: Բայց այժմ զինվորականներին հուզում և մտահոգում էր հետագայի հարցը: Այդ օրերը հիշելիս Գ. Ա. Նասերը խոստովանում է. «Մենք պատրաստ չենք»<sup>12</sup>: Նա պատմում է, որ ՀՂեղ-ի անդամներն այդ դրությունից գուրս գալու ուղիներ գտնելու համար հանդիպումներ էին ունենուամ զանադան երևելի անձանց ու կազմակերպությունների զեկագարների, զիտնականների հետ: Աակայն, այդ հանդիպումները, ինչպես ինքն է նշում, ապարացյուն և անգուստ էին<sup>13</sup>,

Այս իրադրության մեջ, հուլիսի 27-ին, Կահրեսամ տեղի ունեցած Հեղաշրջումից հետո ՀՂե-ի առաջին նիստը նախագահող Դ. Ա. Նասիրը, խորհրդի անդամների համար անսպասելիորեն, հրաժարական ներկայացրեց ՀՂե-ի նախագահի պաշտոնից, Զեյյած հեղաշրջման առաջին օրերն էին, ասկայն ՀՂե-ի անդամների միջն արդեն տարածայնություններ էին ժագել Դրանք, սակայն, ավելի ցայտում զարձան, եղր Ազատ սպաների առքն ծառացագ երկրի հետագա զարգացման ուղին որոշելու հարցը, Զեյյած ամեն առիթով նրանք իրենց հավատարմությանն էին արտահայտում Սահմանադրությանը, այնուամենախիվ, նրանց մեջ բավականին թիվ էին կազմում նրանք, ովքեր գտնում էին, որ պառամենտական հուսակցությունները նորից կան իշխանության գլուխ և հշարունակվի էինք: Դրա առաջն առնելու համար վերցիններս պահանջում էին ցրել բոլոր կուսակցությունները: Դ. Ա. Նասիրը պատճառաբանելով, որ այդ բանը մարդիկ կարող են հասկանալ իրեն զինվորական զիկտատուրայի հաստատում, զիմ դուռ եկազ կուսակցությունների ցրման գողափարին<sup>14</sup>, Սակայն ՀՂե-ի անդամների մեծամասնությունը պնդում էր իր պահանջը: Ազ ահա այդ պատճառով առաջին նիստում Դ. Ա. Նասիրը հրաժարական ներկայացրեց: Երկար վիճարանությունից հետո նիստի մասնակիցներն ընդունեցին փոխպետային որոշում՝ առաջարկել կուսակցություններին ինքնազտում կատարել: Այդպիսի որոշման առաջարկն արեց Դ. Ա. Նասիրը, որը և նույն նիստում վերընտրվեց ՀՂե-ի նախագահ<sup>15</sup>: Ժամանակը ցույց տվեց, որ այդ որոշումը փաստորեն նպատակ ուներ կուսակցություններին վարկարենիկել ժողովրդի աշխատ, քանի որ սպաները հաստատ համոզված էին, որ այդ ինքնազտումը որևէ արդյունք չի տա:

Այն ժամանակ, երբ Ազատ սպաները քննում էին կուսակցությունների լինել-լլինելու հարցը, մինչև այդ լուսվրում պահապանած կուսակցությունների գեկազարները կարծեն խոսքերը մեկ արած Ալեքսանդրիայում հագաբեկում էին գեներալ Մ. Նազիրի մոտ, որաբենորոգիլ շարժման հայողության համար շնորհավորելու ռազմի պահապանինց, և Սահմանադրության ազատաբարինց և ուժողության մարդունց, ինչպես այդ օրերին հորդորչում էին Մ. Նազիրին: Այդ սպատակով իրենց հանդիսություններին վաֆդի առաջնորդներ Մ. Նահնասը և Ֆ. Սիրազ էդ-Դինը, որոնք ամառն անց էին կացնում Եվկեյցարիայում:

Մինչ կուսակցությունների մաքրագործումներին անցնելը, երկրում

իրագործվում էին առաջին հայացքից անելան, բայց կարևոր միջացառմաները Հովհաննի 26-ին, Ֆարուկի հրաժարումից հետո, նպաստուի և Սուդանի թագավոր հաշակամբ Ֆարուկի անշափահան որդի Ահմեդ Ֆուադը: Այս կապակցությամբ կառավարությունը հայտարարեց, որ թագավորի սահմանադրական իրավունքները վերջնում է իր վրա, մինչև խնամակալական մի խորհրդի ստեղծումը<sup>16</sup>: Հաշորդ օրը վարչապետ Ալի Մահմեթի հրամանով, սահմանադրական երդան ձեզ փոխվում է՝ «Թագավոր» բառին փոխարինում է «Հայուններ» բառը: Գետական հիմնարկություններում այնպատճեն արգելվում էր թագավորի նկարը կախելու Շատրվանապատճենը ու Հավատարմատճենը իրենց նոր Հավատարմագերը ներկայացնելու էին Ահմեդ Ֆուադ 2-րդին, «Թագավոր» նպաստուի և Սուդանի տիրապետի նշումով<sup>17</sup>: Հովհաննի 28-ին, Մինիստրների խորհրդի որոշմամբ, վերացվեցին սփառան և որեւէ քաղաքացիական տիրապետները<sup>18</sup>, Սպաստոսի 1-ին վերացվեցին գաղանի ուստիկանությունն ու նրա հատուկ ծառայությունը<sup>19</sup>: Սպաստոսի 2-ին հայտարարվեց, որ կազմվելի է խնամակալական խորհրդոց բաղկացած երեք անձից, որոնք էին իշխան Արդիլ Մուսիելը՝ Արաս Հայիմ երկրորդ խեղիզի անդրանիկ որդին, Մուհամմեդ Բահա էղ-Դիինը՝ առողջապահության նախկին մինիստրը, պառլամենտի նախկին նախագահը և վիճակագրական խորհրդի նախկին նախագահը (սա, միաժամանակ խորհրդ կալվածատեր էր և Վաֆդի գեներալարներից մեկը), փոխնախապետ Մուհամմեդ Ռաշադ Մահմանան, որը Հովհաննի 29-ին նշանակվել էր ուսպմական ակադեմիայի պետ, 30-ին՝ արականապորտի մինիստր (առաջին զինվորականը կառավարության մեջ) և խնամակալական խորհրդում ներկայացնելու էր ՀՊեհ-ինը<sup>20</sup>: Եարևնակագում էին զառմաները բանակում և կառավարական ապարատում: Զրագեցրած պաշտոններից հեռացվում էին նախկին վարչակարգի առավել նվիրված բարձրաստիճան սպաներն ու պաշտոնյաները:

Մինչ էին կուսակցությունների ղեկավարելու ու նրանց մամուլն իրենց ուշացած հրճանքն էին արտառայտում զինվորական շարժման հաջողության առթիվ, նպաստական մի շարք հասարակական կազմակերպություններ՝ նպաստական բժիշկների միությունը, Թագավորական առնուրական ակումբը, Կահիրեկի իրրահիմի համալսարանի դասախուները, Հողագետների միությունը և ուրիշներ հանդեմ նկան մի հայտարարությամբ, որով պահանջում էին զտումներ կատարել ոչ միայն բանակում և կառավարական ապարատում, այլն բաղացական կուսակցություններում: Նրանք պահանջում էին, որ նախկին վարչակարգի մեղսակիցները հեռացվեն այդ կուսակցությունների շարքերից<sup>21</sup>: Հարց է առաջանում, ի՞նչն էր պատճառը,

որ հեղիստական ողջ հասարակությունը զինվորական հեղաշրջման բակրպից և նեթ առաջին պլանի վրա էր մղում պետական և հասարակական ամրող համակարգում զտումներ անցկացնելու հարցը: Հաշվի առնելով այն հանդամանքը, որ զինվորական հեղաշրջումը սոցիալական հեղափոխության միայն սկիզբն էր հանդիսանում, և գեն հայտնի չէր, թէ ի՞նչ ուղղությամբ էր շարժվելու այն (այսուղե հիշենք Գ. Ա. Նասերի խոսքերը: «Ինչի» և նոր ձգուում մնենք և ո՞րն է դրան հասնելու ուղին: Առաջին հարցի պատասխանը թիշ թն շատ պիտի!... Բայց երկրորդ հարցի պատասխանը... խոստովանում էմ, իմ գիտակցության մեջ ոչ մի բան այնպիս չէր փոխվում, ինչպես զայ<sup>22</sup> երր բացակայում էր գործունեության որևէ կոնկրետ երազիք, ապա կաշառակերության, շարաշառնուաների և անօրինականությունների այդ երկրում պարզ է, որ իշխանությամբ փոխվելուց հետո առաջնակարգ միջոցառում էր լինելու պայքարը դրանց դեմ: Հարգած հասցենելով բանակային հետադիմ վերնախավին, կառավարական հաստ ապարատին, կուսակցությունների գենավարությանը, զինվորականները, տանաց այդ ամրողապես գիտակցելու, հարգած էին հասցեում ավագանուն, բուրժուակարվածատիրական վերնախավին և, ընդհանուր առմամբ, եպիպական հետադիմությանը: Անկախ ամեն ինչից, այդ միջոցառումները հեղափոխական բնույթ էին կրում:

Վերջապես, Հռվիսի Ց1-ին, նզիպառուի ուղմական ուժերի զլիսավոր հրամանատարի անունից Կահիրեն ուազիոն ձայնափոնց հայտարարություն, որով կուսակցություններին և բաղաքական այլ կազմակերպություններին առաջարկվում էր գտնի իրենց շարքերը և կառավարությանը ներկայացնել իրենց կոնկրետ ժրագրերը<sup>23</sup>: Խնչպես տեսնում ենք, ՀՊե-ն, գործելով կույիսների հունից և շուննենալով որևէ սեփական կոնկրետ երազիք, հաստատակամորեն, որը օրի հունից ձեռնարկում էր այնպիսի քայլեր, որոնք գեն լուսեղծելով, որոշակիորեն խարխլում էին նախկին հասարակական կյանքի հիմքերը: Խախնական անորոշ խանդագուության և զուսպ նպաստղականության պայմաններում այդ բանը զգմար էր նկատելու նույինիսկ թափազորի գահազրկումն ու հեռացումը երկրից լոգնեցին որևէ բան հասկանալ: Ֆարուկը շափից դուրս հեղինակազուրկ էր: Բայց օգոստոսի սկզբներին արդեն սկսնցին երկալ անհանդատության առաջին նշանները նախ այն լուրերը, որ կուսակցությունների գործությանը սպառնալիք էր ապասվում, որն ավելի հաստատվեց, երբ վաճառական ռաշ-Միրից թերթը, որպես զգայացուց նորություն, օգոստոսի Ց-ին հրապարակեց մի հաղորդագրություն այն մասին, որ եթե կուսակցություններն ինքնազտում լիսարանն, ապա նրանք, լու-

ծարքի կենթարկվեն, և արդեն օգոստոսի 8-ին հայտնի զարձակ իշխանությունների այն մտապրությունը, որով Հողատիրության շափր իշխցվելու էր<sup>21</sup>, սկսեցին Եղիպատոսի նախկին տերերին անհանդացնելու ծրբ առաջ թերթերի առաջին էջերից չեղ իշխում Հեղափոխության առաջին լոգումնքը՝ «Միասնություն», կարգապահություն, աշխատանք, ապա այժմ ավելի ու ավելի շատ երկում էր տեղացի Սահմանադրությունը՝ արտահայտությունը:

Հայտնի է, որ Ազատ սպաները քանիանում էին տեսնել բազատագրված և ուժեղ նպիպուսը<sup>22</sup>, ազատագրված օտարերկրյա ռազմական ներկայությունից և աղղեցությունից, ավատատիրական ավագանուց, ներքին հետազիմությունից՝ հանձնեն բուրժուակարգածատիրական կուսակցությունների պարագույինների, Ստեղծված երկրի քաղաքական համակարգի գոփոխումը, կարելի է ասել, նրանց մտքով չեր էլ անցնում։ Հայրենասեր սպաները լրջորեն զիտակցում էին, որ օտար զորքերի դուրսքումը և երկրի անկախության ապահովումն անհնար է առանց նախապես երկրի ներսում կայունության հաստատման։ Ի՞նչն էր խանգարում այդ կայունության հաստատմանը։ Կազիտայի իշխանությունը երկրի կառավարման վրա և սոցիալական ծայրաճեղ տարրերությունը քաղաքում ու գյուղում։ Դայլած ակնառու էր, որ գործող 1923 թ. սահմանադրության շրջանակներում զրահը անհնար էր վերացնել, սակայն Ազատ սպաների մտքով չեր անցնում ձեռք բարձրացնել հնեց այդ Սահմանադրության վրա նրանք դեմ չեին երկրում վերականգնել պաղեամենայի գործունեությունը, հույս ունենալով, որ այդ պաղեամենայը կործի նոր պայմաններին և նոր պահանջներին համապատասխան։ Այս նպատակով, Ազատ սպաները, հիմնականում լինելով Վաֆդի համակիրները, դիմեցին վերջինին դեկտմարտությանը։ Հուլիսի 27-ին Գ. Ա. Նասերը, Գ. Սալիմի և Ա. Հ. Ամենի հետ Ազատ սպաներից մեկի տանը հանդիպում է Վաֆդի գլխավոր քարտուղար Ֆուադ Միրազ Էդ-Դինին և առաջարկում է պայմաններ, որոնք ընդունելու դեպքում Վաֆդը կանցներ իշխանության գլուխ։ Այդ պայմաններն էին.

1. Հողատիրության սահմանադիմումը հողային բարեփոխումների միջոցով։

2. Երկրի կառավարման վրա կապիտալի իշխանության վերացումը, մի հանգամանք, որ վեաս է հասցեում հասարակ ժողովրդին, քանի որ բանվորը կամ գյուղացին չեն կարողանում օգտվել իրենց իրավունքներից, երբ գործատերը ինքը իշխում է<sup>23</sup>։

Հաելով նրանց Ֆուադ Միրազ Էդ-Դինն ասում է. «... Հողատիրու-

թյան սահմանափակումը երկիրը կկործանի: Այդ դեպքում մենք շնչեք կարող գտնել ֆալլացներին<sup>27</sup>: Երկրորդ պարմանին նա համաձայնում է, բայց ինչպես պարզվում է՝ տակտիկական նկատառումներով, այն է՝ մենք կվերադառնենք՝ հետո կտեսնենք: Առա թե ինչպիսին էր հիմ կուսակցության առաջնակազմությունը դիրքու նվ դա հասկանալի է, քանի որ հենց այդ դեկազմարները և մասնավորապես Մուստաֆա Նահճասը և Ֆուադ Էդ-Դինը հանդիսանում էին խոշոր հոգատերեր: Խչեմքն, Գ. Ա. Նասերը պնդում էր իր պարմանեները: Եվ առա կուսակցությունները գգալով, որ բանակը լի պատրաստվում մոտ ապագայում լրել իշխանությունը, կարծես խոսքները մեկ արած, սկսում են խոսել ուսուց դեմոկրատիայից և առ Սահմանադրությունը անհրաժեշտ հարգանքից: Ի դեպ, սկզբնական շրջանում Ազատ սպաների մեջ միասներից այն ժամ է կուռ չեր սահմանադրական պարզամենտարիզմի վերաբերյալ: Դրա արտօնայությունը հանդիսացավ այն հայտարարությունը, որը արգեց Հուլիսի 31-ին Մ. Նազիրի կողմից: Հայտարարության մեջ ասվում էր, որ բանակն իր պարտականությունները հատարել է և շատ շուտով նույնականացնելով դրազգելու է իր գործերով, և որ բոլոր այն գործերը, որոնք կապ ունեն երկրի կառավարման հետ, հանձնվելու են Մինիստրուների խորհրդին, որպեսզի ամեն ինչ վերադառնա իր ըրեականուն վիճակին<sup>28</sup>:

Ծպուտուի ակզրին ներքին գործերի մինիստրությունում գրանցվեցին 16 կուսակցություններ: Դրանք էին Վաֆդը, Արերալ-սահմանադրական, Վաֆդական բլոկ, Սաադական, Ազգային, Սոցիալիստական, Աշխատանքի, Ֆալլացների, Կանանց ազգային, Նեղոսի դումտերի, Ֆալլացնական սոցիալիստական, Նոր գեմոկրատական, Նոր սոցիալիստական, Նեղոսի դեմոկրատական, Նոր ազգային կուսակցությունները և Մուսուլման եղբայրների կազմակերպությունը: Եղիպատացի պատմաբան Ս. Մ. Տամազին այս կապահցությունը գրում է, որ, լնայած կուսակցությունների այս մեծ բանակին, նրանց ծրագրերը համարյա նույնն էին, իսկ նրանց զոյտությունը հիմնված էր մարդկանց վրա և ոչ թե բակլզրումների<sup>29</sup>: Որ կուսակցությունների ծրագրերը շատ քիչ նորություն էին բրեելու երկրին մենք կհամոզվենք, սակայն նախքան այդ ծրագրերի հիմնական դրաւթներին անցնելը, կուզենք անդրադառնալ անզիյական համարաբաններում սովորող եպիպտացի 500 ուսանողների պահանջագրին, որ Հուլիսի 31-ին նրանք հնառագրել էին Մ. Նազիրին, Ա. Մահերին և երկրի կուսակցություններին: Ներկայացվում էին հետեւյալ պահանջ-

ները՝ արտակարգ դրության վերացում, վերապարձ պառամենտական կյանքին, Սահմանադրության բարեփոխում՝ պահովվելու համար ծրագրին մի խեկանան ժողովրդական կառավարությունով, թագավորին զրկել պառականությունը քրիուս, կառավարություն նշանակելու և հրաժարեցնելու, արտակարգ դրություն մտցնելու, պատերազմ հայտարարելու, բանակի հրամանառարներ, պառամենտի նախագաներ և զետպանեներ նշանակելու իրավունքից և դրանք նեթարին պառամենտի իրավասությանը: Աւանունները պահանջում էին նաև թագավորական գրասենյակի, սենատորներ նշանակելու իրավունքի, դեպուտատական թեկնածության երաշխավորնի վերացում: Դեպուտատության թեկնածուի առաջարրութը պետք է պայմանավորվի տարիքային սահմանափակումով, անկախ նրա սոցիալական ժագումից: Պետք է նաև աշխատավայրի, բանվոր դասակարգի և սոցիալական այլ խավերի իրավունքներն ու նրանց արհմիությունները: Պահանջվում էր նաև բոլոր քաղաքանություններին ընդհանուր հերում շնորհնել, քաղաքական ոստիկանության և նրա սհատուկ գրասենյակի վերացում, ժողովների և մամուլի ազատություն, նախկին թագավորի հանցանիցների պատճում, հոգային հարկերի նվազեցում, գլուղատնեսական և արդյունաբերության մեջ աշխատող բանվորների օրավարձի բարերացում, հարկերի արդար բաշխում: Անհրաժեշտ էր համարվում ժողովրդական լայն խամենքից միացյալ մի հակատի ստեղծութը՝ ետ մղելու համար իմպերիալիստական ուսումնական, տնտեսական կամ քաղաքական որևէ հարձակում, կազմակերպել եղիպտացի և առողացի ժողովուրդների պայքարը, ճանաշելով սուլանցիների ինքնորոշման իրավունքը և, վերջապես, խուստիկի այնպիսի ռազմական դաշինքների մասնակցելուց, որոնք կատարեին նպապտուին միարժիք իմպերիալիստական հակասությունների մեջ՝ հակառակ իր շահերի<sup>20</sup>, Ռուսանողների այս պահանջները հարժեն որոշ հիմք հանդիսացան կուսակցությունների հետագայում առաջարրած ծրագրին, որում կհամոզվենք ստորև: Բոլոր զեպքերում, դրանք ավելի համընդհանուր ընույթ ունեին, քան որևէ կուսակցության ծրագրը և դրանց մի մասը ՀԱՆ-Ն-ապագայում կիրառեց իր գործունեության մեջ:

Օգոստոսի սկզբներին եղիպտական թերթերը հայտարարեցին երկրի տարրեր կուսակցությունների ժրագրերը: Դրանք չատ էին նման իրար: Այդ պատճառով էլ մնենք կտանք այն հիմնական դրույթները, որոնք առաջարրում էին երկրի հիմնական կուսակցությունները՝ Վաֆյը, Վահդուկան բլոկը, Սաադականը, Ազգայինը, իբրերալ-սահմանադրականը և Մուսուլման եղբայրները<sup>21</sup> իրենց ծրագրերում:

Արտաքին քաղաքական ասպարեզում.

1. Նեղոսի հոգտի միտքյամ, նգիպտոսի և Սուլանի միավորում:

2. Սուլայի յրանցքի շնորհության ապահովում:

3. Արարական երկրների լիգայի ամրապնդում:

Ներքին քաղաքական ասպարեզում.

1. 1923 թ. Սահմանադրության պահպանում:

2. Նոր ընտրությունների անցկացում:

3. Բագավորական իշխանության սահմանափակում, պառամենայի օրենսդրական իրավունքների ընդլայնում, հնթակայելով նրան գործադրությունները:

4. Սահմանադրական ոգու և ազատությունների ամրապնդում:

5. Արտակարգ դրության վերացում:

6. Թաղարական սատրիկանության, նրա հատուկ գրասենյակի և գաղտնի գործակալությունների վերացում:

7. Զառամենների անցկացում բանակում և Հաստրակական ու պետական կազմակերպություններում:

8. Բանակի հզորացում:

Մոցիալական ասպարեզում.

1. Պայքար աղքատության դեմ:

2. Պայքար անգրագիտության դեմ:

3. Եղիպտական կապիտալին ավելի մեծ արտոնությունների ընձեռում՝ վերացնելով նրա ժագալումը սահմանափակող գործունները: Հատկապն ընդլայնել նրա գործունեությունն սպասարկման ոլորտում՝ Եղիպտական ձեռնարկումների բաժնետերերի շահերի պաշտպանում:

4. Պրոգրեսիվ հարկի կիրառում<sup>103</sup>:

Եղիպտական կուսակցությունների պահանջներն արտաքին քաղաքական հարցերում, ինչպես անսում ենք, ոչ մի նորություն չէին բերում: Նրանք կրկնում էին Բագավորական վարչակարգի արտաքին քաղաքական սկզբունքները, այն է՛ շճանաշել Սուլանի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, ուժեղացնել Արարական երկրների լիգայի գերն այն եաին մտքով, որ ապահովվեր Եղիպտոսի հեգեմոնիան արարական աշխարհում է, միայն ակնարկելով Սուլայի յրանցքի գոտուց բրիտանական դորքերի դուրսքերման անհրաժեշտության մասին, լուսավորության մատնել յրանցքի շահագործման, դրա նկատմամբ եղիպտական ժողովրդի օրինական իրավունքների հարցը: Ներքին քաղաքական հարցերում ակներեւ են բոլոր կուսակցությունների շանթերը՝ պահպանել 1923 թ. Սահմանադրությունը և, հետեւապես, միապետական կարգերը Եղիպտոսում: Առաջ

ինչ ուղղված էր պառամենտի դերի մեծացմանը, պառամենտ, որտեղ, անտարակույս, տեր ու տնօքինություն էին անելու այդ կուսակցությունները։ Սոցիալական հարցերում եղիպատական կուսակցություններն ընդունուուր արտահայտություններով խռանով ազգաւոտության և անզրագիտության գծմ պայքարի մասին, և ոչ էլ ուղիներ նշելով դրանց վերացման համար, միանգամայն սրշշակիորեն իրենց պաշտպանության տակ էին անում եղիպատական բուրժուակալվածատիրական վերնախամի շահերը նրանք լուս էին հոգային հարաբերությունների մասին, երկրի թերեա ամենացավոտ հարցի մասին։ Ծվ ինչու լցոնուք է լուսին, եթե այդ կուսակցությունների դեկավարների մեծամասնությունը խոչըր հոգատերի էին և նրանց համար հոգային գործող հարաբերությունները միանգամայն բնականոն էին։ Առաջ լցաշելով սոցիալ-քաղաքական և տեսական ոչ մի լիարժեք և նոր պահանջ, եղիպատական բուրժուակալվածատիրական կուսակցությունները հաստի գաղափարական անխուսափելի էին։ Առաջ համար էլ, ինչպես Շ. Խ. Կորզովելաշվլիին է նշում, «Կոնֆլիկտը... ՀՂե-ի... և բուրժուակալվածատիրական կուսակցությունների միջև որոշակիություններն անխուսափելի էր»<sup>23</sup>։ Մատենդաստ իրադրությունն այդ կուսակցություններից ոչ մեկը ըկարողացավ ըստ ամենայնի գնահատների, Հենց դա էր պատճառը, որ նրանք լրջորեն լվերաբերվեցին ինքնազաման վերաբերյալ ՀՂե-ի պահանջին։ Ներքազուումը նեթազրում էր, առաջին հերթին, կուսակցությունների այն անզամների հեռացումը, որոնք նախկինում թագավորական վարչակարգի մեղսակիցն են եղել, նրանում գրանցեցնելով գանձան բարձր պաշտոններ։ Ծվ այս առումով առավել աշքի էին ընկերում Վահոյ կուսակցության զեկավարները, հատկապես Մ. Նահհասը, Ֆ. Միրագ էդ-Դինը և Մ. Սալահ էդ-Դինը։ Այս կուսակցությունը, որը եղիպատական այլևայլ կուսակցությունների ժնողն էր հանդիսանում, իր շարքերը գտելու, իր զեկավարներից ձերբազաւվելու պահանջը դիտում էր իրեն հարձակում եղիպատական ազգային սրբազան հիմունքների վրա։ Այնուամենայնիվ, ձգտելով թող փլել հասարակության այբոքին, սպասուի 4-ին և 5-ին Վահոյ գործադիր մարմնից հեռացվեցին 15 քիլ թէ շատ ազդեցիկ անդամներ, որոնցից երեքը նախկին մինիստրներ էին։ Բայց շուտով պարզվեց, որ հեռացվածները արդին փաստորն հնուու էին քաղաքական գործունեությունից, քանի որ նրանք շժեր և անկարող մարդիկ էին<sup>24</sup>։ Օգսուուի 6-ին Մ. Նազիբը հայտարարում է, որ զտումն այդ կուսակցության մեջ կառարյալ չէ և որ պլիավոր դեմքերը փաստորն գործի պլուին են կանգնած<sup>25</sup>։ Սա արդեն ուղղակիորեն ցույց էր տալիս, թէ ի՞նչ է պահանջում

բանակը։ Այդ սրերին եղիպտական բոլոր թէրթերը, բացառությամբ ուշ-Միսրին, պահանջում էին Մ. Նահհասի, Ֆ. Սիրագ էդ-Դինի և Մ. Սալահ էդ-Դինի հրաժարականները։ ուշ-Միսրին էր, որ իր նահարը մշտապես դարձարում էր ուշկա վաֆդ առանց նահհասի արտահանությամբ։

Մյուս կուսակցությունները նույնպես փաստորեն հրաժարվեցին լուրջ մաքրագործումներից։ Սապահանները հեռացրեցին իրենց նախագահ Իրրահիմ Աբդէլ Հատիկին և կուսակցության զլիավոր կոմիտեի անդամ Համիդ Դովդային։ Լիրերալ-սահմանադրականները լուզեցին նույնիսկ այդպիսի մի խորհրդանշական քայլ կատարելու նրանք հայտարարեցին, որ կարիք չունեն ինչնական պահանջմանը։ Այդ նույն ժամանակ երկրում կուսակցությունների հրահանգով անդի էին ունենում ցույցեր ի պաշտպանություն այդ կուսակցությունների և դրանց զեկավարների ծուցարարները պահանջում էին պահանջում ասհմանադրական կարգը։ Այս ժամանքը իրադրության մեջ ՀՀԿ-ն ցուցարերեց մեծ տռկունություն և պնդեց իր պահանջը՝ ինքնազաման և հոգային բարեփոխումների անհրաժեշտության վերաբերյալ։ Իրագրությունն ազելի սրվեց, երբ օգոստոսի 10-ին ելույթ ունեցավ Ա. Մահերը, հաստատելով նախորդ օրվա սահ-Միսրիի զգուշացնող հաղորդագրությունն այն մասին, որ կուսակցությունները որոշակի պայմաններում կարող են լուժարքի ենթարկելու։ Ա. Մահերն իր ելույթում ասաց, որ Եղիպտոսի ներկային կուսակցությունները օտար միջամտության կենարքնեացման ուժ են հանդիսանում։ Մինք, շարունակեց նա, բացատրեցինք կուսակցություններին այն առողջ հիմունքները, որոնց վրա պետք է նրանց կառուցքն իրենց ծրագրերը, բայց նրանք այդ բանը չարեցին։ Ներկայումս կուսակցական հակամարտությունները հասկել են հանցավոր չափերի։ Այժմ կուսակցությունները կամ պետք է վերակազմավորվեն, կամ վերանանան<sup>27</sup>, նույն օրը Մ. Նագիրը, ելույթ ունենալով, հայտարարեց, որ ինքը վարչապետի հետ համաձայնության է եկել, որ ա) 1953 թ. փետրվարին անդի կունենան պառամենատական ընտրություններ, բ) անցկացվելու ճնշագրին բարեփոխումներ։ Մ. Նագիրը ավելացրեց, որ ինքը երբեք միտք լի ունեցել ցրել կուսակցությունները<sup>28</sup>։

Խշպես տեսնում ենք, արդեն այստեղից սկսվում է եղիպտական բարենորոգի շարժման երկու հակադիր հոսանքների տարանշատումը։ Վարչապետի և գլխավոր հրամանատարի նույն օրն արած հայտարարություններն իրար հակառակ էին։ Տարօրինակն այստեղ այն է, որ այդ երկուն էլ ինչ որ ձևով նույն համբարի ներկայացուցիչներն էին։ Պետք

է հեթաղոքի, որ Ա. Մահերի վրա առաջիկ շափով զգացվում էր ՀՂե-ի մնշումը և, ընդհակառակի, Մ. Խազբիրը, որ մի գիշերվա մեր ուղարքին հերթակ և սպազի առաջնորդ էր գարձել, հարրած իր փառքով, այն իրեն պատ էր զգում առաջադրելու իր իսկական մտքերը: Երկրորդական դեր չուներ այս հարցում նաև այն, որ բոլոժուական կուսակցությունները, և մասնավորապես նրանցից ավելի ազդեցիկն ու գլխավորը՝ Վահագը, անդրկում ամսագրություն էին ծավալում Մ. Խազբիի ՀՂե-ի գեմ պայքարի կենտրոնական դեմք զարմենելու համար:

Սգուստոսի 17-ին տեղի ունեցած ՀՂե-ի այն նիստը, որը զինվորականներին փառատօրեն տանելու էր կառավարության անմիջական մասնակցության նիստին ներկայացվեց մի որոշման նախագիծ, որով բոլոր կուսակցությունները լուժարցի էին նեթարկվում, և բազաթական բոլոր ընթարքին ներկայացվում էին քաղաքական գործունեությունից: Այս որոշմանը զեմ դուրս եկավ Գ. Ա. Խասերը: Նա ասաց. «...ես վախենում եմ, որ այս որոշումը ունակը կհասկանան այնպես, թե մենք զնում ենք զեպի զիկատառուրա... Մեր հեղափոխությունը... զիմոնիրատական հեղափոխություն է և մենք-շենք կարող հաստատել զիկատառուրա: Ազելի լավ է կուսակցություններին և կազմակերպություններին հետարակություն տանք իրենց իրենց մատրիկ և որոշել իրենց ժրագրերը և նպատակները համապատասխան այս նոր իրադրությանը<sup>39</sup>: Հակառակ զեպի թուակը է կուսակցությունները կզտեն իրենց շարքերը<sup>40</sup>, Գ. Ա. Խասերի առաջարկությամբ ՀՂե-1 ընդլայնվելով, որ ընտրությունները պետք է տճղի սնննան 1953 թ. սրբիս ծայրագույն ժամկետ, բայց այն բանից հետո, եթե կուսակցությունները կզտեն իրենց շարքերը<sup>41</sup>, Գ. Ա. Խասերի առաջարկությամբ ՀՂե-1 ընդլայնվելոց՝ և մարդ ընդգրկելով իր մեջ Դրանք էին Զաքարիա Մոհի էղ-Դինը, Արդել Մանեյմ Ամինը, Ցուսուկի և գնեներալ Մ. Խազբիրը, որը նասերի պնդմամբ դարձավ ՀՂե-ի նախագահ: Նրա տեղակալ ընտրվեց ինքը՝ Գ. Ա. Խասերը: Թվում է, որ իսկապես Մ. Խազբի արդ օրերի ժամը փառքը կարող էր ազդեցություն ունենալ նաև Գ. Ա. Խասերի վրա: Հավանական է նաև, որ դա տակատիկական քայլ էր, որով նասերը Մ. Խազբիրի դարձելուվ ՀՂե-ի անդամ, դրանով նրան զնում էր ՀՂե-ի սահմանների մեջ, որը նրան հնարավորություն էր սա ինքնակամ քայլեր կատարելու:

Կուսակցությունների զեմ պատուս-սեպտեմբեր ամիսներին ՀՂե-ի մղած պայքարը, որը վերջնականապես կազմակուծեց այդ կուսակցությունների գործունեությունը և հանգեցրեց հողատիրության սահմանա-

գերակման վերաբերյալ որևէքի ընդունմանց, որը և Ա. Մահերի կառավարության անկման պատճառը դարձավ, Ա. և Ժ. Լակուտրուբլիերը Ներկայացնում են իրենց «Հեղաշրջում»<sup>41</sup>: Դեռ օգոստոսի սկզբից ՀՂե-ի և գրքագիր իշխանության միջն մի կողմից և ՀՂե-ի ու նապիրի միջն մյուս կողմից, սկսեցին ի հայտ գալ տարածայնություններ: Մ. Նապիրը դառնարով ՀՂե-ի նախագահ մի առ ժամանակ կարծես լոյալ դիրք էր գրավում ՀՂե-ի միջոցառումների նկատմամբ: Ըստհակառակին, Ա. Մահերը, եթե առաջին օրերին լոյալ էր, ապա հոգածիրության աշխանագակման վերաբերյալ ՀՂե-ի մտադրությունների առարկայավորմանը զուգընթաց սկսեց ավելի ու ավելի հակադիր դիրք գրավել նրա նկատմամբ: Խոշոր հոգատեր Ա. Մահերին հաջասարակշառությունից հանց հզիպտական տնտեսագիտներ Խ. ալ-Բարազիի և Ահմեդ Ֆուադի կազմած Հողային բարեկփոխումների օրենքի նախագիր հատկապես այն հորդվածը, որով առավելագույն հոգածիրությունը սահմանվում էր 50 ֆեոնն<sup>42</sup>: Բուրժուակալվածատիրական հին կուսակցությունները, նրենց իրենց դասակարգային բնույթից, իրենց հերթին պնդանակատ և ձեռական մոտեցում էին ցուցաբերում երկրի քաղաքական-տնտեսագիտան համակարգում որոշակի փոփոխություններ կատարելու ՀՂե-ի պահանջների նկատմամբ: ՀՂե-ի չեր կարող թույլ տալ վերագրք դեպի հինը, որովհետև բանակային շարժումը միանգամայն կիրքցներ իր իմաստը: Նա վեռականորեն դնմ էր իշխանության հին համակարգին, սակայն նորը ստեղծելու ուղին հայտնի չեր նրան: Բյուրոկրատիայի և կաշառակերության մեջ թաղված հին պետական մեքենան նրան դուր չեր դարիս, բայց նա վախնեսում էր փշտիլ այն: Նա հարգածներ էր հասցնում ար և ձախ, բայց դրանից նրա կողմնակիցների թիվը չեր ավելանում: Հետևաբար, այստեղ սխալ է խոսել ինչ-որ ոչեղաշրջմանց մասին, այլ բանակային շարժումը, սկզբնական շրջանում լինելով վերանորոգիչ մի շարժում, իր առջևից դնմ էր նետում այն ամենը, ինչը իր հասկացողությամբ խանգարում էր իրն: Խսկ կուսակցությունները, որոնց մեզսակցությունը հին վարչակարգի անօրինակություններին կասկած չեր հարուցում, իսկապէս գարեն էին հզիպտական հետազիմության նոր իշխանությունների դնմ արողված ուայցրարի հիմնական գործիքները: Հետևաբար, ՀՂե-ի նպատակների իրագործման ճանապարհին նրանք ու միայն խանգարիչ դեր ունեին, այն հենց օգոստոսի հրկրորդ կնայից, արգեն, կոնկրետ հակառակորդներ էին: Ծգ այդ ժամանակվանից մինչև 1954 թ. գարնանային ճգնաժամը թերևս զիսավոր հակառակորդներ, որովհետև

և գիպտական հետազիմությունը ձգտում էր հենց կուսակցությունների միջոցով հմանական հարվածը հասցնել նոր թշխանություններին:

Ա. Մահերը ընդհանրապես դեմ լինելով հողատիրության սահմանափակմանը և այնուամենայինվ զգալով, որ այն անխուսափելի է, ձգտում էր հարավորին լավ բարձր սահմաններ հաստատել այդ քնազագառում: Երբ պարզ զարձավ, որ դա անհնարին է, նա սեպտեմբերի 7-ին ներկայացրեց իր հրաժարականը: Այս հրաժարականը խորհրդանշական էր: Չնայած Ա. Մահերը պետքում էր, որ ճեկէ է ժամանակը թշխանությունը կենտրոնացնելու մեկ ձեռքում<sup>43</sup>, բայց արդեն պարզորոշ կերպով հարսնի զարձավ, որ կառավարական հին մերձնեան սկսել է խափանումներով գործել: Նախքին փաշաներից և բօյերից կազմված այդ կառավարության հրաժարականը եղիպտական հետազիմության պարտությունն էր: ԳՅ-ՕՐԻԱ պայքարի ընթացքում նա չկարողացավ մերացնել կուսակցություններին, Մահմանադրությանը, պառամենուտական կյանքին, պետական հնառու բլուրուկրատական մերձնային սպառնացող վտանքը: Նա անհարող եղավ նաև հողատիրության սահմանափակման դեմ առնել: Սա, Զարուիի գահազրիումից հետո, եղիպտական հետազիմության առաջին խոշոր պարտությունն էր, Վերցացնելով այս մասին խոսելը, չներ կարող չնշել Ա. Մահերի վերջին հայտարարության հույսական բնույթը: Եղիպտական հասարակությունը, որ արդեն տասեամյակներ շարունակ օգտվում էր բուրժուական կիսառու-պռատ ազատություններից, ամրողապես սարսափում էր ոգիկատառուրած բարիք: Ա. Մահերի շիշխանությունը մեկ ձեռքում կենտրոնացնելու արտահայտությունը, այս առողմով, բազականին պերճախոս էր:

Սեպտեմբերի 7-ին Մ. Նազիրը կազմեց նոր կառավարության, որի մեջ ինքը դիմավորում էր նաև պաշտպանության և ռազմածովային մինիստրությունները: Գ. Ա. Նասերը առաջին անգամ մտնելով կառավարության մեջ զբաղեցրեց վարչապետի տեղակալի պաշտոնը: Այս կառավարությունը հիմնականում քաղաքացիական էր: Չնայած զրած, այժմ արդեն կարելի էր վստահությամբ ասել, որ ՀՀՆ-ի իր վերահսկողությունը վերլինականապես հաստատեց կառավարության գործունեության վրա: Գ. Ի. Միրսկին միանդամայն իրավացիորեն գտնում էր, որ հենց այս ժամանակից է, որ պինվորականները որոշեցին մեալ իշխանության պահիս<sup>44</sup>:

Սեպտեմբերի 9-ին ընդունվեց հողատիրության սահմանափակման մերարերյալ օրենքը և ապա № 179 օրենքը: որը վերաբերում էր կուսակցություններին: Վեց կիտից կազմված այս օրենքը կուսակցություն-

Ների զոյսոթյունը փաստորնն զնում էր ներքին գործերի մինիստրի հայեցողության առկի: Այն արգելում էր կուսակցության դեկավարներին և գարշության անդամներին պաշտոններ զրադեցնել ընկերությունների մեջ և կամ աիրել Հռովային կազմաքաների: Կուսակցության դեկավարը և գարշությունն բնարգում էին 3 տարի ժամանակով: Կուսակցությունն իր ծրագրի, կանոնադրության, հիմնադիր անդամների թվի և ֆինանսական միջոցների մասին անդեկությունները ներկայացնելու էր ներքին գործերի մինիստրությանը: Արգելվում էր կուսակցական գործունեությունը բանակում<sup>45</sup>: Այս օրենքը կարելի է համարն կուսակցությունների մահավճիռ նվազաւական չէ, որ հենց սրանից հետո է, որ բարյոր կուսակցությունները (թերեւ բացառությամբ Մուսուլման նղրայրների կազմակերպության) արգել բացահայտորնն անցան ընդդիմադրության նոր իշխանությունների հանդեմ:

Եղիբատական հետագիմությունը, ինչպես ասվեց, դիմում էր գոնազան միջոցների ՀՂե-ի մտադրությունները խափանելու համար հատկապես Հռովատիրության և ահճանափակման վերաբերյալ: Նրա դրդմամբ այս անդամ Հռովային բարեփոխումների գեմ դուրս եկան խնամակալական խորհրդի Խախագան Բահաւ էղ-Դին Բարաբաթը և խորհրդի անդամ գնդապետ Ռաշադ Մահաննան: ՀՂե-ն Հռկոտեմբերի 14-ին նրանց փաստորնն Հռովացրեց քաղաքական գործունեությունից՝ ցրելով խնամակալական խորհրդի պահպանը և խնամակալ թողնելով միայն իշխան Արդել Մոնեյմին:

Մելքոնմբերի 9-ի կուսակցություններին վերաբերող օրենքին համապատասխան ամսի 2-րդ կեսին կուսակցությունները ներկայացրեցին իրենց ծրագիրը: Մի ավելորդ անդամ էլ պարզվեց, որ գրանք համարյա փոփոխություններ չեին կրել: Այդ ժամանակ արգելն զվիսավոր կուսակցության՝ Վաֆդի զեկավարությունը մասամբ փոխվել էր: Մելքոնմբերի 15-ին Վաֆդի կոմիտեից և անդամությունից հրաժարական նձրկալացրեց զվիսավոր քարտուղար Ֆ. Միրագ էղ-Դինը: 21-ին Մ. Նահճառը նույնպես դուրս է գալիս Վաֆդի քաղաքական գործունեության շրջանակից, դառնալով նրա ռպատվավոր Խախագան: Կուսակցության նոր առաջնորդ է ընտրվում Արդել Սալամ Ֆահմի Պուման: Գնայած այս նորություններին, ներքին գործերի մինիստր Սուլեյման Հաֆիզն իր դժգոհությունն արտահայտեց Վաֆդում կատարված դտումների կիսատ-պատ քնութից: Պետք է ասել, որ այդ օրենքին Վաֆդը կրակի ուսկ էր առնված բոլոր կողմներից: Այս դրության մեջ, սեպտեմբերի 27-ին տեղի ունեցած Վաֆդի կոմիտեի նիստն ընդունեց որոշում, ըստ որի, քանի որ ձգտում

ևա վերացնելու Վաֆոց. ապա նպատակ շումի ներկայացնել վերակադմանկարման մի եռո ծրագիր ներքին գործերի մինիստրին. Այս բայլը իշխանությունների կողմից զնահատվեց իրեւ մաներ Վաֆոի կողմից. որով վերցին ցանկանում էր իր ղեկավարներին զերծ պահել վերակադմանկարման որենքից. Առավագարության ներկայացուցիչը նույն օրը հայտարեց, որ ժնվագույնուր այսօր չի ճանաչում բացառություններ և ապագայում էլ չի ճանաչի<sup>42</sup>: Փաստորն այս որերից սկսած Վաֆոց, որպես քաղաքական ազդեցիկ ուժ կազմակալուծ եղած եախրան դրա օրինական ձևակերպումը. Հոգևորը ապրող մյուս կուսակցությունները նույնպես հարատեկություն դեղամիջոց լցուան. Մուսուլման եղրայրները. որոնք որոշակի ազդեցություն ունենին ՀՂե-ի մեջ. չնորոնիզ վերցինիս ուրոշ անգամների համակրանքի, գտնվում էին ավելի գերադաս զինակում: Նրանք, սեպտեմբերի վերցին իրենց գործադիր կոմիտեի նիստ գումարելով, որոշ ձեւական փոփոխություններ կառարեցին իրենց կանոնադրության մեջ<sup>43</sup>: Սակայն հետագայում զգալով որ դա չի գոհացեի իշխանություններին, նույնմերի 7-ին մի հուշագիր ներկայացրին ներցին գործերի մինիստրություն, որով հայտնում էին, թե քանի որ իրենց կազմակերպությունը ոհամաշխարհային իսլամական կազմակերպությունը է, ապա ներկայում իշխանությունը չի համարում իր նպատակը և յի մասնակցի ընտրություններին, եթե դրանք տեղի ունենան. Սակայն իրեն վերապահում է ազգային քաղաքական գործերում քարոզելու և քննադատելու իրավունք<sup>44</sup>: Սա տակտիկական քայլ էր և մուսուլման եղրայրներին առժամանակ հնարավորություն ավելց ուժեղացնելու իրենց դիրքերը երկրի զանազան քաղաքներում ու շրջաններում՝ ընդլայնելով կամ հիմնելով կազմակերպության մասնաճյուղերը: Այս գործում նըւանց հոգանավորում էր մասնավորապես Մ. նազիրը.

Հին կուսակցությունների դիմ մղված պայքարը ՀՂե-ի անդամների համար պարզ դարձրեց, որ վերադարձը պառամենաւական կյանքին իր հետեւից բերելու է վերադարձ դեպի հինը, քանի որ կուսակցությունների ներկայացրած ծրագրերը հիմնականում ոչ մի փոփոխություն չեն նախառեսում երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում: Պարզ դարձավ նաև, որ կուսակցությունների համառորին հին սկզբունքներից կառավելը օրգանապես կապված է այդ կուսակցությունների դեկազմարության երկրի բուրժուակարգածառիրական վերնախավի շահերի արտահայտիչը լինելու հանգամանքի հետ: Անհնար էր հարվածել վերնախամին առանց հարվածելու կուսակցությունների դեկազմարությանը, անհնար էր հին վարչակարգին հարվածել առանց հարվածելու նրա մեջ-

սահիցներին։ Չեայած արդեն սեպտեմբերի երկրորդ կեսին ձերբակալված էին ներ գաղտակարգի առավել աշքի ընկերությունը, այդ թվում նաև Վաֆոյի կոմիտեի գյուղավոր քարտուղար Սիրագ Էղ-Դինը, Սաազական կուսակցության նախագահ՝ Երրահիմ Արդել Հաղին, նախկին վարչապետ Ահմեդ Նազիր ալ-Հիլալին, խարիզմատ էին բուրժուակալված առիրական պատասխանությունը հողային բարեփոխումների օրենքի ընդունումով, սակայն եզրակացն հետադիմությունը դեռ հզոր միջոցներ ուներ իր դիրքերը պաշտպանելու՝ ի դեմս 1922 թ. սահմանադրության, որին նույնիսկ Ազգայի սպաներն իրենց աներկրա հավատարմությունն էին արտահայտուած։ Սահմանադրության վրա ձեռք բարձրացենք և կփառական իրականության մեջ հանկացվում էր տասնամյակներ շարունակ բուրժուական ազատությունների հասարակարգի հիմքը խարխուիլ, և այն ժամանակ կհանեն ողիկատուրա սարսափելի բառը։ Այդ էր պատճառը, որ թեև արդեն օգոստոսի 3-ին Հարկ Համարվելը փոփոխուել Սահմանադրության որոշ դրույթներ, այնուամենայնիվ այդ նպատակով ստեղծված Սահմանադրի խորհուրդը, որը հիմնականում բաղկացած էր կառավարական բարձրաստիճանն անձներից՝ Ալի Մահերի գլուխավորությամբ, զյուավորապես այդ փոփոխություններն ուղարկվում էր Հանգեցնել իշխանությունների և տնտեսության ղեկավարման ապակենորությամբ<sup>43</sup>,

Ալի Մահերի հրաժարումից հետո ՀՊե-ն փաստորներ իր ձեռքը վերցրեց Սահմանադրի խորհուրդը, պիտակցելով, որ գործող սրբների շրջանակներում կուսակցությունների և դրանով իսկ հետադիմության դեմ պարարելը որոշակի դժվարությունների հետ է կապված, Բայց քանի որ եզրակացն հետադիմությունը դրա մեջ տեսնում էր Սահմանադրության նկատմամբ սպանացիք և աշնան ամիսներին երկրում հրահրում էր անկարգություններ՝ զրդելով մասնավորապես ուսանողներին ցույցերին, արդ պատճառով էլ Գ. Ա. Նասերը նոյեմբերի 15-ին նելույթ ունենալով Կահիրենի համալսարանի ուսանողների առջն, բանակի ՇՀԱՎատարմությունը արտահայտեց Սահմանադրության նկատմամբ, ասելով, «... որ բանակային շարժումը կատարվել է միայն հայրենիքի ազատագրման, նորմալ սահմանադրական կյանքը երկրին վերադարձնելու համար, և որ մեր ամբողջ նպատակն է ժողովրդին ապահովել կատարյալ և անկապտելի ազատությունը»։ Այս հայտարարությունը, հատկապես նրա ժնորմալ սահմանադրական կյանքի վերադարձին վերաբերող արտահայտությունը, իշարկե, տառացիորեն լպետք է հանկանալ, նաև նրան պիտակցում էր, որ սահմանադրական ազատությունները միայն

սմնոր և աղդձցիկ խովի համար էին և հեղափոխթյան գլխավոր նպատակը համարելով ժողովրդին ապահովել ռկատարյաց ազատությամբ, նա ի նկատի շուներ անպայման էին սահմանադրական արատությունները, Այդ է վկայում Հոկտեմբերի 21-ից երկրում մտցված գրաքննությունը, որը որոշակիորեն սահմանափակեց հետազիմության սահմանադրությամբ փրկելու քաղի տակ ժամանակ հականի հեղափոխական պրոպագանդան: Այդ է վկայում նաև ընդունելու 25 օր անց՝ գեկոտեմբերի 10-ին էին Սահմանադրության վերացումը: Հին Սահմանադրության վերացումը Զարուիի հեռացումից և Հողային բարեփոխումների օրենքի ընդունումից հետո, զինվորականների երրորդ խոշոր միջոցառումն էր 1952 թ.: Պայքարը ներքին հետազիմության գեմ ինքնըստինքյան դին վորականներին հանգեցրեց այդ քայլին: Հին Սահմանադրությանը հետպիմության կողմից սպագործվում էր որպես իրավական զենք՝ պաշտպանելու համար վերնախավի շահերը: Այն կազմանդում էր երկրում հասարակական նոր հարաբերությունների ստեղծման համար անհրաժեշտ միջոցառումների հեռարկումն ու ժամանակը: Այդ երեսը յասնազորապես Հողային բարեփոխումների օրենքի ընդունումից հետո, երբ խոշոր հողատերերը կառավարությանն ուղարկած իրենց հուշագրում, Հինվելով էին Սահմանադրության գրույթների վրա, զրա ընդունումը համարում էին հակասահմանադրական և անօրինական: Սակայն սիսակ կլիներ պնդել, որ Գ. Ա. Նասերը և ՀՂե-ի մյուս անդամները, էլ չենք ասում Մ. Խազիրը, այդ քայլով տվյալ ժամանակամիջոցում նպատակ ունեին երկրում վերացնել պառամենաց և հաստատել զինվորական-խումտայական վարչակարգ Դեկտեմբերի 10-ին Սահմանադրության վերացման առթիվ եղույթ ունենալով Մ. Խազիրը հայտարարեց, որ որոշված է շուտով ստեղծել սահմանադրական մի հանձնաժողով՝ մշակելու համար նոր Սահմանադրության նախագիծը, որը գերեւ կլիներ նախորդ Սահմանադրության թերի կողմերից և դրանով ոկիրականացնել ազգի հույսերը պառամենացական մաքուր և նորմալ իշխանության վերաբերյալը, ՀՂե-ի կողմից էին Սահմանադրության վերացումը ուղիւ հարթեց երկրի սոցիալ-տեսեռական ասպարեզներում վերափոխումների ժամանակն համար: Այս հեղափոխական միջոցառումը խարիսկ եղագաւական հետազիմության օրենսդրական պատվարը, երա արդեն հոգևարք ապրող կուսակցությունների վերցին հենարանը: Այն հող նախապատրաստեց նաև երկրում միապետական կարգերի վերացման համար:

Այսպիսով, ՀՂե-ի իշխանությունն իր ձեռքը վերցնելուց հետ

միանգամայն պիտակցված ձևով աստիճանաբար վարկարեկեց հին կուսակցություններին, որպես վերափոխիչ շարժման դեմ եղիպատական հետադիմության պլանվոր դորժիքի և, պարբերաբար հարզածներ հասցենելով, արդին 1952 թ. վերջին փաստորնն կազմալումէց նրանց դորժունակությունը: Այս առումով բացարձակապես սխալ է Ս. Օքաշայի այն պնդումը, իր Ազատ սպաները հավատում էին, որ կուսակցությունների զեկազմաները շահապրագոված են վերափոխություններով և այդ պատճառով ոմի կողմ բաշվեցին և ոկտոբերի գիտել նրանց գործունեությունը<sup>53</sup>, նաև ու ու իր կողմնակիցները հենց սկզբից էլ համազվեցին, որ կուսակցությունների գրաված դիրքը, երկիրը վերակառուցելու ձգուման հաւելում, միտական էր, բայց բուրժուական ազատությունների սովոր երկրում միանգամից կուսակցությունները ցրելը կդիտվեր իրեն ուղղմական դիմուտուրայի հաստատում, որը հղի կլիներ ամեն տեսակ անակընկալերով: Աստիճանաբար հարզաֆներ հասցնելով, արդին 1952 թ. աշխանը կուսակցությունները փաստորնն և կազմակերպութեան, և գաղափարապես շահարախաված էին: Այս բանն իր օրինական ձևակերպութեանցամ 1953 թ. հունվարի 16-ին ընթանած որենքով, որով բոլոր կուսակցությունները լուծարքի էին ենթարկվում, բացի Մուսուլման եղբայրներ կազմակերպությունից: Կուսակցություններին պատկանող բոլոր ֆինանսական միջոցները բռնազրավում էին պետության օգտին<sup>54</sup>, նախան այդ, հունվարի 16-ին վարչապետ Մ. Նազիրը հայտարարեց, «Քանի որ կուսակցություններն իրենց հին ուղու վրա են և հետագեմ հայցքներով մեմ վտանգ են ենթարացնում երկրի գոյության և ապագայի համար, դրանից ենենքով, և հայտարարում եմ, որ այսօրվանից լուծարքի են ենթարկվում բոլոր քաղաքական կուսակցությունները»<sup>55</sup>: Տիե կուսակցությունների ցրումը եղբափակեց 6 ամիս տևած զաժման պայքարը եղիպատական հետադիմության առավել խոշոր ուժերին դեմ: Եղիպատական հեղափոխությունն իր ժամանակ հերացրեց բուրժուակարգվածառիքական վերնախավի ստեղծած բռլոր հիմնական իտլինգութեան:

### 3. ԱԼԵՈՒԹՅԱՆ ԺԱՐԱՎԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ Ը ՀԱՄԱԿԱՌՈՒԹՅԱՆ ՀՈԶԱԿՈՒՄԸ

Երկրի հասարակական հիմները և կազմակերպությունները վերաբերած էին, մինչև այժմ ժխտվում էր հինը, իսկ ո՞րն էր այլուղին: ՀՂե-ն, պարզ է, չէր կարող անվերը փոխարինել պառամենտին: Բացի

այդ, զինվորականները նախապես արդեն հայտարարել էին, որ գետը բարին տեղի կունենան պառամեջնուական ընտրությունները Իսկ այժմ կուսակցությունների ցրումով այդ բանն արդեն անհնար էր դառնում, քանի որ երկրուած չկար գոնք մեկ հասարակական-քաղաքական կազմակերպություն, որի առաջադրած կոնկրետ նպատակների և լոգունգների վրա հենված՝ երկրը զարգանար որոշակի ուղղությամբ 9. Ա. Նասերը և իր ընկերները պարզորոշ գիտակցում էին ստեղծված գրությունը:

1953 թ. հունվարի 13-ին կազմվեց նոր Սահմանադրության նախագիծը մշակող հանձնաժողովը: Այն կազմված էր 50 մարդուց, որոնք կուսակցական և անկուսակցական հայտնի հին գործիչներ էին, և հոգի վաֆդականներ էին, 2-ը՝ լիբերալ-սահմանադրականներ, 2-ը՝ սաադականներ, 3-ը՝ Ազգային կուսակցության անդամներ, 3-ը՝ մուսուլման եղբայրներից, 2-ը՝ նոր ազգային կուսակցության անդամներ, ինչպես նաև եղիպատական հասարակության տարրեր խավերը ներկայացնող իրավաբաններ, նախկին մինիստրներ, քժիշկներ, դասախոսներ և այլք: Հանձնաժողովի կազմում կային նաև 3 զինվորականներ<sup>55</sup>: Հանձնաժողովի այս խայտարգետ կազմն իր կնիքը գրեց նրա հետագա գործունեության վրա, ինայսու նրա կազմման դեկրետում կոնկրետ նշված էր, որ նոր Սահմանադրությունը պետք է համապատասխանի հեղափոխության նպատակներին<sup>56</sup>: Այս հանձնաժողովն իր աշխատանքներն սկսեց հունվարի 15-ին և առաջին նիստում նախագահ ընտրեց նախկին վարչապետ Ալի Մահմետին: Արդեւ Ռահման առ-Ռաֆիին ասում է, որ հանձնաժողովի կողմից ճշուացյին մի հանձնախմբի, որը կազմված էր հինգ հոգուց, որոնցից մեկն էլ ինքն էր, հանձնարարված էր ուսումնասիրել՝ պետական ո՞ր կարգն է հարմար նպաստութիւն՝ միապետությունը, թէ հանրապետությունը<sup>57</sup>, Անկանութ այս հարցը հազիզ թէ բխեր սահմանադրի: Պետք է ննթադրել, որ ՀՀնեա այդ ժամանակ արդեն ներքին համաձայնության էր ենթակա վերացնելու միապետությունը, որպես երկրի զարգացմանը խոշընդուռող գործոն:

Հունվարի 16-ի վերը նշված իր նիւյրում ՀՀնեա նախագահ և վարչապետ Ա. Նասերը հայտարարեց, թէ երկրի հայունությունն ապահովելու համար հաստատվում է եռամյա անցումային մի ժամանակաշրջան, մինչև որ հնարավոր լինի ոգեմոկրատական, սահմանադրական նորմայց մի իշխանության ստեղծումը: Երկրի ամրող գործադիր և օրենսդիր իշխանությունը մինչև այդ ժամանակաշրջանի վերը իրականացնելու էին ՀՀնեա և կառավարությունը: Ի դեպ, արդեն փետրվարի 10-ին ընդունվեց 11 հոդվածներից բաղկացած ժամանակավոր սահմանադրությունը:

Նադրությունը, որով իշխանությունը կհնարոնացվում էր այդ երկու մարմինների ձեռքբերում<sup>69</sup>,

Այսպիսով, զինվորականները, որոնք նախապես խոստացել էին վեց ամսից Հայո իշխանությունը հանձնել պառատենտին, առենիլով, որ այդ բանը չական ոչ մի նոր բան չի տա երկրին, ստիպված էին իրենց իշխանությունը երկարաձգել ևս երեք տարով:

Հայտնի է, որ ՀՂե-ի բոլոր միջոցառումները հրապարակվում էին Մ. Նազիրի ամուսից և նա էր ամեն առիթով նըութեար ունեցողն ու ըստանիարիների առջև զիրք զբաղողը: Բայց Հայտնի է նաև, որ Հատկապես 1952-ի սեպտեմբեր ամսից սկսած ՀՂե-ի անդամներն ազնիլ ու ազնիլ ակտիվորնն էին ելութեար ունենում, հանգամանք, որ ի վերջո նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Հայտնի գործոց բանակային շարժման իրական զեկազարներին: Այս գործության մեջ Մ. Նազիրն ակտեց իր բազականին բարդ խաղը: Նա էր կարող ՀՂե-ին անտեսել իր գործունեության մեջ, բայց և շեր կարող անտեսել, որ իր գիրքերը գեալով թուլանում են: Մի գիշերվա մեջ հերոս գառնալով և Ազատ սպաների շանքերով մեծ հեղինակություն ձեռք բերելով ժողովրդի մեջ, նա այսուամենայիդ հեռու էր բանակային շարժման բուն իմաստն ըմբռնելուց: Նա կարծում էր թե այդ շարժման լավագույն ժառանգությունը կլինեին պառամենատական կարդի վերահսկուումը և բուրժուական ազատությունների վերահսկատառությունը<sup>70</sup>: Անցած ժամանակամիջոցում նրա Հակառակությունները նաևների և ՀՂե-ի հետ հանդում էին հիմնականում ուրոշ զինվորական և քաղաքական գործիչների ձերբակալություններին ընդդիմանալում<sup>71</sup>: Եզ առա, երկրի գործադիր և օրենսդիր իշխանությունը նա սկսեց անվանապես զիխավորել: Արևմայշան մամուլն այս բանը դնահատեց իրեն նազիրի հաղթանակը անկայում գրությունից Սպիտառոփ դուրս գալու ուղղությամբ: Լուսողնի շթայմաք գրում էր: «Միջոցառումը, որը ձեռնարկեց Մ. Նազիրը, իր մեջ կրում է առավել ամուր հիմքերով և կայունությամբ մի անկողմնակալ իշխանության կանխատեսությունը»<sup>72</sup>: Արարական ձախ ուժերը սահմանադրության և կուսակցությունների վերացումը նցիպառասմ-այդ նույն ժամանակ զնահատում էին իրեն ուղմական զիկուատուրայի հաստատումը: Եթե անկողմնակալուն մոտենանք Հարցին, արտաքին կողմով դա այդպես էր: Ազիպառական բանակային շարժման ընթացքի անհայտությունն անհնարին էր գործունեմ ճիշտ գնահատել, կամ կանխատեսել այդ շարժման իրական ուղղվածությունը: Սպիտական հեղափոխությունն սկսվեց յուրօրինակ ձևով: Նախ հեղաշրջում, թագավորի վարում, բայց ոչ միապետա-

կան կարգերի տապալում, կազմաժառիքական կարգերի խարխլում, բայց ոչ կազմածառիքության վերացում, ազգային արդյունաբերության խթանում, բայց հոգանազորության ազգային բուրժուազիային և ստարերկրյա կապիտալին: Ազ առա սրանց կողքին, երբ վերացան բուրժուական ազգատությունները և դրանց հիմունքներն ու կազմակերպությունները, երբ զինվորականներն ամբողջ իշխանությունն իրենց ձեռքքը կենտրոնացրին, երբ փաստորներն բացակայում էր երկրի զարգացման այլուրին, ապա դժվար էր նգիպտուսում տեղի ունեցածը այլ կերպ գնահատել: Դրա համար ժամանակ էր Հարկավոր: Բայց ճպիպտական հեղափոխության այս յուրօրինակ ընթացքը պատահականություն չէր: Այն պայմանավորված էր երկրի իրականության ներքին գործուներով: Այդ իրականությունն ամբողջ ժողովրդի մեջ դարձր շարունակ ներծծված լինելով, անհնար էր դարձնում մի Հարգածով վերացել այն բոլոր հիմունքները, որոնց վրա հանում էր ճպիպտական հասարակական և սոցիալ-աշխատական կյանքը: Ավելորդ է ասել, որ զինվորականներն իրենք էլ լինելով այդ իրականության ժնունդը, իրենց ազնիվ և արդարամիտ մուադրություններով հանդերձ, միշոցառումների էրն դիմում միայն այն գեպքում, երբ կենսափորձով համոզվում էին ավյալ միշոցառման անհըրաժեշտությունը և անհետաձգելիությունը:

Այս իրողությունն էլ զինվորականներին կուսակցությունների վերացումից հետո տարագ քաղաքական մի կազմակերպություն ստեղծված է, որն հանդիսանալու էր, ըստ նրա կազմակերպիչների մասնակիությունների, նոր վարչակարգի քաղաքական հենարանը: 1953 թ. Հունվարի 23-ին ելույթ ունենալով հեղափոխության վեցամյակի առթիվ Կահիրենի աթ-Խաջրիր հրապարակում տեղի ունեցած հանդիսությունների ժամանակ, Մ. Նազիրը հայտարարեց, որ այնու հանցագործություն է թույլ տալ կուսակցական հակամարտությունների շարունակումը, և որ ամենը որոշեցինք սկսել ակզրից և ստեղծել մի կազմակերպություն, որը կարտահայտի ժողովրդի միասնությունը, կոորդինացնելու տարրեր ասպարեզների աշխատավորների շանթերը<sup>14</sup>: Այդ կազմակերպությունը կաշվեց Ազատազության կազմակերպություն: Փետրվարի 8-ին կազմակերպության նախագահ դարձավ Գ. Ա. Նասերը: Նախան այդ, հունվարի 18-ին, հրապարակվել էր նոր ստեղծված այդ կազմակերպության ծրագիրը: Այն հանդում էր հետեւյալին:

1. Ստար գործերի լրիվ և անվերապահ գուրսրերում նեղոսի հոգաւից

2. Խքնորոշում Սուլանին:

3. Մի նոր սահմանադրության ընդունում, որն արտահայտի եղագատական ժողովրդի ձգտումները:

4. Մի սոցիալական համակարգի ստեղծում, որով բոլոր քաղաքացիները իրավունք կունենան պաշտպանվելու դորժազրկությունից, հիվանդություններից և ժերաբչությունից:

5. Մի անտեսական համակարգի ստեղծում, որը կապահովի հարցառության հավասար բաշխումը, մարդկային և բնական ռեսուրսների ամրագրական օգտագործումը և այդպիսով նոր կապիտալների առաջնադրույթը:

6. Մի քաղաքական համակարգի ստեղծում, որով բոլոր քաղաքացիները հավասար կլինիկ օրենքի առն և որով խոսրի, հավաքությունների, մամուլի և կրոնական համակարգների ազատությունը կերացիավորվի օրենքի սահմաններում:

7. Մի կրթական համակարգի ստեղծում՝ զարգացնելու համար հասարակական պատասխանատվության զգացումը, որպեսզի երիտասարդությունը, գիտակցելով ինչպես իր իրավունքները, այնպես էլ իր պարտականությունները, հասկանա, որ երկրի համար արտադրության աճը կհնարինակարգակի բարձրացնան նախապարհանն է:

8. Բարեկամական հարաբերությունների հաստատում բոլոր արարական պետությունների հետ:

9. Մի ռեզիստալ ուժի ստեղծում՝ Արարական լիդայի աղեցությունը ուժեղացնելու համար:

10. Բարեկամական հարաբերությունների հաստատում բոլոր քաղական երկրների հետ:

11. Անփոփոխ հավատարմություն ՄԱԿ-ի սկզբունքներին և հատկապի կախյալ ժողովուրդների շահերի նկատմամբ<sup>25</sup>:

Ազատագրության կազմակերպության լուսնական էր՝ ոՄիտթյուն, կարգապահություն, աշխատանք:

Ինչպես ահմեռում ենք, Յ-րդ և Ե-րդ կետերում նոր կազմակերպությունն իր նպատակն է համարել նոր սահմանադրության և նոր քաղաքական համակարգի ստեղծումը Բայց այս 2 կետերն էլ փաստորեն ուշինչ չեն առում, թե ի՞նչ է իմունքների վրա է կազմվում նոր սահմանադրությունը, կամ ի՞նչն է որոշելու քաղաքական այդ նոր համակարգի բովանդակությունն ու ձեզ եթե արտաքին քաղաքական հարցերը հիմնականում կունիրեն են դրված, ապա սոցիալ-տեսական ու ներքաղաքական համակարգին վերաբերող զրույթները փաստորեն պարզուց չեն: Անդրագանական Ազատագրության կազմակերպությանը ի. Գ. Բել-

յանն իր մի հոգվածում նշում է, որ այս Շ...ամենանդույնն էր այն բոլոր քաղաքական կազմակերպություններից, որոնց ծրանան նկան քանակային սպաների 1952 թ. հուլիսի 22-ի գիշերվա Հարողությունից հետո<sup>55</sup>, Անշուշտ, այս կազմակերպության ծրագրի անարտահայտիչ զրույթներն արդյունք էին Ազատ սպաների և, մասնավորապես, նրանց առաջնորդ Գ. Ա. Նասերի քաղաքական և գաղափարական ոչ լիարժեք սկզբունքների մշակվածության, որը գայիս էր նրանց երիտասարդությունից և փորձի պահաժողով Բոլոր դպրերում, այս կազմակերպությունը, լինելով ծգիպտական ազգային-դեմոկրատական Հեղափոխության առաջին հաստատությունը, իր ստեղծումով խորհրդանշեց Հին քաղաքական-գաղափարախոսական ուղղությունների միատարր և նոր ուղղության սկիզբը։ Եռառողջ երկրի տարրեր քաղաքներում ու նահանգներում սկսեցին Հիմնադրության կազմակերպության հեներաներուց 1953 թ. գարնանը ելույթներ սմբնալով նոր բացցող այդ կենտրոններում, Գ. Ա. Նասերին ամեն առիթով բացատրում էր, որ Ազատության կազմակերպությունը քաղաքական կուսակցություն չէ, այլ զորքիք՝ կազմակերպելու համար ժողովրդի ուժը վերակառուցելու իր հաօպակարգը նոր և առողջ հիմքերի վրա։ Նա ուղղություն տալով ժողովրդական պայմանների ասում էր, «Մեր թշնամիներից առավել թշնամականը երեքն են. Հասարակական Ընդունը, քաղաքական ստրուկտուրը և բրիտանական տիրապետությունը»<sup>56</sup>։

Բանակային շարժման մի առանձնահատուկ կողմն էր անհնդուր ժողական վերաբերմունքն իր իրական և երրեմն կարծեցլալ թշնամիների դեմ։ Նթե Եղիպտական Հետապիմության հրահրուառով Ռաֆաթ Շալարի<sup>57</sup> (անդամներին) և Դամանհուրի եղբայրները (Հունվարին) բանակում խռովություն դրդելու համար իրենց արժանի հակառարվածն ստացան, եթե Ռ. Մահանեան, դեմ կանգնելով ՀՂե-ի Հեղափոխական դժին, անցավ նրա հակառակորդների շարքը և բանակում խռովակշությունների ու զեկավարությունը զավթելու մեղադրանքով իր խմբի անդամների հետ արժանիորնեն դատապարտվեց բանադրեկության<sup>58</sup>, ապա ոչնչով արդարացված էր այն դաժան վերաբերմունքը, որ նա ունեցավ Թաֆր աղ-Դավթարի մանաթագրժարանների բանվորների նկատմամբ<sup>59</sup>, ՀՂե-ն փառորին այդ ժամանակ շարունակում էր վարել նախորդ վարչակարգի հետապնդումների և Հալաժանքների քաղաքականությունը կումբասների հանգեց, երկրի առաջադիմական ուժերի հանգեց։ 1953 թ. Հայիս-Հունիս ամիսներին ձերբակարգեցին և բանու նետքեցին։ Եղիպտոսի խաղաղության կողմնակիցներից շատերը, այդ թվում նազարության կողմնակիցների ազգային կոմիտեի նախագահ Իբրահիմ Ռաշազը

և զիմավար քարտուղար ծուսութ Հոլմին։ Փակվեց նրանց թերթը, որը կոչվում էր «աշ-Քաթիրութ»։ ՀՂե-ին այս համահամասար անհանդուրժողական վերաբերմունքը երկրի աշ և ձախ ուժերի նկատմամբ անտարակույս բիում էր այն բանից, որ ամեն տօսակէ ելույթների մեջ նրանք պինդորական ուղղամտությամբ տեսնում էին սպառնալիք իրենց շարժման ապագային նկատմամբ։

1953 թ. հունիսի սկզբին սահմանադրական հանձնաժողովի ուժինդի հանձնախումբը ՀՂե-ին ներկայացրեց նգիպտոսի պետական կարգի վերաբերյալ իր զննուցազիրը։ Զննուցազիրը Հեղինակները, վկայակոչելով աշխարհի շատ երկրներում միապետական կարգերի աստիճանական գլուզումը և վերըստեղծով Մուսամեդ Ալիի հարատության թագավորների իշխանության շարադաշումները նգիպտոսի վերջին 150 տարվա պատմական ժամանակահատվածում, այլևս նպատակահարմար չէին գտնում երկրում միապետական կարգերի գոյատեսմը և առաջարկում էին հանրարգն անցկացնել երկրում հանրապետական կարգ հաստատելու համար։ ՀՂե-ին, որը ժամանակափոր սահմանադրությունն ընդունելուց հետո իշխանությունն ամրողապես իր ձեռքն էր վերցրել, ինչպես երևում է, անհամեշտ շգուազ այդ հարցի առթիվ լայն հանրաքնն անցկացնել երկրում, քանի որ այն բիում էր երկրի զարգացման շահներից։ Արգելա ՀՂե-ի իշխանության ամրապնդման արդյունքը, հունիսի 18-ին նրա մի շարք անդամները կառավարության և բանակի մեջ գրավեցին որոշիչ պաշտոններ։ Գ. Ա. Նասերը վարչապետի տեղակալի պարտականությունները, ֆոխվագուադն Ա. Լ. Բաղդադին դարձավ ուղղական մինիստր, մայոր Սալահ Սալիմը, որը 1952 թ. նոյեմբերից զիյավորում էր նոր ստեղծված ազգային կողմնորոշման մինիստրությունը, դրան ավելացրեց նաև սույնանական գործերի պետական մինիստրի պաշտոնը, մայոր Աբդել Հաջիմ Ամերը ստացավ թրիգագալին գծներայի աստիճան և դարձավ նգիպտոսի զիյաված ուժերի զիյավոր Հրամանատար։ Ալժմ արդին կարելի է ասել, որ ՀՂե-ի ամրողապես իր վերահսկողությունն հաստատեց կառավարության վրա։ Նույն օրը ՀՂե-ի որոշում կալացրեց վերացնել թագավորական վարչակարգը, նգիպտումը հըլլակել հանրապետություն և գններալ Մ. Նազիրին նշանակել երկրի պետքանիշներ՝ տժամանակավոր սահմանադրության հոգանու ներքու, մինչև որ կընդունի նոր սահմանադրություն և կընտրվի նոր պրեզիդիւնտ։ Որոշումը, որը հրապարակվեց նույն օրը, ստորագրել էին Մ. Նազիրը, Գ. Ա. Նասերը և ՀՂե-ի տաս անդամներ։ Անկանագ, հանրապետու-

թյան հուշակումը տպավորիչ և խորհրդանշական փաստ էր եղիպտական ժողովրդի կյանքում, միաժամանակ այն անսպասելի չէր և իրականում հասունություն էր հետազիմության դեմ մղվող անցած ամիսների պայքարի ընթացքում։ Երբ Հունիսի 17-ին «ալ-Ահրամի» թղթակիցը Գ. Ա. Խասերին հարցրեց, թե ճիշտ են արդյոց այն լուրերը, որ Եգիպտոսը հանրապետություն է հռչակելու, նա պատասխանեց. «... Հանրապետությունն ինքն անկատած դալիս է...»<sup>75</sup>, Հանրապետության գոլակումը խորհրդանշականորեն իր ավարտին հասցրեց Եգիպտական ազգային դեմոկրատական հեղափոխական ուժերի՝ հանուն իրենց իշխանության ամրապնդման մղած պայքարի առաջին խոշոր գոտեմարտը 1952 թ. հունիսի 26-ից հետո, Եգիպտական հանրապետության առաջին պրեզիդիում դարձագ Մ. Նազիրը, պահպանելով միննույն ժամանակ վարչապետի և ՀՊՀ-ի նախագահի իր պաշտոնները։

#### 4. ՎԱՅՐԱՅԻ ԴՈՅԵՄԱՐՏԻ ՆԱԽՕՐԵՄ

Եգիպտական-հասարակության համար արդեն հստակ կերպով հայտնի դարձագ, որ հին կարգերն անվերադարձ անցան պատմության զիրկը։ Սակայն հետազիմությունը, չեղորհիվ Վաֆդի մեծ հեղինակության և մուսուլման եղբայրների ընդուայնվող ազդեցության և իշխանության նկատմամբ ունեցած հավաքիությունների, սկսեց իր գեմագոգիկ արշավը ընդգեմ զինվորականների բղիկատուրային, հանուն Շահմանադրությանց և տեղմոկրատիային վերականգման, այսինքն՝ հանուն պառամենտական հին կարգերի։ Աթե Հաշվի առենքնք, որ ՀՊՀ-ն անցած ժամանակամիջոցում վարում էր համեմատարար որոշակի սկզբունքներից գործի և բավականին իներտ արտաքին քաղաքականություն, որ սոցիալ-տնտեսական ասպարեզում նրա գործունեությունը գլուխական շրջաններում ստեղծել էր բառուային իրադրություն (ոչ առանց խոշոր հռչատերների զանցքերի) իսկ արդյունաբերության մեջ օրավուր ընդլայնվում էին ազգային բուրժուազիային տրվող արտօնությունները, որ նա բանվորական շարժման և դեմոկրատական այլ ուժերի նկատմամբ, մեղմ ասուծ, անբարյացակամ վերաբերմունք ուներ, ապա զարմանալի չէ, որ պինդորականների վարչակարգի հաստատմանը ընդդիմացողների թվում էին նաև Եգիպտական համար ուժերը, որոնք այդ վարչակարգի հաստատման մեջ տեսնում էին ազգային բուրժուազիայի հաղթանակը։ Տվյալ դեպքում շարժառիթներն, իշարկե, միանգամայն տարբեր էին և

այսպես ասած «միասնական ընդդիմադրության մակառա չեր ստեղծվել մի կողմից Վաֆդի, մյուս կողմից մուսուլման եղբայրների և երրորդ կողմից ձախ ուժերի միջև, ինչպես ձգութամ են ներկայացնել որոշ բուրժուական պատմաբաններ<sup>70</sup>: Վերսում մենք խոսեցինք այն համգամանքների մասին, որոնք կանխարժուցին եգիպտական ձախ ուժերի դիրքը նոր վարչակարգի նկատմամբ: Պարզ էր նաև Վաֆդի դիրքը: Ինչ վերաբերում է մուսուլման եղբայրներին, ապա հանգամանքներն ու շարժառիթները որոշակիորեն այլ բնույթ ունենին: Թաճակային հեղաշրջումից անմիջապես հետո մուսուլման եղբայրները, որոնք չին վարչակարգի որոք հարածվում էին իրենք ժայրանեղականներ և քաղաքական աշարհի շրջան կողմնակիցներ<sup>71</sup>, դորժենու ազատություն ստացան: Այնուամենայնիվ մուսուլման եղբայրների առաջնորդ Հասան ալ-Շողեյրիի և Գ. Ա. Նասերի միջև որոշակի տարակարժություններ առաջացել էին գեռ հոգային բարեփոխումների օրենքի ընդունումից առաջ և շարունակվում էին դրանից հետո, երբ Հ. ալ-Շողեյրին ձգուում էր վերաճակողություն հաստատել ՀՂե-ի և կառավարության վրա<sup>72</sup>: Բայց պինդուական իշխանության ամրապնդմանը զուգահեռ ալ միայն անդրականացի էր դառնում բանակային շարժումը թեսկրատական մի պետություն ստեղծելու դորժին ծառայեցնելը, այն ՀՂե-ն, իր հերթին, որոշակի քայլերի էր դիմում այդ կազմակերպությունը աստիճանաբար իր հակագոռի տակ առնենու: ուղղությամբ: 1953 թ. օգոստոսին Մուսուլման եղբայրների կազմակերպության անդամ ալ-Բաշի ալ-Խուլին ՀՂե-ի կողմից նշանակվեց այդ կազմակերպության և Ազատագրության կազմակերպության կապի ծառայության պետ և վերցինիս կրոնական կողմնորոշման անօրին<sup>73</sup>: Եվ սա կատարվեց շրջանցնելով Հ. Շողեյրիին: Զնայած վերոհիշյալ Հանգամանքներին, մուսուլման եղբայրների հարաբերությունները ՀՂե-ի հետ 1953 թ. աշնան սկզբին արտաքնապես դեռ մնում էին բավականաշատ սերտ:

Մյուս կողմից, Մ. Նազիրը, որը երկրում պարագում էր բոլոր բարձրագույն պաշտոնները, և չնարած դրան, գցում էր իր դիրքերի խախուս լինելը, ձգուում էր Գ. Ա. Նասերի հետպհետն անող հեղինակության հանդեպ պինդուականների մեջ ստեղծել իր հենարանը: Անկասկած, հատկապես հունիսի 18-ից հետո, երբ ՀՂե-ի որոշ անդամներ կառավարության և բանակի մեջ գրավեցին կարևոր պաշտոններ, երբ Նազիրը փաստորեն հեռացվեց բանակային գործնրից, ևս որոշակիորեն դգաց, որ ինքն այն դառնալու է Գ. Ա. Նասերի և ՀՂե-ի կամքը կատարողը: Միշազգային հասարակական կարգիքն այդ լիրերալիստական հայացք-

Ների տեր զինվորականին անվանում էր ռազմակառարց, իսկ իրականում գառամոյ զններալը հուսահատ չանքեր էր թափում իր նրեակալական իշխանության հենարաններ գտնելու համար: Գ. Ա. Խասերը, որը այդ ժամանակ քաղաքական գործունեության բարձականին փորձ էր ձեռք բերել, բառացիորեն կաշկանդել էր զններալին: Սրբեակ, երբ օգոստոսին Մ. Խագերը փորձեց մարդարձի գերեզմանին ուխտի զնալ Կահերեի կայազորի պետ, Խասերի հակառակորդ գնդապետ Ահմեդ Շավկիի հետ, Խասերը դրա մեջ տեսավ պատճեցիալ սպառնալիք և պրեզիդենտի հետ ուխտի ուղարկեց իր զինակիցներ Սալահ և Գամալ Շալիմերին ու Հուսեյին Շաֆիին<sup>20</sup>:

Չեալած խոշոր հոգած հոգած հասցված հարվածներին, չնայած որոշ հին գործիշների ձեռքակալություններին, եղիպատական հետադիմությունը դեռ շատ խոշոր ուժ էր ներկայացնուած երկրուած: Հին վարչակարգի զեկավար գործիշների մեծ մասը օգտագործելով պետական բյուրոկրատական հին, բայց գործող ապարատի և երկրի հասարակական գործունեության վրա իր ազդեցությունը, ամեն կերպ չանուած էր ՀՊՀ-ին հետացնել իշխանությունից: Դեմադովիկ պահանջներով երանք երկրուած արհեստականորեն շիկացնուած էին որությունը՝ տարփողելով Սահմանադրությունը, դեմոկրատիան և ազատությունները: Բացի այդ, 1953 թ. ամռան արդեն նախանշաններ կային, որ Վաֆդի զեկավար գործիշները և մուսուլման եղբացները, մի կողմ թողնելով իրենց հակամարտությունները, ակառամ են միավորվել ընդդիմագիր մի նակատի մեջ: Մուսուլման եղբայրների գագուռությունը ՀՊՀ-ի հանդեպ գնալով անուած էր: Խրանց ոչ մի կերպ չէր հարողվուած իշխանությունն իրենց մեռքն առնել, մի բան, որ նրանք ժամանակի խնդիր էին համարուած մինչև հանրապետության հոչակուամը: Ահմեդ Աբուլ Ֆաթը միանգամայն որոշակիուորեն ասուած է, որ Մ. Խագերը զնմ էր միապետության վերացման գողափարին: Իշխանատնն զայթակդությամբ համաձայնելով զառնալ պրեզիդենտ, ևս ընդդիմանուած էր զինված ուժերի պիլտուոր հրամանատարի պաշտոնը թողնելուածը: ՀՊՀ-ի և նազիրի այս առաջին խոշոր տարածայնությունը վերցինիւ զարձրին այն առանցքը, որի շատրվը սկսեց հյուսվել հետադիմության դավագրասությունների ցանցը: Աւս նազիրի ՀՊՀ-ի հետ անեցած ալս ընդհարման ելքը կանխորոշեց մուսուլման եղբայրների իշխանության հավակնությունների անիրականալիքությունը, ինչն էլ եղիպատական այդ միակ հին լիգալ քաղաքական կազմակերպությանը աստիճանաբար տարած համարլուու եռոր վարչակարգի ընդդիմագիրների շարքերը: Մեզուեմբերի սկզբներին ՀՊՀ-ին հայտեի զարձագ, որ չին

վարշակարգի որոշ զննավար գործիչներ կապեր են Հաստատել բրիտանական դիսուզանության հետո<sup>25</sup>, Դրան ի պատասխան, կարծեն ֆրանսիական մեծ Հեղափոխության օրինակով, սեպտեմբերի 13-ին ՀՂե-ն որոշում կայացրեց ատեղեն Հեղափոխության տրիբունալ, որի նախագահ սեպտեմբերի 16-ին նշանակվեց Ա. Լ. Բաղդադին, անգամներ՝ Հասան Իրրաշիմը և Մ. Ա. Սադաթը Տրիբունալը առաջին նիստը գումարելով սեպտեմբերի 26-ին շարումնակեց իր գործումնությունը մինչև 1954 թ. Հունիսի 20-ը։ Հեղափոխության տրիբունալի կողմից այդ ընթացքում դատապարտվեցին հին վարշակարգի մի շարք այլի ընկերող գործիչներ, այդ թվում՝ նախկին վարչապետ Իրրաշիմ Արգել Հազին, նախկին մինիստրներ Ֆ. Սիրազ Էդ-Դինը, Մահմետ Սուլեյման Ղանամը, Իրրաշիմ Ֆարազը, Ֆարուկի մերձավորներից իշխան Արաս Հալիմը, Ահմեդ Նակիրը, Մահմետ Հիլմի Հուսեյնը, Ֆարուկի մամուլի գեռջ Խորհրդական Քարիմ Թարիմը, Կահիրեկի նախկին նահանգապետ Մուհամեդ Քամիլ Կամիլը, այլի ընկերող լրագրողներ՝ Մահմետ և Հուսեյն Աբուլ Ֆաթհ եղբայրները, Աբուլ Խայր Նազիրը, Մահմետ Շուքրին և ուրիշներ, Սրանց գետ Հարուցված մեղադրանքները հանգում էին Հիմնականում կուսակցությունների դամանը, Հողային բարեփոխումների որենքին ընդդիմանալուն, նախկին իշխանության մեջ սեփական դիրքերի և աղղեցության շարադահմանը, ոչ պիտանի դեմքի զնման գործում ունեցած մասնակցությանը։

Վերահիշյալ գործիչների մի խոշոր մասը վաֆդականներ էին, սակայն վաֆդի Հեղինակությունը սաստեց նույն երա առաջնորդ Մ. Նահհամի արինուշ, Զուլյանի՝ Ջեյնար ալ-Վարիլի սկանդալային գործը։ Զուլյան, լինելով ձեռներից կին, կարողացել էր իր և իր ընտանիքի շահերին ժառաշույնել ամուսնու պաշտոնն ու դիրքը, ոչ օրինական ճանապարհով կուտակել մեծ հարստություն։ Հեղափոխության տրիբունալը այս գործը վարելով բացահայտ ազմուկով, պատուց հին կուտակցություններից առաջել դորեցի սպատվագոր նախագահը անձի շուրջը հյուածած լուսապահը։

ՀՂե-ն 1953 թ. աշնանը շարումնակում էր իր դիրքերն ամբապնդել իշխող բարձմանքներում։ Հոկտեմբերի սկզբին ներքին գործնորդի մինիստր նշանակվեց Զ. Մոհի Էդ-Դինը, կոմունիկացիաների մինիստր՝ Գամալ Մալլիմը։ Ազգային գվարդիայի հրամանատար նշանակվեց Թամալ Էդ-Դին Հուսեյնը։ Միաժամանակ ձգտելով թուլացնել Մ. Նազիրի դիրքերը։ ՀՂե-ն երա հողմնակից, Կահիրեկի կայազորի պետ Ահմեդ Շամկիին ազատց իր պարտականություններից, բանի որ ու, ելույթներ ունենալով, պըն-

ոռում էր, որ ըրանակը պետք է վերադառնա զորանոցները՝ և տեղը զիշի  
պառզամենտին: Բացի այդ, նա աչ ու ձախ բացահայտորեն քենադա-  
տում էր ՀՂեղին և Նասերին, Ալդ Խույն ժամանակ, ՀՂեղի անդամեների  
և Ժամանակորապես Գ. Ա. Նասերի հղույթներում, աստիճանաբար վերա-  
նում են պառզամենտի վերականգնման անհրաժեշտության մասին խոս-  
քերը: Այժմ Գ. Ա. Նասերն ավելի շատ խոսում է Հղույթը մաքրագործ-  
ման մասին՝ կոչ անելով եղիպատացիներին իրենց սրտերից հանել քենը,  
նախանձը, առելությունն ու անհանդուրժականությունը: Նրան ամեն  
տեղ քննօւնում են ծափերով: Բայց նա ամեներին շարունակ բացարում  
է, որ ժափառարություններով ոչինչ չի իրականացվում, Ամեն մի եղիպա-  
տացու ինդիրն է պատասխանատվության իր բաժինը վերցնել երկրի  
ապագայի նկատմամբ: Երկիրը զեմոկրատական ուղիղով կարող է զար-  
գանալ միայն, եթե երա ժողովուրդն ազատազրկի շահագործումից,  
անհետական հետամնացությունից<sup>36</sup>: Միաժամանակ զգացվում է, որ  
Գ. Ա. Նասերը մեծ շանչեր է թափում Ազատազրության կազմակերպու-  
թյան զանգվածային ընույթ, երա անդամների նախաձեռնությունը լայն  
հարավորություն տալու համար:

1953 թ. աշնան ամիսներին Նասերի և իր զինակիցների ելույթները  
բավականաշագի պարզուոց ընդգծում էին, որ Հեղափոխությունը իրա-  
կանացնողները փառքի և իշխանության համար չեն գործել, որ նրանք  
հասարակ ժողովով ծոցից ելած մարդիկ են: Դա կարծես ինչ-որ շա-  
փով Մ. Նազիրին զնում էր անհարմար դրության մեջ, քանի որ նա,  
փաստորեն հին վերեախամին պատկանող մեծահարուստ էր և ամենօր-  
յա փառարանման առարկա: Բայց, եթե զա գումարզում էր Նասերապե-  
տության հաշակումից հետո ՀՂեղի անդամների հետ մշտապես սրվող  
հարաբերություններին, երբ Նասերն այլևս լվատահելով նրան պիտական  
բոլոր գործերի վարումն իր ձեռքն էր վերցրել, զբանով նրան վերապա-  
հելով միայն որոշումների տակ ստորագրողի դերը<sup>37</sup>, ապա նա այլևս չէր  
կարող զգալ, որ իշխանության զույն գոնվելու իր օրերը հաշված են,  
Բայց այս հանգամանքները դորդի միայն երկրորդական կողմն էին,  
Դիխագորն այն էր, որ Նազիրը բայց միշտցներով ձգտում էր սահմանա-  
փակել ՀՂեղի իշխանությունը՝ շխորշելով իր աշակցությունը ցույց տա-  
վերցինիս հակառակորդներին: Դնկանեմբերի Յ-ին Կահիրեի համայս-  
տանում ելույթներով հանդես եկան նա և Նասերը: Իր ելույթում Մ. Նա-  
զիրը, ուսանողների փոթորկալի ժափառարությունների տակ, հայտարա-  
րեց, որ շատով կը բառմի նոր Մահմանադրությունը և կվերականգնը-  
մին պառզամենտն ու ազատությունները<sup>38</sup>, Գ. Ա. Նասերը, ոչինչ լիս-

սելով այդ ժամին, պարզութաշխ կերպով ուսանողներին բացատրեց, որ իշխանության և ծովավորդի ուժը պետք է հավասարակշիռ լինի, եթե ծովավորդը թույլ է, իշխանությանն արդար լինել լի կարող: Այժմ հետագիմությունը, ավատատերերը, ստրկացնողները, կապիտալի աղջեցությունը բանեցնողները փորձում են վերադաբնել այն, ինչ ունեին: Նրանք ուզում են մոլորեցնել ժողովրդին և օգտագործել նրան սճիական նպատակներին համեմու համար: Ազատությունն իրականալի գարձնելու համար պետք է նախապես ազատագրվել բռնապետության և ստրկության հոգերանությունից<sup>27</sup>: Փաստորն նաև բը բացահայտորեն հակառակ նազիրին, ցույց տալով, որ ազատության հին հասկացողությունն այնու պիտանի չէ նպիտական նոր իրականության մեջ:

Բայց նպիտական հետադիմությունը հանձննու վաֆդի գործիչներին և հատկապես մուսուլման եղբայրների, նազիրին լույսայն համաձայնությամբ շնչկացնում էր դրությունը և երկրի հասարակության տարրեր խավերի մեջ դժգոհություն սերմանում ՀՂե-ի նկատմամբ: Դրա արտահայտությունը հանդիսացան 1954 թ. Հունվարի 12-ի դեպքերը: Այդ օրը Կահիրի համալսարանում ուսանողները նշում էին Սուեզի ջրանցքի գոտու ուսանող-համատակների օրը: Մուսուլման եղբայրները և նրանց հետեւը ուսանողները կարծեն խորհրդանշելու համար որ իրենք անցնում են պայքարի իրենց հին ձմին, իրենց ուսերի վրա պահած բերում և նավար Մաֆայիին, որն իրական հայտնի աշարեկիլ էր<sup>28</sup>: Մուսուլման եղբայրների ու նրանց հետևողների գրգռիչ գործումնեությունը պատճառ դարձավ, որ Ազատագրության կազմակերպության տեղական կոմիտեի անդամներն ու կողմնակիցները ընդուարվեն նրանց հետ: Մուսուլման եղբայրները, օգտագործելով մահակներ ու հրազեն, ժեղեցին և միրավորեցին մեծ թվով ուսանողներից<sup>29</sup>: ՀՂե-ն, որն այդ ժամանակ արդեն, անկանակած, առիթ էր փնտրում վերջ տալու Մուսուլման եղբայրների կազմակերպությանը, չհապաղեց օգտագործել ընձեռված հնարավորությունը: Հունվարի 14-ին հրավարակվեց Մուսուլման եղբայրների կազմակերպությունը ցըելու մասին որոշումը: Նազիրը, ինչպես և պետք էր սպասել, դեմ էր արդ կազմակերպության վերացմանը: Նա գեմ գուրս եկավ նաև Հունվարի վերջերին Յ. Միրագ էդ-Դինի նկատմամբ՝ Հեղափոխության տրիբունալի վճռին, որով վերջինս ազատապրկվում էր 15 տարով<sup>30</sup>:

Բայց այս հանգամանքները նշանակալից բան չէին ներկայացնում նազիրի արդեն գիտրվորի վերջերին ձեռնարկած քայլերի հանդապ: Հարցն այն էր, որ 1953 թ. գիտրվարից սկսած նա շանում էր ՀՂե-ի

նկատմամբ սահմանել սեփական վերահսկողություն։ ՀՂե-ն բազմից հարականորեն մերժել էր այդ<sup>91</sup> և որոշումներ էր ընդունում բայց մեծամասնության դիրքի 1954 թ. հունվարի գնապերը հայրենի համար մի ավելորդ անդամ հավատելու, որ Նազիրի կարծիքը որոշիլ լինել չի կարող ՀՂե-ի համար, չնայած նրա դրաված բարձր դիրքերին։

### 5. ԿԱՐԱՎԱՐՈՒՄ ՃՆԿԱԾԱՄԲ ՍԿ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՌԱԺԵՐ ՎՃՈՎԱԿԱՆ ՀԱՐԴԻՆԱՅԻ

Նազիրի աղջեցությունը ՀՂե-ի անդամները թերևս թերագնահատեցին, իսկ Նազիրը զգալով, որ այլև այդ դրությունը երկար շարունակվել չի կարող, հուլիս դրել էր հնաց դրա վրա, երբ փետրվարի 23-ին ներկայացրեց իր հրաժարականը զրադեցրած բոլոր պաշտոններից։ ՀՂե-ն գիտակցելով ստեղծված իրավիճակի լրջությունը, փորձեց համոզել նրան ետ կանգնել այդ ժայրահեղ քայլից։ Այդ բանին հաջորդեց նրա պահանջը՝ իրեն վերապահել ՀՂե-ի բոլոր որոշումների նընկատմամբ վետոյի իրավունքը, մինխստրեներ հշանակելու և ազատելու, սպաներին առաջ քաշելու, պաշտոնանի անելու և ժառայրության վայրը փոխելու իրավունքներ<sup>92</sup>, ՀՂե-ն, փետրվարի 24-ի երեկոյան սկսնելով քննել իրավունքումը, հապաղում էր որոշում քննումնելու Առավոտյան հանդիպելով իրեն սպասող բազմաթիվ բանակային սպաների հետ, որոնք բայց երևույթին անհանդացած էին Նազիրի ստեղծած նզնածամային իրավունքումից, նաև իր խորամանկությունները հայտնեց, որ ինքը և ՀՂե-ի անդամները որոշել են հրաժարվել իշխանություններ, քանի որ այլն չեն կարող համապործակցել Ա. Նազիրի հետ։ Այս քայլը նպատակ ուներ պարզեցնել սպաների դիրքը ՀՂե-ի և նրա իրական առաջնորդի նընկատմամբ։ Նաև իր հայտարարությունը բուռն վրապվմանը առաջացրեց սպաների մեջ և նրանք սկսեցին գուել սանկցի Նազիրը, անկցի Նազիրը։ Մի սպա դիմելով նաև իր հայտարարությունը ասաց. «Դամա՛լ, մենք քեզ կոպաննենք եթե գու հրաժարական տաս։ Մենք կոպաննենք Հեղափոխության նորությի այն բոլոր անդամներին, որոնք կհետեւն քեզ և հրաժարական կտանեն», Ատանալով սպաների աշակցությունը, ՀՂե-ն շարունակեց իր նիստը։ Սալահ Սալիմը 26-ի վաղ առավոտյան (ժամը 3 անց 30 բռնկին) ելույթ ունենալով թղթակիցների առջև ասաց, որ ՀՂե-ն որոշել է ընդունել Նազիրի հրաժարականը բոլոր պաշտոններից։ ՀՂե-ն Գ. Ա. Նաև իր գեկավարությամբ շարունակելու է իշխանությունն իր ձեռքում պահնել մինչև որ իրականացվի հեղափոխության գլխավոր նպատակը՝ գաղութառիքա-

կան զորքերի դուրսրերումը երկրից<sup>24</sup>: Հայտարարվեց նաև, որ Դ. Ա. Նասերը նշանակվել է վարչապետ և երկրում մտցված է արտակարգ դրություն: Սակայն իրադարձությունները շուտով ծավալվեցին ՀՊե-ին և Նասերին աննպաստ ուղղությամբ: Սա պատահական չէր: Առանց զգուշորեն և առտիճանաբար նախադատրաստերու երկրի հասարակական կարծիքը, ՀՊե-ն հանկարծակի բերեց եղիպտական ժողովրդին, երկրի զեկավարությունից հեռացնելով ոչեղափոխության առաջնորդ համարվող Մ. Նազիրին:

Նույն որը ՀՊե-ի որոշման գեմ դուրս եկան Հեծելազորի ապաները, Նրեկոյան 40 սպաներ և. Մոհի էդ-Դինի գլխավորությամբ հավաքվեցին Հեծելազորայինների զորանոցում և պահանջեցին Նազիրի վերադարձը, ՀՊ-ի վաղ առավոտյան նրանց պատվիրակությունը հանդիպեց նազիրի հետ և խողոք նորից կանգնել իշխանության գլուխ որպես հանրապետության պրեզիդնենտ<sup>25</sup>: ՀՊե-ի և բանակի մեջ առաջացած տարակարծություններից օգտվեցին Վահդի կողմնակիցները և մուսուլման եղայրները, որոնք ՀՊ-ին աղմկու ցույցներ կազմակերպեցին՝ պահանջելով Նազիրի վերադարձը: Երկրին ապահովում էր քաղաքացիական պատերազմը: ՀՊ-ն, երկյուղ կրելով դրանից, որոշում ընդունեց Նազիրի վերադարձի մասին, ունշագի միասնականությունը պահպանելու համար Հեղափոխության Նեկավար նորհուրդը հայտարարում է գնեներալ Մուհամմեդ Նազիրի վերադարձը հանրապետության պրեզիդնենտի պաշտոնին, որին համաձայն է նաև ինքը<sup>26</sup>: Այսպիսի որոշում ընդունելու անհրաժեշտության մեջ որոշ դեր խաղաց նաև սուսանցիների դժուհությունը Մ. Նազիրի հեռանալու կազմակցությամբ: Սուսանցիների համար թերևս նշանակություն ուներ ծնունդով սուսանցու զեկավար դերը նպիտուում: Բացի այդ, երանք նրա վաստակին էին վերադրում 1952 թ. Սուզանի ինքնորոշման վերաբերյալ հիմքառական համաձայնագրի կնքումը Բոլոր զենքերում, ինչպես իրավացիորեն նկատում է Ե. Ն. Կուրդդելաշվիլին, ուՀՊ-ի մեծամասնության և գնեներալ Նազիրի միջն որվող պայտարշու ըստ էության, հանգիսանում էր նպիտուում խորացող դասակարգային պայքարի պրոցեսի օրյեկտիվ արտացոլումը, որի ընթացքում երկրի բուրժուակալվածատիրական վերնախավը ձգուում էր իշխանությունից հեռացնել ՀՊ-ին, Ազատ սպաներին...<sup>27</sup>:

Չեալած Նազիրի վերադարձին, ՀՊ-ն վարշապետի պաշտոնը թողեց Գ. Ա. Նասերին: Սակայն ՀՊ-ի գեմ ուղղված ցույցները շարումակվեցին նաև փետրվարի 28-ին: Հատկապես ակտիվորեն էին գործում մուսուլման եղայրները, որոնք պրուամ էին ուսանողությանը զինված ընդ-

Հարումների: Նրանց նպատակը պարզ էր. անկարգություններ հրահրելով իրար հակադրել բանակին և ժողովրդին, զինված շեղարումներ առաջացնել, պառակտել բանակը, հեարավորին շափ անկայուն զարձնել զրությունը և խարխլելով ՀՂե-ի գերքերը բանակում ու ժողովրդին մեջ, զավթել իշխանությունը: Վաֆդը նույն տակտիկայով և միասնաբար գործելով մուսուլման եղբայրների հետ հետապնդում էր իր հին եպատակները:

Այս դրության մեջ ՀՂե-ն ճկուն և վճռական քաղաքականություն վարեց: Ճկուն՝ նազիրի ժողովրդականության հետ հաջոյի նառելիս, վրա-ռական՝ բացահայտ ընդդիմադիր ուժերի դեմ: Զերբարակալվեցին 119 մարդ, 46 մուսուլման եղբայրներ, 21 սոցիալիստներ, 5 վաֆդականներ և 47 ուրիշներ<sup>22</sup>: ՀՂե-ին հայողվեց վերջ դեմ հակակառավարական ցուցերին՝ ուժ գործադրելով և առժամանակ փակելով Կաչիրեի, Ալեք-սանդրիայի և Այն Շամսի համալսարանները: Սպազելով այն բանից, որ նազիրը Մարտի 1-ի առավոտյան մեկնեց Խարտում՝ մասնակցելու սու-ղանական պառամենախ բացմանը, ՀՂե-ն ներբակալեց նաև և. Մոհի Էդ-Դինին և նրա կողմենակից ութ սպաների: Բանակում և ոստիկանու-թյան մեջ զառամներ կառարվեցին և պաշտոններից հեռացվեցին կամ տեղափոխվեցին անհույսի սպաները: Մարտի 5-ին պատասխանելով փարիզյան և Մոնդա թերթի թղթակցի հարցին թե նազիրը մասնակցում է ՀՂե-ի աշխատանքներին, նասերն ասաց, որ գններալը այնու ու ՀՂե-ի, և ոչ էլ կառավարության անդամ է, ու լնայած դրան մասնակ-ցում է մեր աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով, որը նորմալ հանգամանք է պետության դեկանարի համար<sup>23</sup>: Այսպիսով նազիրի վերադարձը իշխանության գլուխ նպաստամի առաջին փուլում, կարելի է համարել պյառունական հաղթանակ: Նազիրը կորցրեց ՀՂե-ի նախագահի և վարչապետի պաշտոնները, որոնք անցան նասերին:

Սակայն հետապնդությունն ավելի ու ավելի էր աշխատում հեղինակագրել ՀՂե-ին ժողովրդի աշքում: Անձնութեր խոսում էին, թե վերցին քանի ամսում երկիրն ականատես է միայն հեռացումների: Հեռացվեցին Ֆարուկը, Վաֆդը, մուսուլման եղբայրները, մյուս կուսակցություններն ու քաղաքական գործիչները: Նվազ ահա նոր հեռացում: Նվազ մով էր հեռացում՝ ուղղագործության առաջնորդը: Ջենգորականները երկիրը տանում են դեպի անարխիա, անիշխանություն, իսկ ավելի նիշտ՝ ռազմական դիկտատորատ: Առաջին մեղավորն, իշարկե, նասերն է, որը վերցերս ցուցաբերում է անհագուրդ իշխանատնելություն: Մահմանա-դիր հանձնաժողովի նախագահ Ալի Մահմեդը հայտարարում է, որ սկզբ

Նասերը Հեռանա այսոք, կլինի մի հայրենասեր, իսկ եթե Հեռանա երեք ամիս անց՝ կլինի մի հանցագործ<sup>101</sup>:

Բանակը ՀՂե-ի վերահսկողության տակ էր, բայց երկրի անկայում պրոֆիլանը շարունակվում էր: Անհրաժեշտ էր բորբոքված կրտերը, գոնե առամանակ, հանգստացնել: Հարկավոր էր հուսալի հենարան գտնել ժողովրդի մեջ:

Մարտի 5-ին ելույթ ունենալով, Գ. Ա. Նասերը հրապարակեց ՀՂե-ի սրբազնությունը՝ անհապաղ անցկացնել Հիմնադիր ժողովի ընտրություններ, որպեսզի այն կարողանա իր նիստը գումարել ոչ ուշ, քան հունիսի 23-ը: Այն կունենա երկու խնդիր՝ նոր Սահմանադրության քննարկումը և հաստատումը և պառամենատին փոխարինելը մինչև նոր Սահմանադրության դրույթներին համապատասխան պառամենատի գումարումը: Հիմնադիր ժողովի ընտրություններից մեկ ամիս առաջ Գրանցությանը վերացվում է Հիմնադիր ժողովի ընտրություններից մեկ ամիս առաջ: Գրանցությանը վերը է արգում և ՀՂե-ն շարունակելու է իր պարտականությունները կատարել մինչև նոր պառամենատի գումարումը<sup>102</sup>:

Մարտի 9-ին վարչապետի պաշտոնից հրաժարական է առիլի Գ. Ա. Նասերը: ՀՂե-ի և կառավարության համատեղ նիստում որոշվում է նազիրին վերապարձնել ոչ միայն վարչապետի, այլև ՀՂե-ի նախագահի տեղակալ: Ե. Ն. Կուրդելյանիցին ՀՂե-ի և նասերի այս քայլերը համարում է տակարիկական մի նահանջ, որի նպատակն էր երկրի լայն հասարակության առաջ մերկացնել տղմունքատիային և պատշաճնարիզմին կարծեցյալ ջատագովների իրական հականեղափոխական գեմքը և ժողովրդին համախմբել հեղափոխական բանակի շուրջը<sup>103</sup>:

Կառավարությունը ընդհանուր ներում է շնորհում բոլոր քաղքանտարկալներին, այդ թվում վերջին ամիսներին Հեղափոխության տրիբունայի կողմից տաժանակության դատապարտված քաղաքական հին գործիչներին: Ազատ են արեակզմում նաև Խ. Մոհի Էդ-Դինը<sup>104</sup> և մյուս սպաները, ինչպես նաև Հ. Հողեյրին և ձերբակալված մյուս մուսուլման եղբարիները:

Մարտի 8-ին Մ. Նազիրը, որպես հազիրող, դիմում է եղիպտական ժողովրդին. ում մեծ ցանկությունն է վերջապես իրականացնել պառամենատական դեմունքատիայի վերականգնումը նդիպտում: Աս կրում եմ ձեր ազատության և ձեր սրբազնի իրավունքների երաշխիքը<sup>105</sup>:

Սակայ Սալիմը մարտի 12-ին ելույթ է ունենում Հեծելազորային-ների առջև և հայտարարում, որ երբ երկիրը քաղաքացիական իշխանության անցնի, ՀՂե-ի սպաները կազմելու ձև նոր կուսակցություն։ ՎՄԱՆ իսկական սոցիալիստները ենք, ասում է նա։ Վաֆդականները, մուսուլմաններային և հետադիմական մյուս կազմակերպությունները աշխատույթ գործումնեություն են ժամանում, նրանք կազմակերպում են պրոպագանդամական լայն արշավ ընդդեմ ՀՂե-ի և Նասերի, ուսանողներին դրդում են ցույցների, Այս պայմաններում տեղի է ունենում ՀՂե-ի նիստը<sup>106</sup>, որը որոշում է կայացնում։

ա) Իշխանությունը մինչև 1954 թ. հուլիսի 24-ը հանձնել Հիմնագիր ժողովին և հեղափոխությունը հայտարարել ավարտված, թ) քաղաքական կուսակցություններին թուլարժում է վերսկսել իրենց գործունեությունը, զ) ՀՂե-ն լի կազմելու նոր կուսակցություն, դ) բոլոր քաղաքական իրավունքներից, է) Հիմնադիր ժողովի ընտրությունները լինելու են ուղարկ և ուղարկ, զ) ահճապաղ, Հիմնագիր ժողովի առաջին խակ նիստում, որը տեղի է ունենալու 1954 թ. հուլիսի 22-ին, ընտրել Հանրապետության պրեզիդենտ<sup>107</sup>։

Ահա. քան ամսվա դաժան պայթարը կարծես ավարտվում էր հետադիմության հաջթանակով. Դա սփառում է մանեկ՝ էր Նասերի կողմէց, թե՞ հետադիմության արշավի ժայրակիուց, ուր բարդությունները հանկարծ պարզվեցին և հստակորն երևաց Հին, կոտրած տաշտակի ուրգավիթը, ոժքար է ասել. Մի բան պարզ է, որ Գ. Ա. Նասերը համար չանքեր թափելով, արդ պայթարում ցույցարերելով անկոտրում կամք, կարողացավ իրադարձությունների զարգացումը տանել ՀՂե-ի համար նպաստավոր ուղիղով։

Մինչ այդ տեղի էին ունենում բուռն ցույցներ առրենք զրոյնների տակ։ Մինչ զենքերալ Նազիրը ուղեկցում էր նախորդ որը Կահիրէ ժամանակ Սաուդյան Արարիայի թագավոր Սաուդին, մարտի 25-ին Նասերը հանգիպում Հ. Հոգեյրիի հետ, որի արդյունքը լինում է այն, որ ժուտովան հզրայրները սրոշում են աշակցել զինվորականներին<sup>108</sup>, Հաջորդ որը ՀՂե-ն սկսում է մայրաքաղաք տնօսափոխել Ազգային պարզիայի զորամասերը։ Նույն օրը Ազատապրության կազմակերպության 150 անդամներ և նրանց համակիրները ցույցի են ելուած ընդդեմ Հին կուսակցությունների գործունեության վերականան և համուն ՀՂե-ի գործունեության շարունակման։ Նասերը նույն կազմակերպության միջոցով կապվելով փոխադրամիջոցների աշխատազների այն միության զեկագոր Սամի Ահմեդ Սամիի հետ, ապահովում է նրանց աշակցությունը ՀՂե-ին<sup>109</sup>,

Մարտի 27-ին սկսվում է փոխադրամիջոցների աշխատողների ընդհանուր գործադրությունը, որին միանում են այլ արմենոթյուններ իրենց բանվորներով, գյուղատեսական բանվորներ, մանր առևտրականներ և ժամանակներ։ Դորժագույզավորների թիվը հասնում է 1 մինչի նրեկում կամք և առնում հազորդակցությունը<sup>110</sup>, նույն որը երեկոյան տեղի է ունենաւ Ազատ պատմական ընդհանուր ժողովը, որը գեմ է կանգնում մարտի 5-ի և 25-ի որոշումներին և իր աշակցությունն է արտահայտում Պ. Ա. Նասերին<sup>111</sup>։ Հաշորդ օրերը համբեդքանուր գործադրությունը կազմակերտություն է ամրացն երեկի տնտեսական և հասարակական գործումներությունը։ Անցնդհան նիստ գումարելով, ի վերջո ՀՂե-ն 29-ի երեկոյան ընդունում է հետեւյալ որոշումները։

1. Հետաձգել մարտի 5-ի և 25-ի որոշումների իրագործումը մինչև անցումային ժամանակաշրջանի ավարտը։

2. Անհապաղ կազմակերպել Ազգային խորհրդակցական խորհուրդ, որն իր մեջ կներառի ժողովրդի տարրեր խավերի, կազմակերպությունների և շրջանների ներկայացուցիչներին։ Նրա կառուցվածքը և գործունեության ուղարտը կահմանվի որմեջով<sup>112</sup>։

Անտարակույս, ժողովրդական զանգվածների ղերը ՀՂե-ի այս հազրանակի մեջ զնուական նշանակություն ունեցավ։ Թահզորները, գյուղացիությունը, մյուս զեմոկրատական ուժերը միանամուռ ուղիղ կանգելով տապալեցին հետադիմության մտադրությունները՝ երկիրը վերադարձնել դեպի հինը, արդին մերժվածը։ Նրանց զնուական պահին պարզուց գիտակցեցին, որ երկիրը վերափոխումների ուղիղվ կարող է տանել միայն ՀՂե-ն, որն անցյալ ժամանակամիջոցում հաստատել էր դա իր անողոր պայքարով ընդդմն հին վարչակարգին։

Մարտի 29-ի որոշումը եղիստական դիմոկրատական ուժերի վրական հաղթանակն էր հետադիմության դեմ մզված պայքարում։ Այն իր բնույթով հնդափոխական էր, որովհետև երկրում հաստատում էր կայում ներքաղաքական վիճակ, որն իր հերթին նարավորություն տվեց լրացնություն ազգային-ազատագրական շարժման գլխավոր հարցը՝ երկրից դուրս բերել ստարերկրյա զորքերը և ապահովել անկախությունը։ Այն եղիստական հնդափոխական, դիմոկրատական ուժերի իշխանությունը ամրապնդելով, միաժամանակ նարավորություն ընձեռեց երկրի առջև ժառացած արտաքին քաղաքական հարցերին ավելի շատ ուշագրություն նվիրել, քանի որ ավյալ գնաքում արտաքին քաղաքական շատ հարցեր օրդանագիր կապված էին երկրի ներքին կյանքի և տնտեսական զարգացման խնդիրների հետ։

Նպիպտական հետազիմությունը գարնախային նպեսժամում պարտությունը կրեց բաց մարտադաշտում։ Սա առավել քան կարեռ է, քանի որ Վաֆգան, մուսուլման նղբայրները, մյուս հին կուսակցությունները ու Հետազիմության կողմնակիցները մի ավելորդ անգամ ցույց տվեցին իրենց սնանկությունը, չկարողանալով ժողովրդական դանդաղածների համար ձգողականություն ունեցած ոչ մի նոր գաղափարական և սոցիալական այլ ուժի առաջ քաշել և բացահայտ պայքարում բարոյագեա և բաղաքականապես շախտախճեցին երիտասարդ ու անփոք սպաների կողմից։ Հետազիմության տարարենույթ ուժերը քայլայվելով ներքին հակասություններից և ՀՂեղ-հասցրած հարվածներից, չնայած հուսահատ շանքերին, ի վիճակի շնորհ մարտադաշտ իշեն միասնական ճակատով։ Նրանց բաղաքական պայքարի բազմամյա փորձը ստեղծված նոր պայմաններում ամուլ և ոչ պիտանի դուրս եկավ։

ՀՂեղ-ն ապրիլ ամսին մի շարք միջոցառումների դիմեց, որոնք ամելի կայտմացրին երկրի ներքին դրությունը։ Ապրիլի 5-ին որոշվեց գոռոմներ անցկացնել մամուլի մարմիններում, համալսարաններում ապահովել կարգապահությունը<sup>113</sup>, հին վարչակարգի մեջսակիցներին մեկուսացնել իշխանությունից և զրկել քաղաքական իրավունքներից, միշտցառումներ ձեռնարկել ապահովելու համար ժողովրդի տարրեր խավերի շահերը, հեղափոխական իշխանության ապահովության համար ընդունել օրենսդրական համապատասխան դրույթներ և գավառական խորհուրդներում ընտրել նրան նվիրված անձերի<sup>114</sup>, Ապրիլի 15-ին, ի կատարումն այս որոշման, վերացվեց եպիպտական լրագրողների արհմիությունը։ Հաստատվեց, որ 24 լրագրողներ և 14 ամսապրիեր ժամանակին օգտվել են Ֆարուկի կառավարական գաղտնի դրամական ֆոնդերից և այդ արհմիության դեկավարության 7 անդամներ, այդ թվում նախագահը և քարտուղարը անձան չեն մնացել դրանցից։ Շուտով սկսվեց վաֆգական ռալ-Միսրի թերթի հրատարակիչներ Մ. Արու Ֆաթէի և Հ. Արու Ֆաթէի դատավարությունը, որոնք մեղադրվում էին գոյություն ունեցող վարչակարգի դեմ դագաղորդություններ դրդելու մեջ։ Հեղափոխության տրիբունալը սրանց գալուապարտեց համապատասխանաբար 10 և 15 տարվա ազատազրկման, որի ինքնաբերաբար հանդեցրեց ռալ-Միսրիի դադարեցմանը, որի վերջին համարը լույս տեսավ 1954 թ. մայիսի 4-ին։ Նախքան այդ երկրում վերահաստատվել էր պատմանությունը։ Ապրիլի 15-ին հրապարակվեց նաև հին գործիչներին քաղաքական իրավունքներից զրկելու որոշումը։ Հստ այս որոշման, բանակային շարժմանը նախորդած տասը տարիներին մինիստրական պաշ-

առնելոր պրազեցնելու համար քաղաքական իրավունքներից գրկվեցին Մ. Նահանյար, Ֆ. Սիհապ էդ-Դինը, Սալահ էդ-Դինը, Նազիր ալ-Հիլային, Իրրաշիմ Զարագը, Արզել Սալահ Զահմի Գուման, Մուհամեդ Հուսեմ Հեյրալը, Իրրաշիմ Արզել Հաղին, Արդուլ Ռազզակ աս-Շան Հուրին և օրիշներ, թվով 25 մարդ, որոնց վաֆջի, Հիրքրալ-սահմանադրական և Ստաղական կուսակցությունների ղեկավար գործիչներ էին<sup>115</sup>, Ապրիլի 27-ին ձերբակալվեցին Հեծելազորի 16 սպաններ և Հանձնվեցին Հեղափոխության արիրունացին՝ մեղադրվելով բանակում խռովություն հրահրելու և գործություն ունեցող վարչակարգը ուժի միջոցով տապալելու դիավոլության մեջ Նրանց ղեկավարն էր կապիտան Ահմեդ Ալի Հասնակ ալ-Մասրին, որը նախկինում եղել էր Ազատ սպանների կաղմակերպության անդամ և մասնակցել ուզմական Հեղաշրջմանը: Այնուհետև ձերբակալվեցին նաև 25 բաղաբացիական անձնու, որոնց գլխավորում էր Նույնպես Ազատ սպանների կազմակերպության նախկին անդամ կապիտան Մուստաֆա Քամալ Սիդկին<sup>116</sup>: Սրանց գեմ հարուցված մեղադրանքները նույնն էին, ինչ որ սպանների ղեմ: Ընդհանրապես պետք է ասել, որ այդ ժամանակի երկրում անհաջերժված էր Հակակոմումիստական արշավ և ձերբակալվածներից շատերին հիմնականում մեղադրում էին ոկոմումիստական գործունեություն ժավալելու մեջ: Ի վերջո ալ-Մասրին դատապարտվեց 15 տարվա բանտարկության, 12 սպաններ՝ տուրքեր ժամկետների բանտարկության, պայմանական ազատազրկման, իսկ հրեբը անմեղ ճանալվեցին<sup>117</sup>, Մ. Ք. Սիդկին ազատազրկվեց հինգ տարով, 21 հոգի՝ 1—10 տարով և հրեբը լև արդարացվեցին<sup>118</sup>:

Մ. Նազիրը նշում է, որ սպանները հիմնականում եւ Մուհի էդ-Դինի կողմնակիցներն էին<sup>119</sup>, Բերը՝ և. Մուհի էդ-Դինը, ապրիլի 6-ին արդեն Հեռացել էր նպիպուսից, իսկ մայիսի 1-ին հանվեց ՀՂե-ի կազմից, երբ Ա. Սագաթը հաղորդեց մամուլին, թե իրը նա խոստովանել է ՀՂե-ին, որ կոմումիստ է<sup>120</sup>, Բանակից հեռացվեց նաև իր ձախ հայացքներով Հայոնի, Ազատ սպանների կազմակերպության անդամ Յուսուֆ Սադիկը Բազականին յութ հանգամանքներում հեռացվեց ՀՂե-ի անդամ Արզել Մունեմ Ամինը, որը Ք. Ուկուքի կարծիքով նասերի վարչակարգի ձախ ընդդիմության կողմնակից էր<sup>121</sup>: Ի տեղի պետք է ասել, որ նպիպուսիկան կոմումիստական խմբերի, այդ թվում Հանդեթու-ի գարնանային ճըպ-նամակի ընթացքում պազած դիրքի և գործունեության մասին աննշան նյութեր կան և մեծ մասամբ կոմունակալ Հեղինակների մոտ: Սակայն մի բան պարզ է, որ նպիպուսիկան կոմումիստները դրականորեն չեն զերարերվում զինվորականների իշխանության հաստատմանը, բանի որ

Վերշիններս նրանց նկատմամբ շարունակում էին նախորդ վարչակարգի բռնություններն ու հալածանքները: Խնձոր, վերը նշված և հման կարգի այլ միջոցառումները, որոնք ձեռնարկվեցին ՀՂե-ի կողմից 1954 թ. հետագա ամիսներին, նպաստեցին նրկում իշխանության ամրապնդման ու կայունացմանը:

Կորցինելով ոչնչափիության առաջնորդիշ լուսապսակը և շումենալով կայուն հնարան ժողովրդի մեջ ու բանակում, գեներալ Մ. Նազիրը ստիպված էր ապրիլի 17-ին հրաժարվել վարչապետի և ՀՂե-ի նախագահի պաշտոններից: Խոյն օրը Սալահ Սալիմը հայտարարեց, որ ՀՂե-ի նախագահն է եղանակվել Գ. Ա. Նասերը: Հաջորդ օրը Նասերը կազմեց կառավարություն, որի մեջ ներառվեցին ՀՂե-ի անդամների մեծ մասը: Զ. Մոհի Էդ-Դինը, Հուսեյն Շաֆիին, Սալահ Սալիմը, Հասան Իբրահիմը, Դամալ Սալիմը, Թամալ Էդ-Դին Հուսեյնը, Ա. Լ. Բաղդասարին համապատասխանարար գլխավորեցին ներքին գործերի, ռազմական, ազգային կողմենորշման ու ռուսական գործերի, պրեզիդինտական գործերի, կոմունիկացիաների, ոսցիալական գործերի և աշխատանքի, մռնիցիալային գործերի մինիստրությունները: Այսպիսով, կարելի է ասել, որ կառավարությունն ու ՀՂե-ի օրգանապես միավորվեցին:

Առարկան մեջացած Մուսավար եղայրների կազմակերպությունը, հավատարիմ իր անսկզբանը դիրքորոշումներին, շուտով նորից հակադրվեց ՀՂե-ին: Բայց աշնանը, երբ նրա գործակալները փորձեցին սպանել Նասերին, ՀՂե-ի քախչախիլ հարգած հասցեց կազմակերպության ամրող մեխանիզմին, գրանով վերջ տալով հետադիմության վերջին շոկատի հավակնություններին: Նազիրը, որը 1954 թ. ամռանն ու աշնանը մշտապես հակադրվում էր ՀՂե-ի քաջարական գծին, Խոյնմբերի 14-ին ՀՂե-ի որոշմամբ հեռացվեց իր պաշտոնից: Որոշվեց պրեզիդինտի պաշտոնը թափուր թողնել, առժոմանակ նրա գործերը հանձնելով ՀՂե-ի տնօրինությանը:

### Յ. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴԱՄԿՐԱՑԱԿԱՆ ՀԱՄԱԿՐԴԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Անցումալին ժամանակաշրջանը թնակոխում էր իր ավարտը և անցած տարիների ներքին ու արտաքին հետադիմության զիմ մղած պարբերի փորձը հարավորությունն էր տալիս ամփոփումներ կատարել՝ նախանշելու համար հեղափոխության գարբացման հետապա ուղղությունները: Այդ բանը կատարեց Գ. Ա. Նասերը: Իր 1955 թ. մարտի 28-ի հույթում նա հուշակեց եղեպատական հեղափոխության վեց սկզբունքները:

Մհեր զիս կանդրագառնանց այս սկզբունքներին: Այժմ միայն եշներ, որ այդ սկզբունքներից Ե-րդը նախառուում էր երկրում Շատատել նոր-մալ գնուպերատական կրանքը: Այս արտահայտությունը, ներառնելով իր մեջ անցումային ժամանակաշրջանի մոտալուս ավարտը, միաժամա-նակ հանդիսանում էր հին պառլամենտական ողեմուկրատիային ժիւտու-մը: Մեջ բերենք Գ. Ա. Նասերի նույնիմաստ բազմաթիվ բացատրու-թյուններից մեկը: 1955 թ. հունիսի 22-ի ելույթում նու ասում էր... Մներ յինք վերադառնա պառլամենտական հին կյանքին, որը կու-սակցությունների բորսա էր..., «1956 թ. հունվարին նպիպուուր կանա-նի պատգամնենու, որը մի լինի բառերի վաճառատուն... կուսակցություն-ների համար, այլ պառլամենտ, որ կանգնած կլինի այն հիմքերի վրա, հանուն որոնց կատարվեց հեղափոխությունը»<sup>123</sup>: Այս ուղղությամբ աշ-խատանքն արդին տարգում էր վաղուց: 1953 թ. հունվարի 13-ին ստեղծված Սահմանադրական հանձնաժողովը, որի մեջ, ինչպես գի-տենք, մնշող մեծամասնությունը հին կուսակցությունների պարագայութ-ներն ու հայտնի գործիչներն էին և, ի գեղ, որոնցից շատերը տարբեր մեջադրանքներով հնուացված էին հանձնաժողովից կամ նույնիսկ բան-աւորիված հին ու նոր մեղքերի համար, առաջադրանք ունենալով մշա-կել նոր Սահմանադրության նախագիծը, միայն 1954 թ. սպասուսին ներկայացրեց ան, որը, սակայն, իրենից ներկայացնում էր 1923 թ. Սահմանադրության գոփօխաված տարբերակը<sup>124</sup>: Հղե՞ն այն ընդունելի չամարեց և նոր հանձնաժողով ստեղծեց Գ. Ա. Նասերի պլիսավորու-թյամբ:

Հղե՞ն 1956 թ. հունվարի սկզբին հաստատեց նոր հանձնաժողովի մշակած նախագիծը և նույն ամսի 16-ին այն դրեց հայտաժողովրդական քննարկման: Հունիսի 22-ը հայտարարվեց երկրի պրեզիդինտի ընտրու-թյան ու Սահմանադրության հանրաքվեի օր: Այդ օրը Սահմանադրու-թյան օգտին քվեարկեց հանրաքվեի մասնակիցների 99,8 տոկոսը և պրե-զիդինտի միակ թեկնածուի, նաև նորի օգտին՝ ընտրողների 99,9 տո-կոսը<sup>125</sup>: Նոր Սահմանադրությունը կադմված էր ներածականից և 196 հոդ-ված պարունակում վեց պըսիսներից: Նպիպուուր հոյակելում էր արարական անկախ և ինքնիշխան դիմուկատական հանրապետություն, որի ժողո-վուրդը մասն է կազմում արարական ազգի (Հոդ. 1), Խորամց հայտա-րարվում էր պետական կրանքը (Հոդ. 3), Սոցիալական համերաշխությունը համարվում էր եղիպատական հասարակության հիմքը (Հոդ. 4): Նպիպ-տացիներին երաշխավորվում էին ազատություններ (Հոդ. 6), ինչպես նաև մասնավոր նախաձեռնության ազատություն, եթե այն ոչիր վեա-

առև հասարակության շահերին (Հոդ. 8): Տարբեր հոգվածներով փակ-  
վում էին ավատատիրական հոգատիրության զերադարձի հարավորու-  
թյաները: Սահմանադրությունը պեղպատացիներին առջիս էր սոցիալա-  
կան ապահովության (Հոդ. 21), աշխատանքի (Հոդ. 52), բուժագիտության  
(Հոդ. 56) և արհմիտություններ կազմելու (Հոդ. 55) իրավունքներ: Մընա-  
գիր իշխանությունը պետության մեջ իրականացնելու էր Ազգային ժո-  
ղովը, որի պատգամավորի տարիքը 30-ից ցածր չպետք է լիներ: Ընա-  
րություններին մասնակցելու իրավունք էր տրվում 15 տարին լրացած  
բոլոր եզրակացներին: Սա նշանակում էր, որ առաջին անգամ լինելով,  
ընտրվելու և ընտրվելու իրավունք էին ստանում նաև եզրակացները:  
Պետության ղեկավարը, որին տրվում էին լայն լիազորություններ, հան-  
գիստում էր նաև կառավարության ղեկավարը: Հատկանշական է, որ  
նոր Սահմանադրության 192-րդ հոգվածով նախառեսվում էր Ազգատա-  
պության կազմակերպության փոխարքն ստեղծնել Ազգային միության  
կազմակերպությունը: Դեռ մայիսի 30-ին, Նասերը, տալ-Դումհուրիա  
թերթի խմբագրապետի հարցերին պատասխանելիս, Ազգային միությու-  
նը դիմում էր իրեն մի ազգային ճակատ, որը իրագործելու է նողագո-  
խության նպատակները, արդեւ է հանդիսանալու գաղութատիրության  
կամակատարների կիսաօրինական կազմակերպությունների ստեղծմանը,  
աշխատելու է ամրապնդել երկրի անկախությունը, գարգացնել անտե-  
սությունը և ստեղծել բարեկեցիկ մի հասարակարգ<sup>125</sup>,

Հունիսի 29-ին Նասերը կազմեց նոր կառավարություն, որը որոշեց  
Ազգային ժողովի ընտրություններն անցկացնել Հուլիսի 3-ին: Սահմա-  
նադրության ընդունումով և այդ որը ընտրված Ազգային ժողովի գոր-  
ծունեությունով ծրկիրը գուրս էր գալիս անցումային ժամանակաշրջա-  
նից ու թնակոխում զարգացման մի նոր փուլ:

#### Ց Լ Ո Ւ Խ Ե Ր Կ Ր Բ Բ Գ

### ՊԱՏԹԱՐ ՀԱՆՈՒՄ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱԳՆԴՄԱՆ ԽՎ ԴՐԱԿԱՆ ԶԵՋՈՔՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԴԵԳՐՈՒՄԸ

#### 1. ՀԵՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԱՐԱՄ ԽՎ ԱՐԵՒ ՀԱՅ ՀԱՎԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԿՑՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆ

Հեղափոխությունից անմիջապես հետո, նրա զերինական հարգու-  
թյան համար կարենոր հարց էր արտաքին հերազը միջամտության  
կանխումը: Ամրող բանակի և կառավարության մրա զերահակցու-  
թյան համար կարենոր հարց էր արտաքին հերազը միջամտության  
կանխումը: Ամրող բանակի և կառավարության մրա զերահակցու-

թյան հաստատումից հետո, բանակալին շարժման համար հիմնական վաճանգը, որն առավել լրջորեն կարող էր ազդել հեղաշրջման հաջող վախճանի վրա, ստարերկրյա զորքերի առկայությունն էր Սուևպի զրահը-  
րի գոտում։ Արդյուք՝ Բրիտանիան ի՞նչ դիրք կգրավի հեղաշրջման հան-  
դեպ՝ կպահպանին՝ շնորհություն, թե՛ ուրկրի կայունությանը, «գահի  
պահպանության» կամ և՛ ստարերկրացիների անվտանգության ապա-  
հովման պատրվակով կմիջամտի երկրում ծավալվող իրազարձություն-  
ներին։ Վերջին միաբար միանգամայն հնարավոր էր, բանի որ դրա նա-  
խադապերը նդել էին ինչպես 1882-ին, 1919-ին, 1942-ին, այնպես էլ մի  
քանի ամիս առաջ 1952 թ. Հռավարին։ Այս հնարավորության դեմն առ-  
նելու համար ՀՆԵ-ն պնտը է անմիջապես դիմանապիտական և ուզմա-  
կան որոշակի միջացների դիմեր։ Այդ ժամանակ բրիտանական գենպան  
Ռալֆ Ստեվլենսոնը բացակայուում էր ծգիպատուից, իսկ նրան փոխարի-  
նող Մայքլ Թրենվելը ԱՄՆ-ի դեսպան Ջեֆերսոն Քեֆերիի հետ գտնվում  
էր Ալեքսանդրիայում, ուր իր ամառն էր անցկացնում թագավորը և ուր  
ժամանել էր հեղաշրջման նախորդ օրը կազմված կառավարությունը  
Ն. ալ-Հիլալիի գլուխությամբ։ Այս պատճառով էլ ՀՆԵ-ի կողմից  
Հուլիսի 23-ի վաղ առավոտյան ԱՄՆ-ի դեսպանատում ուղարկված  
Ազիատուոի ուղարկացային ուժերի հնտահուզության պետ, Ազատ սպա-  
ների կազմակերպության անգամ փոխգեղապետ Ալի Սարին Հանդի-  
պեց իրենց կառավարության հետ ոչ անմիջապես կապվելու հնարավո-  
րություն ունեցող դիմանապիտների հետ Դնապանության նրան միակ  
ժամուն անձնավորությունը՝ ուղարկացային ուժերի կցորդի օգնական  
Դեյվիդ Էվանսը խոստացավ անմիջապես Զ. Թեֆերիին հազորդել, որ-  
պեսզի գերշինս էլ իր հերթին հազորդի բրիտանական դեսպանորդին, որ  
անցած գիշեր ծգիպատուում տեսի ունեցածը ներքին գործ է, վերաբերում  
է միարև նպիգտական ժողովրդին, ստարերկրացիների կյանքին և ու-  
նեցվածքին վատանք լի սպառնում և որ բրիտանացիները, ևթե ձեռնպահ  
մեան միջամտությունից, կդիտվեն ինչպես մյուս ատարերկրացիները։  
Ա. Սարին խնդրեց նաև Հայտնել բրիտանական դեսպանորդին, որ եթե  
Անգլիան միջամտի երկրի գործերին, ապա դրա պատասխանատվությունը  
կընկելի իր՝ Անգլիայի վրա։ Բագավորին հեռացնելու Ազատ սպանե-  
րի մտադրության մասին, ինարկե, ոչ մի խոսքով չհիշատակեց։  
Դ. Էվանսը անմիջապես կատարում է իր խոստումը։ Այդ նույն ժամա-  
նակ ՀՆԵ-ի այլ պատվերակները մի առ մի այցելում էին ստար այլ դես-  
պանատեները և բացատրում, որ կատարվածք պետական հեղաշրջում չէ,  
այլ ներքին մաքրագործմանն ուղղված քայլ։ Զրավարարվելով դրա-

նով, ՀՂեն բրիտանական ուժերի հավանական շարժումը կանխելու նը-պատահով ուղղական բնույթի որոշակի քայլերի դիմեց Սուեզից Կահիր քե ձգվող մայրուղին փակելու համար<sup>3</sup>:

Այդ նույն առավոտյան Ֆարուկը բազմից դիմում է ամերիկյան գետպան Թեֆերիին, որպեսզի վերջինս բրիտանացիներից պահանջի օդ-նել իրեն, Թեֆերիին, առարկելով բրիտանացիների միջամտությանը, իր պաշտպանությունն է խստանում Ֆարուկի և նրա ընտանիքի անդամ-ների ապահովության դրույմ: Բայց, ինչպես երևում է, սկզբում Ֆարու-կին դա չէր բավարարում և նա Մոնթադա պարագից ուղիղությ կապ-մում է շրանցքի գոտում գտնվող բրիտանական ուժերի պյուազոր հրա-մաեստարի հետ և պահանջում գրավել Կահիրեն, իսկ անհրաժեշտու-թյան գեղաքում հրաման տալ բրիտանական ուղամանավերին՝ ոմքակոծն Ալեքսանդրիան: Այս առաջարկությունն անմիջապես հազորդվում է լուսդոն: Անզիւդի արտաքին գործերի մինիստր Անտոնի Իդանց Ֆարուկի այս առաջարկության վերաբերյալ կապվում է ԱՄՆ-ի պետքարտուզար Դին Ալեքսոնի հետ Վերջինն էլ պրեզիդենտ Հ. Թրումենի հետ խորհրդակ-ցելուց հետո հգենին հայտնում է, որ ամերիկյան կառավարությունը կտրականացն դամ է արտաքին միջամտությանը՝ տվյալ իրադրությու-նում: Դրանից հետո միայն Անզիւդի որոշում է չկատարել Ֆարուկի պահանջը<sup>4</sup>, ԱՄՆ-ի և Անզիւդի կառավարությունները նազիրից պահան-ջում են միայն Ֆարուկի անձի անձեռնմխելիությունը: Բայց այդ էլ արգեն Կահիրենի փողոցները ողողվել էին բանակային շարժմանը իրենց աշակցությունը արտահայտող ցուցարարներով և այդ որության մեջ արտաքին միջամտությունը անպատճե կլիներու Բրիտանիայի համար պա-հը կորսված էր: Անսօրից հետո բրիտանական գետպանատանը կայացած մամուլի առությունը հայտարարվում է, որ բանակային շարժումը Սպիտ-առում ներքին քենոյթ ունի և արտաքին միջամտության կարիք չէ զգաց-վում: Բայց օտարերկրյա միջամտության գնալով թուլացող հարազո-րությունն արդյունք էր նաև այն բանի, որ այդ ժամանակ թե՛ ԱՄՆ-ում, և թե՛ Անզիւդում կոնկրետ ուղին հայտնի չէր հեղաշրջման ձեռնարկող-ների նպատակների մասին: Ավելի նպատականարմար էր համբերել և սպասել իրազարձությունների ծավալմանը: ՀՂեն-ի կողմից ամերիկամեա հայացքներով հայտնի Այի Մահերի նշանակումը վարչապետի պաշտո-նում ինքնըստինցիան հանգստացուցիչ հանգամանք հանդիսացավ հա-կապես ամերիկյան դիվանագիտության համար: Օտարերկրյա միջա-մշտության համար առիթ չէին տալիս նաև նազիրի ստորագրությունը ՀՂեն-ի հրապարակած հայտարարությունները, որոնց մեջ հեղաշրջման

Նպատակներն արտահայտվում էին բացառապես ներքին ասպարեզերում:

սերն առաջին հերթին նշում է, որ աշխարհի ներկայիս իրազրության մեջ մեկուսացումը, ներփակվելը անհնար է, Ամեն մի երկիր պարտադիր կերպով պետք է նայի իր շուրջը, գեանատի իր դրությունը, պայմանները, գտնի իր գործունեության կենսական ոլորտներն ու ասպարեզները, իր դրական դերն այս այենու աշխարհում, Վկայակոչելով ժարտեղը, նասերը նշում է երեք իրողություն, որոնք անհնարին է ժխտել: Առաջինը, որ նպաստուր արարական միջավայրի մասն է և երրորդը, որ նա իսլամական աշխարհի մասն է (Հեղափոխության փիլիսոփայությունը, էջ 80—83): Անձկանական արարական միջավայրը... առավել կարևոր է և մեր հետ ազելի սերտ կապվածը: Նասերը նշում է արարական երկրների պատմական, հոգեկան և նյութական փոխապահությունը (էջ 87): Արարական ժողովուրդները ապրում են աշխարհի միասնական մի շրջանում, նրանց դրությունը նույնն է, պրորկենները նույնը, ապագան նույնը, թշնամին նույնը՝ գողովթատիրությունը: «Բայց մեր զանգերը ինչու” են ցրված»: Նասերն առում է, որ այս հարցի պատասխանն ստացավ, երբ հանդիպումներ ունեցավ արար որոշ զեկավարների հետ՝ պայքարը միասնականացնելու նպատակով. «...մեր նախապարհի առաջին խոշնդուռը կասկածամությունն էր» (էջ 102—103): Մի փոքր ճկումությունը կը երի միասնական գիծ, որի վրա կկարողանան կանգնել բոլորը, պնդում է նասերը: Շորու կասկած լուսեմ, որ մեր միասնական պայքարը կարող է մեզ և մեր ժողովուրդներին վերադարձնել այն, ինչ մենք ունում ենք: ...Մենք ուժեղ ենք, բայց գժիախտությունն այն է, որ չենք իմանում մեր ուժի չափը: Նասերը արարների ուժի հիմնական երեք աղբյուրներն է համարում սահմանակից ժողովուրդների մի խռոմը լինելը, նրանց երկրների ստրանգիֆական կարևոր դիրքը և վերջապես նավթը, որի արդյունանաման կենտրոնն են այդ երկրները, և առաջ որի անհնար է արդյունարերությունը, փոխադրամիջոցների շարժումը ոգում, ցրում և ցամաքի վրա, իսկ պատերազմի զենքերը դառնում են մի հասարակ երկաթի կտոր (էջ 104—106):

Խոսելով երկրորդ իրողության մասին, նա որոշակիորեն նշում է, որ նպաստուր չի կարող մեկուսացված մնալ Աֆրիկայի խորքերում հիեգ միջին սպիտակամորթների և 200 մլն աֆրիկացիների միջև տեղի ունեցող արյունահեղ պայքարից: Խոյամական երկրները, որոնք ձըզում են մայրցամաքներով և օգկիտանուսներով, համագրժակցության մեջ հեարավորություններ ունեն իրենց հոգիկան կապվածությամբ, եղբա-

Հեղափոխությունից երկու տարի անց Նասերը վերջնականորեն կռնկարացնում է նպիպասսի՝ ապագայում վարելիք քաղաքականության հիմնական ուղղությունը: Դրանք են՝ պայքար՝ հանուն արարական միասնականության, որը կրկնի արարական երկրների գերի և կշոր մեծացում, պայքար ընդդեմ գաղտնատիրության ու միայն սեփական երկրում, արարական աշխարհում, այն նրանից դուրս, համագործակցություն մուսուլմանական երկրների հետ: Սա որոշակի առևշտում է գրական չեղոքացման հետ, բայց դեռ այն չէ, Կանաքական իրողությունը անթիվ այլ հանգամանքների խճադումով ազգային մանրուրժուական գաղափարարախոսության առջև դնում էր նորանոր հարցեր: Մուսուլմանական թուրքիան և Պակիստանը իմպերիալիստների հետ ձեռք-ձեռքի ոված ըստեղծում են ուղմական դաշինք, որի արժեքավորությունը արարական երկրների համար նաև նաև համարվում էր ընդունելի: Մուսուլմանական երկրների ազգային և ուղիղուալ շահերն ու նպատակները հանախ լինեն ևն անհարից և իրարամերթ: Մուսուլմանական և արարական իրացք դեմ չէ հարելու այդ դաշինքին, զբա մեջ ուրիշ արարական երկրների ներգրավելուն Դինաստիական ու հեղեմուսիստական նկրտումները տարագեղիւմ են արարական երկրները: Սակայն այս իրողությունը, ինչպես ապադան ցույց տվեց, թե՛ն որոշ արքագորումների, լաւանեց նաև երկրեատացող կողմերուշումը:

Նպիպատական հեղափոխությունն իր նպատակը հայտարարելով ուսարերկյա զորքերի գուրսօներումը երկրից և սոցիալական արդարության հաստատումը, իր զարգացման ընթացքում չէր խուսափության ու արտաքին իմպերիալիստական ուժերի և ո՞չ էլ ներքին հետապիմության հետ ընդհարվելուց: 1954 թ. վճռական պարտության մատնելով ներքին հետադիմությանը և սկիզբ զնելով ստարերկրյա զորքերի գուրսքերմանը երկրից, հեղափոխության ղեկավարները, հենվելով նաև նախորդ տարիների հեղափոխական փորձի վրա, հեարավորություն ստացան ավելի որոշակիորնն կոնկրետացնել այդ փորձի ընդհանրացումները: Հաղթական պայքարի ընդհանրացումները, նշանավորելով հեղափոխության առաջին փուլի ավարտի սկիզբը, միաժամանակ պետք է ցույց տային սոցիալ-քաղաքական այն ուղղությունները, որոնք ապագայում դրվելու էին նպիպատակի արտաքին և ներքին քաղաքականության հիմքում: Դրանք հայտնի դարձան որպես սպիտակական հեղափոխության վեց սկզբունքներ, որոնք հրապարակվեցին Գ. Ա. Նասերի կողմից՝ 1955 թ. մարտի 28-ին:

ա) Վերացնել գաղտնատիրությունը և նրա նպահուական կամակաւատքներին;

բ) Վերացնել ավատատիրությունը;

գ) Վերացնել իշխանության վրա մոնոպոլիայի և կապիտալի տիրապետությունը:

դ) Ստեղծել ազգային ռուժեղ բանակ:

ե) Հաստատել սոցիալական արդարություն:

զ) Հաստատել նորմալ դիմոկրատական կյանք<sup>27</sup>:

Այս սկզբունքները, ինչպես Հետապայում կեշվի Ազգային խաղաղայում, թեկուզ ռեզուլտատի ական գործի կատարյալ տեսություն չէին<sup>28</sup>. այնուամենայնիվ դարձան կղմապտական Հեղափոխության կողմնորոշիչ հիմունքները մինչև խարսիայի ընդունումը 1962 թվականին: Հեղափոխական պայքարի պիտազոր կողմների ընդհանրացումը և որպես սկզբունքներ ընդունելը նշանակում էր, որ առաջիկայում նև ճղմապտական Հեղափոխությունը ընթանալու էր նույն հիմնական ուղիով:

#### 4. ԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍԻՆԱԿԱՆ ԹՐՅԵՆ ՀԱԿՈՒՅՈՒՆԸ ԽՐԱԲԻԱՎԱԾՈՎԱԿԱՆ ՈԱԶՄԱՊԱՎԱԾՈՎԱԿԱՆ ԴԱՏՄԱԳՐԻ

Անգլայի և ԱՄՆ-ի կառավարող շրջանները, ձգտելով ավելի ռուժեղացնել ճեղումը նպատառի վրա, շանում էին արագացնել թուրք-պահիստանյան դաշինքի ընդլայնումը: Անդրկովկայան գործունեության ըընորհի 1954 թ. վերջին նրաքի մասնակցությունն արդ դաշինքին արդին կանխորշված էր: Ն. Սահիզը ստիլի, առերևույթ քուարեկելով իրականությունը, ճիգ էր թափում նաև իրին համոզելու համար: Նրա միջնորդությամբ, գեկտեմբերին, Կահիրե այցելեց թուրքական մի պատմիրակություն: Ի միջի այլոց պետք է առել, որ 1954 թ. ամռանից լուրեր էին պատվում, մասնավորապես ԱՄՆ-ում և Անգլիայում, թե իր նասերը արևմտյան դիվանագետների հետ հանդիպելիս ժամանակ է պահանջել, որպեսզի նպիպտուր հարմարվի Արևմուռքի հետ մի դաշինքի մասնակցության դաշտարին<sup>29</sup>: Այս լուրերը փաստացի ոչ մի հիմք չունեին: Դա երևան եկավ նաև թուրք պատմիրակության հետ հանդիպման ժամանակ, երբ նասերը կատարյալ վճռականությամբ միշտեց միանալ թուրք-պահիստանյան դաշինքին պնդելով միշտարական անվտանգության դաշինքը առեղծելու գաղափարը<sup>30</sup>: Նույն զեկուեմբերի 12-ին աճդի ունեցած Արարական լիգայի երկրների արտաքին դորժերի մինիստրների հանդիպման ժամանակ նասերը մեկ առ մեկ նրանց համոզում էր արարական անվտանգության դաշինքը թղթից գործի վերածել՝ ստեղծե-

լով արարական միասնական բանակ: Առաջեւ սպառությամբ, ինչպէս նաև ինքը է նշում, այդ մասին արտահայտվեց Իրաքի արտաքին գործերի մինիստր Մուսա Շահրանգարը, որը, ի հավելումն դրա, շանթեր էր թափում ստանալու: Նաև նա համարությունը նպիպտաանդիխական համաձայնագրի կարգի իրարամաղիխական համաձայնագրի կերպու համար, որի մեջ անզիփացիներին իրավունք վերապահվի իրենց զորքերը մացնել Իրաք ոչ միայն արարական որևէ երկրի կամ Թուրքիայի, ինչպէս եգիպտաանզիփական համաձայնագրի մեջ էր, այլև Իրանի հաղթակմանը հեթարկվելու դեպքում: Նաև նրան իր համաձայնությունը տվեց: Ընդունվեցին որոշումներ, որոնցով արարական երկրներին հանձնարարվում էր սուար երկրների հետ դաշինքի մեջ լժոտնել և ապավինել արարական անզուանգության դաշինքին: Այս էր իրականությունը, և նաև նրա առում է, որ իրենց հանկարծակիի բերեց 1955 թ. Հունվարի 12-ի թուրք-իրաքյան համատեղ հայտարարությունը<sup>51</sup>: Հունվարի 8-ին Թաղթագ ժամանեց Թուրքիայի վարչապետ Ազնամ Մենգերեսը և Նուրի Սահդի հետ նրա բանկցություններն ավարտվեցին թուրք-իրաքյան դաշինքի նախատարադրումով: Նրանք հրամիրում էին բոլոր արարական երկրներին միանալ այդ դաշինքին: Ա. Մենգերեսը Թաղթագից մեկնելուց առաջ թղթակիցներին հայտարարեց, թե ձեռք բերված համաձայնությունից դժուռդիները կարճատես և անբարյացակամ մարդիկ են<sup>52</sup>. Հունվարի 14-ին նաև նրան բնդուեց Կահիրեւում Իրաքի դեսպան Նակիր առ-Ռամիլին և հայտարարեց, որ եգիպտական կառավարությունը հիասթափված է իրաքի անդառջական գործունեությունից<sup>53</sup>: Հունվարի 16-ին Եգիպտոսի արտաքին գործերի մինիստր Մահմուդ Ֆավզին իր մոտ կանչելով արար գեապաններին և բացատրելով Եգիպտոսի դերը թուրք-իրաքյան դաշինքի վերաբերյալ, հրամիրեց արարական երկրների վարչապետների խորհրդաժողով գումարել Հունվարի 22-ին: Նույն օրը երեկոյան Ա. Սալիմը վճռականորեն դատապարտեց Իրաքի գործունեությունը, այն համարելով արար ազգի համար մնասակար և վատանգավոր Նա մերժեց Սիրիայի վարչապետ Ֆարիս ալ-Խուրիի այն հենթավրությունը, թե այդ դաշինքը կարող է ուղղվել նաև Իրայի դեմ<sup>54</sup>: Հունվարի 20-ին հայտնի դարձագ, որ Նուրի Սահդը Կահիրը ցի ժամանելու օառաջական պատճառներով: Արար վարչապետները ժամանելով Կահիրի հայտարարում էին, որ իրենք համագործակցելու ևն Եգիպտոսի հետ գորացնելու Արարական լիգան<sup>55</sup>: 22-ին խորհրդաժողովը բացվեց Այսեղ սակայն, նաև նրա համար պարզ դարձավ, որ գործը հանելի խոսքերից այն կողմ դժվարությամբ է անցնում: Փոխանակ գրճ-

ուականորեն դատապարտելու իրարի անշատողական գործունեությունը, խորհրդաժողովի մասնակիցներից շատերը արտահայտվեցին Նըրան Համազել դաշինք չկնքելու սպահն: Նուրի Սահման օգտվելով դրանից, Կահիրե ուղարկեց իր տեղակալ Մուսիմար Թարային և նախկին վարչապետ Ֆազիլ Ջամալիին, որոնց գործունեությունը Կահիրեում ավելի սասանեց համախմբվածությունը: Հունվարի 30-ին որոշվեց ընդհատել խորհրդաժողովը մինչև փետրվարի 3-ը և մի պատվիրակություն ուղարկել Թաղզադ իրաքան կառավարությանը տեղյակ պահելու և ներկա կացությանը: Նույն օրը Իրարի կառավարությունը հայտարարեց, որ Իրաքն իրավունք ունի կնքելու որևէ համաձայնագիր, որևէ երկրի հետ, որը օգտակար է նկատում իր շահերի և ամբողջականության համար<sup>36</sup>: Անհրաժեշտ է նշել այս ժամանակեներում թուրքական ղեկանագիտության հակաարարական գործունեությունը: Խախտելով ընդունված ղեկանագիտական նորմերը, Կահիրեում թուրքիայի դեսպան Ռիֆկի Ջուլում հանդիպումներ էր ունենում խորհրդաժողովի մասնակիցների հետ և մնշում բանեցնում նրանց գրաւ: Կանխապես լավատեղյակ լինելով նգիպատուի զերքին, խորհրդակցության երրորդ օրը, այն է՝ հունվարի 24-ին, նա, թուրքական կառավարության անունից, ժանուցագիր հանձնեց Մ. Ֆավզիլին և խորհրդակցության պատվիրակությունների բոլոր զեկավագարներին՝ հրամիրելով արաքական երկրեներին միանալ դաշինքին: Թուրքական թերթերը պրոպագանդիստական լայն արշավ ըսկըսեցին նգիպատուի ղեմ, երբ նգիպատուը կորականուրեն մերժեց այդ հրավերը<sup>37</sup>, նրան հետևեցին մյուս արաքական երկրները:

Խորհրդաժողովի պատվիրակության բանակցությունները Ն. Սահման արդյունք շտվեցին և այն մատնվեց անհաջողության: Արաքական աշխարհում տիրող հակամարտություններն անհնարին դարձրին միասնական հակատի ստեղծումը, ընայած նգիպատական ղեկավարներին հաշողվեց իրենց կողմը գրավել Սառույան Արարիային, Ելճերին, Լիրիային, Հորդանանին և Միրիային: Իրադրության ժամանակն այս թեժ պահին նգիպատու ալցելից Հնդկաստանի վարչապետ Ջամանակալ ներուն: Փետրվարի 17-ին հրապարակված նասեր-ներու հանգիպման համատեղ հայուարարության մեջ ուղարկան դաշինքների ստեղծումը դիավում էր իրերն իսաղաղությանը շխառայող գործոն: Միաժամանակ նպատակ էր դրվում ավելի սերտացնել երկու երկրեների համագործակցությունը<sup>38</sup>: Այս հանդիպումը վեռական գեր խաղաց նասերի արտաքին քաղաքական միջամբների հոնկրետացման համար: Ա. Արու Ֆաթհը պնդում է, իրեն նասերը ներուի հետ հանդիպելուց հետո ևս չէր հավատում դրական չե-

գորությանը<sup>15</sup>, բայց իրականությունն այն է, որ դրանից հետո նաև նրանից լուսավում այդ բանց կասկածի տակ զնող արտահայտություններն այլն չեն նկատվում։ Անշուշտ դրան որոշակիորեն նպաստեց իսրայելական հարժակումը, որի մասին կիսունենք քիչ հետո։ Դրան, պետք է ննթագրի, որ նպաստեց նաև Հարավալավիայի պրեզիդինուն և. Բ. Տիգույի հետ հանդիպումը, որը տեղի ունեցավ Խույն փետրվարի վերջին։

Նաև նրանից համար պարզ էր, որ նրաքին եռ կանգնեցնելն այլն անհետ է։ Պարզ էր նաև, որ 1951 թ. Արարական անվանգության զաշինքը ձախողման էր դատապարտվելու Այդ հիմքի վրա այլն անհետ ընթացական միասնականությունը։ Այս պայմաններում նաև ստիճանաբար էր նոր սկիզբ գտնելու Բայց նախքան այդ, անհրաժեշտ էր մեկուսացնել նրաքին, Հարավալավորություններ ստեղծել նրան գործ բերելու արարական երկրների շահերին առար դաշինքից։

Փետրվար ամսին նպատական պրոպագանդան այնպիսի լայն արշավ ծավալեց թուրք-իրաքյան դաշինքի դեմ, որ նրա կերպումից (փետրվարի 24-ին) հետո<sup>16</sup> իդենը, որը մեկնում էր ՍԵԼՏՌ-ի Բանգկուկի նախարարական մասնակցելու, Հարժար գտավ իր նախապարհին կանգանելով Կաճիրենում։ Փետրվարի 25-ին նա առաջին և վերջին անգամ հանդիպեց նաև նրան, նրան հետարրերում էր, թե եթե նաև նաև նույնիսկ մի ուղում, որ նպաստուց մտնի Բաղդադի դաշինքի մեջ, ապա ինչո՞ւ է Հարձակվում ։ Սախով և նրաքի Հաշիմյանների վրա նաև նրան պատասխանում է, որ նրաքի գործունեությունը պառակտում է մտցնում արաբների շարքների մեջ և նպատակ ունի մեկուսացնել նպիպուսին արարական աշխարհում, նրան միայնակ թողնելով իսրայելական վառակին դեմ հանդիման։ Այս վասնգում է արարական միասնականության հիմքերը<sup>17</sup>, ինչպես Դալլեսի հետ հանդիպման ժամանակ, նաև նրա հիմքերից զուրկ նկատեց ՍԵԼՏՌ-ի սպառնալիքը արարական երկրների նկատմամբ<sup>18</sup>, Բաղդադի դաշինքի դեմ եղիպտական կառավարության ժամանակար պարբարը ուղղված էր իմպերիալիստական գերիշխանության, արարական երկրների շահերին անհարիս ագրեսիվ ուղման խմբավորման դեմ։ Այս միաժամանակ պայքարը էր հանուն արարական ժողովությունների համախմբման, միասնականության։

Մերձավոր արևելյան իմպերիալիստամետ շրջանները նպիպտոսի այս դիրքորոշումը, սակայն, նկատում էին իրեն նրա անցումը հակառակորդի համբարը, Փետրվարի 27-ին Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Ֆ. Քյոփիրուկուն ելույթ ունենալով հայտարարեց, թե ույժմ երկու հակառակներ գոյություն ունեն և դրանք նև հարձակումի հակառն ու

բաղարակրթության կամ խաղաղության հակառակ. միշտանկյալ մի երբ-  
բորդ նաևատ ստեղծելու փորձը պարզապես հարձակումի նակատին  
սգնել է նշանակելու<sup>73</sup>: Թուրքական մինիստրի այս հայտորարությունն  
արտացոլում էր իմպերիալիստական երկրների զնաւոտականը Ծգիպ-  
տոսի անկախ զիրքավորման նկատմամբ: Անկասկած, ծգիպտական և  
արարական մյուս ժողովուրդների համար մեծ արակցությունն հանդի-  
սացան սովորական կառավարության 1955 թ. գարնանն արած մի չարք  
հայտարարությունները, որոնք այդ դաշինքը համարում էին զաղութա-  
յին ստրկացման նոր ձև և իմպերիալիզմի ապրեսիայի զորժիք: Դրան-  
ցից մեկում ասվում էր, որ թուրք-իրաքյան դաշինքի ստեղծումը ձևու-  
տու է միայն ազգի ուժերին, որոնք գետում են երկպատակություն  
սերմանել այդ շրջանի ժողովուրդների միջև՝ իրենց ուղմաստրատեգիա-  
կան շահներին համապատասխան<sup>74</sup>:

Բանակումին զուգընթաց իմպերիալիստական ահբաւթյունները օգ-  
տագործեցին նաև նեշման այլ ձեւեր, ընդուազ խոշոր մաշտարի ռազ-  
մական զորժողություն, որն իրականացրեցին սիռնիստական հսրայիլի  
ժավալապաշտ դեկավարները: Փետրվարի 28-ին իսրայելական ուժերը  
Գազայի շրջանում անցան զինադադարի զիծը և հարձակվեցին եղիպ-  
տական զորքերի վրա: Երեք ժամ տևող ավագակային զորժունակությու-  
նից հետո, ՄԱԿ-ի դիտորդների շանքերի շնորհիվ, նրանք ետ քաշվեցին:  
Դիտորդները իսրայելական հարձակումը զնաւոտեցին իրեն ամենածանր  
միջադիմումը 1949 թ. զինադադարից հետո<sup>75</sup>: Այս հարձակումը եղիպտա-  
կան դեկավարներին ցույց տվեց եղիպտական բանակի թույլ զինվածու-  
թյան սպառնակից վիճակը: Թերեւ սրանից հետո է, որ նաև լրցորեն  
սկսեց մտածել զենքի ձեռքբերման այլ ազդյուրի մասին: 1957 թ. հունի-  
սի 22-ի իր ելույթում նաև առաջ ուղարկվում է Պինչը Գազայի վրա կատարված  
հարձակումը մեր մտքերը շատ չենք զբաղեցնում իսրայելական վր-  
տանգով.... Բայց Գազայի վրայի հարձակման ծույսը պարզեց վատանգա-  
վոր իրողությունը: ...Դա այն է, որ իսրայելն ինքը զինադադարի զժի  
ետնի գողացքած սահմանը չէ, այլ այն, որ նա իրականության մեջ իմ-  
պերիալիզմի պլացդարմն է, իսրայելից ավելի վատանգավոր ուժի, ...  
համաշխարհային սիռնիզմի հավաքավայրը.... Այս իրողության ըմբռո-  
նումը շրջադարձային կետ հանդիսացավ մեր մտածողության մեջ...<sup>76</sup>,

Իսրայելական այս հարձակումը միաժամանակ ավելի արագացրեց  
նաև մտադրությունների իրագործումը՝ Բաղդադի կաշինքին հակա-  
զիք արարական երկրների դաշինքի ստեղծումը: Փետրվարի վերջերին  
և մարտի սկզբին Ս. Ռայխման բանակցություններ էր վարում Միրիայում

Նորընտիր գարշապես Մարքի ալ-Ասալիի և պաշտպանության ու որ-  
տարին գործերի մինիստր հայիղ ալ-Ազմի հետ Մարտի 2-ին ընդու-  
նաժ Համառեղ Հայտարարության մեջ ասվում էր, որ երկու կառավա-  
րությունները, քննելով արարական աշխարհում տիրող կացությունը, ո-  
րոշել են չմիանալ թուրք-իրաքյան դաշինքին, ստեղծել միասնական  
արարական պաշտպանական և տնտեսական համագործակցության դա-  
շինք, որը հենցերու է հետեւյալ սկզբունքների վրա. ա) մասնակից պե-  
տությունները միավորվում են ևս մզելու որևէ ազդեսիա ուղղված մաս-  
նակից որևէ պետության դժմ, թյ մշտական շտար-կայանով միացյալ  
Հրամանատարություն պետք է ստեղծվի, որը կզերանուի լուրաքանչյուր  
մասնակից երկրի նրա տրամադրության առաջ դրած պինգած ուժերի  
պատրաստականությունը, կառուցի նրանց սպառազինվածությունը,  
կողմը, տեղակայումը՝ համապատասխան միացյալ պաշտպանական  
ծրագրի: Այս հրամանատարությունը կփորձինացնի նաև ռազմական ար-  
դյունաբերությունը և կազմակերպի ռազմական նշանակության անհրաժեշտ  
հաղորդակցության միջոցները, պ) մասնակից պետությունները չեն կա-  
րող կերել միջազգային ռազմական կամ քաղաքական պայմանագրեր  
առանց այլ մասնակից երկրների համաձայնության: Այնուհետև նշվում  
էր կողմների շանկությունը մասնակից երկրների տնտեսական միասնա-  
կան քաղաքականություն վարելու մասին<sup>77</sup>, Դամասկոսից Ս. Մայիսը  
և, ալ-Ազմի հետ անցնում է Էռ-Ռիադ և Հանդիպում Մասոդ թագա-  
վորի հետ: Վերջինս լրիվ համանություն է տալիս մարտի 2-ի նպիպուտ-  
սիրիական հայտարարությանը<sup>78</sup>: Մատուցյան Արարիայի նգիպուստի հետ  
համագործակցելը այդ ժամանակներում, ինչպես հայտնի է, բացառը-  
վում է մի կողմից Մատուցյան Արարիայի անկախ քաղաքականություն  
վարելու գործումով, մյուս կողմից Մատուցյանների և Հայֆիյանների անե-  
րի հակամարտությամբ: Աշապիսով, մենք տեսնում ենք, որ նպիպուտ-  
սիրիական կառավարության պայքարը թուրքիրաքյան դաշինքի դեմ շահմա-  
նափակվեց միայն նրա մերժումով, այն ակտիվ գործունեությամբ ըս-  
կըսեց հիմք որպես մի հակագիր ուժի:

Իրավամբ, 1955 թվականը նպիպուտի ամենահռանգում արտաքին  
քաղաքական գործունեության տարին էր քանակային հեղաշրջման ըս-  
կըսորից ի վեց: Նպիպուտական հեղափոխությունը վերընականապես ձերքա-  
զատում էր պատճառարանված կամ սարակուտայի արտաքին քաղաքա-  
կանության սինդագներից: Բայց ոչ նրա համար, որ ուս որևէ մեկին  
կամքի արտահայտությունն էր, ոչ և նրա համար, որ իմպերիալիստների  
կողմից իրաքի ներքաշումը ազրեսիվ դաշինքի մեջ կալում էր նաև երի

պատվախնդրությանը, որը, Զ. Մառլուով ասելով, Հավակնում էր արաբական աշխարհի ղեկավարությանը<sup>79</sup>, այլ երա համար, որ աղքային-ազատագրական պայքարի տրամաբանությունն ինքնըստինքյան հանգեցնելու էր դրան:

Չնայած ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի պատմիրակները ՄԱԿ-ում ժարտի 29-ին, անհերքելի փաստերի առկայության պայմաններում, որոնց հաստատվել էին ՄԱԿ-ի ղիտորդների ղեկուցազրերով, ատիպված էին դատապարտել գետրվարի 28-ի իսրայելական ազգնության, այնուամենանելիք այդ երկրները հրաժարվեցին շահուածի և ահարեկման միջոցով աղղել արարական առաջադիմական երկրների ղիրքորոշման վրա: Իրանց արրանցակեների և առաջին հերթին թուրքիայի և Իրայելի միջոցով նրանք սպառնում էին Սիրիայի և Եգիպտականի անվտանգությանը: ԱՄՆ-ի ղետպանը Սիրիայում մարտին հայտարարեց, թե Միացյալ Նահանգները մտադիր չեն զենք մատակարարելու որևէ մի եոր կազմակերպության, որը կստեղծվի թուրք-իրաքյան դաշինքից անշատ<sup>80</sup>: Սա կօնկրետ ուղղված էր Եգիպտա-սիրիա-առույթյան կապերի ղեկարքի առողջապահությանը Սիրիայի վրա, ատիպելու համար փոխել իր ղիրքորոշումը: Ազելի էին հաճախակիանում խրայելի զինված պրովոկացիաները Եգիպտոսի նկատմամբ: Մյուս կողմից, իմադերիալիստները ն նրանց դրամունքը այդ նույն ժամանակ շանում էին արաբական երկրների մեջ իրացին համախուներ գտնել նրա մեկուսացման գեմեն առնելու համար: Ե. Հովհաննեսյանը անդրադառնալով այդ հարցին նշում է, որ «... իմացերիալիստական ուժերը հույս ունեին պառական արաբական երկրները, ոքնչում գործադրել նրանց վրա և փորձել առանձին-առանձին նրանց ներգրավել այդ ագրեսիվ խմբավորման մեջ»<sup>81</sup>:

Լիբանանում Թ. Շամումի հետադիմական վարչակազմը իր իմացերիալիստամետ կեցվածքով թերևս ներդրավման համար ամենահարմարն էր արաբական մյուս երկրներից: Պատահական չէր, որ հունվարին Ա. Մձնդերեսը Բաղդադից վերադառնալու հանապարհին կանգ առաջ թելլութում, իսկ վարչապետների նրաք ուղարկած պատվիրակությունը գլխավորում էր Լիբանանի վարչապետ Սամի Սոլիք, որը երկդիմի ղիրք էր դրավել խորհրդաժողովի ժամանակի, որը որոշակիութեն նպաստեց խորհրդաժողովի անհաջողությանը: Մարտ ամսից ակաած լիբանանյան հետադիմությունը լարված չանցեր էր գործադրում երկիրը ներքաշելու

թուրք-իրաքյան դաշինքի մեջ և կամ Հախովելու հզիպտա-սիրիա-  
առաջան և ախատադրասամփող դաշինքը: Բայց, չայսաժ Շամսինի ակ-  
տիվ գործունեությանը, (իրանանի առաջադիմական և ազգային հայրե-  
նասիրական ուժերին հաջողվեց վիճակնելի իմպերիալիստական ուժերի  
մատղությունները<sup>23</sup>, Թուրք-իրաքյան դաշինքի դեմ և լույսերն ընդ-  
դրկել էին ողբ Արարական արքերը, այդ թվում և Իրաքը<sup>24</sup>:

Արարական ժողովուրդների հակախմակերխայիստական պայտարին  
իրենց համերաշխատությունը հայտնեցին նաև գաղութատիրության լուծը  
թոթափած երկրները և առաջին հերթին ձեղիստաները: Դրա արտահայ-  
տությունը հանդիսացավ ապրիլի 6-ին կնքված հզկա-հզիպտական  
բարեկամության պայմանագիրը:

1955 թ. ընթացքում իմպերիալիստական երկրները Թուրքիայի և Խո-  
սայիի միջոցով ազելի ու ավելի էին սպառնում արարական երկրների  
անվտանգությանը: Այս դրության մեջ նզիպտական կառավարությունն  
ստիպված էր ազելի մեծ շանթեր թափել արագացնելու արարական  
միասնական հակառի ստեղծումը: Բայց դաշինքին բնդդեմ արա-  
րական երկրների սազմական ու անհասական ուժերի համախմբումը  
դարձել էր նաև իր գլխավոր նպատակը: Դրա ուղղությունը գարնանից  
շարժմակիցող բանակցությունները հռկանմբերին ավարտվեցին Սիրիա-  
յի և Սաուդյան Արարիայի հետ համարյա նույնօրինակ սազմական հա-  
մաձայնագրերի կերտումով: Սիրիայի հետ համաձայնագրը կերպեց հոկ-  
տեմբերի 20-ին, իսկ Սաուդյան Արարիայի հետ՝ 27-ին: Պայմանագոր-  
ծող կողմերը համաձայնվում էին, որ նրանցից մեկի վրա եթե հարձա-  
կում գործվի, ապա այն կհամարվի հարձակում նաև երկրորդ կողմի վր-  
աւը: Հետևարար, իրագործելով համատեղ պաշտպանության իրավունքը,  
նրանք պարտավորվում էին չուապ օգնություն ցույց տալ հարձակման  
և թարակված երկրին ու բոլոր միջոցներով և ազել հարձակումը և վե-  
րականգնել խաղաղությունը: Միշագնային ասպարեզում լուրջ լարվա-  
ծություն առաջանալու գեպրում, երանք պետք է խորհրդակցին Մերձա-  
վոր արենցի անվտանգությունը, արարական երկրների տարածքային  
ամրողականությանը կամ անկախությունը ապահովելու համար միջոց-  
ներ ձեռնարկելու վերաբերյալ: Այս ամենի համար պայմանագործող  
երկրները համաձայնվեցին ստեղծել համագործակցության բարձրագույն  
մարմիններ՝ բաղադրական բարձրագույն խորհուրդ, սազմական խոր-  
հուրդ և միացյալ հրամանատարություն<sup>25</sup>, նույն կարգի արդեն նուկողմ  
համաձայնագիր ստորագրվեց մի քանի ամիս անց, 1956 թ. ապրիլի  
21-ին Զիգզայում Սաուդյան Արարիայի, ծմբնի (Հյուսիսային) և նզիպ-

տոսի միջն: Բայց նույն թվի հոկտեմբերին, եռյակի ազրեսիայի նախարարին, ռազմական դաշինք կերպեց նաև Հորդանանի հետ: Խնդիրն ապագան ցույց տվեց, այս դաշինքները ռազմական առումով գործեական Նշանակալից դեր լունեցան: Բայց քաղաքական առումով դրանց հպիպատական հեղափոխության արժեքավոր հաղթանակներն էին արարական աշխարհում և նրա ռազմաքաղաքական և տնտեսական միասնականության ձգտման արտահայտությունը: Դրանց շնորհիվ արարական ազգային-ազատագրական շարժումը խարխուց արարական իմպերիալիստամեա ու Շետաղեմ ուժերի դիրքերը արարական տարրեր երկրներում և մասնակորապես Իրաքում: Այսպիսով, արդին երեք տարի անց առարկայավորվեց Աղատագրության կազմակերպության ծրագրի 9-րդ կետի նախատեսումը:

### Տ. ԱՅՑՈՒՄԸ ԿԱԿԱՆ ՍԵՎՈԹՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1954 թ. դեկտեմբերի 28-ին Հնդկաստանի և Խնդոնեզիայի վարչապետների նախաձեռնությամբ զումարված հետք երկրների (Հնդկաստան, Խնդոնեզիա, Պակիստան, Բիրմա, Ֆեյզոն) ներկայացուցիչների համամուղվոր որոշեց Հրավիրել Ասիայի և Աֆրիկայի երկրների զեկավարելորի հոնֆերանս Խնդոնեզիայի Բանդամագ քաղաքում: 1955 թ. Հունվարի վերջին նպատառությամբ Խնդոնեզիայի դեսպան Ռ. Հ. Արդել Կադերը և կառավարության պատվիրակ Անվար Բանին Հանդիպեցին նասերի հետ ու իրնեց կառավարության անունից նրան Հրավիրեցին մասնակցել ապրիլի 18-ին գումարվելից Բանդամագի կոնֆերանսին: Նասերն անմիջապես ընդունեց արդ Հրավիրը, որը սակայն Վաշինգտոնում շարժեց Դալլասի ըրարկությունը<sup>85</sup>: Անտարակույս նասերի այս քայլի ավելի որեց Վաշինգտոն-Կահիրե Հիմնականում բռղարկված Հակասությունները: Խնդոնեզիա Թյոփրուզուն, այնպես էլ Դալլասը երրորդ ուղղություն ունեց Համարում էր գաֆանանություն պարհանայան քաղաքակրթության: Սակայն ժամանակները փոխվել էին և նասերն անհոգող էր իր վճար մեջ, Վերադառնալով Բանդունդից նա ժողովրդին դիմելով Հայտարարելու էր, ո՞նչեացի ձեր անունից Հայտարարելու, որ նպատառ գարձել է անկախությունը:

Ապրիլի 8-ին նասերը Ս. Սալիմի և Մ. Ֆավզիի ուղեկցությունը մեկնեց Խնդոնեզիա: Ժամապարհին եպիպատական պատվիրակությունը կանգ առաջ Կարաշիում, Դեյրում և Բանդունդուն: Այս կանգառները նասերն օգտագործում էր ոչ միայն նպատառի արտաքին ու ներքին քա-

դարականությանը բացատրելու համար, այլև գործեական խորհրդակցությունները էր անհնուում նաևապարհին իրենց միացող այլ երկրների պատվիրակությունների ղեկավարների հետ։ Մասնավորապես Բանդունկի նաևապարհին էր, որ սկիզբ գրվեց սոցիալիստական երկրների հետ ամենի մեջ Հարաբերությունների հաստատման հարավորությունների ժնեարկմանը և այդ ժամանակից է, որ սկիզբ առավ սոցիալիստական երկրներից զենք ձեռք բերելու նաևերի առաջին քայլը<sup>37</sup>։ Ելույթ ունենալով Բանդունկում, կոնֆերանսի բացման հաջորդ օրը՝ ապրիլի 19-ին, նա եւրկայացրեց իր երկրի եւերին բաղաբականության սկզբումքները, խսկ տիտուհեան կանգ առավ արտաքին քաղաքականության, ժողովուրդների միջն Հարաբերությունների և խաղաղության ապահովման հարցերի վրա։ Նրա ելույթի մեջ նախանշված բոլոր խնդիրները ձևակերպվեցին կոնֆերանսի որոշումների մեջ մտցնելու համար արված եղիպատական առաջարկություններում, որոնք ինչպես նեղիկ լրագրող Ռ. Քարանջյան է իրավացիորնե նկատել, ամրողությամբ մտցվեցին Բանդունկում միաձյն զավերացված Հայունի տասը սկզբունքների մեջ<sup>38</sup>։ Նաևերը, իր հետւյթը հիմնելով զարութատիրությունը որպես ժողովուրդների համար բոլոր լարիքների հիմքի վերացման անհրաժեշտության վրա, ժողովուրդների միջն նորմալ Հարաբերությունների ստեղծման, աշխարհում խաղաղության ապահովման համար առաջ բաշեց հետևյալ պայմանները։ Հավատարմություն ՄԱԿ-ի սկզբունքներին, ինքնորոշման իրավունքի ընկունումը բոլոր կախյալ ժողովուրդների համար, միմյանց ներքին գործերին շմիշամառել և լուրաքանչյուր երկրի սուվենոնության հարցում, մարդու իրավունքների հարգում և ցեղային խորականության վերացում, ժողովուրդների միջն արդարության, Հավասարության և համագործակցության հաստատում, սպառազինությունների կրնատում ու թույլ զարգացած երկրների ժողովուրդների կենսամակարդակի բարձրացում<sup>39</sup>, Հիմնականում եղիպատական պատվիրակության շանթերի շնորհիվ կոնֆերանսը, ի շարք այլ ժողովուրդների, իր արակցությունն արտաշարժեց նաև Աղժիրի, Թումիսի, Մարոկկոյի, Հարավային նմենի և Պաղեստինի ժողովուրդների արգար պայքարին։

Բանդունկի կոնֆերանսում նաևերը նաևալեց աշխարհը և աշխարհը ճանալեց նաևերին։ Պետք է հատկապես ընդգծել, որ զեռ նախքան այդ նուսերի և ընդհանրապես եղիպատական կառավարության ոչ մի ելույթում, ոչ մի հայտարարության մեջ և ոչ մի ժրագրում այդքան հավաքականուն չէին ներկայացվել նպիգտուի արտաքին բաղաբականության ուղղությունները։ Հանդիպելով երրորդ աշխարհի ղեկավարների հետ,

խորամուին լինելով նրան զրապեցնող քեդհանուր Հարցերի մեջ, աշխարհին այդ ժամանակի հուգիրների մեջ, նաև իր վերջնականութեան պարզեց այն անըն ու զբար, որն, ըստ իրեն, կարող էր ունենալ նպաստուր միջազգային Հարաբերություններում: Դա, ինչարք է, ոչ հանկարծակի պատահեց և ոչ էլ որևէ մենքի կամքով: Դրա տարրերը իրականության մեջ եախապես ժամանակ առ ժամանակ երևում էին հեղափոխությունից և, հատկապես, թուրք-իրաքյան դաշինքից հետո, բայց իր վերջնական անսրբով արտահայտվեց Բանգություն: Գաղութատիրության և իմայերի այլօնի դեմ եղիպատական ժողովորդի ազգային ազատագրական այալքարը բառացիորեն քայլ առ քայլ ապացուցեց եղիպատական զեկազարներին, որ իրենց երկրի անկախությունը, առաջազիմելը և բարզականությունը բացարձակապես անհարիր են և վաղեմի թշնամի Անզիհայի և այսօնի որարեկամա ու Շահաշտարար ԱՄՆ-ի նպատակներին: Գնայած սաքը պատերազմի պայմաններում անդի ունեցող այս էվոլյուցիան զուգորդվում էր Բաղդադի դաշինքի<sup>20</sup> սահղեման զանգերի հետ, այնուամենայնիվ դրանք կարողացան միայն հետաձգել ազգային-ազատագրական շարժման և իմայերի այլօնի միջի եղած հակասությունների արագ և ամրացական բացահայտվելը, բայց չկարողացան զրա գենե առնել, քանի որ այդ շարժման արժաները սեփում էին եղիպատական ժողովորդի՝ ստար տիրապետության դեմ պայքարելու վճռականությունից, արարական ժողովուրդների զարթունքի անխուսափելիությունից, զաղութատեր և իմայերի այլիստական երկրների և գաղութացված ու ննջված ժողովուրդների շահերի հակասության անհաշտելիությունից: Այսինչ թ. կիթլ, մի կողմ թողնելով այս հանգամաներները, հակված է նզիպատոսի անցումը շմիանալու ու զրական շնչորության բաղաբականությունը բացարի նաև ներուի Տրիտոնի համունխուսական շարժման մեջ և ներուի Բրիտանական ազգերի համագործակցության մեջ ունեցած շնչորության ձեւերով հիանալով (ամուլց), որը նրան տարած իր սեփական անկախ զիժը փնտրելու, որն էլ նա դատավ Բաղդադի դաշինքին հակառակվելու մեջ<sup>21</sup>:

Արտաքին քաղաքական գերի թեկուզ այս հիմանդագին ընթացքով, բայց իր նշանակությամբ կարևորագույն էվոլյուցիան նախորշեց նաև սերական նզիպատոսի հետագա միջազգային գործումներությունը, վերջնականապես նրան տանելով լմիացման և զրական շնչորության ուղղությամբ: Այդ ուղղությանն անցնելը եղիպատական հեղափոխության երրորդ խոշոր առաջընթացն էր նզիպատոսի և արտաքին աշխարհի հարաբերությունների մեջ:

Բանգունունի կոնֆերանսից հետո նզիպատոսի հեղինակությունը կը տ-

բուկ բարձրացավ ամրող աշխարհում։ Սպիտառսի աֆրիկյան գաղութացված ժողովուրդների պարզաբնի պաշտպանությունը մեծ դեր խաղաց արդ ժողովուրդների ազատազրման գործում։ Խնչպես Հուսեյն Շաալանն է նշում իր ունկան Նասերը և աֆրիկյան ազգայնականների կարստագույն կենտրոնը<sup>222</sup>։ Նասերի Հովանավորությամբ էր որ Հիմնվեց Աֆրիկյան լիգան, որը զգալի դեր խաղաց աֆրիկյան քաղաքական պայքարի ասպարեզում։ Նասերի կառավարությունն ամեն տեսակի պիտույք ցույց տվեց Թենիայում բռնկված հակաբրիտանական Մառ-Մառ շարժմանը, Գանայի, Գանինեայի, Մալիի, Նիգերիայի և աֆրիկյան այլ երկրների ժողովուրդների ազգատագրական պայքարին։ Նասերի պաշտպանությունը աֆրիկյան ժողովուրդների պարզաբնին նոր տարր էր մըսցընում աֆրիկյան իրականության մեջ։ Դա այն էր, որ եթե գաղութարարները արհեստական մասնատում էին մտցնում աֆրիկյան մայրցամաքում՝ իրար հակագույզ նրա տարրեր ուստաներին, էթնիկական խըճ-քերին և ռեգիստրներին, նրանց տարարածանելով և Ապիտակ Աֆրիկային, և Ա. Աֆրիկային, արաբախոս, ֆրանսախոս, անգլախոս և այլ ռաֆրիկաներին, ապա, ինչպես արդեն զիտենք Տէնզափոխության զիրիխոփայությունը գրքից, Նասերն այդ մայրցամաքը զիտում էր միասնականության մեջ և նրա գործունեությունն սկսեց հանգել ընդհանուր պրոբեմներ ունեցող աֆրիկյան երկրների պարզաբնի միավորմանը։ Բուրժուական պատմարանները Նասերի աֆրիկյան քաղաքականությունը քննելիս, այդ փակելով վերը նշված հանգամանքի նկատմամբ, յանում են շահագիտություն փնտրել այդ քաղաքականության մեջ։ Ինարկե, Նասերն անտարքը չէր Աֆրիկայի խորքերում իւլամի ընդլայնմանը, որը երևում է 1954 թ. Հիմնված Խմանական կոնգրեսուի խնդիրներից, բայց դա չէր նշանակում, ինչպես Վ. Լաքյորն է պնդում, թե իրը Սպիտառուց, որպես սղեկավար մուսուլմանական երկիրը հալակենում էր իւլամը տարածել ամրող և Ա. Աֆրիկայի վրաց<sup>223</sup>, որը ինքնըստինքյան հետևությունն է բերում, թե Սպիտառու հավակնում էր զերիշխանություն հասատել Աֆրիկայում։ Այդ նույն ժամանակներում Եղիպատու օգնությունն էր ցույց տալիս Կիպրոսի հայրենակերներին, ընդդեմ Անգլիայի և Թուրքիայի իմպերիալիստական գործունեության։ Ինչ զերաբերում է արարական ազգային-ազատագրական պայքարին, Սպիտառու աշակեցությունը զնալով ազելի ազդեցիկ էր դառնում։ Սպիտառու յաները Արարական արևելքում վեճեցրին իմպերիալիստական շրջանների և նրանց դրածուների պլան-ները՝ Բաղդադի դաշինքի մեջ ներթաշել արարական այլ երկրների և դը-

բանով մեկուսացնել նպիպտուսին: Ընդհակառակին, իրաքն էր, որ որոշակիութեաւ մեկուսացավ արարական աշխարհից:

Այսպիսով, արդեն 1955 թ. իրականություն գարձան Ազատազության կազմակերպության ծրագրի 10 և 11-րդ կետերի պահանջները են:

Ե. ԶԱՅԵՐ ՄԱՅԱԿՎԱՐԻԿԱՆ ԱՐԿԱԴԻԱԿՈՆԱԳԻ  
ՔՆԱԿՏՈՒՐԻ ՎՀՐԱԾՈՒՄԸ

Իմպերիալիստական երկրները չեին դադարում նեշում գործադրել նպիպտոսին վրա, ոգտագործելով զների մատակարարման և Աստվածի ամրարտակի շինարարության ֆինանսավորման խաղաքարտերը, Միաժամանակ ԱՄՆ-ը, Անգլիան և Հատկապես Ֆրանսիան մատակարարումները Խորացվեն: Այս հանգամանքները հաշվի առնելով, 1955 թ. հունիսին նպիպտական կառավարությունը դիմեց ԱՄՆ-ին նորից խնդրելով զննք զանապել իրեն: Հունիսի 30-ին ԱՄՆ-ի կառավարությունը տակըրունքորեն հայացինք նպիպտոսին վաճառել 27 մլն դոլարի զննք, այդ թվուառ սահմանափակ քանակի, ինքնամբիուներ և թնդանոթներ<sup>34</sup>, ԱՄՆ-ը պահանջում էր դաշտարով վճարել դրանց դիմաց: Նպիպտոսը չեր կարող, քանի որ տարբ վայրուսայից համարյա զուրկ էր: Այնուհետեւ յիսունեղով այն մասին, որ պարման էր դրվագ Բարդապի դաշինքին միանալ, ԱՄՆ-ը զննք մատակարարելու գեպքում ցանկանում էր նպիպտոսում ունենալ եան ուղմական մի հատուկ պարելություն, որը կվերահսկեր այդ զննքի սպառագործումը<sup>35</sup>, որը միանգամայն անհարիր էր նպիպտոսի ինքնիշխանությանը: Ազ դա այն դեպքում, երբ նախօքան այդ ԱՄՆ-ը մշտական հայտարարում էր, թէ ինքը զննք հավասարաշափ է արտահանելու Խորայի և արարական երկրները: Տեղին է նշնչի, որ Խորային նկատմամբ նպիպտոսն այդ տարիներին բավականին դուստ բազարականություն էր վարում հիմնվելով ՄԱԿ-ի 1947 թ. նոյեմբերի 29-ի որոշման վրա: 1955 թ. հունիսին նպիպտոսը Խորային առաջարկեց զննագաղաքարի գծի երկու կողմերում ստեղծել ապառաժմականացված գոտի, որը փաստորեն մերժվեց Խորայի կողմից, քանի որ վերցինս իր կողմից առաջարկեց բարձր մակարդակի բանակցություններ սկսել նպիպտոսի և Խորայի միջն, որին նպիպտոսը չեր կարող համաձայնել, որովհետև դա կնշանակեր Պաղեստինում խորայիական զավթումների գրինականության հանշում: Նպիպտոսը գտնում էր որ կապը Խորայիի հետ պետք է իրագործվի միայն Զինագաղաքի հանձնախմբի

միջոցով՝ 1955 թ. ամռանը ավելի ու ավելի հաճախակի էին դարձել իսրայելական ուժերի հարձակումները նգիտառուի սահմանային գիրքերի վրա։ Դաղայի շրջանում միայն ոգոստոս ամսին և սեպտեմբերի ակզրին իսրայելցիները լորու անօամ լուրջ հարձակումներ գործեցին նգիտառական դիրքերի վրա։ Սեպտեմբերի 8-ին եղիպատա-իսրայելական ռախումների հարցը բնելվեց Անգլանգության խորհրդում և որոշվեց, որ երկու կողմերը իրենց ուժերը եռ բաշեն զինագաղաքարի գծից ոչ պակաս 500 մետր։ Սեպտեմբերի 20-ին եղիպատական ուժերը եռ քաշվեցին զինագաղաքարի գծից։ Բայց իսրայելական ապառնալիքը շարումակում էր մեծապես անհնարինացնել եղիպատական գեկավարներին։

Զնայած թաղապի գաշինքի նկատմամբ նգիտառուի ժիւտական վերաբերումներին, լնայած թանդումնում նասերի հակագաղութառիրական և հակաիմպերիալիստական ելույթներին, այդ ժամանակներում Արևմտաքում գեռ այն մտայինությունն էր տիրում, թե նասերի գործունեալիւնը բխում է ավելի շուտ երա հականեղիական տրամադրվածությունից, նրա՝ արարտական աշխարհում զեկավար դերի հավակնությունից, քան թե լմիացման և դրական չեղորության քաղաքականության արժեքավորությունը ընդունելուց կամ արևմտյան երկրների քաղաքականությունից ընդհանրապես դժգո՞ր լինելուց։ Մասնավորապես ԱՄՆ-ում գեռ հույսները չեն կորցնել նգիտառուի որնէ ծեփ կապելու Արևմտութիւնում։ Ամերիկյան քաղաքական շրջաններում այն կարծիքն էր տիրում, որ արարտները, որպես իսկական մուսուլմաններ, ընական հակակրանք ունեն կոմունիզմի հանդիպությունը, Այս մտայնությունը, ըստ երկույթին, հենվում էր նասերի կոմունիստական շարժման նկատմամբ կանխակալ վերաբերմունքի և իսլամական կանխարույթներին նրա հավատարմության բացարձականացման վրա։ Բայց ժամանակները փոխվել էին։

Իսրայելական հարձակումների հաճախակիացումները, թաղապի գաշինքի երկրների, մասնավորապես Թուրքիայի թշնամական և սպառնալիք գործունեությունը, զենքի գնման բանակցությունների անհուսալի ձգձգումները արևմտյան երկրների կողմից, նասերին հակեցին վրեական միջոցների դիմել երկրի անվտանգության ապահովման համար։ 1955 թ. օգոստոսին եղիպատական կառավարությունը պաշտոնապես դիմեց Զեխուրվակիայի կառավարությանը զենքի ձեռքբերման հարցով։ Պրագայում սկսված բանակցությունների նյութը գաղտնիք լմաց այդ տարիիներին նգիտառուսում լայն գործունեություն ծավալող ԱՄՆ-ի Կհնարունական հետախուզական վարչության (ԱՀՎ) գործակալներից։ ԿՀՎ-ի ցանցը նգիտառուսում պլանավորում էին նախ Թերմիք Ռուզվելտը (պրես-

գինս թ. Առուզվելու թուր) և ապա Հեյմս Էյբրիերգերը Վերջինիս Վաշինգտոն ուղարկած զննուցագրերը Պրահայում վարվող բանակցությունների մասին, ինչպես երևում է, նախապես լրջորեն լինելու ընդունվում։ Դավլենը և իր մերձագործները կարծում էին, թե դա նաև երի կողմից սպասությունը է նեշում բանեցնելու համար և այդ բոլորը բխարկանքը էին համարում<sup>101</sup>, Դավլենի օգնական Ֆ. Ալեքսեյ Եգիպտոսովն սուվետական օգնությունը<sup>102</sup> հարցից դուրս էր համարում<sup>103</sup>, Օրբ սեպտեմբերի կեսերին եղիպտա-շխատական բանակցություններում հիմնականում համաձայնությունն արդեն կայացված էր, Ֆ. Էյբրիերգերը մի նոր զննուցագրի է ուղարկում Վաշինգտոն։ Դավլենը Թ. Առուզվելու ուղարկում է Կաչիրե պարզեցու նաև երի մատուցությունը, Վերջինս նաև երից ստանում է Հավաստիացում, որ լինենք հետ համաձայնագրին արդեն ստորագրվելուն մոտ է<sup>104</sup>, Թ. Առուզվելու բանքերը՝ նաև երին նո կանգնեցնել այդ բայցից, և ախողվեցին։ Սեպտեմբերի 20-ին համաձայնագրին արդեն ստորագրված էր, բայց նաև երի այդ մասին պաշտոնապես հայտարարեց միայն 27-ին՝ մի պիտի ուղարկան ցուցահանդեսի բացման ժամանակ, ինքը ըստ ինքնուրիան լուրն արդեն նորություն լին ու Վաշինգտոնի, ու է լուսնի, ու է լուսնի անդաման մամուլը և բաղադրական գործիչները հականգիպատական կողմից արշավ սկսեցին, ապա դա ու թի հանկարծակի գալու արդյունք էր, այլ կատարված փաստի հանդեպ նրանց արամարտական արձագանքը։ Զեխառուպակիալից Եգիպտոսուի զենք գնելու մեջ նրանք ունենամ էին նաև երի կողմից բազմանությունն արհմատյան երկրների շահերին, Եգիպտոսուի անցումը հակառակորդի ճամբարը, բայց մզր զրում էր, ոնդիպտոսուի զենք ստանալը կոմունիստներից նրան կպարտագործեցնի մասնագետների և խորհրդականների ներկայությունը այդ երկրում, ապա շարունակում, թե Եգիպտոսուին ուստական զենք մատակարարելն իրենից ներկայացնում է նույստատանի ազդեցության մեծացում Եգիպտոսում մասնավորապես և արարական երկրներում ընդհանրապես<sup>105</sup>, Այս էր Արևմտասրբին անհանգստացնում։ Նրանց համար ի՞նչ նշանակություն կարող էր ունենալ, որ Եգիպտոսուը, որպէս ինքնիշխան երկիր, իրավունք ունի որևէ գործարք կնքելու որևէ երկրի հետ առևտրական ամենասովորական պայմաններով։ Նրանց լինեն հետաքրքրում ո՞չ արարական երկրների անվանգությունը, ո՞ւ սեփական գործերը ուներինելու իրավունքը և ո՞ւ էլ սեփական ուղիով ընթանալու գնումը նըրանք Մերձավոր արևելքում կուզեին տեսնել միայն իրենց ուղղմատըն-առեսական շահերի ազանգական կամակատարներին։ ԱՄՆ-ը և Բրիտա-

նիսն, որ մինչ այդ ամեն կերպ զինում էին Խորայելին, այժմ իրենց շահեանգատությունն էին արտահայտում այդ շրջանում ռազմական մրցավազքի ծավալման անխուսափելիությունից<sup>103</sup>: Սովորական կառավարության հոկտեմբերի 1-ի հայտարարության մեջ ասվում էր, որ ամեն պետություն իրավումք ունի հոգալու իր պաշտպանական կարիքները և այլ պետություններից զենք ձեռք բերել ռովորական առևտորական գործարքի միջոցով: Ծգ ոչ մի օտար պետություն իրավումք լուսի միջամտելու դրան ու ներկայացնելու որևէ միակողմանի հավակեություն, որը կիսախոտեր այլ պետությունների իրավունքն ու շահերը<sup>104</sup>: Այս հայտարարությունը գալիս էր սթափեցնելու նրանց, ովքեր դժվարությամբ էին ընկալում աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները: Դավեսի համար, որ այնքան բացահայտ և քողարկված քանքեր էր թափել «Հյուս» սիսային բարուսիք համար, Սցիպոնոսի գործողությունը պետք է ներկայանար որպես գաշույսի հարգած այդ յարուսի թիկունքին: Առնվազն այդ են ցույց տալիս զանազան օտար հեղինակների ակնարկները այդ որերին նրա գործունեության վերաբերյալ: Արնմայան պրոպագանդայի կատաղի հականասերական արշավի թեժ միջոցին նա չ- Ալլենին ուղարկում է Կառիքի, տալ-Արամին վաշինգտոնյան թըզ-թակից և նույն Թեղիշյանն իր թղթակցության մեջ ասում էր, որ չ- Ալլենին հանձնարարված է ամեն շանք թափել արգելելու նպաստուի զենք զենք կամունիստական երկրներից, բայց ամերիկյան պաշտոնական գործիչները հոռնակության մեջ տրամադրված Ալլենի առաքելության հաջողության նկատմամբ<sup>105</sup>: Ծգ իսկապես, նասերն իր վերաբերմունքը Ալլենի առաքելության հանդիպ դրսնորեց հճնց սկզբից, ներկայացնեցիլ լուղարկելով ողանակակայաց նրան դիմավորելու: Ալլենի բոլոր շանքերը շանտաժի և գալթակղությունների միջոցով նասերին ետ կանգնեցնելու այդ քայլից, արդյունք շավեցին: Գ. Ի. Միրսկին միանգամայն իրավացիորեն նշում է, որ այդ քայլը նպիկտուսին պարտադրվեց Արնմայան կողմից<sup>106</sup>: Ծգ իսկապես, երեք տարի անընդեմ նասերը դիմում էր արնմայան երկրներին՝ ԱՄՆ-ին, Անգլիային, Ֆրանսիային, Խառլիային, Բելգիային և ուրիշներին, բայց առանց կոնկրետ պայմաննի արդ երկրները չէին համաձայնվում նպիկտուսին մատակարարել անհրաժեշտ զենքի: Ծգ այժմ, երբ ստիպված կատարվեց այդ քայլը, արմայան քաղաքագիտները իրենց ուղուց տագնապն էին արտահայտում դրա համար: ԵՄկրծավոր արևելքում հավասարակշռությունը սասանվեց ու շուրջ եկավ<sup>107</sup>, գրում է Հ. Ազուն, շմուռանալով, որ իր երկիրը՝ Ֆրանսիան էր, որ այդ հավասարակշռությունը վաղուց շուրջ էր տվել հօգում Խորայելի, նրան մատակարարելով

մեծ թվով ինքնաթիւններ, առանկեր և այլն, չի շխտանք ԱՄՆ-ի և Անգլիայի մասակարարութենքի մասին, որուք հսկայելի ստեղծման որից խախտել էին Մերձավոր արևելքի ռազմական հաջախարակշռությունը:

Օրեւ զենքի գնումը Չեխոսլովակիայից Արևմուտքի տապահապես առաջացրեց, ապա այն խանդավառորդն ընդունվեց արարական առաջադիմական շրջաններում: Այսպես, սիրիական բառ-մերը սկզբաներից 28-ին գրում էր, որ Նասերը քաղաքներժ արեց զների գների մասին վճեց, որի հոգում թաքնվում էին արևմտյան երկրները զների համար տեղի ունեցող բանակցություններում, որպեսզի քարշ տան նպապառոին դեպի ռազմական մի դաշինք: Նույն օրվա լիրանանյան շաբաթի դրամական գրում էր, որ Հաղթանակը, որն իրավործեց Նասերը սովորական զներ ձեռք բերելով, Մերձավոր արևելքում մոլեկուլ ճշգնաժամի միակ լուժումն էր: Միրիայի կոմիտաֆ դեկազար և Բարդաշը այդ որերի իր մի եղույթում հարսարարեց, որ Միրիան, որը մի քանի ամիս առաջ դիմակայեց թուրք-ամերիկյան մեջմանը, միշտ իր կողքին ուներ եղացրական նպապառոին, իսկ այսօր ինքն է կանգնել նպապառոի կողքին իր մողովրդով, իր պառզմենուով, իր կառավարությունով և իր բանակով<sup>106</sup>:

Նասերի հեղինակությունը մեծապես բարձրացավ արարական աշխարհում, նա դարձավ արարական ժողովութղթերի աղքային ոգու իմակերիալիզմի և գաղտնաբարության դեմ, ուժի և գերիշխանության դեմ ըմբռատագման առաջամարտիկը:

Չեխոսլովակիայից զների գնումը եղիպատական հեղափոխության հերթական սովորական հաղթանակներից չէր Այն լիենելով զրական յեղացրության և շմիացման քաղաքականության անցման առաջին արտահայտությունը, վերջ դրեց Մերձավոր արևելքում արևմտյան երկրների զների մատակարարման մենաշնորհին: Ի. Գ. Բելյաևը հենց այդ քայլն է համարում եղիպատա-ամերիկյան հարաբերությունների շեշտակի վատացման սկիզբը<sup>107</sup>, նզ կարելի է ասել ոչ միայն եղիպատա-ամերիկյան, այլև եղիպատա-արևմտյան՝ ընդհանրապես: Այսպիսի քայլի համար մեծ համարձակություն էր պետք: Պատահական չէ, որ Վաշինգտոնում եղիպատական դեսպան Աշմեդ Հուսեյնը, որը արձակուրդով Կամիրենում էր զրոնցվում այդ օրերին, երբ լսում է զների գեման մասին, առանց այլնայտության մտեռալ է Նասերի կարինետը և Հավասարիանալով լուրի նշուության մեջ, իրեն լի կարողանում զսպել և հիստերիկորեն բացականշուալ է. «Դվառականական, պարօն վարշապետ, Գվանհմալան...»<sup>108</sup>: Միշագու-

յին մոնոպոլիաների զոհերի՝ Մոսադեզի և Արբենեսի մասին հիշողությունները դեռ շատ թարժ էին այդ ժամանեակի:

Նասերի այդ քայլն իր ձևով և բռվանդակությամբ սկիզբ գրեց Մերձավոր արևելքի ազգային-աղառագրական շարժման ընական դաշնակիցների՝ սոցիալիզմի երկրների հետ նպաստավոր համապրծակցություն հաստատմանը, այդ շրջանի ճնշաժամային պահերին նրանց օգնության արդյունավետության բարձրացմանը: Դա նպիպտոսի անկախ արտաքին քաղաքական ակտն էր, չպայմանավորված որևէ հանգամանքով Զեխոս-լովակիան նպիպտոսին մատակարարում էր անհրաժեշտ զձեր, ի փոխարձն նրա ազանդական արտազրանքի՝ բամբակի և բրնձի: Այս կապակցությամբ՝ անտեղի չէ ասել, որ առնտրական հարաբերությունները սոցիալիստական երկրների հետ և նպիպտոսի համար դրանց շահավետ բնույթին իրենց որոշակի ազգեցությունն ունեցան կանխակալ պատճենների փլուզման գործում: Ի հակացին ԱՄՆ-ի, որը համապատասխան զինք մատակարարելու իր շկամությունը բաղարկում էր բարձր գեներով<sup>111</sup>, սոցիալիստական երկրները նպիպտոսին մատակարարեցին այնպիսի զինառենակներ, որոնք հետապայում երաշխիք հանդիսացան եռյակի ապրեսիալին հականարգած տալու գործում:

#### 7. ՍՈՒԵՑ ԶՐԱՏԵՐԻ ԱԳՎԱՅՆԱՅԱԿՈՒՐ

Խելպես գիտենք, 1953—1954 թթ. արևմտյան երկրները Ասուանի բարձրանեստ ամբարտակի շինարարության ֆինանսավորումը մեջման միջոց էին դարձրել Նպիպտոսի նկատմամբ իրենց ուղմագրադակուն նպատակներին հասնելու համար: Այս հարցը մտավ իր լուծման վճառեական փուլը 1955 թ. աշնանը, երբ Հոկտեմբերի 10-ին հայտնի դարձավ, որ ՍՍՀՄ-ը պատրաստակամություն է հայտնել ֆինանսավորելու ամբարտակի շինարարությունը<sup>112</sup>: Արևմտյան քաղաքական շրջաններն ավելի լրջարեն սկսեցին մատակալել նպիպտոսում իրենց զիրքերի վերջեական կորսատի համար նրանք շտապեցին հայտնել իրենց պատրաստակամությունը ֆինանսավորման գործում: Խելպես գիտենք, հեղուստեխնիկական այս կառույցի նախնական որժեքը վեահատվում էր մեկ միլիարդ դոլար (որոշ այլ տվյալներով՝ 1300 մլն), որից 400 մլն-ը օտարերկրյա վալյուտայով: Երկարատև բանակցություններից հետո, երբ ամբարտակի ֆինանսավորումը պայմանավորվում էր նպիպտոսի ինքնիշխանության համար անընդունելի առաջարկներով, ՎՀՄԲ-ն համաձայնվեց այդ նպատակով նպիպտոսին վարկ որամադրել 200 մլն դոլարի լափավ, եթե ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան տային մնացած կեսը<sup>113</sup>, Այդ

Նպատակով նգիպտոսի ֆինանսների մինիստր Արդել Մոնելը Կայսունին  
նոյեմբերին այցելեց Հռնդու ու Վաշինգտոն, նրա վարած բանակցու-  
թյուններն այն արդյունքը ամին, որ զեկուեմբերի 17-ին Հռապարակված  
ամերիկա-անգլիական հայտարարությունն մեջ համաձայնություն էր  
հայտնվում ամբարտակի շինարարության ֆինանսավորություն վերաբերյալ  
և խոստում, որ շինարարության առաջին տարվա համար նգիպտոսին  
կորամագրովի 70 մլն դոլարի օգնություն, որից 56 մլն-ը ԱՄՆ-ից, իսկ  
14-ը՝ Անգլիայից<sup>114</sup>. Համաձայնությունն ավելի կոնկրետացնելու համար,  
1956 թ. փետրվարին, Կահիրեւում բանակցությունները վարվեցին  
ՎԶՄԲ-ի անօրեն նույնին Բլեքի հետ Վերջինս քանում էր ամբարտակի  
ֆինանսավորումը կապել ԱՄՆ-ից և Անգլիայից մեացած 130 մլն դոլ-  
արի օգնություն ստանալու աերեղմերության երաշխիքների, ինչպես նաև  
նցիպտոսի անհետության վրա բանկի վերահսկողությունը սահմանելու  
հետ<sup>115</sup>, թանակցությունները վերջացան փոխպետակին մի համաձայ-  
նությամբ, այն է՝ նեղոսի ջրի սպառագործման հարցը Սուլանի հետ լու-  
ծելու գեպտում բանկը արածադրում է իր խոստացած վարկը: Նգիպտո-  
սը, իր հերթին, համաձայնվեց, որ ՎԶՄԲ-ն կարող է վերահսկել միայն  
ամբարտակի շինարարության հետ կապված ֆինանսական դրժերը<sup>116</sup>:  
Բայց սրանից հետո էր, որ արևմտյան մամուլը մեծ արշավ ակնեց ամ-  
բարտակի շինարարության գնմ, թե իրը այն շոշափում է ոչ միայն Սու-  
լանի, այլև Եթովպիայի, Թենիայի և Ուգանդայի շահերը, կասկածի տակ  
էր դրվում ամբարտակի արժեքագորությունը և այն Այս բոլորով արև-  
մտյան երկրները բողարկում էին իրենց լկամությունը՝ ֆինանսավորե-  
լու շինարարությունը, իրենց դժգոհությունը նգիպտոսի շմիացման քա-  
ղաքականությունից: Բայց ասիթք, սակայն, ներկայացակ այլ կող-  
ից, 1956 թ. մայիսի 16-ին նգիպտոսության անաշեց ԶՓՀ-ին Հուլիսի 19-ին  
ԱՄՆ-ի կառավարությունը հրաժարվեց իր վրա վերցրած պարտավորու-  
թյունից: Հաշորդ օրերին ԱՄՆ-ին հետևեցին Անգլիան և ՎԶՄԲ-ն Հուլիսի  
26-ին Սուլանի ծովալին շրանցքի ընկերությունը ազգայնացնեց<sup>117</sup>: Ազ-  
գայնացվեց, որպեսզի նգիպտական մողովոյի մեծ զաների գնով կա-  
ռուցած շրանցքի արդյունքները ծառայեցվեն նպիպտական ժողովրդին  
և մասնավորապես նրա դարի կառույցին՝ Ասուանի բարձրանիստ ամ-  
բարտակի շինարարության ֆինանսավորմանը: Նգիպտոսը վեռականո-  
րեն պաշտպանեց իր սրոշումը և շնչերկվեց ոչ քաղաքական մեշտմ-  
ներին, և ոչ էլ ուղղակի ուղմական աղբեսիալին: Նվ նա հաղթանակեց,  
որովհետեւ նրա կողմն էին աշխարհի ազատահեր մարդկությունը, սո-  
ցիալիստական հզոր համագործակցության երկրները ԱՄՀ-ի գլխավո-

բոլթյամբ: 1957 թ. Հունվարի 1-ին շեղյալ հայտարարելով 1954 թ. Հոկտեմբերի 19-ի Հայաձանագիրը, եզրակացնելով ժողովուրդը կոտրեց իր անկախությունը կաշկանդող դդթայի վերըն ռազակը:

Հնդափոխության սկզբից ի վեր եպիստական արտաքին քաղաքական ուղղությունը՝ որակական փոփոխություններ կրեց: Այդ ուղղությունը, իր վրա կրնկով տարրեր գործուների ազդեցությունը տարրեր ծածանակենքում և տարրեր հանգամանքներում, հաղթահարելով կամ պարտադրված լինելով հաղթահարել զանազան խոշնդրություններ, զիշելով կամ ստիպված լինելով նահանջել որոշ դեպքերում, ձևավորվեց և իր վերջնական տեսքը ստացավ 1955 թ.: Նրա որդեգրած սկզբունքները՝ հիմնականում անփոփոխ մնացին նպատառի հաջորդող բոլոր հնդափոխական արքիների ընթացքում: Բայց այդ սկզբունքների որդեգրությունը անհնարին կլիներ առանց եպիստական հնդափոխության հիմնական քաղաքական հարցի լուծմանը՝ առարերկրյա զորքերի երկրից դուրսերմանը, որը դարձավ այն կարևորագույն հաղթանակը, ինչի վրա հիմնվեցին արտաքին քաղաքականության և, որոշակիորեն, ապագայում սոցիալ-տքնտեսական առարձնահրում տեղի ունեցած վերափոխությունները:

#### ԳԼՈՒԽ ՏՐԵՌԵԴ

### ՍՈՅԻԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒԹՅԱՑՑՈՒՆԵԲԸ ԵԳԻԳՏՈՍՈՒՄ 1952—1956 թթ.

#### 1. ՍՈՅԻԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՅՈՒՆԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՆԱՐՄԱՆ ՈՐՎԱՅՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՆՁՆՄԵՐԸ

Առաջին խոշոր ծրագիրը, որին ձեռնարկեց ՀՀՀ-ն իշխանություններ ձեռքը վերցնելուց հետո, վերաբերում էր երկրի սոցիալ-տնտեսական կյանքին: Մի այնպիսի գյուղացիական երկրի համար, ինչպիսին էր նպիպուրը, առաջնահները հարցը հանդիսանում էր գյուղում հասարակական հարաբերությունների վերանայման անհրաժեշտությունը: Այդ պատճեռով էլ պատահական չեղ, որ հեղաշրջումից մի քանի օր անց այդ հարցը գարձագր քննարկման առարկա: Մի շաբթ հանգամանքներ էին պայմանավորում այդ հարցին անհապաղ որևէ լուծում տալու անհրաժեշտությունը, նախ և առաջ եպիստական գլուխի հասարակական-տքնտեսական հետամնաց կացութաձնելը: Պնայած կապիտալիզմը արդեն վաղուց էր մուտք գործել այդ երկիրը, բայց այն արտահայտվում էր ավատակարական հարաբերություններին զուգորդված ձևով: Մյուս հանգաման-

ըր դուռըսմ հողատիրության անսահմանեափակ բնույթին էր, որը ձևանուու  
էր ֆինանսական հզորությամբ և իշխանությամբ ոժաված խոշոր ավա-  
տատեր-կալվածատերերին։ Մրանք կազմելով եզիպտական հոգառ-  
քրի 0,4 տոկոսը տիրում կին ընդհանուր Հոգատարածությունների 24,2  
տոկոսին<sup>1</sup>, որն ակնքախորեն ցուցադրում է հասարակական արդյունքի  
բաշխման առարկեալումը և զիպտական գյուղում, որանից բիոզ բոլոր  
անարդարություններով և շարաշառումներով։ Հաջորդ հանգամանքը  
եզիպտական պյուղի գերբեակությունն էր, որը խնդիր էր գեռամ ինչպես  
մշակելի հոգատարածությունները մեժ շափերով ընդլայնել, այնպես էլ  
գրանց արդարացի բաժանում կատարել։ Դիսուհով արդեն սահավառող  
գյուղացիների ժամին, պետք է նշնչ, որ մի քանի միլիոնի հասնող հոգա-  
զուուկ գյուղացիներին հողով և աշխատանքով ապահովելը շափազանց  
ժամեր գործ էր, բայց կենսականորեն անհրաժեշտ։ Գյուղում սոցիալական  
հենարան ստեղծելու և նոր իշխանությունների հարգածի թիրախը հա-  
զիսացող ավատատիրական-կալվածատիրական վերևախամինի գիրքնը  
խարիսխելու, նրա իշխանության վրա ունեցած ազդեցությունը վերաց-  
նելու անհրաժեշտությունը թերևս ավայալ ժամանակամիջոցում այն գըլ-  
խավոր հանդամանքն էր, որ հակեց ՀՊՀ-ին անհազար փոփոխություն-  
ներ մտցնել եզիպտական գյուղի սոցիալ տնտեսական համակարգի մեջ։  
Մյուս կողմից, շատութատիրության զործունության արդյունք հանդի-  
ապացու ազգային արտադրության միակողմանի բնույթը վերացնելու հա-  
մար անհրաժեշտ էր փոփոխություն մացնել և՛ միայն գյուղատնտեսու-  
թյան արտադրական կառուցվածքի մեջ, այլն միշտցներ պանել խթանե-  
լու երկրի արդյունաբերական գարգացման համար։ Դրա համար, մի  
կողմ թողնելով այլ երկրորդական ազգայուրները, նրանք ազնիյի մեժ հույ-  
սեր էին կապում գյուղատնտեսության ոլորտում գյուղացող կապիտալի  
հետ, որպես արդյունաբերական ծրագրերի իրազրուման գյուղավոր  
ֆինանսական աղյուրի։ Որոշակի փոփոխությունների ձևանարկելով  
գյուղի տնտեսական-հասարակական կառուցվածքի մեջ, ի շարհ այլ  
նպատակների, ՀՊՀ-ն մտապիր էր հավելյալ միջոցներ ձեռք բերել, քան  
սովորաբար պետական գանձարանը ստանում էր գյուղատնտեսությունից։ Վերջապես, երկրորդական նշանակություն շուներ ֆելլաշների կեն-  
սամակարգակի մեջ բարեփոխումների համելու ձգումուն հանդա-  
մանքը<sup>2</sup>։

Եզիպտոսը խոշոր միշտցներ էր ժախսում արտասահմանից ժողո-  
վրդական սպառման և այլ ապրանքներ ձեռք բերելու համար 1950—  
1952 թթ. ընթացքում ներմուծամների միջին տարեկանը կազմում էր  
270

